

ՀՀ ՓԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
INSTITUTE OF ARTS NAS RA

ԿԱՆԹԵՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

КАНТЕХ
НАУЧНЫЕ ТРУДЫ

KANTEGH
ARTICLES

4 (65)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2015

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Կ 203

Կ 203 Կանթեղ: Գիտական հոդվածներ /Գլխ. խմբ.՝ Ա.Ասատրյան. - Եր.: Ասողիկ,
272 էջ:

Գլխավոր խմբագիր՝ Աննա Գ. ԱՍԱՏՐՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

**ԱՂԱՍՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԳԱՍՊԱՐՅԱՆ
Սեդա, ԶԱՔԱՐՅԱՆ Անուշավան, ԽԱՌԱՏՅԱՆ Ալբերտ, ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ,
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ, ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն, ՄԵԼՔՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ
Մանե (գլխավոր խմբագրի տեղակալ), ՅՈՒՐԵՎԱ Տատյանա, ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ,
ՊՈԿՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն,
ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

Главный редактор Анна Г. АСАТРЯН

Редакционная коллегия

**ԱԳՏԻՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍԻՅԱՆ Պավել, ԱՐՅՈՒՄԱՆԻԱՆ Լիլիթ, ԱՏՐԱՅԱՆ Մուրադ,
ԳԱՏՔԱՐԻՅԱՆ Սեդա, ԶԱԿԱՐԻՅԱՆ Անուշավան, ԿԱՅԱՐԻՅԱՆ Վիգեն, ՄԵԼԿՈՆԻՅԱՆ Աշոտ,
ՄԿՐՏՉԻՅԱՆ Մանե (заместитель главного редактора), ՆԵՐՏԻՍԻՅԱՆ Աշոտ, ՕԳԱՆԵՏԻՅԱՆ
Գենրիկ, ՕԳԱՆԻՅԱՆ Կադժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Նադեժդա, ՏԱԿԱՐԻՅԱՆ Արմեն, ՏԱՐԳՏԻՅԱՆ Լևոն,
ԽԱՐԱՏԻՅԱՆ Ալբերտ, ԵՐԵՎԱՆԻ Տատյանա**

Editor-in-Chief Anna G. ASATRYAN

International Editorial Council

**ԱԳՏԻՅԱՆ Արարատ, ԱՐՅՈՒՄԱՆԻԱՆ Լիլիթ, ԱՎԵՏԻՍԻՅԱՆ Պավել, ԳԱՏՔԱՐԻՅԱՆ Սեդա,
ԿԱՅԱՐԻՅԱՆ Վիգեն, ԿԱՏՐԱՅԱՆ Մուրադ, ԿՈՎՈՆՅԱՆԻՅԱՆ Գենրիկ, ԿԱՐԱՏԻՅԱՆ Ալբերտ,
ՄԵԼԿՈՆԻՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉԻՅԱՆ Մանե (Deputy Editor-in-Chief), ՆԵՐՏԻՍԻՅԱՆ Աշոտ,
ՕԿԱՆԻՅԱՆ Կադժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՏԱՐԳՏԻՅԱՆ Լևոն,
ԵՐԵՎԱՆԻ Տատյանա, ԶԱԿԱՐԻՅԱՆ Անուշավան**

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՋՈՆ ՉԻՎԵՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԲԱՐԴՈՒՅԹՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՄԱՐԻՆԵ ԱՆԴՐԱՍՅԱՆ

Ռուս գրող Լև Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպի հայտնի արտահայտությունը, այն է՝ «Երջանիկ ընտանիքները նման են իրար, յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի», իսկ և իսկ բնութագրում է գրականագետ Կաթրին Ջուրքայի բնորոշումը, համաձայն որի 1950-ականներին ամերիկյան ընտանիքը գտնվում էր խեղվածքի մեջ¹: Յուրաքանչյուր դժբախտ ընտանիք նման է մյուսին, իսկ երջանիկ ընտանիք հասկացություն որպես այդպիսին գոյություն չունի: Ըստ Ջուրքայի՝ չիվերյան արվարձանում ընտանեկան երջանկությունը բավականին անհասանելի երազանք է: Այդ երազանքը, Ջուրքայի բնորոշմամբ, բարեկեցիկ կյանքի ծաղրերգական հակաթեզ է. կյանք, որտեղ գոհունակություն ոչ մի առումով գոյություն չունի²: Չիվերի հերոսները սովորաբար ունեն բավարար գումար, հարմարավետ տներ, լավ աշխատանք և ընտանիք: Նրանք ապրում են այն զգացողությամբ, որ այն, ինչ ունեն, բավարար հիմք է՝ երջանիկ լինելու համար, սակայն իրականությունն այլ է: Նրանք խորապես դժբախտ են, արվարձանը կարծես բանտ է մարդու ներքին ազատության համար: Գրականագետ Ռոբերթ Ա. Մորեյսը «Ձուգահեռականներից դեպի դրախտ. Չիվերի արձակի լիրիկական կառուցվածքը» («From Parallels to Paradise: The Lyrical Structure of Cheever's Fiction») հոդվածում գրում է. «Չիվերի հերոսները սովորաբար միջին խավի մարդիկ են, որոնց կյանքն աստիճանաբար մոտեցրել է վերացական կյանքի խաչմերուկներին: Բոլորը կանգնել են միևնույն խնդրի առջև. ինչպես ապրել մի աշխարհում, որը, չնայած միջին խավին հատկանշական հարմարություններին և երաշխիքներին, հանկարծ վեր է ածվում անհյուրընկալ, երբեմն վտանգավոր մի աշխարհի: Այն, կարծես, օրեցօր դառնում է ավելի ու ավելի անտրամաբանական և անհեթեթ,

¹ Catherine Jurca, *White diaspora*, Princeton University press, 2001, p. 166-167.

² Նույն տեղում, էջ 166:

մի աշխարհ, որտեղ «գոյատևման բարոյական շղթան» փոխակերպվել է սովորական պարուրակի, իսկ շաղակրատանքը խորամտությունից տարբերակելը աստիճանաբար ավելի ու ավելի է բարդանում, ինչին քաջածանոթ է ժամանակակից արվեստի, երաժշտության և գրականության լսարանը»³: Գրականագետ Ռալֆ Վուդը իր «Ջոն Չիվերի պարկեշտ և բարեգութ մարդասիրությունը» («The Modest and Charitable Humanism of John Cheever») հոդվածում նույնպես պնդում է, որ Չիվերի պատմվածքներում որպես թեմա հաճախ է շոշափվում մարդկային կյանքի հակասությունների շղթան: Այն կարող է արտաքուստ լինել զավեշտալի, սակայն իր հիմքում լինել ողբերգական⁴: Երկու գրականագետները կարևորում են Չիվերի պատմվածքներում հերոսների կերպարների ընդհանրությունը: Չիվերի հերոսները հաճախ գտնում են իրենց վախի, անապահով վիճակի և կասկածի իրավիճակներում, որում երբևէ չեն հայտնվել: Ապրելով արվարձանում և լինելով միջին խավի մի մասնիկը՝ նրանք հայտնվել են սոցիալական պայմանականությունների մեջ և վաղ թե ուշ ստիպված են պայքարելու ու գտնելու ճանապարհ՝ այդտեղից դուրս գալու համար:

Ժամանակակից ընտանիքը և կնոջ հասարակական դիրքը Չիվերի ուշադրության կենտրոնում են: Չիվերի պատմվածքներում միջին դասի ամերիկյան ընտանիքի անդամների միջև բախումն անխուսափելի է: Այն կարող է պայմանավորված լինել թե՛ հասարակական կարգուկանոնի հետ անհամաձայնությամբ, թե՛ սոցիալական և անձնական դրդապատճառներով: Այս աններդաշնակությունները բերում են մարդու մեկուսացմանը և օտարմանը ոչ միայն հասարակությունից, այլ նաև ընտանեկան միջավայրից:

«Ամառանոցային ամուսին» («The Country Husband», 1954թ.) պատմվածքում Ջոն Չիվերը ներկայացնում է ընտանեկան հարաբերությունների ճգնաժամային պատկերը: Ինքնաթիռով տուն մեկնելիս պատմվածքի գլխավոր հերոս Ֆրենսիս Ուիդը հայտնվում է անկանխատեսելի իրավիճակում: Տեխնիկական խնդիրների պատճառով ինքնաթիռն արտակարգ վայրէջք է կատարում: Ֆրենսիսը լցված է տեղի ունեցածի մասին կնոջը և երեխաներին պատմելու ցանկությամբ, սակայն տուն մտնելուն պես հանդիպում է ընտանիքի անախորժ մթնոլորտին. երեխաները բղավում են, վիճում միմյանց հետ, կինը

³ Robert A. Morace Twentieth Century Literature Vol. 35, No. 4 (Winter, 1989), From Parallels to Paradise: The Lyrical Structure of Cheever's Fiction, p. 509.

⁴ Ralph C. Wood, The Modest and Charitable Humanism of John Cheever, Christian Century 17 Nov. 1982, Religion Online. Web.

նյարդային վիճակում է: Տեղի ունեցածից Ֆրենսիսի պատմելու ցանկությունը մարում է: Ավելին՝ ընտանիքի անդամներին առանձնապես հետաքրքիր էլ չէ նրա հետ տեղի ունեցածը: Նրանց անտարբերությունը պատճառ է դառնում, որ Ֆրենսիս Ուիդը սիրահարվի իր երեխաների խնամակալուհուն՝ երիտասարդ Ան Մըջիսոնին: Նոր սերը նոր զգացողություններ է պարզևում Ֆրենսիսին, փոխում նրա աշխարհընկալումը: Այժմ Ֆրենսիսը զգում և տեսնում է այնպիսի երևույթներ, որոնք նախկինում կարող էր չնկատել. «Առավուտը կարծես շողշողացող լույսի կամուրջ էր գցել նրա խառնաշփոթ գործերի վրա: Նա հուզված էր, իսկ տրամադրությունը բարձր էր: Աղջկա պատկերը, կարծես, նրան հաղորդակից էր դարձրել մի ինչ-որ խորհրդավոր ու դյուբիչ աշխարհի հետ»⁵:

Ֆրենսիսի պատմությամբ Զիվերն ըստ էության փորձում է ցույց տալ մարդու կյանքում գոյություն ունեցող այն երևույթը, որին հասարակությունը կարող էր վերաբերվել քննադատորեն: Ակնհայտ է, որ Ֆրենսիսն ըմբոստանում է Շեյրի Հիլլում տիրող հասարակական կարգուկանոնի դեմ: Շեյրի Հիլլում չկա անբարոյականության, ամուսնալուծության և վարկաբեկված լինելու օրինակ. «Ամեն ինչ ավելի կարգավորված էր, քան երկնային թագավորությունում»⁶: Նա սկսում է տարօրինակ վարք ցուցաբերել:

Գնացքում վիրավորում է տարեց կնոջը՝ տիկին Ռայթսոնին: Պատճառը կնոջ հետաքրքրությունն է, թե ինչ պետք է անի իր վարագույրների հետ, քանի որ դրանք պատուհաններին չեն համապատասխանում: Ուիդը կոպտում է նրան. «Ձեր լուսամուտները հարկավոր է ամուր մեխել և ներսից սև ներկել»⁷: Գիտակցելով արարքը՝ Ֆրենսիսն անսպասելիորեն իրեն հանգիստ է զգում: Նա հանկարծ սկսում է հասկանալ, որ արվարձանային բարքերից դուրս աշխարհն անողջվածային է, հետաքրքիր, և նա ուզում է լինել դրա մի մասնիկը, բայց չգիտի՝ ինչպես անել: Ֆրենսիսը գաղտնի ապարանջան է գնում Անի համար: Անապաստան փոքրիկ Գերտրուդ Ֆլանդրին պատահականորեն հայտնվում և ակնաստես է լինում նրանց համբույրին: Լռություն պահպանելու համար Ֆրենսիսը գումար է տալիս նրան և շարունակում արկածը՝ մինչև նոր խնդիրների ի հայտ գալը: Ֆրենսիսի արկածն ավարտվում է, երբ հարևան Քլեյթոն Թոմասի հետ զրույցից իմանում է, որ վերջինս նշանադրվել է Ան

⁵ Ջոն Զիվեր, Երևան, «Սովետական գրող», 1985, էջ 277:

⁶ Նույն տեղում, էջ 280:

⁷ Նույն տեղում, էջ 279:

Մըջիստնի հետ: Ֆրենսիսը դառնում է ավելի նյարդային և ծեր կնոջը վիրավորելու պատճառով վիճում կնոջ հետ: Այնուհետև վիճաբանությունը փոխվում է ավելի լուրջ թեմայի: Ֆրենսիսի կինը պնդում է, որ սիրված չէ: Նույնիսկ մտածում է թողնել ամուսնուն, սակայն Ֆրենսիսին հաջողվում է համոզել կնոջը իրեն չլքել: «Օ, սիրելիս, ես չեմ կարող թողնել քեզ, որ հեռանաս: Չեմ կարող թողնել քեզ, Ջուլիա, - ասաց Ֆրենսիսն ու գրկեց կնոջը: Ինձ թվում է, որ պետք է մի որոշ ժամանակ էլ մնամ և հոգ տանեմ քո մասին»⁸:

Բոլոր այս հակասությունները ղեկավարում են Ֆրենսիսին և բերում հասցնում նրան կյանքի կարևոր ընտրության առջև. «Մոայլության զգացումն անտանելի էր, և նա շատ պարզորոշ տեսնում էր, որ հասել է այն կետին, ուր հարկավոր է ընտրություն կատարել»⁹: Մտորումներից հետո Ֆրենսիսը վերջնականապես որոշում է, որ հոգեբույժի մոտ գնալը կարող է օգնել իրեն:

«Բժիշկ Հըրցըզ, ես սիրահարվել եմ»¹⁰: Ֆրենսիսի կյանքում սա առաջին դեպքն է, երբ նա այլ անձի մոտ ազնվորեն բարձրաձայնում է իր զգացողությունները և գիտակցում, որ նոր ծնված սերը ստեղծում է այն խնդիրները, որոնք պատրաստ է լուծելու: Բժիշկ Հըրցըզի խորհրդով Ֆրենսիսը սկսում է զբաղվել հյունանագործությամբ, որի մեջ կարողանում է գտնել իսկական մխթարանք և մոռանալ Անի հանդեպ կիրքը: Այդուհանդերձ Ֆրենսիսը կարող է իրեն համոզել, որ սովորական կյանքով ապրելն ինքնին որոնում է: Պատմվածքի ավարտի տեսարանը ցույց է տալիս Ուիդի տան երեկոյան խաղաղ մթնոլորտը, որտեղ ամեն ինչ այնպես է, ինչպես որ պետք է լիներ: Պատմվածքի վերջնական հանգուցալուծումը չի ենթադրում դրամատիկ լուծում: Իուջին Չեզնեքը «Ջոն Չիվերի վարժ հնարքը» («The Domesticated Stroke of John Cheever») հոդվածում մեկնաբանում է պատմվածքի ավարտը. «Ամեն ինչ վերադառնում է իր նախկին վիճակին, թվում է՝ ընտանիքում կվերադառնա կարգուկանոնը»¹¹:

Ըստ Բալֆ Վուդի՝ պատմվածքն այսպիսի եղանակով ավարտելը Չիվերին բնորոշ հատկանիշներից մեկն է: Փաստորեն, երբ պատմվածքի հերոսները սկսում են ընկալել դաժան ճշմարտությունը սեփական գոյության և աշ-

⁸ Ջոն Չիվեր, էջ 292:

⁹ Նույն տեղում, էջ 294:

¹⁰ Նույն տեղում, էջ 296:

¹¹ Eugene Chesnick, The Domesticated Stroke of John Cheever, R.G.Collins. «Critical Essays on John Cheever», p. 131.

խարհի մասին, նրանք նորից ընկղմվում են իրենց՝ արդեն իսկ սովորական դարձած անտարբերության մեջ»¹²:

Ֆրենսիսը սովորական միջին խավի ներկայացուցիչ է, ով ապրում է զգացմունքային փոփոխություններ: Այն նոր լիքք է տալիս նրան, նոր շունչ հաղորդում, սակայն հասարակության կապանքներն այնքան ուժեղ են, որ տրորում են նոր հոգեվիճակը: Ինչ-որ առումով Ֆրենսիսը վերադառնում է իր «սովորական դարձած անտարբերությանը», անտարբերություն, որի մասին խոսում էր Ռ. Վուդը: Իրականում պատմվածքը չի հուշում, որ Ֆրենսիսը երջանիկ է: Այն ցույց է տալիս, որ հերոսի համար արկածն ավարտվել է, և ժամանակն է վերադառնալ սովորական ապրելակերպին: Ինչպես «Շեյդի Հիլլի կողոպտիչը» («The Housebreaker of Shady Hill», 1956թ.) պատմվածքի հերոս Ջոնի Հեյքը, Ֆրենսիսը ևս վտանգի տակ է դնում իր ամուսնությունը, սակայն Ջուլիա Ուիդը, ի տարբերություն Քրիստինա Հեյքի, արժևորում է ընտանիքը և ներում ամուսնուն:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Ջոն Չիվերի դուստրը՝ Սյուզան Չիվերը, իր «Տունը մթությունից առաջ» («Home before dark», 1984) գրքում վերհիշում է հոր հետ տեղի ունեցած նմանատիպ իրավիճակ: Կարելի է ենթադրել, որ Չիվերը ստեղծած կերպարների միջոցով վերապրում է իր ներքին զգացողությունները: Գրողն իր կերպարներին ներկայացնում է այնպիսի իրավիճակներում, որոնք փորձված են սեփական անձով: Հնարավոր է, որ պատմվածքների հերոսների նկատմամբ կարեկցական վերաբերմունքի դրսևորումը պայմանավորված է հենց գրողի ինքնաարտահայտմամբ: Նրա հումանիզմը շատ դեպքերում բխում է անձնական հետաքրքրությունից: Կարող ենք ենթադրել նաև, որ Չիվերի նման վերաբերմունքը չի բացատրվում մեծահոգությամբ, այլ ստեղծվում է ինքնապաշտպանության ու համակրանքի սեփական կարիքից:

«Չորրորդ խուճապ» («The Fourth Alarm», 1970թ.) պատմվածքի գլխավոր հերոսը, ի տարբերություն Ֆրենսիս Ուիդի, իր գործողություններում ավելի պասիվ է, այստեղ կինն է նոր զգացողություններ ապրելու ցանկությամբ տոգորված: Չիվերն օգտագործում է այնպիսի կերպար, որը հիմնականում պատկերում է սովորական փոքր մարդուն, ով, չնայած իր բնույթին, ուժ է գտնում վերափոխվելու և իր կյանքին նոր իմաստ տալու: Պատմվածքը պարզորոշ

¹² **Ralph C Wood**, The Modest and Charitable Humanism of John Cheever, Christian Century 17 Nov. 1982. Religion Online. Web.

նկարագրում է, թե ինչ է տեղի ունենում ամուսինների միջև: Հերոսը գիտակցում է, որ իր կյանքում տեղի են ունենում փոփոխություններ, սակայն ընդունակ չէ կամ չի ցանկանում հասկանալ ժամանակային փոփոխությունը: Ամուսինը խոսում է կնոջ, Բերթայի և նրա «հին սովորոյթներից և հատկություններից ազատվելու» մասին: Բերթան ուսուցչուհի է և ազատ ժամանակ միանում է թատերական սիրողական խմբին: Նա շատ է ցանկանում դեր ունենալ թատերական ներկայացման մեջ, և երբ կատարվում է նրա ցանկությունը, խորապես երջանիկ է զգում: Սկզբում ամուսինն անակնկալի է գալիս և չգիտի ինչ անել, նա չի համակերպվում կնոջ նոր մտքերի հետ, անգամ ցանկություն է հայտնում բաժանվել նրանից: Սակայն պարզվում է՝ ժամանակակից հասարակությունը չունի նման նախադեպ. «Նյու Յորքում ոչ մի իրավաբան չի վերցնի բաժանման գործն առանց նախադեպի»¹³: Մինչ Ֆրենսիս Ուիդի կինը՝ Ջուլիան, վիճում է ամուսնու հետ և առաջարկում բաժանվել, Բերթայի ամուսինը զիջում է և, ի վերջո, հանձնվում: Նա գնում է թատրոն՝ տեսնելու կնոջ ներկայացումը: Երբ հանդիսատեսը պահանջում է մերկանալ և մասնակցել խաղին, նա բարձրանում է բեմ, սակայն միևնույն ժամանակ պատրաստական չէ թողնել դրամապանակը, ժամացույցը և մեքենայի բանալիները: Չիվերը ենթադրում է, որ մեր ինքնությունը հաճախ իրերի մեջ է, որն ունենք մեր գրպաններում կամ պայուսակներում, իսկ այդ մտքերից ազատվելու համար պետք է ուժեղ կամք ու բնույթ ունենալ: Չիվերը միևնույն ժամանակ և հեզնում է հերոսի լրջախոհությունը և ցուցաբերում կարեկցանք ու ըմբռնում: Կարճ քննարկումից հետո հերոսը հագնում է զգեստը և, տոգորված լավ զգացողությամբ, դուրս գալիս թատրոնից: Որոշ ժամանակ անց Բերթան դադարեցնում է իր ուսուցչական պայմանագիրը և տեղափոխվում թատրոնին մոտ գտնվող հյուրանոցային սենյակ: Բերթան ապրում է նոր զգացողություններ, որը երբևէ չի զգացել: Նա խոստովանում է ամուսնուն, որ օտար մարդկանց առջև մերկ լինելն իրեն հաճույք է պատճառում. «Այնտեղ ես մերկ էի և չունեի ամոթի զգացում: Միակ բանը, որն ինձ անհանգստացնում էր, այն էր, որ ոտքերս կարող են կեղտոտվել»¹⁴: Պատմվածքի հերոսուհու կյանքում տեղի ունեցած զգացմունքային փոփոխությունը նման է «Ամառանոցային ամուսին» պատմվածքի հերոս Ֆրենսիս Ուիդի զգացողություններին: Սա Չիվերի պատմվածքների ընդհանուր առանձնահատկություններից մեկն է, երբ հերոսն (այս

¹³ Alfred A. Knopf, The stories of John Cheever, New York 1978, p. 647.

¹⁴ Նույն տեղում, էջ 646:

դեպքում կինը) իր միջին տարիքում ապրում է զգացմունքային փոփոխություն: Կարող ենք վերհիշել նաև «Բրիգադիրը և գոլֆ ակումբի այրին» պատմվածքի հերոս պարոն Փասթերնին, ով տարվել էր հարևան միսիս Ֆլեննագանով:

Չիվերը փորձում է ներկայացնել իր հերոսներին զգացմունքային միևնույն վիճակներում: Ինչպես տեսնում ենք, Չիվերը չի կառուցում իր պատմվածքները հերոսական մեծ արարքներով, այլ ցույց է տալիս հասարակ մարդկանց ձախորդությունները կամ հաղթանակները: Չիվերին ավելի շատ հետաքրքրում է ոչ թե մարդու անհատականությունը, այլ նրա դիրքն ընտանիքի և հասարակության բարոյական, հոգեբանական հարթությունում: Հերոսների վարքն առավելապես որոշվում է որպես ընտանիքի անդամ՝ հայր, եղբայր, ամուսին կամ սիրեկան:

«Յտեսություն, եղբայր» («Good by, my brother», 1951թ.) պատմվածքում գրողը վեր է հանում միջին խավին պատկանող երկու եղբայրների միջև բախումը, կյանքի և իրականության նկատմամբ նրանց տարբեր ըմբռնումները: Պատմվածքի սկզբում Փոմերոյների ավագ եղբայրը պատմում է իր ընտանիքի, միայնաց նկատմամբ անձնվեր լինելու և հոգևոր կապի մասին: «Ընտանիքիս մասին շատ չեմ մտածում, բայց երբ հիշում եմ նրանց և ծովափը, որտեղ ապրում էինք, և ծովի աղը, մտածում եմ, որ այն մեր արյան մեջ է, և ես ուրախ եմ, որ Փոմերոյ եմ... Քանի դեռ մենք տարբերվող ընտանիք չենք, վայելում ենք այն պատրանքը, երբ Փոմերոյները միասին են, նրանք առանձնահատուկ են»¹⁵:

Փոմերոյ ընտանիքի անդամները յուրաքանչյուր ամառ համախմբվում են Մասաչուսեթսի ծովափին գտնվող իրենց ամառանոցում, և միայն տարվա այս ժամանակահատվածում նրանց է միանում նաև առանձին բնակվող եղբայրը՝ Լոուրենսը՝ ընտանիքով հանդերձ: Պարզվում է, որ ընտանեկան հարաբերություններն այն չեն, ինչպես ներկայացվում է: Պատմվածքի սկզբից իմանում ենք, որ Փոմերոյների հայրը տարիներ առաջ խեղդվել է ծովում, թեև գրողը հերքում է ծովի՝ սարսափ ներշնչող պատկերը: Լոուրենսը զգուշացնում է ընտանեկան տան խորտակման մասին, ինչը ենթադրաբար հուշում է ընտանիքի կործանումը. «Ծովի պատը ճեղք է տվել: Ես այդ տեսա այս ցերեկ: Դուք այն վերանորոգել էիք 4 տարի առաջ և ծախսել 8 հազար դոլլար: Դուք չեք կարող այն կրկնել 4 տարին մեկ անգամ»¹⁶: Պարզ է դառնում նաև, որ Լոուրենսը մոր

¹⁵ Նույն տեղում, էջ 3:

¹⁶ Alfred A. Knopf, The stories of John Cheever, New York, 1978, p. 7.

հետ հակասություններ ունի: Նա նրան համարում է մակերեսային, չար, վնասակար և չափից ավելի ուժեղ: Նա նույնիսկ կնոջ՝ Ռուֆի հետ ամուսնության ու երեխաների լույս աշխարհ գալու մասին լուրը չի հայտնել նրան:

Լոուրենսը, կարծես, մտադրված է փչացնել ընտանիքի միությունն իր վատատեսությամբ, ընտանեկան զվարճանքներին միանալու, երկխոսելու դժկամությամբ: Նա մերժում է թենիս խաղալու, ծովում լողալու և այլ զվարճանքների մասնակցելու հրավերը, իսկ դիմակահանդեսի երեկոյթի ժամանակ, երբ բոլորը հանդերձավորված էին հարսանեկան զգեստներով, Լոուրենսն ու իր կինը հայտնվում են առօրյա զգեստներով. «Նա չէր խաղում մուլե-խաղեր, ոչ թե գումարն էր խնդիրը կամ սկզբունքները, այլ այն, որ մտածում էր խաղի հիմարության և ժամանակի կորուստ լինելու մասին»¹⁷: Սա խոսում է Լոուրենսի՝ ընտանիքից առանձնացված լինելու մասին: Լոուրենսը չի կիսում իր ընտանիքի անդամների նախասիրությունները, նրա համար դրանք անհասկանալի են: Հատկանշական է, որ Փոմերոյները սիրում են լողալ: Լողն այստեղ կարելի է բնորոշել որպես ինքնամաքման խորհրդանիշ, թեև Չիվերի պատմվածքներում հաճախ այն օգուտ չի տալիս, ինչպես օրինակ «Լողորդը» («The Swimmer», 1964թ.) պատմվածքի հերոս Նեդի Մերիլի պարագայում է: Կարող ենք մտածել, որ պատմվածքի դրամատիկ լարվածությունն անձի ներքին երկպառակության արդյունքն է: Պատմվածքում այն միտքն է զարգացվում, որ աշխարհն, ի վերջո, երկիմաստ է, լի հակադրություններով՝ լավի ու վատի, տառապանքի ու հաճույքի: Լոուրենսը տեսնում է միայն կյանքի վատ կողմերը: Չիվերի հերոս Լոուրենսը միայնակ է, բայց, ի տարբերություն «Շեյդի Հիլի կողոպտիչը» պատմվածքի հերոս Հեյքի, նրա միայնակությունը սեփական որոշմամբ է կատարվել, իսկ այդ միայնակությունը հաղթահարելու համար մարդը պետք է ապրի ընտանեկան ներդաշնակության մեջ:

«Որդը խնձորում» («The Worm in the Apple», 1978թ.) պատմվածքը Քրաչմանների ընտանիքի մասին է: Պատմվածքը սկսվում է այս կերպ. «Քրաչմաններն այնքան երջանիկ էին, զուսպ իրենց վարքագծում և գոհ այն ամենից, ինչը հանդիպում էր իրենց ճանապարհին, որ ինչ- որ մեկը ստիպված էր կասկածել, որ իրենց վարդագույն խնձորում կա որդ, և պտղի այդ արտասովոր վարդագույնը կարծես կոչված էր կոծկելու այդ վարակի լրջությունը և խորությունը»¹⁸: Քրաչմանները կենսուրախ մարդիկ են, ապրում են գոհու-

¹⁷ Նույն տեղում, էջ 12:

¹⁸ **John Cheever**, *The stories of John Cheever*, Alfred A. Knopf, New York, 1978, p. 285.

նակությամբ, նրանց վարքագծում չի նկատվում դժգոհության նշույլ: Հեղինակին հետաքրքրում է հենց այս հանգամանքը, և նա կասկածամտորեն ամեն կերպ ձգտում է ընտանիքում գտնել «որդ»: Որդն այստեղ փոխաբերական իմաստով է գործածվում՝ նկատի ունենալով ընտանեկան գծտության նշույլ կամ մեղավորություն: Զիվերի համոզմամբ երջանկությունը միշտ առաջացնում է կասկած, ինչը համարվում է անսովոր ու ինչ-որ արտասովոր երևույթ: Գրողի ուշադրության կենտրոնում Քրաչմանների ընտանիքի անդամներն են, նրանց բնույթը և բոլոր այն ազդեցությունները, որոնք ձևավորում են նրանց կյանքն ու որոշումները: Զիվերը փորձում է թվարկել այն բոլոր հնարավոր ձախողումները և դժվարությունները, որոնք կարող էին պատահել Քրաչմանների կյանքում: Օրինակ՝ տան պատուհանների մեծ լինելը Զիվերի կարծիքով պայմանավորված է Քրաչմանների մեղքի զգացողության բարդույթով, որպեսզի շատ լույս ներթափանցի բնակարան: Ընտանիքի հայրը՝ Լարին, այնպիսի խանդավառությամբ էր յուրաքանչյուր անգամ գնում աշխատանքի, որ կարելի էր մտածել, որ նա փորձում է փախուստի դիմել ինչ-որ բանից. «Լարիի մասնակցությունը համայնքի կյանքին այնքան եռանդուն է, որ նրան ժամանակ գրեթե չի մնում ինքնագնմանը»¹⁹: Հաջորդ լուծումը պատկերվում է այս կերպ. «Նա ամենուր էր: Եղել է երկաթուղային գծում, հետո սրինգ է նվագել երաժշտական ակումբում, վարել է հրշեջ մեքենա, ծառայել դպրոցական խորհրդում, գնացել Նյու Յորք յուրաքանչյուր առավոտ ժամը 8.30-ին: Ի՞նչ վիշտ էր նրան մտատանջում: Հնարավոր է՝ նա ուզում էր ունենալ մեծ ընտանիք: Ինչո՞ւ նրանք ունեն ընդամենը երկու երեխա, ինչո՞ւ երեքը կամ չորսը չունեն: Հնարավոր է՝ Թոմի ծնվելուց հետո իրենց հարաբերություններում եղել է ինչ-որ խնդիր»²⁰: Կամ իրենց կյանքի հարմարավետության, հնարավոր է՝ նրանց դատեր վաղաժամ հղիությունն ինչ-որ խնդիրներ է առաջացրել: Հնարավոր պատճառների ցուցակը կարող է թվալ անվերջ, սակայն ոչ մեկը դրանցից ճշգրիտ չի լինում: Քրաչմանները երջանիկ են, գոհ իրենց կյանքից ու կարևոր չէ, թե ինչ սև ամպ է կախվել նրանց տան վրա: Քրաչմանները պարզապես թույլ չեն տալիս, որպեսզի իրենց սխալներն անհանգստություն պատճառեն իրենց, և այս վերաբերմունքը կարելի է տեսնել այն ժամանակ, երբ նրանց դուստրն իր առաջնեկին վաղաժամ է ունենում: Երեխան ժամանակից շուտ է ծնվել, սակայն սա էլ տխրելու պատճառ չէ Քրաչմանների համար: Նրանք պարզապես ուրախ են,

¹⁹ Նույն տեղում, էջ 285-286:

²⁰ Նույն տեղում:

որ թռոնիկ են ունեցել, և էական չէ, թե ինչ բարդություններ են եղել նրա ծննդյան ժամանակ: Չիվերն ակնհայտորեն փորձում է գտնել Քրաչմանների ընտանիքում ինչ-որ մեղավորություն, որը կարող է ծաղրի ենթարկել արվարձանում բնակվող մարդկանց, սակայն գրողի ջանքերը, պարզվում է, ապարդյուն են. «Դուք առնվազն կարող եք տեսնել, թե ինչպես են սովորականի պես նրանք իրենց ժամանակը վատնում: Բայց, միգուցե, բախտի բերմամբ կամ իրենց զուսպ և առողջ ապրելակերպի շնորհիվ է, որ նրանք չեն զրկվել ո՛չ իրենց մազերից և ո՛չ էլ ատամներից: Նրանց էյֆորիայի չափանիշը մնացել է զորավոր: Չնայած Լարին հրշեջ մեքենա այլևս չէր վարում, բայց նրան դեռ կարելի էր տեսնել կապի երկաթգծում, «Chamber Music» ակումբում, 8.30-ի սահմաններում 50 յարդ երկարություն ունեցող գնացքում: Նրանք Հելենի միջնորդի խոհեմության և խորաթափանցության շնորհիվ դարձան ավելի ու ավելի հարուստ, ապրում էին ուրախ ու երջանիկ»²¹: Չիվերը պատմվածքի եզրափակմամբ արտահայտում է իր հիասթափությունը Քրաչմանների ընտանիքի նկատմամբ: Թերևս պատճառն այն է, որ նրանց ընտանիքում լիակատար երջանկություն է տիրում, և չկա անհանգստացնող խնդիր: Կարծում ենք՝ գրողի ոչ գոհունակ վիճակը պայմանավորված է նրանով, որ երջանիկ ընտանիքի պատկերը կասկած կամ ձանձրույթ է առաջացնում: Չիվերի այս վերաբերմունքը զարմանալի չէ, քանի որ նրա պատմվածքների մեծամասնության մեջ կարող ենք գտնել ոչ ներդաշնակ ընտանեկան պատմություններ: Այնուհանդերձ, մեղադրանքներից և հերթական արդարացումներից հետո բացահայտում ենք, որ ընտանիքում այդ «որդը» չկա: Ի տարբերություն մյուս ընտանիքների՝ Քրաչմանների դեպքում Չիվերը գողության, հարբեցողության և դավաճանության դեպք չի բացահայտում և, որևէ մեղավորություն չգտնելով, ծաղրանքով գտնում է մի թերություն, երևույթ, որը սկզբնապես էր փնտրում. Քրաչմանները ձանձրալի են: **Կարելի է մտածել, որ պատմվածքը ծաղրական պատասխան է՝ ուղղված այն քննադատներին, ովքեր փնտրում են որդ «արվարձան-խնձորում», և ինչպես գրականագետ Լին Ուոլդանդն է նշում, այս իմաստով սա այլ պատմվածքների ցինիզմի հակաթույնն է**²²:

Այսպիսով, թեև Չիվերի ընտանեկան պատմությունները տարբերվում են իրարից, սակայն ունեն ընդհանրություններ. պատմվածքի հերոսները, կար-

²¹ Նույն տեղում, էջ 285-288:

²² **Lynne Waldeland**, John Cheever, Boston, Twayne, 1979.

ծես, պարուրված են միևնույն զգացողությամբ՝ մենություն, հիասթափություն, ծանծրայթ, սիրո պակաս: Այս երևույթները դառնում են շարժառիթներ՝ կյանքը վերափոխելու համար: Պատմվածքներում նաև այն միտքն է զարգացնում, որ ընտանեկան ոչ լիարժեք հարաբերություններում մարդու անհատականությունը կորչում է, և երբ անձը փորձում է վերագտնել իրեն, ինքնըստինքյան դուրս է գալիս ընտանեկան միջավայրից դեպի դրսի աշխարհ: Սակայն խնդիրն այն է, որ մարդը միայն ընտանիքում մենակ չէ, նա մենակ է նաև հասարակության մեջ, քանի որ որևէ մեկն ընդունակ չէ հասկանալու մարդու մտահոգությունները: Սովորական մարդկային ջերմությունը, հոգատար վերաբերմունքն այստեղ ևս բացակայում են: Մեր կարծիքով գրողի հիմնական պահանջը մարդկանց իրար միավորելն է, իսկ դրան հասնելու համար մարդը պետք է կամ իրեն զոհաբերի, կամ ուրիշին: Ամերիկացի սոցիոլոգ Դեյվիդ Ռիսմանն իր «Միայնակ բազմություն» («The lonely crowd», 1950թ.) գրքում փորձել է բացատրել ամերիկյան կյանքին բնորոշ այս երևույթը՝ մարդու օտարումը հասարակությունից: Գրքում այն միտքն է զարգացվում, որ բոլոր ամերիկացիները միևնույն կենսակերպն ունեն: Ամերիկացի սոցիոլոգը քննադատում է Միացյալ Նահանգների քաղաքացիներին, ովքեր կորցրել են իրենց անհատականությունը: Նրա խորհուրդն էր ամերիկացիներին՝ դառնալ նոր դասի ներկայացուցիչներ: «Արվարձանների բարոյական կարգ»-ում Մ.Պ.Բաումգարտերը ներկայացնում է հետպատերազմյան Ամերիկայում արվարձանների բարոյական չափանիշների բացակայությունը: Ըստ նրա՝ գոյություն ունի համայնքների կառավարման երկու ընդհանուր կանոն: Առաջինում արվարձանի բնակիչներն ուշադրություն չեն դարձնում հարևանների գործողությունների վրա, դատողություններ չեն անում, իսկ երկրորդում արվարձանը հանրային չի դարձնում նրանց անձնային գործողությունները: Զի ենթադրվում, որ մեկն անհարմարություններ կստեղծի մյուսների համար նրանց ուշադրություն չդարձնելու գործընթացում: Արդյունքը լինում է այն, որ արվարձանները դիտվում են որպես խաղաղ կամ ծանծրալի վայրեր, քանի որ փորձելով միմյանց չդատել՝ բնակիչները հազվադեպ են շփվում միմյանց հետ: Բաումգարտերը գտնում է, որ արվարձանի բարոյականության կարգի հիմնական կանոնն անուշադրության մատնումն է: Օրինակ՝ Նյու Յորքի արվարձանի հետազոտության մեջ, երբ շրջապատի անդամներից մեկը բարկացնում է մյուս բնակիչներին, հարևանները հազվադեպ են բողոքում: Նրանք տառապում են այնպիսի անհանգստություններից, ինչպիսիք են՝ ավտոմեքենաների աղմուկը, լույսերը, բայց տարիներ շարունակ չեն բողոքում որևէ մեկից: Սա շատ է տարբերվում

պուրիտանական համայնքներից, որտեղ յուրաքանչյուրը գտնվում էր եկեղեցական համայնքի իրավասության տակ: Արվարձաններում ոչ ոքի չի հետաքրքրում մեկի բարեխղճությունը մյուսի նկատմամբ²³:

Հատկանշական է, որ Չիվերի պատմվածքների հերոսները հիմնականում տղամարդիկ են: Կանայք հանդես են գալիս մոր և կնոջ դերում, ու նրանց դերակատարությունը պայմանավորված է ամուսնու հետ հարաբերակցությամբ և նրա վրա ունեցած ազդեցությամբ: Չիվերը նկարագրում է տղամարդու և կնոջ միջև հակասությունները, ժամանակի ընթացքում ամուսնության նշանակության փոփոխությունը: Հասարակական և ընտանեկան հարաբերություններում մարդկանց միջև հաղորդակցման պակասը, արտաքին աշխարհից հիասթափության զգացողություններն ավելի են սրում լարվածությունը: Սա է պատճառը, որ Չիվերի պատմվածքի հերոսները փորձում են հանգստություն գտնել՝ ներքին դատարկությունը լրացնելու համար: Գրականագետ Ալֆրեդ Քազինը գրում է, որ միայնակության զգացողությունն օդի պես անհրաժեշտ էր Չիվերի հերոսներին, քանի որ նրանք իրենց աշխատանքում ձեռքբերումներ ունենալու զգացողություններ չունեն: Նրանք երբեք չեն բախվում կամ պայքարում հասարակության հետ: Ամբողջ հակամարտությունը կենտրոնացած է մարդու գլխում: Մարդիկ պարզապես անհայտանում են, ինչպես կհեռանան սովորական երեկոյից²⁴: Չիվերն անդրադարձել է նաև կնոջ երկակի դիրքին հասարակության մեջ: Այն առավել ցայտուն արտահայտվել է այնպիսի պատմվածքներում, ինչպիսիք են՝ «Ուսյալ ամերիկուհին» («An Educated American Woman»), «Երաժշտության ուսուցչուհին» («The music teacher»): Ամերիկյան ժամանակակից հասարակության մեջ կնոջ մոտիվը հնչում է նաև «Օվկիանոս» («The ocean») պատմվածքում՝ «Մարդկության պատմության մեջ ժամանակակից կինն ամենից դժբախտն է: Նա նետված է օվկիանոսի մեջտեղում»: Չիվերի պատմվածքների կին հերոսները շատ հաճախ ներկայացվում են տնային տնտեսուհու կարգավիճակում, զբաղված են երեխաներին խնամելու և կենցաղային գործերով: Շատ դեպքերում նրանք ընդվզում և փորձում են դուրս գալ միևնույն, ձանձրալի թվացող առօրյայից, ինչպես օրինակ՝ «Չորրորդ խուճապ» պատմվածքի հերոսուհի Բերթան:

Չիվերի պատմվածքներում ամենամեծ հեզնանքն այն է, որ հասարա-

²³ Baumgartner M.P., *The Moral Order of A Suburb*, New York, Oxford UP, 1988.

²⁴ R. G. Colins, *Critical essays on John Cheever*, G. K. Hall & Co Boston, Massachusetts, 1982, Alfred Kazin, «O Hara, Cheever and Apdike», p. 124.

կական կարգերն էականորեն չեն փոփոխվում, չնայած այն խառնաշփոթին, որի միջով անցնում են հերոսները: Այսպիսով, իր պատմվածքներում սովորական միջին խավի ամերիկյան ընտանիքի ներքին անձնային հարաբերություններն ուսումնասիրելիս Չիվերի ուշադրության կենտրոնում առավելապես անհատն է՝ նրա բարոյական և հոգեբանական նկարագիրը, ցուցաբերած վարքը կյանքի այս կամ այն իրավիճակներում: Չիվերին հերոսների բանական և գիտակցական կողմն այնքան չի հետաքրքրում, որքան նրանց հոգեվիճակը, զգացմունքային փոփոխությունները, հաջողության հասնելու ճանապարհին նրանց սայթաքումները և վայրիվերումները: Ընտանեկան միջավայրում ցանկացած խռովք արտահայտվում է հերոսի ներսի աշխարհում, որն էլ իր ներքին աններդաշնակ վիճակն արտաքին աշխարհում հարթելու պատճառ է դառնում: Ի վերջո հանգում ենք այն գաղափարական ելակետին, որ անձը և ընտանիքը փոխկապակցված երևույթներ են, առանց ընտանեկան միասնության և ամբողջականության մարդը չի կարող ամբողջական ու լիարժեք լինել:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում են «Ամառանոցային ամուսին», «Չորրորդ խուճապ», «Ցտեսություն, եղբայր», «Որդը խնձորում» պատմվածքները, որտեղ հերոսներն ունեն ներքին անհամաձայնություններ ընտանիքի անդամների հետ, ինչպես նաև դրսի աշխարհում: Պարզ է դառնում, որ մարդը խնդիրներ ունի ոչ միայն նշված միջավայրերում, այլ նաև ինքն իր հետ, որի պատճառով շարունակ փնտրտուքի մեջ է, ի հայտ են գալիս այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ մեռությունը, հասարակությունից օտարումը, սիրո պակասը, ներքին խառնաշփոթ վիճակը: Այսպիսով, անձը և ընտանիքը փոխկապակցված երեվույթներ են, առանց ընտանեկան ամբողջականության և լիարժեքության մարդը չի կարող ամբողջական ու լիարժեք լինել:

Բանալի բառեր - երջանիկ ընտանիք, ընտանեկան ամբողջականություն, մարդու մեկուսացում, ընտանեկան միջավայր, ընտանեկան հարաբերություններ, ճգնաժամային պատկեր, անկանխատեսելի իրավիճակ, հոգևոր ճգնաժամ, ներքին աշխարհ, ժամանակակից հասարակություն:

ВНУТРЕННИЙ КОНФЛИКТ ПЕРСОНАЖЕЙ ДЖОНА ЧИВЕРА В СЕМЬЕ И ОБЩЕСТВЕ

МАРИНЕ АНДРАСЯН

В статье «Внутренний конфликт персонажей Джона Чивера в семье и обществе» на примерах рассказов «Дачный муж», «Четвертая тревога», «Прощай, брат», «Червь в яблоке» рассматриваются герои, переживающие внутренние разногласия в семье и с внешним миром. Очевидно, человек конфликтует не только в указанной среде, но и с самим собой, из-за чего находится в постоянном поиске. Раскрываются такие внутренние явления, как одиночество, отчуждение, недостаток любви, внутренний хаос. Таким образом, личность и семья – понятия взаимосвязанные, без которых личность не может быть полноценной.

Ключевые слова - счастливая семья, целостность семьи, изоляция человека, семейная атмосфера, семейные отношения, кризисное изображение, непредсказуемая ситуация, духовный кризис, внутренний мир, современные общества.

THE INNER CONFLICTS OF JOHN CHEEVER'S HEROES IN FAMILY AND SOCIAL RELATIONSHIPS

MARINE ANDRASYAN

The article is a review of four of John Cheever's short stories: «The Country husband», «The Fourth alarm», «Good by, my brother», «The Worm in the apple». In these stories, Cheever presents his heroes who have disagreements with different family members and with the outside world as well. Cheever reveals with the help of his stories the fact that a human being has problems not only in certain environments but also with himself and consequently, he is in a continuous quest. Lonliness, estrangement from society, lack of love and internal chaotic states and other similar phenomena come to light throughout the quest. A person and a family are accordingly interconnected and a person with no family is not secure and his life would not be full.

Key words - happy family, family completeness, Insulation of man, family environment, Family relationships, crisis image, unpredictable situation, spiritual crisis, Inner world, contemporary society.

ՄԱԿԱՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ԱՐՑԱԽԱՊԱՏՈՒՄԸ

ԶԻՆԱԻԴԱ ԲԱԼԱՅԱՆ

Նվիրվում է մեծ հայագետ Մակար Բարխուդարյանի «Արցախ»-ի հրատարակման 120-ամյակին

XIX դարի հայ մտավոր-գրական կյանքի նշանավոր անուններից է Մակար Բարխուդարյանը, որի գրական վաստակը և մանավանդ «Արցախ» գիրքը երկրամասի պատմության արժեքավոր վավերագրերից է:

Մակար Բարխուդարյանը ստեղծել է պատմագիտական-հայագիտական, աղբյուրագիտական, պատմահանրագիտական, գրական, բանահյուսական, քննադատական, կրոնական աշխատություններ:

Հիմնականում Անդրկովկասի մշակութային կենտրոն Շուշին է եղել բանահավաքի բնակության և գործունեության կենտրոնը: Մահկանացուն կնքել է էջմիածնում 1906 թվականին:

Բարխուդարյանի շրջագայությունների և ուսումնասիրությունների լանդշաֆտը եղել է Անդրկովկասը, առանձնապես Ելիզավետպոլի նահանգը, Երասխից մինչև Դերբենդ, ապա Հնարակերտից մինչև Մուխանք գավառը:

Մ. Բարխուդարյանին հաջողվել է մեծ դժվարությամբ հավաքել հարյուրավոր վիմական արձանագրություններ, արտագրել բազմաթիվ ձեռագիր հիշատակարաններ, Հայսմավուրք, հմտորեն նկարագրել բոլոր բերդ-ամրոցները, վանական համալիրները, լքված ու շեն, նաև ավերակ բնակատեղիները: Այդ ամենի արդյունքը եղել են նրա երկերը, հնագիտական մեկնությունները, որոնք իրենց տեսակի մեջ առաջինն էին:

Պատմամշակութային արժեքների, հուշարձանների նկատմամբ մարդկանց ցուցաբերած անտարբերությունն էր պատճառ հանդիսացել հնաբանի անհանգստության, որից միմիայն օտարներն են օգտվել. «Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարներն»¹, - հատկանշում է բանահավաքը «Արցախ» գրքի «Յառաջաբանութիւն»-ում: «Աղվանից երկիր և դրացիք» (Թիֆլիս, 1893) երկհատորյակն ամբողջացնում է Հայաստանի արևելյան գավառ-

¹ **Բարխուդարյանց Մ.**, Արցախ, Երևան, «Ամարաս» տպ., 1996 (այսուհետև՝ **Բարխուդարյանց Մ.**, Արցախ), էջ Ա:

ների (պատմական Ուտիք և Արցախ նահանգների) պատմությունը, ազգագրությունը, հոգևոր և նյութական արժեքների և մշակութային հուշարձանների պատմությունը:

Մակար վարդապետի երկրորդ և առավել արժեքավոր հրատարակումը «Արցախ»-ն է (1895), իր գիտական մակարդակով արդիական հնչողություն ունեցող մի ուսումնասիրություն, որը հանրագիտարանային բնույթ է կրում՝ որպես հայագիտական-արցախագիտական կոթող:

Աղբյուրագիտական այս հուշարձանը վերահրատարակվեց 1996թ.՝ նվիրված նրա առաջին հրատարակման 100-ամյակին: Այն նախածեռնել է ԱրՊՀ նախկին ռեկտոր Պ. Գևորգյանը՝ պահպանելով առաջին հրատարակության գրաբարյան՝ դասական հայերենի ուղղագրությունն ու տիտղոսաթերթի նախկին հրաշալի պատկերազարդված ձևը:

Գրքի տիտղոսաթերթին գրված է՝ «Արցախ», Մակար եպիս. Բարխուտարեանց, Բագու, տպարան «Արօր», 1895: Հեղինակն ուղերձով դիմում է Հայոց Վեհափառին՝ Խրիմյան Հայրիկին, պարտավորված է զգում նրան վայելույ ընծա նվիրել. «Բայց որովհետև սիրում է Ձերդ Վեհափառութիւն հայրենի հնութիւնները և աստուածակոխ Ս. երկիրը, ինչպէս ակներև է Ձերդ Հայրութեան սրտաշարժ և հոգեշունչ բանահիւսութիւնից- «Հրաիրակ երկրին Արարատայ» և «Հրավիրակ երկրին Աւետեաց», վասն որոյ բարուք համարեցի նուիրել Հոգեծին և Բազմերախտ Հօրդ իմոյ՝ «Արցախ»-ը, որ պատկերացնում է Մեծն Հայաստանի 15 նահանգներից մէկի հայկական ւաերակների և հնութեանց փոշիները և Յիսուս Քրիստոսի ձեռագիր ւաետարանների յիշատակարանների փշրանքները»:

«Արցախ»-ը ճանապարհորդական գրառումների մի հետաքրքիր հավաքածու է: Այն հեղինակը միահյուսել է Արցախում կատարած երկարատև շրջագայություններից-ճանապարհորդություններից հետո: Մանրամասնորեն տրրված են Արցախի գյուղերն ու քաղաքները, աշխարհիկ և հոգևոր շինությունները (հին ու նոր), չնաշխարհիկ բնությունը, ժողովրդի ստեղծած բերքն ու բարիքը, աշխարհագրական ու պատմական ճիշտ պատկերը:

Ս. Բարխուդարյանը ցավով է փաստում «յուրյանց» անհոգ ու անտարբեր վարքը Արցախի հնությունների հանդեպ, թե մեր նախնիներն ինչ են ավանդել սերունդներին, թե «չգիտենք թե պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի և դաշտերի մէջ. չգիտենք թե ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան ւաերակ վանքերի և անապատների, մատուռների և

եկեղեցիների, խաչարձանների և տապանաքարերի վերայ և մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում»² :

Արցախի պատմության հանդեպ այս շնորհակալ գործը XIX դարում առաջինը սկսել էր Մուրացանը:

Վերջինիս նշած ճանապարհով ընթացավ Ռաֆֆին, որի շրջագայության արդյունքը եղան «Երկու ամիս Աղվանից շուրջը» ճանապարհորդական նոթերը: Այս ազգանվեր ծրագրի շարունակողն էր Մ. Բարխուդարյանը: Նա տեսավ, որ ժամանակի անողոք մագիլները եղծում են հայրենի Արցախի ամենապատվական հնությունները, տեսավ, որ ցեցերն են կրծում և ոչնչացնում թանկարժեք ձեռագրերում պահպանված պատմական մարգարտաշարը, տեսավ, որ մեծատուններն ու ընկերություններն անհոգի են այդ ամենի հանդեպ և չեն ձեռնարկում Արցախի հետազոտության գործը, ուստի սրբազան պարտք է համարում սիրով կրել ամեն-ամեն նեղություններ, միայն թե կարողանա «ազատել մնացեալ յիշատակարանները աներիչ ձեռքերից, ցեցերից և խոնաութիւնից և ժամանակի ճիրաններից և գոնէ կազմել մի ուղեցոյց՝ ապագայ հմուտ մասնագետների համար»³:

Արցախագիտական այս կոթողն ունի «Յառաջաբանութիւն»՝ 7 ամփոփ էջի ծավալով: Գիրքը բաղկացած է 264 էջից ու ծանոթագրություններից, որտեղ ցույց է տրված 24 ավերակ՝ վաղեմի շնորհներից ընկած կամ մահմեդաբանակ դարձած քաղաքների, նույն վիճակով 13 գավառների ու դրանց ենթակա բնակավայրերի ցուցմամբ: Բովանդակությունն այբբենական ու թեմատիկ ձևով է ներկայացված: Արցախյան ավանդույթների, տիպական էթնիկ ձևույթների քննությամբ է տրված 19 տեղանքի նկարագիրը՝ համապատասխան առանձնահատկություններով, պահպանված ծիսակատարություններով, եկեղեցական արարողություններով:

Հեղինակը շարունակաբար ներկայացնում է պատմական, աշխարհագրական, ռելիեֆի, տնտեսական, երկրաբանական, հողերի վիճակի, գետերի, լեռների, ապարների, բրածո-հանածոների, օգտակար երևույթների, գործառույթների, կլիմայի, ժողովրդավարության, տնտեսավարության և այլևայլ համակարգերը: Ընդգծվում են վանական սրբատեղիներ, անապատներ, հոգևոր կենտրոններ, ապարանքների տեղադրություններ... Հայագետի յուրաքանչյուր տողից երևում են նրա սերն ու ակնածանքը նախնի լուսավոր մարդկանց,

² Բարխուդարյանց Մ., Արցախ, էջ Ա:

³ Նույն տեղում:

նրանց վարքի ու առաքելական գործերի հանդեպ, ինչպիսիք են՝ Գր. Լուսավորիչը, Գրիգորիսը, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը և ուրիշներ: Մանրատառով հատկանշված են մասունքները:

Բարխուդարյանը ցավով է խոսում վանքերի, Աղվանից կաթողիկոսության վախճանի մասին. «Լուսահոգի Բաղդասար մետրապոլի կենդանութեան ժամանակ,-գրում է նա,- շէն և պայծառ տեսած եմ Երիշ-առաքեալը, Ինն մասը, Գանձասարը, Ս. Յակովբը, Պտկես-բերդը, Ամարասը, Գտիչը և Սպիտակ-Խաչը և Ղևոնդեանց անապատը վանահայրերով, միաբաններով և ուսումնարաններով»:

ԻԱ մասում ցույց է տալիս յուր կրած տառապանքները. «Շրջակայութեանս ժամանակ կրեցի մեծ նեղութիւն. երեք անգամ ազատուեցայ արինարբու աազակաց ձեռքն ընկնելուց, երեք անգամ ձիու տակ մնացի վտանգաւոր տեղերում, այս է սահեցաւ ձիու ոտքերն. ընկաւ ուժգնակի գետնին և ես մնացի ձիու ներքև. երեք օր մնացի անսուաղ (քաղցից դալկացած- Ջ.Ա.-Բ.) Ծար գաւառում հաց չգտնելու պատճառաւ»⁴:

Ու այսպես, գծվում է նրա ճանապարհորդության շղթան՝ Հարթավայրային և Լեռնային Արցախ ամուր աշխարհի (Բուզանդ) տարածքով՝ անանցանելի, անդնդախոր կիրճերով, թավանիստ լեռներով, Մայր Տրտուի (Թարթառի) վտանգավոր փեշերով, Կուրակի, Կաշկառի, Բանանց, Շամքորի և այլ գետերի, ջրերի հոսանքներն ի՛ վար, ի՛ վեր...

Անշուշտ, նման հսկայական աշխատանքը հնարավոր չէ՝ անսխալական լինի՝ կապված տարաբնույթ հարցադրումների՝ լեզվական, շարահյուսական, բառաբարդման, ածանցման, հնչյունափոխված և այլ ձևույթների շեղումների հետ: Հեղինակը հաճախ է փորձում օտար տեղանունների անճանաչելիության աստիճան հնչյունափոխված անունների հայերեն բառակապակցությունները գտնել, մեկնաբանել, ստուգաբանել, հատուկ անունների բառակազմությանը տալ իր նախկին փայլը՝ վերականգնելով երևույթի իսկական հնչեղությունը, արտասանությունը, օրինակ՝ Դամիրչիլար՝ Դարբնոց, Ալահվերտի՝ Աստվածատրի գյուղ, Հարճիլար-Հարճլանք, Քիլիսաքեանդ՝ Եկեղեցաձոր, Ղարաբաղ՝ Սև այգի, Ղարաբուլախ՝ Սև աղբյուր, Ղ/Կարաբաղ- Սև այգի և այլն...

Իսկ ահա երկու հազարից ավելի տարիների կյանք ունեցող Վարանդա գավառի Սխտորաշենին մոտիկ գտնվող տնջրու մասին Բարխուդարյանը

⁴ Նույն տեղում, էջ է:

այսպես է արտահայտվում. «Շինիս այգիների աղբիւրի մօտ կայ մի թեղի բազմադարեան ծառ, որի հաստութիւնն է 22 մետր, 75 սանթիմ»⁵ :

«Արցախ»-ի մեջ Բարխուդարյանը զետեղել է երկրամասի նախկին և փոփոխված շատ սահմանագլուխները՝ ներառյալ լեռներ-լեռնակներ, դաշտեր-դաշտակներ, գետեր-գետակներ, մեծ աղբյուրներ, նավթահանքեր, հանքային ջրեր, այլևայլ շինության քարերի հանքեր, անտառը յուր ունեցած շոայլանքներով: Գրքում միաժամանակ հեղինակը զետեղել է տեղեկություններ շինականների հագուստների, բանջարեղենի, մրգերի, ընտանի և վայրի բույսերի, թռչունների, գործածվող աշխատանքային գործիքների, զենքերի մասին մի ամբողջ հանրագիտարան. մի խոսքով՝ բնության, մարդկային հասարակության, մարդու ստեղծած մշակութային արժեքները ներկայացնող ընտրված դաշտ՝ պատմական, աշխարհագրական, կրթական կյանքի ամբողջական հիմքը:

Շեղինակը գծագրում է Ուտիքի և Արցախի բոլոր գավառների սահմանները՝ նշելով. «Մեծ-Հայոց 15 նահանգներից մինն է Արցախն, որի սահմաններն էին Հայոց Վաղարշակ թագաւորի ժամանակ (Երասխ գետն, Արցախական ամենաբարձր սարերի գագաթնագիծն և Հնարակերտ ամրոցն: Այս սահմանների և Կուր գետի և Կովկաս մեծ սարի մէջ ընկած տարածութեան վերայ Կուսակալ կարգուած էր Սիսական Առանն նոյն Վաղարշակ թագաւորից»⁶:

Քննելով Արցախական աշխարհի աշխարհագրական և պատմական տեղանվան հարցը՝ Բարխուդարյանը, աղբյուր ունենալով Խորենացու պատմությունը, նշում է. «Այս նահանգն զանազան դարերում փոփոխություններ կրելով Հայերից կոչուած է Գ ա ռ գ ա ռ, Արցախ, Փոքր Սինիք, Խաչենք, Սեաւ Այգի, Իսկ Պարսիկներից և Տաճիկներից՝ Ղարաբաղ»⁷ :

Ներկայացնելով Արցախի գավառների բնաշխարհը՝ Բարխուդարյանը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր գավառ քանի գյուղ, քանի ծովս, արական, իգական սեռի ներկայացուցիչներ, պսակ, ննջեցյալներ (արական, իգական), եկեղեցի ու քահանա է ունեցել:

Դրանց շարքում գերակշռող է եղել Վարանդա գավառը՝ իր 61 գյուղով, 7003 ծխով, 24,193 արական, 19,774 իգական բնակիչներով, իրարից տարբեր-

⁵ Նույն տեղում , էջ 68:

⁶ Նույն տեղում, էջ 1:

⁷ Նույն տեղում, էջ 2:

վող ծնունդներով (արական՝ 700, իգական՝ 500), պսակը՝ 312, արական ննջեցյալ՝ 201, իգական՝ 181, գավառն ունեցել է 58 եկեղեցի իր 66 քահանաներով⁸:

Մանրախոյզ-քննախոյզ է Բարխուդարյանն իր կառուցվելիք աշխատանքում, իր գործի ասպարեզում պարզապես բանիբուն հետազոտող, նվիրյալ:

Յուրաքանչյուր գավառի ուսումնասիրություն ամփոփում է նրան վերաբերող բոլոր փաստերը՝ վիճակագրական, բնական, հոգևոր, իրավական, հողային՝ արքունական, վանքային, բեկական, կենդանական, բուսական աշխարհները, հնությունները, վիմեղեն և գրագիր արձանագրությունները, կրոնական, աշխարհիկ մատյանները, ավանդույթները, վանական, աշխարհիկ համալիրները՝ իրենց բոլոր պարագաներով:

Արտաքինից Մ. Բարխուդարյանի գրքի շարադրանքում մի քիչ չորություն է զգացվում, բայց դա առաջին հայացքից, ուշադիր ընթերցման, մտորման, քննման, հայեցման դեպքում մեր առջև բացվում է մի անկրկնելի, իրաշագեղ, հարուստ պատմությամբ, բարքերով, հոգևոր և աշխարհիկ առաքինություններով պսակված բիբլիական աշխարհ, որի անունն Արցախական երկիր է, մարդկային բնութենական բոլոր հրաշքների թագ ու պսակ հանդիսացող խորհրդով, ազատության և քաջագործությունների մղվող արցախահայության անգերազանցելի հատկություններով:

Դիտենք, որ Վարանդական աշխարհին վերաբերող նկարագրությունները, բազմաբնույթ փաստերն ավելի գերակշռող են մնացած գավառներից.

«Ամարաս Վանք (15).

Հիմնուած է այն երկրալեզուի վերայ, որ Մուղան դաշտից կամ գաւառից մտած է Խազազի և Լուսաւորչի սարերի մէջ և կազմած դուրալի հովիտ, որի միջից հոսում է Ամարաս վտակն....

Հրահսային դասում առաջին լուսամտին պատկից շինուած է մի գեղեցիկ տապանաքար, որի տակ է ամփոփուած Սուրբ Լուսաւորչի Թողին- Աղուանից Ա. կաթողիկոս Գրիգորիսի մարմինն: Ահա այս է գլխաւոր ուխտատեղին: Վանքիս երկարութիւնն է 23 մետր, լայնութիւնն՝ 13 մետր 33 սանթիմ:

Տաճարումս է մասն սրբոյն Գրիգորիսի զետեղուած մի արծաթեայ, ոսկեգօծ, ականակուտ և մարգարիտներով զարդարուած աջի մէջ, որ կրում է. «Աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից հայրապետին շինեցաւ յամին 1870 ի Շուշի

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 300:

քաղաքի անվարձ աշխատութեամբ Շուշեցի ոսկերիչ Միրզաջանայ Խոջաբաղ-րեանց, Գրիգորի Բատամեանց և Առաքելի Յարութինեանց»⁹:

Վարանդական աշխարհի մելիքանիստ Ավետարանոցի եկեղեցում պահված գրչագրերի և մատուների մասին, որտեղ երևում են նաև հայ կնոջ շնորհալի տաղանդի հետքերը, քննաբանն ասում է. «Սուրբ ավետարան սրբագիր և ոսկեզօծ վախմ և յիշատակ է Աբրահամ պարոն- Տէրին, որ տվան Մելիք Պաղուն կուսակրօն դստերացն Հռութսմին և Դալաթին և Շահան-դուխտին ձեռքն ի վայելումն.... գրեցաւ մատամբ տէր էղիազարին մայիսի ԻԵ օրն թվ ՌՃՁԶ էր.... » (քերված է գրչագրից)¹⁰ :

Ավետարանոցում մելիքական ապարանքների հետքեր կան, ինչպիսիք են՝ Մելիք Հուսեինի, Մելիք Շահնազար Բ-ի, Մելիք Բաղու ապարանքները: Վերջինիս մոտ է Կուսանաց անապատը, որտեղ թաղված է ամբողջ Հայոց, Արցախ աշխարհին հայտնի հերոսական Գայանեի՝ Մելիք Հուսեինի դստեր, Մելիք Շահնազար 2-րդի քրոջ գերեզմանը: Մելիք Բաղու ապարանքի վերնա-հարկը «ռազմագետ գեներալ Առուստամ /Գիւգիեան» Մաղաթովի հրամանով քանդել են ու նրա համար բնակարան շինել, որը 1826թ. Արցախում հայտնված պարսից շահ Աբաս Միրզայի հրամանով քանդել են, քանզի վերջինս հայ զորավարական հանճար գեներալ Մաղաթովից շատ անգամ է պատուհասվել, ոմբակոծվել, փախուստի մատնվել, վերջնականորեն դուրս շարտվել Արցախից նրա հրամանատարությամբ գործող ռազմական բանակի կողմից 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում:

Ավետարանոցում է իր իմաստասիրական և այլ բնույթի երկերը գրել Վաչե թագավորը, որը թաղված է գյուղի իշխանական գերեզմանոցում: «Աւե-տարանոցս իբրև մելիքանիստ ասան և գաւառագլուխ, ունեցած է ամուր պարիսպ, որով շրջապատուած է եղել ամբողջ ասանս (Շուշիի պարիսպների շինարարությունն ընդօրինակած է Ավետարանոցի պարսպաշարի կառուցո-ղական ձևույթը- Ձ. Ա.-Բ.)....Պարիսպս շինող որմահիւս վարպետի գերեզ-մանն,- գրում է Բարխուդարյանը,- գտնուում է ասանիս միջում պարոն Առստա-մի (մականուանեալ Ումախան) պարտիզումն: Տապանաքարի հարաւային երեսին. «Անուան Մելիք Շահնազարին (Գ-ին) որդի Մելիք Սէյինի. այն ժա-մանակն որ Կուրջին եկաւ (Վրացի զօրք) թուին ՌՃՂԹ. էր, որ ղալաս (Ավե-

⁹ Նույն տեղում, էջ 74:

¹⁰ Նույն տեղում, էջ 62:

տարանոցի բերդը) շինեցի, ով որ կարդա, մէկ բերան Աստուած ողորմի ասի. ամէն»: Մյուս երեսին. «Այս է տապան Գաբրիէլի որդի Դաւթին թ. ՌՄԽԸ»¹¹:

Ապա նաև նույն տեղանքից մի փոքր վերև հետևյալ կարևոր տապանագիրը կա. «Ի ՈՂ ննճեց Հա....թգաորի Աղվգ....ես տէր Մասուն գրեցինք. այս ով որ կարդէ. Աստուած ողորմի ասէ: Այս է հանգիստ Մուրադի Ղաթիննա գաջի(քաջի) Էարանդայ գավառ հնուտոյն ասպարաբետի (սպարապետի):- Բարխուդարյանը շարունակում է պատմականություն ունեցող վիճաբարի շարքը՝ նշելով,- Տապանագրիս մօտ. կայ նաև մի այլ ձիու վերայ մի թագուհու պատկեր, բայց տապանաքարիս վրայ չկայ արձանագրութիւն»¹² :

Անդրկովկասի լուսավորական, մշակութային, կրթական, տպագրական, թատրոնի, հրատարակչական գործի, կրթության, արվեստների կենտրոն մայրաքաղաք Շուշիի աշխարհագրական և ծննդաբանական նկարագրի մասին Բարխուդարյանը նշում է. «Շուշի քաղաք (500 ոտք). Հիմնուած մի բարձրագոյն սարահարթի վերայ, որ գրեթէ առանձնացած է իւր չորս կողմերից: Լայն հորիզօն և անդնդախոր ձոր է հիւսիսային և արևմտեան կողմերն. որից հոսում է բուն Գարգար գետակս. հորիզօնն նեղ, վիճահերձ սարսափելի խոր ձոր է քաղաքիս արևելեան և հարաւային կողմն, որից հոսում է Գարգար գետակի օժանդակն, լայնատարած վիճահերձ և խոր երևոյթ ունի արևմտեան հարաւային կողմերի միջավայրն-քաղաքի արտաքին կողմն. իսկ սաստիկ զառիվայր է արևելեան և հիւսիսային կողմերի միջավայրի տարածութիւնն՝ պարսպից դուրս: Այլապես գրելով երեք կողմերն բարձր քերձեր են, իսկ չորրորդ կողմն պարսպուած զառիվայրի բերանով: Աւելորդ է գրել թէ քաղաքս կոչուած է և բերդ, բերդաքաղաք և ամրոց, որի մակերևոյթն զգալի կերպով թեքուած է հարաւային արևմուտքից դէպի հիւսիսային արևելք և որի տարածութիւնն պակաս է քառորդ քառակուսի մղոնից: Համարուած է այս գաւառագլուխ քաղաք, որի մէջ նստած է գաւառապետ, հաշտարար դատարար իրեանց պարագաներով հանդերձ»¹³:

Խոսելով բնակիչներից՝ Բարխուդարյանը տալիս է նրանց հիմնական տարրի (հայեր, շիա-մահմեդականներ) մասին, ցույց տալիս եկվոր հայերի կողմից նրանց երկրամասերի, բնակավայրերի անուններից կազմված քաղաքի թե՛ օձման, թե՛ երկրորդական թաղամասերի անունները, ինչպիսիք են՝

¹¹ Նույն տեղում, էջ 63:

¹² Նույն տեղում, էջ 64, 65:

¹³ Նույն տեղում, էջ 88, 89:

Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր եկեղեցին, Ագուլեցվոց եկեղեցին, Մեղրեցվոց եկեղեցին և այլն:

Բարխուդարյանը, իր ծննդավայրի մասին գրելով, նշում է նրա բնակիչների եկվոր լինելու հանգամանքը, որ Խնածախի բնակիչները սկզբից Մեծ Սյունյաց Խնածախ գյուղից 1686 թ. տեղափոխվել են Ջրաբերդ, հետո բնակություն հաստատել իրենց անապական օդ, անմահական ջուր, բարեխառն կլիմա ունեցող գյուղում, որի բնակիչներից երկարակյացներն ապրում են մինչև 100 տարի. «եկեղեցին,- նշում է Բարխուդարյանը,- Սուրբ Աստուածածին(ը), հոյակապ(ե), կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւն 18 մետր, 82 սանթիմ, լայնութիւն 10 մետր, 60 սանթիմ, քահանայ մի: Ծուխ 85, ար. 289, իգ. 274»¹⁴: Թվարկում է եկեղեցում գտնվող գրչագրերը:

«Արցախ» մեծարժեք գրքից իմանում ենք հեղինակի կենսագրության մի աննշանի մասին միայն. «Գիւղումս ծնուած է և գրքիս հեղինակն. գիւղիս հանգստարանում հանգչում են իմ պապ Քէանդիսուտա-Խաչատուր Բարխուտարեանցն իւր շատ քաջերով, իմ հայր Գրիգոր, իմ մայր Եղիզաբէթ, իմ տատ Մարիամ, իմ հօրեղբայրք Մկրտիչ, Սարգիս, Թէոս, իմ վաղաթառամ եղբայր Ստեփան, բայց կենդանի են Աստուծոյ ամենակարող զօրութեամբ իմ մեծ եղբայր Կարապետն, փոքր եղբայր Յակովբն և իմ մեծ քոյրերս Անթառամն, Շահգատն և Հերիքնազն (վաղաթառամ վախճանուած է Պալլուճայում իմ միջակ քոյր Վառվառիան: Հանգիստ ոսկերաց Քերոց սիրելիք իմ»¹⁵:

Ըստ կարգի, ըստ ճաշակի, ըստ մեծից փոքրի՝ տրված են վանքերը, բերդերն ըստ գավառների, քաղաքները՝ կանգուն, կիսավեր և ավերակ, բուսական և կենդանական աշխարհները (ընտանի և վայրի), սրբավայրերը, նրանցում գտնվող հոգևոր պիտույքները, մատյանները, գրչագրերը, պատկերազարդված Հայսմավուրքը (բացառիկ 1 օրինակ): Բարխուդարյանը ձեռագիր մատյանների մասին, որոնց հանդիպել է իր շրջագայության ժամանակ, նշում է. «Ձեռ-ԱԳԻՐ անտարան 100 հատ, աստուածաշունչ 2 հատ, ճաշոց 1 հատ, յասմաուր 1 հատ, մաշտոց 3 հատ, Սարգիս-շնորհալի 1 հատ, մեկնութիւն նարեկի 1 հատ, բացադրութիւն Հայոց ամիսների 1 հատ, ընդհանրական Ներ. Շնորհալու 1 հատ, մարմնամարզութիւն և երեզահան 1 հատ, բացադրութիւն յատուկ և հասարակ անուանց 1 հատ, թարգմանութիւն ի պարսիկ

¹⁴ Նույն տեղում, էջ 99:

¹⁵ Նույն տեղում:

բառից 1 հատ, խրատ Պլուտարքոսի 1 հատ, Քարոզ գիրք 1 հատ, շարական 1 հատ»¹⁶:

Միանգամայն ուսանելի են Արցախի տնտեսական կյանքի և արտադրական կուլտուրայի վերաբերյալ տվյալները. «Նահանգս արտահանում է ցորեն, գարի, բոժոժ, բամբակ, բուրդ, բրինձ, լուբիայ, բակլայ, սոխ, սխտոր, գետնախնձոր, ստեպլին, ճակնդեղ, ձմերուկ, սեխ, վարունկ, խաղող, գինի, օղի, ընկույզ, իւղ, պանիր, մեղր, կով, եգն, գոմեշ, ոչխար, այծ, խոզ, ձի, ջորի, ուղտ, արջենի, աղուխենի, ընձենի, գայլենի, սամուր(դէլէ), գոմեշենի, տաւարի, ոչխարի, ձիու, ջորու, խոզի կաշիներ և մորթիներ, պատուական գորգ, կարպետ, մափոռաշ, խուրջին, ջրաղացաքար, տապանաքար, ծուկն, ձկնհակիթ և ձկնապուխտ»¹⁷:

Այսպիսով, Մ. Բարխուդարյանի «Արցախ» բնախոսությունը XIX դարի Արցախի պատմության, մշակույթի, հոգևոր արարումների վերաբերյալ անփոխարինելի վավերագիր է և ունի աղբյուրագիտական բացառիկ արժեք:

ԱՄՓՈՓՈՒՄ

«Արցախ»-ը ճանապարհորդական գրառումների մի հետաքրքիր հավաքածու է: Այն հեղինակը միախուսել է Արցախում կատարած երկարատև շրջագայություններից- ճանապարհորդություններից հետո: Մանրամասնորեն տրված են Արցախի գյուղերն ու քաղաքները, աշխարհիկ և հոգևոր շինությունները (հին ու նոր), չնաշխարհիկ բնությունը, ժողովրդի ստեղծած բերքն ու բարիքը, աշխարհագրական ու պատմական լանդշաֆտի ճիշտ պատկերը:

Քանալի քաներ – Արցախ, խրատ Պլուտարքոսի, XIX դար, Մեծ Սյունյաց Խնածախ, Ամարաս վանք, Շուշի քաղաք, Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր եկեղեցի, Ագուլեցվոց եկեղեցի, Մեղրեցվոց եկեղեցի, Ավետարանոց, Խրիմյան Հայրիկ, Գանձասար, Գր. Լուսավորիչ, վավերագիր:

¹⁶ Նույն տեղում, էջ 299:

¹⁷ Նույն տեղում, էջ է:

“АРЦАХ” МАКАРА БАРХУДАРЯНА

ЗИНАИДА БАЛАЯН

"Арцах" – это интересный сборник путевых заметок. Автор написал его после долгих путешествий по Арцаху. Подробно описаны села и города Арцаха, светские и церковные строения (старые и новые), природа, созданные народом блага, точный портрет географического и исторического ландшафта.

Ключевые слова – Арцах, навет Плутарха, 19-ый век, Большой Сюнанц, Хнацах, монастырь, город Шуша, Собор Всеспасителя, церковь Казанчецоц, церковь Агулецвоц, церковь Мегрецвоц, Аветараноц, отец Хримян, Гандзасар, Григорий Просветитель, документ.

MAKAR BARKHUDARYAN'S TRAVEL BOOK “ARTSAKH”

ZINAIDA BALAYAN

The book "Artsakh" is an interesting collection of travel accounts. Makar Barkhudaryan has written it after touring and travelling the length and breadth of Artsakh. Barkhudaryan has described in great detail the cities and villages of Artsakh, its secular and spiritual edifices (old and new), the spectacular, breathtaking beauty of its nature, the commodities, basic resources and agricultural products of the natives as well as the geographical and historical landscape.

Key words – Artsakh, Plutarch, 19th century, Great Syunyats, Hnatsakh, monastery of Amaras, town of Shusha, the Cathedral Church of the Saviour Ghazanchetsots, church of Aguletsvots, church of Megretsvots, Avetaranots, Father Khrimyan, Gandzasar, Grigor Lusavorich, the document.

ՀՈՒՇ-ԵՐԱԶՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԴԵՐԸ ԱՔԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

ԲԱԼԱՍԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ

Ուսումնասիրելով գրողի կենսագրության մանրամասները՝ դժվար չէ նկատել, որ ոչ միայն նրա կյանքում պատահած որոշիչ դեպքերն են հոգեբանական դիտարկումների համար կարևոր նյութ ծառայում, այլև հերոսին հատուկ մի շարք սովորություններ ուղղակիորեն փոխանցվում են հեղինակից: Այդ դեպքում ժանրի սահմանափակ տարածքում կենցաղային միջադեպն ինչպե՞ս է վերածում համամարդկային ընդհանրացման: Ավագյանն իրական փաստը մատուցում է ստեղծագործական առանձնահատուկ մոտեցմամբ: Նրա երկերը «զարկված» (նկատի ունի հարբած) մարդու մտապատրանք են հիշեցնում: «Ես զարկված եմ և սովերներ եմ տեսնում»՝ Մանուչեհրե Դամղանիի բանաստեղծությունից վերցված այս տողի հաճախակի հիշատակմամբ գրողն ավելի շուտ իրեն էր վերագրում: Ինքն էլ, ինչպես հուշագիրներն են վկայում, իրանական տարիների մասին հիշում ու պատմում էր հիմնականում խմիչքից «զարկված» վիճակում, երբ աննյութական ու սովերային էին դառնում նաև ապրածն ու առկան: Ոգեղենացումը ջնջում էր իրականության ու պատրանքի սահմանները: Իսկ Դամղանիի խոսքերը տվյալ պահին համահունչ էին ստեղծագործող անհատի հոգեվիճակին: Դավիթ Հովհաննեսը, Աբիգ Ավագյանին նվիրված բանաստեղծության խորագիր ընտրելով պարսիկ քնարերգուի չափածոյից բերված տողը, ինքն էլ իր հերթին նրա հարավային աշխարհը դիտում է իբրև գրողին երևացող հեռավոր խաբկանք:

Հուշերն արձակագրին հառնում են «կարծես մղձավանջային երազում, գինարբուքային տազնապալի մշուշների խորքից»¹: Իրականը հեքիաթի տեսքով է ներկայանում՝ նպաստելով առասպելի մուտքին: Անցումը մի վիճակից մյուսին ուղեկցվում է այնպիսի անհավանական մանրամասներով, որ հեղինակն իր պարտքն է համարում ընդմիջել շարադրանքն ու մեկ անգամ ևս հավաստիացնել. «Սա գեղարվեստական պատմվածք չէ, սա այն բոլորն է, որ ես տեսել եմ» (509):

¹ **Ավագյան Ա.**, Վերջին հանգրվան, Երևան, 1982, էջ 464: Մեջբերումները լինելու են հիշյալ ժողովածուից: Էջը նշվելու է փակագծում:

Այս եղանակով լեգենդը ներմուծելով իրականություն՝ Ավագյանը հասնում է ժամանակի ու տարածության լայն ընդգրկման: Առասպելականի մուտքը չի վտանգում պատումի ռեալիստական լիցքերը: Լոսևը նկատում է, որ նոր օրերում միջը դադարել է այդպիսին ընկալվելուց, կորցրել է տառացիությունը և, ստանալով այլաբանական բնույթ, օգտագործվում է գրական տարբեր ոճերի, այդ թվում և ռեալիզմի կողմից²: Իրականի ու անիրականի միահյուսումը³ Ավագյանի կողմից իրականացվում է գեղարվեստական այնպիսի հմտությամբ, որ անհնար է կասկածել հեղինակի պատմածի իսկությանը, եթե նույնիսկ այդ պատմությունն ներմուծված են հեքիաթի տարրեր: Առասպելն այս դեպքում գալիս է մեկ ընդհանուր ժամանակի մեջ ներառելու հերոսի ժամանակը: «Փոթորիկը»՝ սահմանային դեպքը, վերաբերում է ներկային: Այն պատմության իրական հիմքն է և առասպելականացված անցյալի ու հեքիաթային գալիքի միջև միակ հավաստի սկիզբը, որից անցումը մյուս ժամանակներին (հիշողությունների կամ երազի միջոցով) տեղի է ունենում երևույթի իրական եզրի մշուշման հաշվին: Ներկայացվող անցքերը, ըստ հերոսների կենսագրության, ինքնատիպ ու եզակի են: Սակայն գրողը երևույթի իրական կեղևի տակ որոնում է նրա խորհուրդը: Այդ նպատակին են ծառայում վերհուշն ու երազը: Դրանք թույլ են տալիս թափանցել երևույթի խորքը, բացահայտել իրերի էական գծերը: Կոնկրետ հերոսների ու նրանց ժամանակի միջոցով հեղինակն արծարծում է համաժամանակյա խնդիրներ: Նման մոտեցմամբ նա. «... ինչոր իմաստով հաղթահարում է ժամանակը, վեր է կանգնում ոչ միայն եզակի դեպքից, այլև ճշգրիտ կերպով արտացոլված ժամանակից»⁴:

Այսպիսով, կենսագրական փաստերն Ավագյանին համամարդկային ընդհանրացումների հնարավորություն են ընձեռում: Այդ ճանապարհին, ինչպես ասացինք, կարևոր նշանակություն են ստանում հուշ-երազները՝ ստեղծելով պայմանական միջավայր և նպաստելով երևույթի վերացարկմանը: Ճիշտ է, հուշերի միջոցով ճշտվում է հերոսի անցած ուղին, սակայն Ավագյանի արձակում վերհուշի դերն այդքանով չի սահմանափակվում:

² Տե՛ս **Լոսև Ա. Փ.**, Проблема символа и реалистическое искусство, Москва, 1976, стр. 5, www.google.ru.

³ Ավագյանի արձակի այս առանձնահատկությունը նկատել է նաև Ա. Կոստանյանը: Տե՛ս **Կոստանյան Ա.**, Վիպողի վարպետությունը, «Սովետական գրականություն», N3, էջ 128: Բացառապես իրականի ու երևակայականի միահյուսումից ու հակադրությունից են ելնում նաև մյուս հոդվածագիրները:

⁴ **Лихачев Д.**, Поэтика древнерусской литературы, Ленинград, 1971, стр. 242.

Նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում կա մի սահման, «որտեղ մարդ կանգ է առնում ու սկսում է ետ նայել» (12): Պատմվածքը սկսվում է հենց այդ կետից: Ընդ որում՝ հերոսի հիշողություններում վերակենդանանում է այն ճակատագրական օրը, ակնթաղթը, որը, ի հակադրություն նրա կյանքի գորշ ֆոնի, ոգեղենանում է լույսի տեսքով: Վերհուշը, գեղագիտական կարևոր գործառույթից բացի (այն գեղեցիկին հաղորդակցվելու ներքին մղումն էր արտահայտում), առանձնանում է նաև պատկերման առանձնահատկությամբ: Նախ՝ անդրադառնանք դրա գեղագիտական արժեքին:

Ավագյանի ստեղծագործական համակարգում վերհուշի դերը միայն հերոսի անհատական նկարագիրը ձևավորելով չի սպառվում, ինչպես որ կարծում է Մ. Թևանյանը. «Գեղարվեստական վերհուշի հնարանքը Ա. Ավագյանի կայուն նախասիրություններից չէ, սակայն քանիցս պատմվածքներում օգտվել է դրանից՝ հերոսների կենսապատումը ամբողջական դարձնելու, անցյալի ու ներկայի եզրագծերը միմյանց շաղելու, այս կամ այն կերպարին հուզական լիցքեր հաղորդելու նպատակով»⁵: Ուշադրություն դարձնենք մի կարևոր հանգամանքի. կյանքի անցած դրվագները հերոսի համար ուղղակի հիշողություններ չեն: Նա կարևորում է հատկապես անցյալի լուսավոր պահը, այսինքն՝ այն կարճատև միջոցը, որն անհատին բարձրացնում է մանր հոգսերի ոլորտից՝ միացնելով մեծ ժամանակին: Մասնավորն ընդհանուրին միավորելու գործառույթ ունի վերհուշը, որ այլ հանգամանքներում իրականացվում է երազի միջոցով: Ակնթարթի վեհությունը հիմք է տալիս նրա մեջ իրականից տարբեր բովանդակություն դնելու: Չգտնված երազն է այս կերպ մարմնավորվում, փոխադրվում երբևէ պատահած գեղեցիկի տիրույթ: Վերհուշի մեջ բացվող պահը ստանում է մեծ խորհուրդ ու տարողություն: Կանաչ-կարմիր եղնիկը չէր կարող անտառապահին մարդկային լեզվով պատմել փոսում հայտնված գեղեցկուհու մասին, վագրը՝ շնորհակալություն հայտնել որսորդին կամ բողբոջ մարդու չարագործությունից՝ պահանջելով իրենց մոտ բերել Սեյֆուն: Տարիների հեռավորությունից դրանք վերարտադրվում են այնպես, ինչպես որ հերոսը կուզենար: Այսպիսով, պահի հիշողությունը, լինելով անցյալի իրական ապրում, միաժամանակ արտահայտում է հերոսի իղձերը: Ջրկվելով նյութականությունից՝ այն առարկայանում է ոգեղեն տեսքով: Հերոսները, որոնց նախատիպերը եղել են սովորական մարդիկ՝ իրենց սովորական գործերով, ծանոթների հիշողություններում կամ երազի ճանապարհին արդեն ներկայանում են

⁵ Թևանյան Մ., Արիզ Ավագյան, սեղմագիր, Երևան, 2000, էջ 10:

էպիկական նկարագրով: Առասպելի մուտքով պատմությունն ինչ-որ տեղ ստանում է վերացական բովանդակություն: Այն հարաբերվում է ներկային նախորդող ու հաջորդող ժամանակներին և անհատականի նեղ ոլորտից հերոսին դուրս է բերում դեպի տիեզերական ժամանակ:

Սահմանային իրադրությունը մյուս դեպքում անհատին կողմնորոշում էր դեպի երազը: Սկսած շրջադարձային ակնթարթից՝ հերոսները, որոնք մինչ այդ ներկայանում էին մեկը մյուսից ուրույն բնութագրով ու բնավորության անհատականությամբ, դադարում են այդպիսին լինելուց՝ միավորվելով մեկ ընդհանուր էպիկական հերոսի շուրջը: Սերոբը («Լիմեցի Սերոբը գնաց»), Փափը («Կարոտ»), Բարեղամը («Երբ շոգում ծիծաղում են») հայրենիքում ունեցել են տուն, ընտանիք, մասնագիտություն: Բնավորությամբ առաջին երկուսն ավելի հավասարակշռված են, քան երրորդը: Եթե մեկը վիշտն արտահայտում է ծիծաղի միջոցով, ապա մյուսների ցավի մասին վկայում են սարսափահար աչքերն ու լուռությունը: Դեպքից հետո, սակայն, նրանք միևնույն ճանապարհի մարդիկ են, որոնք ոչինչ չունեն՝ կյանքը վերափոխելու մեծագույն նպատակից բացի: Մադենցի ծերունին նշված հերոսներից առանձնանում է ինչպես անհատականությամբ, այնպես էլ ազգությամբ ու հավատքով, բայց գիսաստղի անհետացումից հետո նա նույն որոնումների ելած դերվիշն է, ով չունի ազգություն, անձնական կյանք, անուն: Հաղթահարելով արգելքները՝ մարդը մղվում է դեպի անհասը՝ իր նմանին գեղեցիկը, կատարյալը վերադարձնելու: Այդ պահից իրականը մղվում է երկրորդ պլան: Ավագյանը հերոսներին համախմբում է մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: Նրանք մարմնավորում են առասպելական դերվիշին:

Ե՛վ վերհուշը, և՛ երազը պատումի աննշան հատվածն են զբաղեցնում, բայց գաղափարական ծավալման հաշվին աստիճանաբար ընդլայնում են իրենց տարածքը՝ գեղարվեստական արտահայտություն գտնելով ոչ միայն բովանդակային, այլև կառուցվածքային տիրույթում:

«Փոթորիկից հետո» է հերոսն անցնում հուշ-երազների՝ առասպելականին, որը գեղեցիկ պահ է, կարճատև ակնթարթ: Ներկան, անցյալն ու գալիքն այս տեսանկյունից ներկայացվում են խորհրդանշական պատկերների հակադրությամբ: Իրականը խավարն է, որը, ընդգրկելով հերոսի ներկա ժամանակը, շարադրանքի մեծ մասն է զբաղեցնում: Իբրև գեղեցիկ պահ՝ անցյալն ու գալիքն ամբողջացնում են լույսը, որ աննշան մասն է կազմում ինչպես հերոսի կյանքի, այնպես էլ պատմվածքում ընդգրկած տարածքի, այսինքն՝ բովանդակության մեջ տեղ գտած հակադրությունը համապատասխանաբար արտա-

հայտվում է նաև կառուցվածքային մակարդակում՝ խավար-լույս հերթագայությամբ: Բայց նախ այն արտացոլվում է բառային շերտում՝ խորհրդանշական արտահայտությունների հակադիր եզրերով. գույնզգույն լույսեր (քաղաքակիրթ աշխարհ) և օազիս, կապույտ աղբյուր (վայրի բնություն), քաղաք և գյուղ, օտար հորիզոններ և հայրենիք, փոթորիկ և վերհուշ, գրասենյակայիններ և երկինքների մարդիկ, մահվան պտույտներ և անգույն առօրյա: Պատահական չէ նաև գույների ընտրությունը: Դրանք էլ Ավագյանի արձակում որոշակի դերակատարում ունեն: Գույնի միջոցով հնարավոր է որոշել, թե երևույթը նշված եզրերից որին է պատկանում: «Աև ու թանձր ֆոնում», որ հերոսի ներկան է, երազը հիշեցնող ցանկացած իրողություն երևում է «երբեմն կապտականաչ, երբեմն շիկակարմիր, մի տեսակ թեթև, գալարվող ամպի քուլայի նման» (361): «Երկինքները», «օազիսը», «կապույտ աղբյուրը», «հեքիաթային տնակը», տարբերվում են «անապատից», «տափաստանից», «պատից» նաև գունային համադրությամբ. «Ցածում դրանք գորշ գույն ունեին, իսկ գագաթները՝ անհասանելի կապույտ, մշուշախառն կապույտ» (89): Իրականությունն իր բոլոր դրսևորումներով գորշ գույն ունի, այնինչ երազը կապույտ է, որի մշուշախառն երանգն էլ խորհրդանշում է անհայտությունը: Այս տեսանկյունից «գույնզգույն լույսեր» բառակապակցությունը բնորոշում է մայրաքաղաքային կյանքի հեղիեղուկ, անկայուն ընթացքը: Քաղաքակրթության բերած արտաքին փայլը շինծու է: Բարոյական կայուն արժեքների բացակայությամբ այդ աշխարհը չունի իր գույնը, փոփոխական է:

Այսպիսով, երկը կառուցվում է հակադրությունների վրա, որոնցից դրական եզրերն իրենց հերթին խմբավորվում են լույսի շուրջը, իսկ բացասական իմաստ ունեցողները՝ խավարի: Պատկերը կառուցելով լույսի ու խավարի տարբեր զուգորդումներով՝ հնարավոր է դառնում թեկուզ նախադասության շրջանակներում պատկերացում տալ իրադարձությունների ընթացքի ու դրանց հետագա զարգացումների մասին: Խավարի գեղիշխող լինելը տառապանքի նշան է, դրա նստացումը կամ խտացումը՝ վիճակի փոփոխության: Այսպես՝ «Ծառերի թավ սաղարթի միջից ճեղքեց անցավ մի թույլ լույս» (227), «հետո երեխայի սրտում սկսեց բոցավառվել մի տարտամ հույս, նման տափաստանային հեռավոր խարույկների անորոշ լույսի» (30): Իրական հիմքը՝ խավարը, դատելով հենց օրինակներից, առավել տարածական է, քան լույսի շողը: Նշանակում է՝ հերթական անգամ առնչվելու ենք դրամատիկ պատմության, որի հերոսն անհույս տառապանքի մեջ լուսավոր կետ է փնտրում: Գեղամի, Նազան տատի, Գարսևանի, Ղազարոսի կյանքը դառնությունների անվերջա-

նալի շղթա է եղել՝ խավար: Գնչուիի Թուփի անսպասելի հայտնվելը ջրաղաց-պանի դռանը, Շմավոնի դյուցազնական պահվածքը, Անթառամի սերը, անտառապահի փոսն ընկած գեղեցկուհու հիշողություններն առասպելական հմայքով թույլ առկայծում են՝ դառնալով անուրախ օրերի փոքրիկ մխիթարություն: Խավարն ընդգրկում է գրեթե ողջ պատմվածքը, բացի հուշի կամ երազի զբաղեցրած տարածքից:

Այսպիսով, գեղեցիկ պահն ու հերոսի առօրյան ներկայացվում են լույսի ու խավարի հակադրությամբ, ինչը որպես բանաձև բառային մակարդակից անցնում է նախ՝ պատկերին, ապա՝ ամբողջական դրսևորում գտնում ստեղծագործության ընդհանուր հյուսվածքում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ավագյանի արձակում կենսագրական նյութը վերհուշի ու երազի միջոցով է դառնում համամարդկային ընդհանրացում: Պատում ներմուծելով հեքիաթի տարրեր՝ դրանք հերոսին անձնականի նեղ ոլորտից դուրս են բերում դեպի մեծ ժամանակ: Այս դեպքում մասնավորն ընդհանուրին միավորելու գործառույթ ունեն հուշն ու երազը: Վերջիններս, ի տարբերություն իրականության խավարի, պատկերային համակարգում մարմնավորվում են լույսի տեսքով, որը ստեղծագործության աննշան մասն է կազմում, բայց իրադարձությունների զարգացման ընթացքից, հերոսի հոգեվիճակից կախված, կարող է փոփոխվել:

Բանալի բաներ - ոգեղենացում, լույս, խավար, խորհրդանիշ, հակադրություն, մեջբերում, վերհուշ:

ОСНОВНАЯ ФУНКЦИЯ СНОВ-ВОСПОМИНАНИЙ В ПРОЗЕ АБИГА АВАГЯНА

БАЛАСАН КАРИБЯН

Биографический материал с помощью воспоминаний и снов становится всечеловеческим обобщением в прозе Авагяна. Вводя в рассказ элементы сказки, они выводят героя из узкой личной сферы в великое время. В этом случае воспоминание и сон имеют функцию объединения частного с общим. Последние, по сравнению с тьмой реальности, в изображенной системе объединяются в виде света, который занимает незначительную часть произведе-

дения, но, с развитием событий, в зависимости от душевного состояния героя, может измениться.

Ключевые слова - одушевление, свет, тьма, символ, противопоставление, цитата, воспоминание.

THE UNIQUE ROLE OF REMINISCENCE-DREAMS IN ABIG AVAGYAN'S PROSE

BALASAN GHARIBYAN

Abig Avagyan has the art of turning a biographical subject of his prose into a universal generalization through reminiscence and dream. The inclusion of fairy tale elements into the narrative helps the hero to shift the narrow personal time onto eternal where reminiscence and dream are the main liaisons. These unlike the dark, harsh reality of existence are presented as brightness in visual perception. They occupy only a small part of the work, but this can change depending on the development of circumstances and the emotional state of the heroes.

Key words - spiritedness, brightness, darkness, citation, symbol, contradiction, reminiscence.

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ «ԲԺԻՇԿ ՄԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ «ՊԱՏԵՐԱԳՄԻ ՇԵՏՔԸ ԵՐԿԱՐ Է ՄՆՈՒՄ»» ԳԻՐՔԸ

ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

1994 թ. մայիսի 12-ին հաստատված զինադադարից հետո գրող, հրապարակախոս, բժիշկ Զորի Բալայանի գրիչը շարունակեց նույնքան բեղուն մնալ, որքան արցախյան գոյամարտի ընթացքում, իսկ արցախյան շարժումն ու գոյամարտը՝ Բալայանի ստեղծագործության առանցքային թեմաներից:

Դեռ Կամչատկայում աշխատելու տարիներին լույս էին տեսնում բժշկությանը և նրա նվիրյալներին վերաբերող ստեղծագործություններ, ակնարկներ, հոդվածներ: Բալայանի ստեղծագործությունների հերոսները պատահական չեն ընտրվում, դրանք առանձնացվում են որևէ թեմայի, խնդրի բացահայտման, ներկայացման նպատակով: Այդպես է նաև արցախյան շարժման նվիրյալ, բժիշկ Վալերի Մարությանի մասին պատմող գրքի դեպքում, որն ընթերցողի սեղանին դրվեց 1999 թ.: «Բժիշկ Մարությանը և նրա «Պատերազմի հետքը երկար է մնում»» վավերագրական վիպակը յուրատեսակ կառուցվածք ունի՝ գիրք գրքի մեջ: Այս գրքի երկրորդ մասում Բալայանը տեղադրել է բժիշկ Մարությանի ստեղծագործությունը՝ «Պատերազմի հետքը երկար է մնում» վերնագրով, որը 1996 թ. ռուսերեն լույս էր տեսել առանձին գրքով: Նախապես ցանկանալով տպագրել կյանքից անժամանակ հեռացած, արցախյան պատերազմի բովո՞վ անցած բժշկի հուշերը հայերեն՝ Բալայանը հետագայում այն լրացնում է Վ. Մարությանի մասին ընդարձակ նախաբանով, որը կազմվել էր Մարությանի օրագրերով, նրան ճանաչածների հուշերով:

Մինչ այս յուրահատուկ գրքի հրատարակվելը Բալայանը լույս էր ընծայել վավերագրական ևս մի վիպակ՝ նվիրված պատմաբան, քաղաքական գործիչ Ջոն Կիրակոսյանի կյանքի վերջին օրերին: Մարությանին նվիրված գրքի նախաբանում Բալայանն անկեղծանում է. «Ինձ միշտ թվում էր, որ ես նրան շատ լավ եմ ճանաչում: Կարծես, նրա ամբողջ կյանքը, ինչպես և նրա սերնդի կյանքը, անցել էր իմ աչքի առաջ: Սակայն ես Վալերիին իսկականից ճանաչեցի, ինչպես և Ջոնին, նրա տառապալի մահից հետո»¹:

¹ **Բալայան Զ.**, Բժիշկ Մարությանը և նրա «Պատերազմի հետքը երկար է մնում» գիրքը, Երևան, 1999, էջ 6:

Գրքի առաջին մասում Բալայանը ներկայացնում է բժշկության նվիրյալի կենսագրությունը՝ շաղախված արցախյան շարժման ու պատերազմի պատմությամբ: Այս գիրքը համեմված է բժշկական ու փիլիսոփայական, քաղաքական ու սոցիալական բազմաբնույթ խոհերով. այն ընթերցողի համար բացահայտում է յուրահատուկ մի աշխարհ, յուրատեսակ մի մարդու կերպար, ով իր գիտակցական կյանքը նվիրաբերել է արցախյան շարժմանն ու ծննդավայր Արցախի բարօրությանը: Բալայանը Մարությանի կերպարի ներկայացման միջոցով նաև վեր է հանում 1980-ական թվականների շարժման սկիզբ տված սերնդի մարդկանց, նրանց հոգեբանությունը, արցախյան շարժմանը մասնակցելու դրդապատճառները:

Գրքի առաջաբանում գրողը խոստովանում է. «Ես փորձել եմ բացել բժիշկ Մարությանի կերպարը, ինչպես անվանում էր նրան ամբողջ Արցախը, մեր բազմաթիվ երկխոսությունների միջոցով, իմ հիշողությունների միջոցով, Ղարաբաղյան շարժման, պատերազմի փիլիսոփայության մասին խոհերի միջոցով»²:

Բժշկի կերպարներ Բալայանը նախկինում էլի է կերտել. նրանք հոգեհարազատ են հեղինակին: Դրանցից մեկն էլ իր՝ բժիշկ-հրապարակախոսի կերպարն է, որը ներկա է հեղինակի բոլոր ստեղծագործություններում: Բալայանն առանձնապես կարևորում է բժշկի մասնագիտությունը, քանի որ այն ավելի է մերձեցնում մարդուն, նրա ցավին, քան այլ մասնագիտությունները, օգնում հեղինակին զգալու, հասկանալու ուրիշի ցավը: Բանիմաց ու լավ բժիշկը հաճախ մարդկանց վշտի ու տառապանքի իսկական դեմքը բացահայտող պատկերների միակ վկան է: Նրա առջև հանում են ոչ մի բանի հետ չհամեմատվող և դեպի կյանք տանող պատկերներ հատկապես նրանց համար, որոնց թվում է, թե արդեն կորցրել են երկրորդ անգամ ծնվելու կյանքի ուրախությունը և ապրելու երջանկությունը նորից լիարժեքորեն վայելելու հույսը:

Դեռևս 1972 թվականին Բալայանի «Հիպոկրատի գլխարկը» ժողովածուում լույս տեսած «Հիպոկրատի գլխարկը» պատմվածքում, որը հեղինակը նվիրել էր ռազմավիրաբուժության հիմնադիր Պիրոզովին, կերտվել է ռազմական բժիշկ Լիտվինսկու կերպարը: Ռազմական բժիշկը, ռազմաճակատի առաջին գծում կանաչ վրանում ճոճվող լամպի տակ վիրահատելով վիրավոր զինվորին, խորհելով բժշկի կոչման, մասնագիտության և պատերազմների մասին, յուրօրինակ ընդհանրացումներ է անում: Այս պատմվածքի առանձնա-

² Նույն տեղում, էջ 7:

հատկությունն այն է, որ արցախյան շարժումից շուրջ 30 տարի առաջ Բալայանը մտորում էր ռազմական վիրաբուժության անխուսափելիության մասին, ինչը Մարությանի մասին պատմող գրքում արդեն ընկալվում է որպես անհրաժեշտություն, արցախյան հերոսամարտի ժամանակ դառնում բազմաթիվ վիրավորներին օգնելու, կրկին կյանք վերադարձնելու փրկօղակ:

Ի սկզբանե Բալայանը նշում է իր և Մարությանի բարեկամական կապի մասին, բայց այդ հանգամանքը երկրորդական պլան է մղվում երկու հասուն տղամարդկանց անքակտելի ընկերության լույսի ներքո: Բալայանի համար միաժամանակ և դյուրին էր գրել բժիշկ Մարությանի մասին և չափազանց դժվար: Հաշվի առնելով, որ Վալերի Մարությանը նրա երկարամյա բարեկամն ու ընկերն էր, կարծես հեշտանում է գրողի գործը, սակայն կրկնակի դժվար է գրել մտերիմի մասին, գնահատել նրա գործերը, առավել ևս, երբ գրքի հերոսն արդեն ողջ չէ: Վալերի Մարությանը հեղինակի համախոհն ու ընկերն էր, իսկ «ընկեր» հասկացությունը հեղինակի համար տարողունակ հասկացություն է: Բալայանն այդ կապակցությամբ վկայակոչում է հույն փիլիսոփա Արիստոտելի հետևյալ միտքը. «Լինել լավ մարդ կամ ընկեր դա մինևույն բանն է»³:

Վալերի Մարությանը «Կոունկ» կոմիտեի կազմակերպիչներից էր, Ղարաբաղյան շարժման ակտիվիստ, Արցախում ռազմադաշտային վիրաբուժության հիմնադիրը, և դա է հիմնական պատճառը, որ Բալայանը որոշեց առանձին գրքով ներկայացնել բժիշկ Մարությանի վիթխարի աշխատանքը՝ արված ռազմական վիրաբուժության բնագավառում:

Թեև գիրքը նվիրված է Վալերի Մարությանի կյանքի և գործունեության լուսաբանմանը, սակայն զուգահեռ գիրքը պատմում է նաև արցախյան գոյամարտի նվիրյալների, մասնավորապես բժիշկների մասին: Միաժամանակ հեղինակը ներկայացնում է տիպիկ արցախցու կերպարը, ով մինչև ողնաձուծը ներծծված է արցախյան կոլորիտով:

Վ. Մարությանի կերպարը ստեղծելիս Բալայանը լիովին հավատարիմ է մնացել փաստերին, հաճախ դիմել վիճակագրական տվյալների, բժշկական արձանագրությունների՝ գրվածի հավաստիությունն ապացուցելու համար. «Փաստաթղթերով գրանցված է մոտ տասնմեկ հազար վիրահատություն, որ կատարել են Վալերին և իր թիմը: Եթե մտածենք, որ ամեն մի վիրահատություն տևել է միջին հաշվով մեկ ժամ, ապա ստացվում է, որ Վալերին ու իր թիմը վիրահատել են հինգ հարյուր օր շարունակ: Չորս տարվա հինգ հարյուր

³ Նույն տեղում, էջ 3:

օրը: Գրեթե մեկ և կես տարի վիրաբույժներն անընդհատ կանգնել են վիրահատական սեղանի առաջ»⁴:

Բալայանի պատումն օրինաչափ չէ. իր ոճին հավատարիմ՝ իրադարձությունների ընթացքի պատումն ընդհատվում է հեղինակի հիշողություններով, հոգեհարազատ պատմություններով՝ խոսքը դարձնելով հետաքրքիր ու բազմաբնույթ: Բալայանը ներկայացնում է Վ. Մարությանի կենսագրությունը, որին զուգահեռ հյուսվում է նաև հեղինակի կյանքի կամչատկյան շրջանի, արցախյան գոյամարտի տարիների բուռն կյանքը: Բալայանը կարողանում է գեղարվեստական շտրիխներով պատկերել Մարությանի նպատակներն ու ձեռքբերումները, նախասիրություններն ու այն ահռելի աշխատանքը, որը նա կատարեց Արցախում ռազմական վիրաբուժության կազմակերպման ասպարեզում: Այս առումով ուշագրավ են Մոսկվայում Բալայանի հայտարարած հացադուլի ժամանակ Մարությանի ծավալած գործունեությունը՝ նկարահանումները, տեղեկատվության տրամադրումը և այլն: Բայց և այնպես, Մարությանի ուշքն ու միտքը Արցախում էր, դժոխքի սահմանագծին հայտնված ժողովրդի, օգնության սպասող վիրավորների հետ: Նա իրավացի էր, երբ նկատում էր, որ խաղաղ ցույցերով, միտինգներով ոչնչի չեն հասնի, որ թշնամուն պետք է պատասխանել իր ձևով, և ամենակարևորը՝ կովող զինվորներին բժիշկներ են հարկավոր: Այդ պատճառով էլ սկսած 1988 թ.-ից Մարությանը շրջում է Արցախի տարածքով և հարմար տեղեր փնտրում դաշտային հոսպիտալների համար:

Յավոք, անբուժելի հիվանդությունն ընդհատում է հայրենիքի ու գործի նվիրյալի կյանքը՝ կիսատ թողնելով բազմաթիվ նպատակներն ու սկսած գործերը: Այդ նույն ընթացքում ծանր հիվանդությունից տառապում էր նաև Բալայանի մայրը, ով նույնպես կարճ ժամանակ անց հրաժեշտ է տալիս երկրային կյանքին: Երկու հարազատ մարդկանց կորստի ցավը վեր է հանում տողերի արանքից՝ ի ցույց դնելով գրողի մեծ ցավն ու հոգու կորուվը:

Պատումն ավարտվում է բժիշկ Մարությանի մահվան ու թաղման տեսարանով: Այն օրը, երբ Արցախ աշխարհը հրաժեշտ էր տալիս իր տաղանդավոր զավակին, Ստեփանակերտի ծննդատնից զանգահարում և հրատապ կանչում են բժիշկ Մարությանին, բայց այս անգամ որդուն՝ Արթուր Մարությանին. «Լսափողը նոր էի ցած դրել, նորից զանգ հնչեց: Ես վերցրի լսափողը: Տազնապալի մի ձայն մետաղալարի մյուս ծայրից հայտնում էր, որ ծննդա-

⁴ Նույն տեղում, էջ 167-168:

տանը վիրասեղանի վրա մեռնում է ծննդկանը»⁵: Արթուրն առանց տատանվելու մեկնում է հիվանդանոց: Քիչ անց զանգահարում են հիվանդանոցից. «Խոսում էր բժիշկ Մարությանը. «Ամեն ինչ նորմալ է: Կեսարյան հատում էր: Առողջ երեխա հանեցինք: Մոր վիճակը կարգին է: Գալիս եմ»: Հիրավի, խորհրդանշական պատկեր է. «Արցախում այսօր վերջնականորեն կայացավ բժիշկ Մարությանը»⁶, -գրում է Ջ. Բալայանը:

Բալայանի այս վիպակը ոչ միայն վավերագրական մեծ նշանակություն ունի, այլև կարող է ծառայել որպես մատաղ սերնդի դաստիարակության ուղեցույց:

Բալայանն այս գրքում անդրադառնում է նաև արցախյան գոյամարտի որոշ դրվագների, տալիս օբյեկտիվ գնահատականներ իրադարձություններին:

Վալերի Մարությանը, լինելով բժշկական գիտությունների թեկնածու, գիտական բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ, միաժամանակ նաև վավերագրական պատումի հեղինակ է, որը նվիրված է արցախյան գոյամարտին մասնակցած բժիշկներին, բուժքույրերին, զինվորներին, «բոլոր ողջերին ու մեռածներին, ում հետ վիճակվեց կիսել պատերազմի դժվարին աշխատանքը»⁷: Վալերի Մարությանի «Պատերազմի հետքը երկար է մնում» գիրքը բաղկացած է 4 մասից, որոնք ունեն «Դիմադրություն», «Ազատագրում», «Ռազմական բժշկություն», «Ճշմարտություն, զուտ ճշմարտություն» ենթավերնագրերը: Մարությանի վավերագրությունը պատերազմի մասին է, որն արցախցին չէր ուզում, և որը պարտադրեցին նրան. «Մենք պատերազմ չէինք ուզում և չէինք պատրաստվել դրա համար: Մեզ դավաճանեցին: Եվ մենք հասկացանք՝ անդունդի եզրին եթե ինքներս չփրկենք մեզ, ոչ ոք չի փրկելու»⁸:

Ինչպես Ջ. Բալայանի, այնպես էլ Վ. Մարությանի համար արցախյան շարժումը դարձել էր նրա էության անբաժանելի մասը: Ուշագրավ է հեղինակի գաղափարակից Վալերի Մարությանի հետևյալ միտքը. «...աշխարհում գոյություն չունի Ղարաբաղյան հարց: Գոյություն ունի Ադրբեջանական ԽՍՀ-ի հարց, որը վաղ թե ուշ պետք է լուծի ինքը՝ Ռուսաստանը»⁹: Ի դեպ, այս նույն

⁵ Նույն տեղում, էջ 241:

⁶ Նույն տեղում, էջ 242:

⁷ Նույն տեղում, էջ 244:

⁸ Նույն տեղում, էջ 247:

⁹ Նույն տեղում, էջ 123:

տեսակետը Բալայանն արտահայտում է նաև տարիներ անց (2013) ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին ուղղված բաց նամակում¹⁰:

Թեև Մարությանի վավերագրությունը զիջում է իր գեղարվեստական արժեքով, սակայն բարձր է նրա գրապատմական նշանակությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակը Զ. Բալայանի «Բժիշկ Մարությանը և նրա «Պատերազմի հետքը երկար է մնում» գիրքը» ստեղծագործության ուսումնասիրությունն է: Բալայանը վիպակում պատմում է արցախյան պատերազմի դժվարին ժամանակներում ռազմական վիրաբուժության հիմնադրի կյանքի ու գործունեության մասին: Հեղինակի վիպակին կից ներկայացված է Վալերի Մարությանի վավերագրական պատումը:

Բանալի բաներ – Վալերի Մարության, արցախյան պատերազմ, ռազմական վիրաբուժություն, վավերագրական վիպակ:

КНИГА ЗОРИЯ БАЛАЯНА “ДОКТОР МАРУТЯН И ЕГО КНИГА “У ВОЙНЫ ДОЛГИЙ СЛЕД””

МАРИНЕ МКРТЧЯН

Целью статьи является исследование книги Зория Балаяна “Доктор Марутян и его книга “У войны долгий след””. З. Балаян в своей повести рассказывает о жизни и деятельности основателя военной хирургии в трудные времена Арцахской войны. В одной книге с повестью автор представляет документальное повествование Валерия Марутяна.

Ключевые слова – Валерий Марутян, Арцахская война, военная хирургия, документальное повествование.

¹⁰ Ջորի Բալայանի նամակը Պուտինին. Ղարաբաղի խնդիրը Ռուսաստանի խնդիրն է, «Առավուտ», Երևան, 2013, 14 հոկտեմբերի:

“DOCTOR MARUTYAN AND HIS BOOK “THE TRACE OF THE WAR STAYS LONG” BY ZORY BALAYAN

MARINE MKRTCHYAN

This article is a study of Zory Balayan’s work: Doctor Marutyan and his book “The trace of the war stays long” book. Balayan’s book has two sections. The first is about the life and activities of doctor Marutyan, the founder of the military surgery during the difficult years of the Artsagh war. The second part is Valery Marutyan’s book: “The trace of the war stays long”, factual events from the Artsagh war and creative non-fiction stories about its heroes.

Key words - Valery Marutyan, Artsagh war, military surgery, documentary storytelling.

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ԶԱՐՈՒՀԻ ՏՈՆՈՅԱՆ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունն ունի անկման ու վերելքի, սայթաքումի ու տիտանական խոյանքի բազում էջեր: Քաղաքական տեղա-տվություններն ու մակընթացությունները, որոնք հաջորդել են միմյանց զար-մանալի արագությամբ, շարունակ մաքառումի ու ընդվզման մեջ են պահել ստեղծագործ հայ ժողովրդին: Մի պատերազմին, ասպատակությանը հետևել է մյուսը: Սակայն մեր ժողովրդի պատմության ողբերգական դրվագներից ամենացնցողը 1915 թվականի համաժողովրդական աղետն է՝ իրագործված պատմության մեջ իր նախընթացը չունեցող բարբարոսական եղանակներով: Հայ ժողովրդի պատմության որևէ հիմնահարցի մասին այնքան չի գրվել, որ-քան Հայկական հարցի և Հայոց Մեծ եղեռնի: Այս հարցերը վաղուց դարձել են ուսումնասիրողների ուշադրության առարկան:

Կարևոր և հայ պատմագիտության մեջ արժեքավոր աշխատանք է Ավագ Հարությունյանի կազմած փաստաթղթերի և նյութերի ժողովածուն: Փաստորեն այս ուսումնասիրության հրապարակումը հայ մատենագիտության մեջ այդ ուղղությամբ առաջին աշխատանքն է, և աշխատանքում ներկայաց-ված են մինչ այդ անհայտ և անտիպ, արխիվային վավերագրեր և պարբե-րական մամուլի նյութեր: Աշխատանքում ներկայացված են Մայր Աթոռ Ս. Էջ-միածնի և ՀՀ գրողների միության որոշ կարևոր վավերաթղթեր¹ :

Աշխատանքում առաջին անգամ հրապարակվել են Հայոց ցեղասպա-նության մասին Խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական ղեկա-վարության դիրքորոշումն արտացոլող՝ մինչ այժմ անհայտ և անտիպ, արխի-վային վավերագրեր, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխի-վում, ինչպես նաև պարբերական մամուլի նյութեր:

Բոլոր փաստաթղթերը և նյութերը հրապարակվել են նույնությամբ՝ անհրաժեշտ ուղղագրական շտկումներով և ըստ ժամանակագրական կարգի: Ռուսերենից թարգմանված փաստաթղթերում նյութերը համապատասխա-նեցվել են հայոց լեզվի արդի պահանջներին: Աշխատանքի վերջում կազմված

¹ Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը /Փաստաթղթերի և նյութերի ժողովածու/, կազմող և խմբագիր՝ Ավագ Հարությունյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գի-տություն» հրատ., 2005, 260 էջ:

է նաև Եղեռնի 50-ամյակին առնչվող հակիրճ մատենագիտություն: Եվ բերված են Հայոց եղեռնին նվիրված այն աշխատությունները, որոնք հրատարակվեցին 1963-1967թթ.: Ավագ Հարությունյանի կողմից կազմվել է մի շատ կարևոր աշխատություն՝ «Սուրբ Էջմիածինը և Հայոց ցեղասպանությունը»²: Գիրքը ներառում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ «Արարատ» ամսագրում տպագրված հոդվածները:

«Արարատ»-ի ժառանգության մատենաշարով հրատարակվող ներկա ժողովածուն ամփոփում է Մայր Աթոռի պաշտոնաթերթում հրապարակված այն նյութերը, որոնք արտացոլում են Մեծ եղեռնի և Հայկական հարցի պատմությունը, այդ ամենում Ս. Էջմիածնի Մայր Աթոռի, նրա Հայրապետի ու հոգևորականության ցուցաբերած հայրական-հոգատար վերաբերմունքը: Ժողովածուն թեմատիկ կառուցվածքային առումով բաժանված է 9 մասի. 1. Կոնդակներ, 2. Ամենայն հայոց Կաթողիկոսների գրագրություն, 3. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեություն և վիճակ, 4. Հայ հոգևորականների գրություններ, 5. Հայոց աշխարհիկ վավերագրեր, 6. Օտար աշխարհիկ վավերագրեր, 7. Հոդվածներ, 8. Գրախոսականներ, 9. Հաշիվներ և ցուցակներ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում հակիրճ, ընդհանուր գծերով անդրադառնալ և գնահատել այս փաստաթղթերը: «Կոնդակներ» մասում ընդգրկված են Գևորգ Ե-ի 1914-1917թթ. ընդունած կոնդակները, որոնք անմիջական պատկերացում են տալիս հայությանը վիճակված ճակատագրի նկատմամբ Վեհափառի հայրապետական սրտացավության և կեցվածքի մասին: Եղեռնասպան արևմտահայությանն օգնություն ցուցաբերելու և այդ գործում ունեցած ծառայության գնահատման և օրհնության առումով հարկ ենք համարում հիշել նաև օտարագրի գործիչներին հղված կոնդակների մասին: Օրինակ՝ 1916թ. ապրիլի 27-ին Ջեյմս Բրայսին հղվածը:

«Ամենայն Հայոց կաթողիկոսների գրագրություն» մասում ընդգրկված փաստաթղթերից հատկապես հիշատակության են արժանի նրանք, որոնք լավագույնս արտացոլում են Մեծ եղեռնից հետո արևմտահայության անասելի վիճակի բարվոքման ու Հայկական հարցի դրական լուծման ուղղությամբ միջազգային առյուծակներում Մայր Աթոռի ու նրա վեհափառի թե՛ վերաբերմունքը և թե՛ դիվանագիտական ունակությունները: «Հայոց աշխարհիկ վավերագրեր»

² Սուրբ Էջմիածինը և Հայոց ցեղասպանությունը. հրատարակության պատրաստեց Ավագ Հարությունյանը.- Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2010, 736 էջ:

մասում ընդգրկված փաստաթղթերը բավականին մանրամասն ու հարուստ փաստացի աղբյուրագիտական նյութ են պարունակում Մեծ եղեռնի, արևմտահայության օրհասական վիճակի վերաբերյալ: Հիշատակենք հատկապես 1895-1896թթ. հայկական կոտորածների մասին տեղեկագրերը, որոնք լեցուն են վիճակագրական հանգամանայից աղյուսակներով:

Ինչ խոսք, ծավալի առումով ժողովածուի ամենամեծ հատվածը «Հողվածներ» մասն է: Այդ մասում առկա են արևմտահայության ազգային-վարչական, կրոնահողային դրության, նրանց վերաբերյալ աղյուսակներով մանրամասն վերլուծական վիճակագրություններ: Վերոհիշյալ ժողովածուն ամփոփում է թեմայի վերաբերյալ ընթերցող-ուսումնասիրողի համար հոգևոր, հասարակական և պատմագիտական արժեք ներկայացնող «Արարատ» հանդեսում հրատարակված նյութերի գերակշիռ մասը: Միաժամանակ պետք է հիշատակենք, որ կան նյութեր, որոնք չեն ընդգրկվել առանձին գրքով հրատարակված լինելու կամ էլ թեմայի հետ ունեցած անուղղակի կապակցվածության պատճառով: Մեծ եղեռնի հետևանքով հայության գողգոթան ամբողջությամբ ապրեց և հայ եկեղեցին. ավերվեցին, այրվեցին ավելի քան 2000 վանքեր ու եկեղեցիներ, ոչնչացվեցին բազմահազար ձեռագրեր, ոճիրին զոհ գնացին շուրջ 4000 հոգևորականներ: Քանզի ակնհայտ էր այն փաստը, որ քանի դեռ եղեռնագործ թուրքը հայ եկեղեցուն չէր հարվածել և նրա հոտ ժողովրդին չէր կարող ոչնչացնել: Այս առումով միանգամայն տեղին ենք համարում ամփոփելով մեջբերել Հակոբ Սիրունու դիպուկ և ճշմարտացի կարծիքը. «Մարտիրոսացավ նաև Հայ եկեղեցին: Դահիճը չխնայեց նաև անոր: Ու շատ տրամաբանական էր: Պիտի չկրնար հայությունը խորտակել իսպառ, քանի կանգուն էր Հայ եկեղեցին...»³:

Ասկայն հայ ժողովուրդը, հավատարիմ իր համամարդկային առաքելությանն ու որդեգրած քրիստոնեական հավատքին, չոչնչացավ, այլ փյունիկի նման կրկին վեր հանեց ավերակների մոխրակույտից, շարունակեց ապրել, մաքառել ու հարատևել, ավելին՝ իր նահատակությունը դարձրեց վերածնություն. անասելի գողգոթայից նորից հարություն առավ և հավերժի ճանապարհը շարունակեց հայր: Ժողովածուի վերջում ներկայացված է հավելված՝ հայտնաբերված երեք առավել ուշագրավ վավերաթղթերով, որոնք ուղղակիորեն կապված են Մեծ եղեռնի հարցում Մայր Աթոռի ունեցած վերա-

³ «Էջմիածին», 1965, թ. Ա, էջ 25-26:

բերմունքի հետ: Կազմված են թեմային անմիջականորեն առնչվող գրականության հակիրճ ցանկ, անձնանունների և տեղանունների ցուցակներ: Միաժամանակ ժողովածուն ավելի պատկերավոր են դարձրել լուսանկարները: Այս ժողովածուի հրատարակությամբ առաջին անգամ ամբողջական ներկայացվեց Մեծ եղեռնի տարիներին Մայր Աթոռի տարաբնույթ հայրենանվեր ու ազգապահպան գործունեությունը: Այս ժողովածուն կարևոր աղբյուր է ինչպես հայ եկեղեցու, այնպես էլ Հայոց ցեղասպանության համալիր ուսումնասիրման տեսանկյունից: Քանզի Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրողների կողմից հոգևոր հաստատությունների պարագան կարծես թե հանիրավի մոռացության է մատնված: Ավագ Հարությունյանի կատարած աշխատանքն իր բնույթով և հատկացվածությամբ եզակի աշխատանք է Հայոց Մեծ եղեռնի ուսումնասիրման պարագայում և աղբյուրագիտական, փաստաթղթատեղեկատվական, մատենագիտական տեսանկյունից: Ժողովածու ընդգրկված փաստաթղթերը շատ կարևոր են յուրաքանչյուր ուսումնասիրողի համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կարևոր և հայ պատմագիտության մեջ արժեքավոր աշխատանք է Ավագ Հարությունյանի կազմած փաստաթղթերի և նյութերի ժողովածուն: Ավագ Հարությունյանի կատարած աշխատանքն իր բնույթով և հատկացվածությամբ եզակի աշխատանք է Հայոց Մեծ եղեռնի ուսումնասիրման պարագայում և աղբյուրագիտական, փաստաթղթատեղեկատվական, մատենագիտական տեսանկյունից: Ժողովածու ընդգրկված փաստաթղթերը շատ կարևոր են յուրաքանչյուր ուսումնասիրողի համար:

Այս ժողովածուի հրատարակությամբ առաջին անգամ ամբողջական ներկայացվեց Մեծ եղեռնի տարիներին Մայր Աթոռի տարաբնույթ հայրենանվեր ու ազգապահպան գործունեությունը: Աշխատանքում առաջին անգամ հրատարակվել են Հայոց ցեղասպանության մասին Խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարության դիրքորոշումն արտացոլող՝ մինչ այժմ անհայտ և անտիպ, արխիվային վավերագրեր:

Քանալի քաներ - արխիվային վավերագրեր, Հայոց ցեղասպանություն, վերլուծական վիճակագրություններ, փաստատեղեկատվություն, մատենագիտություն:

АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ

ЗАРУИ ТОНОЯН

Сборник документов и материалов, составленный Авагом Арутюняном, является важной и ценной работой в армянской исторической науке. Работа Авага Арутюняна по своей природе и предназначению является уникальным в исследовании Геноцида армян и с библиографической, источниковедческой, документальной точки зрения. Документы, включенные в сборник, очень важны для каждого исследователя.

В этом собрании впервые полностью представлена патриотическая деятельность Первопрестольного Святого Эчмиадзина в годы Геноцида армян. В работе впервые опубликованы до сих пор неизвестные, неизданные и архивные документы, отражающие позицию высшего партийно-государственного органа Советской Армении.

Ключевые слова - архивные документы, Геноцид армян, аналитическая статистика, документация, библиография.

ARCHIVAL DOCUMENTS

ZARUHI TONOYAN

The documents and materials compiled by Avag Harutyunyan is an important and valuable work in the Armenian historiography. In fact, Harutyunyan's work by its nature, objective as well as by its bibliography, reliable reference sources and documentation is unique in the study of the Armenian Genocide and the documents incorporated in the collection are of special importance to every researcher.

The efforts and different activities in preserving the Armenian identity and for the welfare of Armenian nation of the Holy Echmiadzin in the years of the Armenian Genocide for the first time are thoroughly presented in this compilation. It also contains hitherto unknown, unpublished archival documents disclosing the position of the leaders of the communist party and government of the Armenian Soviet Socialist Republic.

Key words - archival documents, Armenian Genocide, analytical statistics, documentation, bibliography.

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱԲՈՒ ԵՎ ԱՅԼԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ: ԹԱԼԻՇԵՐԵՆԻ ԱՆԲԱՐԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՐԲԱՌ-ԱՇԱՐՈՒՄ «ԳԱՅԼ» ԵՎ «ՕՁ» ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈՐ ԱՎԶՅԱՆ

Կասպից ծովի հարավարևմտյան ափին՝ հարավ-արևելքից մինչև հյուսիս, մոտ 150 կմ ձգվող՝ տարածության վրա բնակվող թալիշների լեզվի ուսումնասիրության պատմությունը սկիզբ է առնում XIX դարի առաջին կեսերին, երբ Լոնդոնում 1842թ. լույս է տեսնում ռուս իրանագետ Ալ. Խոճկոյի “Specimens of the popular poetry of Persia” աշխատությունը, որտեղ մերձկասպյան լեզուներից գիլաներենի և մազանդարաներենի հետ մեկտեղ ներառված էին նաև թալիշերեն երգիկներ²: Հետագայում թալիշերենի ուսումնասիրությամբ են զբաղվում նաև ռուս արևելագետներ Ի. Բերեզինը, Բ. Դորնը, լեզվաբան Պ. Ռիսսը, գերմանացի իրանագետ Վ. Գեյզերը, իրանցի լեզվաբան Է. Յարշաթերը, ֆրանսիացի իրանագետ և լեզվաբան Ժ. Լազարը, Վ. Սոկոլովան և այլն: Այնուամենայնիվ, թալիշերենի ուսումնասիրման զարգացման մեջ ամենից կարևոր ու մեծ դեր է խաղում ռուս ականավոր արևելագետ Բորիս Միլլերը, ով 1930թ. հրատարակում է իր «Թալիշական տեքստեր» («Талышские тексты») գիրքը, ապա 1953թ. երկար տարիների տքնաջան աշխատանքից հետո լույս է տեսնում նրա՝ մինչ օրս թալիշերենի վերաբերյալ ամենաիմնարար աշխատություն համարվող «Թալիշերեն» («Талышский язык») գիրքը: Բ. Միլլերի գործը շարունակում է նրա աշակերտուհի Լ. Պիրեյկոն, ով այս լեզվի վերաբերյալ մի քանի գրքերի ու հոդվածների հեղինակ է, այդ թվում՝ թալիշերենի առաջին բառարանի՝ «Թալիշերեն-ռուսերեն բառարան», որը Մոսկվայում հրատարակվում է 1976թ.:

¹ **Asatrian G., Borjjan H.**, Talysh and the Talyshis (The state of research), “Iran and the Caucasus” 9.1, Brill, Leiden, 2005, p. 43.

² **Миллер Б.**, Талышский язык, Москва, 1953, с. 13.

Հյուսիսարևմտաիրանական լեզվախմբի մեջ մտնող թալիշերենը մի շարք հնչյունաբանական, ձևաբանական և բառապաշարային հատկանիշների հիման վրա սովորաբար բաժանվում է երեք բարբառախմբի՝ հյուսիսային, կենտրոնական և հարավային: Թալիշերենի Անբարանի բարբառը մտնում է հյուսիսային բարբառախմբի մեջ. այն տարածված է Իրանի Արդաբիլ նահանգի Նամին վարչաշրջանի Անբարան շրջանում, հյուսիսային թալիշերենի ամենահարավային բարբառն է և սահմանակցում է թալիշերենի կենտրոնական բարբառախմբի հետ:

Այս հոդվածի նպատակը թալիշերենի Անբարանի բարբառի՝ լեզվին նվիրված նախորդ ուսումնասիրություններում դեռևս չքննարկված «գայլ» և «օձ» հասկացություններն արտահայտող բառերի ստուգաբանական քննությունն է:

1. *neči, vāg*

«Գայլ» հասկացության համար թալիշերենում գոյություն ունի երկու բառ՝ *vāg* և *neči*: Անկասկած սրանցից *vāg* ձևի մեջ պետք է տեսնել «գայլ» նշանակությամբ հնդեվրոպական հնագույն բառոյթներից մեկը՝ **wlk^{[h]o-3}* «գայլ», որից ծագում է հին իրանական **vrka-* նախածնը⁴ (հմմտ. ավ. *vəhrka-*⁵): Սա հեշտությամբ ապացուցվում է թալիշերենին հատուկ հնչյունաբանական օրենքներով. բնիկ թալիշական բառերում բառասկզբի *v* շրթնատամային շփական ձայնեղ բաղաձայնը շարունակում է հին իրանական **v-*ն (*voa* «ձյուն» < հին իր. **vafra-*, *vo* «քամի» < հին իր. **vāta*, *vəl* «ծաղիկ» < հին իր. **varda-*)⁶: Ձայնեղ պայթական հետնալեզվային *g* բաղաձայնը բառամիջյան կամ բառավերջյան դիրքում հաճախ է հանգում հին իրանական **k-*ին (*igla* (= *ig* + *la*) «մի, ինչ-որ» < հին իր. **aivaka-*, *kāg* «հավ» < հին իր. **karka-*, *māg* «մահ» < հին իր. **marka-* և այլն): Թալիշերենի բաղաձայնային համակարգի առանձնահատկություններով են բացատրվում նաև *vāg* բառում հին իրանական **r* ձայնորդի զարգացումը *-r-*ի և հետագա կորուստը. թալիշերենում այս ձայնորդն առանձնանում է իր խիստ անկայուն կարգավիճակով բառամիջում և բառավերջում. հին

³ **Гамкрелидзе Т., Иванов В.**, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с. 492.

⁴ **Пирейко Л.**, Основы иранского языкознания, новоиранские языки: северо-западная группа, т. 1, с. 107.

⁵ **Bartholomae Ch.**, Altiranisches wörterbuch, Strassburg, 1904, pp. 1418-1419.

⁶ Ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, որտեղ բառասկզբի հին իրանական **v-*ն տալիս է *b* կամ *g*՝ *gorg* «գայլ», *barf* «ձյուն», *bād* «քամի», *gol* «ծաղիկ»:

իրանական գրեթե բոլոր այն արմատներում, որտեղ *r* ձայնորդը հանդես չի գալիս *-rd* < **rt*, *-rz* < **rz* հնչյունախմբերում, պատմական զարգացման ընթացքում այն սղվում է (*gām* «տաք» < հին իր. **garma-*, *nām* «փահլուկ» < հին իր. **narma-*, բայց *pārd* «կամուրջ» < հին իր. *prtu-*⁷, *sor*⁸ «տարի» < հին իր. **sard-*), ընդ որում պետք է նշել, որ *r* ձայնորդից առաջ կարճ *a* ձայնավորը թալիշերենում դառնում է երկար *ā*, անկախ այն հանգամանքից՝ պահպանվո՞ւմ է այն, թե՞ ընկնում, ինչը կարելի է նկատել վերոբերյալ բոլոր օրինակներում: Ինչ վերաբերում է հին իրանական **vřka-* նախածնի բառավերջի ձայնավորին, ապա այն բառից անհետացած պետք է լինի դեռևս հին իրանական լեզվադարաշրջանից միջին իրանական լեզվադարաշրջան անցման ժամանակ, երբ, պայմանավորված հին իրանական ուժային շեշտի օրենքով⁹, բառավերջի շեշտազուրկ վանկերը թուլանում էին և ընկնում: Ամփոփելով վերոբերյալ հանգամանքները՝ թալիշերենի Անբարանի բարբառի *vāg* «գայլ» բառի համար կարելի է ենթադրել պատմական զարգացման հետևյալ շղթան՝ **vřka-* > **varka-* > **vark-* > **vārg-* > *vāg*:

Հնդեվրոպական ավանդության մեջ գայլը պաշտամունքային-ծիսակարգային գործառույթներ ունեցող, ծիսական հատկանիշներով օժտված կենդանի է, և, այդ հանգամանքով պայմանավորված, հետագայում մի շարք հնդեվրոպական լեզուներում «գայլ» հասկացության արտահայտման համար առաջնային արմատների կողքին դրանց տաբուավորման հետևանքով ի հայտ են գալիս նոր, երբեմն էվֆեմիստական (այլասացական) բառեր և բառակապակցություններ, ինչպես, օրինակ, լատիշերենում՝ *dievas uns* և *meža suns*, որ բառացիորեն նշանակում են համապատասխանաբար «Աստծո շուն» և «անտառի շուն»¹⁰: Իրանական դիցաբանության մեջ ևս գայլն առանձնահատուկ տեղ է գրավում. զրադաշտականության մեջ գայլերը համարվում են դիվային արարածներ¹¹, և անգամ զրադաշտական տիեզերածնության միջին պարսկական «Բունդահիշն» երկի ամբողջ 23-րդ գլուխը նվիրված է գայլերին¹²: Բնական է,

⁷ **Пирейко Л.**, նշվ. աշխ., էջ 118:

⁸ *Sor* «տարի» բառը հետաքրքիր օրինակ է, որտեղ *-rd-* ձայնախմբում *r* ձայնորդը պահպանվել է, բայց ընկել է առաջնալեզվային ձայնեղ պայթական *d* բաղաձայնը:

⁹ **Оранский И.**, Введение в иранскую филологию, М., «Наука» ГРВЛ, 1988, с. 144-145.

¹⁰ **Гамкрелидзе Т., Иванов В.**, նշվ. աշխ., էջ 494:

¹¹ **Boyce M.**, A history of Zoroastrianism, Volume One, The early period, Leiden/Köln, 1975, p. 259.

¹² **Anklesaria E. T. D., Anklesaria B. T.**, The Bundahishn, Bombay 1908, p. XXV.

որ նման հատկանիշներով օժտված կենդանու անվանումը ժամանակի ընթացքում տաբուավորվում է նաև մի շարք իրանական ժողովուրդների մոտ, մանավանդ որ այս ժողովուրդների հիմնական զբաղմունքը դարեր ի վեր եղել է անասնապահությունը: Այսպես, Տաջիկստանի Սամարղանդի, Բուխարայի և Սուրխանդարյայի շրջաններում լեռնային տաջիկների լեզվում *gurg* «գայլ» բառի փոխարեն կիրառվում է *jondor* «կենդանի էակ, արարած, շնչավոր» բառը¹³, իսկ գիլաներենում *gurg* «գայլ» բառի հետ միասին գործածական է նաև *jānavār* էվֆեմիզմը, որ նշանակում է «կենդանի, անասուն, գազան»: Ահա և թալիշերենի Անբարանի բարբառում այսօր *vāg* բառն ունի խիստ հազվադեպ կիրառություն, և դրա փոխարեն «գայլ» բառի իմաստով կիրառվում է *neči* բառը, որը համապատասխանում է ժամանակակից պարսկերենի *naxčir/naxjir*, միջին պարսկերենի *naxčir* «որս, որսամիս», ինչպես նաև հայերենի՝ պահլավերենից փոխառյալ «նախճիր» բառերին, որոնք, ըստ Բեյլիի, ծագում են հին իրանական **naxti-čīθra-* «գիշերը առաջացած, ստեղծված» (*originating in night*) ձևից¹⁴: Էդելմանն այս բառը հանգեցնում է իմաստաբանական տեսակետի ավելի տրամաբանական տարբերակի՝ հին իրանական **naxu-ščaria-* ձևին, որ նշանակում է «լավագույն որսորդի ավար»¹⁵: Այնուամենայնիվ, դատելով այս էվֆեմիզմի հիմքում ընկած բառի հիմնական, առաջնային «որս, որսամիս» իմաստից, կարելի է ենթադրել, որ *vāg* բառը փոխարինվել է *neči* բառով՝ ոչ թե դրա դիվային էության նկատմամբ վախի պատճառով, այլ գուցե, ընդհակառակը, կենդանուն չվախեցնելու նպատակով՝ պայմանավորված որսորդների շրջանում հաճախ հանդիպող այն համոզմունքով, որ որսն իր անունով կոչելը վատ նշան է: *Neči* «գայլ» բառում ևս պատմական *-*r-* ձայնորդը չի պահպանվել, ինչպես *vāg* բառում:

2. *nahlati, mor*

Թալիշերենի Անբարանի բարբառում «օձ» հասկացությունը ևս երկու բառոյթով է արտահայտվում՝ *mor* և *nahlati*: Օձը հնդեվրոպական և մասնավորապես իրանական դիցաբանության մեջ մշտապես կարևոր դեր է խաղա-

¹³ **Хакимова М.**, Табу и эвфемизм в таджикском и английском языках, “Ученые записки Худжандского государственного университета им. Академика Б. Гафурова. Гуманитарные науки”, N1 (42), Худжанд, 2015, с. 149.

¹⁴ **Цаболов Р.**, Этимологический словарь курдского языка, том II, Москва, 2010, с. 36-37.

¹⁵ **Edelman D.**, Some taboo-words in Iranian languages of Central Asia, *Language in Time and Space* (ed. Brigitte L. M. Bauer, Georges-Jean Pinault), Berlin, 2003, p. 122.

ցել, դրան վերագրվել են զանազան գերբնական հատկանիշներ, այն համարվել է չարի մարմնացում և մշտապես պայքարի մեջ եղել բարի ուժերի դեմ¹⁶: Զրադաշտականության մեջ հիշատակվում են բազմաթիվ օժեր և օժանման հրեշներ, ինչպես *Azi Dahāka* (հայկական դիցաբանության մեջ՝ Աժդահակ), *Azi Sruuara*, *Azi Raoiḏita*, *Azi Višāpala* այլն: Սրանց բոլորի անվանումների հիմքում ընկած է հին իրանական **aži-/*aji-* «օժ» արմատը, որ հանգում է հնդեվրոպական **eg^{[h]i-}* առաջնային հիմքի տարբերակներից մեկին՝ **og^{[h]o-}*¹⁷ (առաջնային հիմքից ծագում է նաև հայերեն «իժ» բառը¹⁸): Պայմանավորված օժի հետ կապված հավատալիքներով ու պատկերացումներով՝ լեզվաբանական տարուի հետևանքով իրանական լեզուների մեծ մասից անհետանում են հին իրանական **aži-/*aji-* արմատներին հանգող բառերը¹⁹: Թալիշերենում ևս այս արմատը չի պահպանվել. դրա փոխարեն գործածվող *mor* բառը համապատասխանում է ժամանակակից պարսկերենի *mār* «օժ» բառին (հմմտ. քրդ. *mār*, տաջ. *мор*, զազա *mār* և այլն), որը ևս փոխարինել է տաբուավորված արմատին: Դեիխոդան այս բառը համեմատում է սանսկրիտի *māra* «սպանող» բառի հետ՝ դրա ծագումը կապելով Ավեստայի լեզվի *mairya* «վնասող» բառի հետ²⁰: Պ. Շերվյոն հնարավոր է համարում բառի առաջացումը **marθra-* «սպանող» ձևից՝ նշելով, որ, այնուամենայնիվ, նման եզրահանգման վերջնական լինելուն խանգարում են հնչյունական որոշ բարդություններ²¹: Քննելով թալիշերենի *mor* բառին քրդերենում համապատասխանող *mār* «օժ» բառը՝ Յաբոլովը ևս այն կապում է հին իրանական **mar-* «սպանել» բայարմատի հետ²²: Թալիշերենի Անբարանի բարբառի *mor* բայն ամենայն հավանականությամբ փոխառություն է պարսկերենից, քանի որ բնիկ թալիշական բառերում առաջնալեզվային *r* ձայնորդը չի պահպանվում, ինչպես՝ *ko* «աշխատանք» (հմմտ. ժ. պ. *kār* < հին իր. **kāra*), *bo* «բեռ» (հմմտ. ժ. պ. *bār* < հին իր. **bāra*) և այլն:

¹⁶ Տե՛ս **Гамкрелидзе Т., Иванов В.**, նշվ. աշխ., էջ 527:

¹⁷ Նույն տեղում, էջ 526: **Расторгуева В., Эдельман Д.**, Этимологический словарь иранских языков, том 1, Москва, 2000, с. 297.

¹⁸ Տե՛ս **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1926, էջ 238:

¹⁹ Այս արմատի հետքերը կարելի է գտնել իրանական լեզուներից միայն խորեզմերենում՝ *yyz* «օժ», և մոնջիում՝ *yiz* «օժ», **Edelman D.**, նշվ. աշխ., էջ 127:

²⁰ **Dehoda A.**, *Loyatnāmeḥ*, v. XII, Tehran, 1993-1994, p. 17592.

²¹ **Skjærø P.**, *Azdaḥā*, <http://www.iranicaonline.org/articles/azdaha-dragon-various-kinds#pt1>.

²² **Цаболов Р.**, Этимологический словарь курдского языка, том 1, Москва, 2001, с. 641.

«Օձ» հասկացության մյուս արտահայտչամիջոց nahlati բառը ևս փոխառություն է պարսկերենից: Արաբերենից փոխառյալ la'n/la'nat «անեծք» բառից կազմված պարսկերեն la'nati «անիծյալ» բառը թալիշերենի Անբարանի բարբառում ենթարկվել է դրափոխության. ո և l ձայնորդները բառի մեջ փոխվել են իրենց դիրքերով²³, իսկ թալիշերենի հնչյունական համակարգին խորթ կոկորդային դադարը, որ արաբերենում և պարսկերենում արտահայտվում է ʕ ('ayn) տառով, վերածվել է h-ի: Փաստորեն, ինքնին այլասացական ծագում ունեցող mor բառը, որ փոխարինում էր տաբուավորված *aži-/*aji- արմատից ծագող ձևերին, լեզվի պատմական զարգացման ընթացքում այլևս չի գիտակցվում որպես այդպիսին և թալիշերենի Անբարանի բարբառում ենթարկվում է երկրորդական տաբուավորման, ինչի հետևանքով լեզվում ի հայտ է գալիս nahlati «օձ»՝ բառացի «անիծյալ» նշանակող այլասացությունը՝ ամենայն հավանակա՜նությամբ պայմանավորված թալիշ ժողովրդի շրջանում օձի հետ կապված զանազան սնահավատությունների առկայության հանգամանքով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է թալիշերենի Անբարանի բարբառի «գայլ» և «օձ» բառերի ստուգաբանական քննությանը: Հնդեվրոպական ավանդության մեջ գայլը և օձն ունեն հատուկ պաշտամունքային–ծիսակարգային գործառույթներ, օժտված են հատուկ սակրալ հատկանիշներով, այդ իսկ պատճառով «գայլ» և «օձ» նշանակող հնագույն բառույթներն աստիճանաբար սկսում են տաբուավորվել և փոխարինվել այլասացություններով (էվֆեմիզմ): Թալիշերենի Անբարանի բարբառում «գայլ» և «օձ» հասկացությունների համար գոյություն ունի երկու բառույթ, որոնցից մեկը տաբու է, մյուսը՝ այլասացություն:

Բանալի բառեր – թալիշերեն, իրանական լեզվաբանություն, Անբարանի բարբառ, «գայլ», «օձ», ստուգաբանություն:

²³ La'nat բառի դրափոխված բառը տարածված է նաև հայերենի բարբառներում՝ նալլաթ (Թբիլիսիի, Կարինի, Ուրմիայի, Համշենի, Վանի բարբառներ), նալլաթ (Թբիլիսիի, Արարատյան, Կարինի, Մուշի, Վանի, Շատախի բարբառներում), նաիլաթ, նայլաթ (Ղարաբաղի բարբառում), օրինակ՝ նալլաթ քեզ, չա'ր սալանա, **Գասպարյան Գ., Գրիգորյան Ա., Հակոբյան Ա. և ուրիշ.**, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Երևան, 2007, էջ 128:

ТАБУ И ЭВФЕМИЗМ: ЭТИМОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ СЛОВ «ВОЛК» И «ЗМЕЯ» В ЛЕКСИКЕ АНБАРАНСКОГО ДИАЛЕКТА ТАЛЫШСКОГО ЯЗЫКА

АКОП АВЧЯН

Статья посвящена этимологическому анализу слов «волк» и «змея» в диалекте Анбарана талышского языка. В индоевропейской традиции волк и змея имеют особые культово-ритуальные функции, наделены особыми священными качествами, и по этой причине древние лексемы, обозначающие понятия «волк» и «змея», постепенно стали табуироваться и заменяться эвфемизмами. В анбаранском диалекте талышского языка для слов «волк» и «змея» существуют две лексемы, одна из которых является словом-табу, другая – эвфемизмом.

Ключевые слова – талышский язык, иранское языкознание, анбаранский диалект, «волк», «змея», этимология.

TABOO AND EUPHEMISM: AN ETYMOLOGICAL ANALYSIS OF THE WORDS “WOLF” AND “SNAKE” IN ANBARAN DIALECT OF THE TALYSH LANGUAGE

НАКОБ АВЧЯН

In this article Hakob Avchyan considers the etymological analysis of the words “wolf” and “snake” in Anbaran dialect of the Talysh language. In the Indo-European tradition wolves and snakes have cult and ritual charges and are endowed with attributes. This is the reason why the old lexeme meanings of “wolf” and “snake” are being tabooed and with time they are being replaced with euphemisms. There are two lexemes for the words “wolf” and “snake”, one is a taboo word, the other a euphemism in the Anbaran dialect of the Talysh language.

Key words – talysh language, Iranian linguistics, Anbaran dialect, “wolf”, “snake”, etymology.

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հոդվածում համաժամանակյա քննության ենթ ենթարկել քերականական այն իրողությունները, որոնք հատկանշական են Կապանի տարածաշրջանի բարբառային միավորների ուսումնասիրման և տարբերակման համար: Այս տարածաշրջանի խոսվածքները մինչ այժմ ամբողջապես գիտական քննության չեն ենթարկվել:

Գևորգ Զահուկյանը զուգաբանական-վիճակագրական սկզբունքով V դարի հայ բարբառները դասակարգելիս հյուսիսարևելյան բարբառային խմբում առանձնացրել է Արցախ-Սյունիքի միջենթաբարբառ¹: Հարցի ուսումնասիրության տեսանկյունից կարևորվում է հատկապես Մելադա Աղաբեկյանի «Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն»² հետազոտությունը, որում քննվել են նշված տարածքի բարբառային միավորների հնչյունական համակարգերը: Սակայն այս աշխատություններ չեն ներառվել խնդրո առարկա խոսվածքները:

Հայ բարբառների միահատկանիշ դասակարգման սկզբունքին հետևելով՝ Կապանի տարածաշրջանի 31 խոսվածքներից չորսը (Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Հանդ, Սրաշեն) դասել ենք **(Լհ)Ս**, իսկ մյուսները՝ **ՈՒՄ** ճյուղի մեջ, (Կապան, Արծվանիկ, Գեղի, Ծավ, Նորաշենիկ, Շիկահող և այլն): Աշխարհագրական տեղադրմամբ Կապանը գտնվում է **ՈՒՄ** (Ղարաբաղ, Գորիս) և **(Լհ)Ս** (Հադրութ, Մեղրի) ճյուղերի բարբառային գոտում, ուստի բնական է, որ «բարբառային ուժեղ միջավայրում այլ բարբառային ձևերը տեղի են տվել և տեղի են տալիս՝ մոտենալով շրջապատի ձևերին»³: Կապանի տարածաշրջանի խոսվածքները, «հանդիպելով ում ճյուղի Ղարաբաղի բարբառին, ուժեղ ազդեցության ենթարկվելով, կլանվել են նրանից՝ որոշ ձևափոխությամբ պահպանելով «ս» ճյուղի՝ Հադրութի որոշ հատկանիշներ»⁴:

Քննվող խոսվածքների մեծ մասում ներկայումս գործառում են **ՈՒՄ**

¹ Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 186:

² Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Երևան, 2010, էջ 54-165:

³ Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզ, Երևան, 1966, էջ 230:

⁴ Նույն տեղում, էջ 235:

ճյուղին բնորոշ լեզվական իրողություններ: Այս տարածաշրջանի խոսվածքներում հոգնակիակերտ մասնիկները շատ չեն (**-էր**, **-նէր**, **-նի**, **-է(ն)ք/ ք**, **-իք**, **-ք**, **-ա/ ւն (ն)ք**, **-արանք**, **-օ/ օ տ**, **-ու/ ու տ/**, **-ու(ն)ք**, **-օտանք**, **-օտէ(ն)ք**): Համաժամանակյա կտրվածքում բառերի գերակշռող մասի հոգնակին կազմվում է **-էր** և **-նէր** մասնիկներով, ինչի հետևանքով էլ հիշյալ բարբառային միավորներում **-նի** հոգնակիակերտի գործառումը սահմանափակ է: Վերջինս դեռևս կիրառվում է Աղվանու, Դավիթ Բեկի, Տանձավերի և (**ԼԻ**)Ս ճյուղի խոսվածքներում, բայց երիտասարդների խոսքում սակավադեպ է, ինչպես՝ **անջուկ-նէր//ընջուկնի** (Դ.Բ., Աղ., Ս.), **մօկնէր//մօկուննէր//մօկնէք** (Դ.Բ., Աղ., Ս.)// **մըկնօտանք** և այլն:

Կապանի տարածաշրջանի խոսվածքները հոլովման համակարգում միմյանցից էականորեն չեն տարբերվում: Սակայն Աղվանում, Դավիթ Բեկում և Տանձավերում գոյականի **ի** հոլովման ժամանակ սեռականն ունենում է **ի** թեքույթ, իսկ մյուս խոսվածքներում՝ **է**: Սեռական հոլովը ստանում է **ն** որոշիչ հոդ, իսկ գործիական և ներգոյական հոլովները՝ **ը**, ինչպես՝ ուղղ. մէշկ(ը), սեռ./տր.մէշկէ(ն), հայց. մէշկ(ը), բաց. մէշկա(ն), գործ. մէշկավ(ը), ներգ. մէշկում(ը): Հարկ է նշել, որ բացառական, գործիական և ներգոյական հոլովները ձևավորվում են Սյունիք-Արցախ տարածքին բնորոշ երկու՝ համադրական (կցական) և հարադրական (վերլուծական) եղանակներով: Համադրական կազմության բացառականի իմաստն արտահայտվում է ուղղական, իսկ ներքին թեքման դեպքում՝ սեռական հոլովաձևին **ա(ն)/ ւն (ն)** հոլովակերտի կցմամբ (օր.՝ ծառան «ծառից», շանան «շնից»): Ինչպես Ղարաբաղի բարբառում, այնպես էլ հետազոտության առարկա խոսվածքներում «գոյականի բացառական հոլովի **ա/ւն** թեքույթը կարելի է համարել այդ տարածքին բնորոշ հատկանիշ»⁵: Արմատական **ա** ձայնավորով վերջավորվող որոշյալ առմամբ գոյականների բացառականը ձևով նման է ուղղականին: Այս դեպքում կարևորվում է շեշտի գործառույթը, որը բացառականի հոլովաձևերում ընկնում է ոչ թե վերջընթեր, այլ վերջին վանկի վրա⁶, օր.՝ Էթ կօլա՛ն մի խըրդօ Գ ու ր ածէ ծէրքիս: Բացառականի վերլուծական ձևը կազմվում է երկու՝ **անա** և **ն է/ըստա** բառ-մասնիկներով, որոնք ավելանում են սեռական հոլովաձևին, ընդ որում առաջինը կիրառվում է և՛ իրանիշ, և՛ անձնանիշ գոյականների դեպքում,

⁵ Միքայելյան Ժ., Գոյականի բացառական հոլովի կազմությունը հայերեն բարբառներում, Զահուկյանական ընթերցումներ -2007, Երևան, էջ 128:

⁶ Պողոսյան Ա., Հաղորդի բարբառը, Երևան, 1965, էջ 90:

սակայն իրանիշների հետ ունի ոճական նշանակություն, օր.⁷ Սարան ճանջերը քրջցրուլ ըն: Էթ սարէն անա (կամ սարան) էն ղօլ մը ծ ծըմակ կա: Առաջին օրինակում սար բառը հարադրական կազմությամբ չի կարող գործածվել, իսկ երկրորդում բարբառային երկու ձևերն էլ թույլատրելի են: **Անա** մասնիկով և համադրական ձևով բացառականի գործածությունն ընդունելի է **մարդ** բառի և կենդանի նշանակող գոյականների կազմության համար (*մարթան կըման, մարթէն անա, կըվան, կըվէն անա*): Բայց անձ մատնանշող այլ գոյականներ նմանատիպ կիրառություն չունեն. նրանք արտահայտվում են միայն **անա** և **նէ/ըստա** մասնիկներով (*ախպուրը անա// նէ/ըստա*): **Նէ/ըստա**⁷-ն ընդհանրապես հատուկ է անձնանիշ գոյականներին: Այն սակավադեպ է Աղվանի, Դավիթ Բեկ և Տանձավեր խոսվածքներում: Իբրև անկախ բառ՝ այն արտահայտում է տարբեր իմաստներ, այսպես՝ **կպչել** իմաստը պահպանել է **նէ/ըստա կէնալ** և **նէ/ըստա տալ** հարադրություններում, օր.⁷ «Հի՞նչ ըս մօրըտ/թ նէ/ըստա կացա(յ)», «Յէկա պատան նէ/ըստա տօր»: Սեռական հոլովածնի հետ այս բառ-մասնիկը, իբրև բացառական հոլով, ունի մասին, վերաբերյալ կապերի իմաստները, օր.⁷ Մըր հըրէվանէն նէ/ըստա շատ ըն խըսիս (Եղ., Կղ., Ն. Հ., Ս.), ինչպես և՛ վրայից (օր.⁷ Օջախէն նէ/ըստան ղըզղանը յէր կայ): Գործիականը ձևավորվում է **ա/ւն վ** հոլովակերտով (օր.⁷ *իրէսավ, կէտավ*): Բացառություն են **ձեռք** և **ոտք** գոյականները, որոնք ունեն երկ-ձևություն՝ **ձէքավ// ձէ/ըոտք** և **վը ց̄ (դ)ավ//վէ/ընոտք** (երկրորդ տարբերակներն առաջացել են գրաբարի հոգնակիից, սակայն այժմ իբրև այդպիսին չեն հասկացվում, օր.⁷ *Քու է/ըոտք «ձեռքով» տիրի ստրդ*): Ինչպես Ղարաբաղի և Հաղրուփի բարբառային միավորներում, անձնանիշ գոյականի վերլուծական կազմությամբ գործիականն արտահայտվում է սեռականի և **անավ//ւն նւն վ** կամ **նէ/ըստավ** մասնիկների հարադրությամբ, օր.⁷ *քըվէր նէ/ըստավ/քըվօրըն անավ* (Դ.Բ., Աղ., Տ.): Ներգոյական հոլովի վերլուծական տարբերակ-

⁷ Համամիտ լինելով Ա. Մ. Պողոսյանի հետ՝ կարծում ենք, որ **նէ/ըստա** բառ-մասնիկը տարածամանակյա կտրվածքում պետք է առաջացած լինի գրաբարյան **նիստ** բառից և նախապես նշանակել է «ցածր կանգնել», ապա՝ «հպել, կպչել, միանալ», հետո բառիմաստի շրջմամբ՝ «պոկվել, անջատվել, հեռանալ»՝ ներկայացնելով արմատական բառի հենց բացառական հոլովածնը՝ ուղղ. նիստ, բացառ. (ի) նըէտստ(յ) [**Պողոսյան Ա. Մ.**, Հաղրուփի բարբառը, Երևան, 1965, էջ 91-92]:

ները կազմվում են սեռական հոլովով և **մէջ//մաջ** կապով (վերջին տարբերակը առկա է միայն **(ԼԻ)Ս** ճյուղին պատկանող խոսվածքներում), նաև՝ **անա** և **նէ/ըստա** մասնիկների ներգոյական հոլովածներով (օր.՝ *տան(ը) մէջի/էն/մաջին, մարթին անումը/նէ/ըստումը*): Հարկ է կարևորել, որ լեզվի զարգացմանը զուգընթաց հոլովական համակարգում ձևավորվել է միօրինակության և ընդհանրության ձգտում:

Խոսվածքային յուրահատկություններ են առկա նաև ածականի գերադրական աստիճանի վերլուծական ձևի կազմավորման ժամանակ: Այն արտահայտվում է **ամէն//ըմէն, սաղ, լօխ, չիմ** որոշյալ դերանունների բացառական հոլովածնով և ածականի հարադրությամբ: **ՈՒՍ** ճյուղի խոսվածքներում, բացառությամբ Աղվանու, Դավիթ Բեկի, Տանձավերի, գործառվում է **սաղ**-ը «ամեն, բոլոր» (օր.՝ *ամէնան հաստ, սաղան կիծի*), **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքներում՝ նաև **լօխ**-ը (օր.՝ *ընէնան օրախ, լօխան կուճուր, սաղան պէլ*), իսկ Աղ.-ում և Դ.Բ.-ում և Տ.-ում ավելանում է նաև **չիմ**-ը (օր.՝ *լօխան լըղար, լօխճան մէծ, չիմւն ն թիթէվ*): Տարածաշրջանիս խոսվածքներում ընդհանրական բնույթ ունեն հատկանիշի սաստկական նշանակությամբ կիրառվող **շատ** և **լւն փ** «բավական, չափազանց» բառերը, օր.՝ *լւն փ լւն վ, շար կըռօ* և այլն:

Կապանի տարածաշրջանի բարբառային միավորների դերանվանական համակարգում դրսևորվող առանձնահատկությունները հիմնականում հնչյունային են, օր.՝ տ**ո՛**ն (Աղ.,Դ.Բ.,Տ.)//տու, մէք (Աղ.,Դ.Բ.,Տ.)// մը/քք (Շ.,Ծ.,Ն.Հ., Ս.,Կղ.,Եղ.)// մուք (մյուս խոսվածքներում): Խոսվածքների դերանվանական համակարգի քերականական զուգաբանություններից է ցուցականների թեք հոլովածներում և հոգնակի ուղղականում **տ** կամ **դ** հնչյունի հավելումը (օր.՝ ըստրմ , ընդրն նւ վ, ընդրն նք): Խոսվածքներում գործառվող **էս, էթ/տ, էն** դերանունների թեք հոլովների զուգաձևությունները համարում են Ղարաբաղի և Հաղրուփի բարբառային միավորների ազդեցություն: Նշված դերանունների սեռական և տրական հոլովները **(ԼԻ)Ս** ճյուղի **Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Հանդ, Սրաշեն** խոսվածքներում ունեն նաև **ո՛ւ ստ ո՛ւ ր, ո՛ւ նդ ո՛ւ ր, ո՛ւ տ ո՛ւ ր** ձևերը, իսկ **ՈՒՍ** ճյուղի Դավիթ Բեկ, Աղվանի և Տանձավեր խոսվածքներում՝ **ըստ ո՛ւ ր, ընդ ո՛ւ ր, ըտ ո՛ւ ր**: Ինչպես Ղարաբաղի բարբառը, խնդրո առարկա խոսվածքները ևս ցուցական դերանունների երկու տիպերի (**սա, դա, նա** և **այս, այդ, այն**) խառնուրդ ներկայացնող բարբառային միավորների թվին են

պատկանում, քանի որ այս խոսվածքներում ևս **էս**, **էթ/տ**, **էն** ցուցականները թեք հոլովածներում **տ-ի** հավելման հետ ունեն նաև **րա** հնչյունախումբ⁸:

Հոլովման համակարգում խոսվածքներն ունեն ընդհանրություններ, իսկ խոնարհման համակարգում՝ մի շարք տարբերություններ: Ուսումնասիրության առարկա խոսվածքների խոնարհման հարացույցները հատկանշվում են քերականական մի շարք առանձնահատկություններով, որոնք ընդհանրապես բնորոշ են **ՌԽՄ** և **(ԼԻ)Ս** ճյուղերի բարբառային միավորներին: Դեռևս գրաբարում ներկա անկատարն ունեցել է ըղձական իմաստով կիրառություններ, իսկ միջին հայերենում այդ ժամանակաձևերը դարձան ըղձականի ապառնիի ձևեր⁹: Արևելյան խմբակցության բարբառներում, նաև քննվող խոսվածքներում, ապառնի ժամանակի «եղանակային տարբերությունները դրսևորվում են **կ** և **պիտի** եղանակիչների միջոցով, իսկ ապառնիության իմաստը՝ ապառնի դերբայի և ըղձական եղանակի բայաձևերով»¹⁰: Ապառնի դերբայը գործածվում է երկու վերջավորությամբ՝ **-ու//ո՛ւ** և **-ական// – անկան**, որոնք ավելանում են անորոշ դերբային, ընդ որում առաջինը հատուկ է խնդրո առարկա տարածքի **ՌԽՄ** ճյուղի, իսկ երկրորդը՝ **(ԼԻ)Ս** ճյուղի բարբառային միավորներին, օր.՝ նըստելու, բայց՝ նըստըլական, ա/ըսելու/ըսըլական (Ն.Հ., Ս., Կղ., Եղ.): Որպես ձևաբայ՝ ապառնի-ապակատարը մասնակցում է սահմանական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակաձևերի կազմությանը, օր.՝ տանելու վըմ//եմ, աղալու վըք լիւ (ո), ըղըլական իթ/թ (Ն.Հ., Ս., Կղ., Եղ.): Ինչպես արդի հայերենում և Ղարաբաղի բարբառում, այնպես և այս տարածաշրջանի խոսվածքներում ըղձական եղանակի ապառնին ծագում է գրաբարյան ներկայից (օր.՝ կիրի, կիրին): Ենթադրական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակաձևերը կազմությամբ ևս նման են արդի գրական լեզվին: Ենթադրական եղանակը ձևավորվում է ըղձական եղանակից՝ **կ** եղանակիչով, իսկ հարկադրականը՝ **պի/ըտի//բի/էդի//բէդմա** բառմասնիկով: **Պի/ըտի** եղանականիշ մասնիկը հատուկ է քննվող բարբառային գոտու **ՌԽՄ** ճյուղի, իսկ մյուս տարբերակները՝ **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքներին (*կըրվամ*, *բի/էդի կըտրապիմ*): Ի դեպ, տեղին է նշել, որ, ըստ անցյալ

⁸ Կատվայան Վ., Հայ բարբառագիտության հարցեր, Երևան, 2014, էջ 67-68:

⁹ Անթոսյան Ս., Խոնարհման համակարգի զարգացման ընթացքը, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Երևան, 1975, էջ 324-325:

¹⁰ Գևորգյան Գ., Ապառնիի իմաստային դրսևորումները հայերենի տարածական տարբերակներում, Զահուկյանական ընթերցումներ, Երևան, 2006, էջ 54:

Ժամանակաձևերի, Կապանի տարածաշրջանի խոսվածքները կարելի է տարբերակել: **ՈՒՄ** ճյուղի գրեթե բոլոր խոսվածքները, բացառությամբ Դ. Բ.-ի, Աղ.-ու, Տ.-ի, չունեն օժանդակ բայի անցյալի խոնարհման առանձին ձևեր և այդ ժամանակային իմաստն արտահայտում են լին (լ) բառ-մասնիկի ու ներկա ժամանակաձևերի հարադրությամբ, օր.՝ կնրոնում լին «գրում էի», կնրոնում լին «գրելու էի», կնրոնում լին «գրել էի»: Այս խոսվածքներում բացակայում են անցյալ կատարյալի համադրական ձևը և անցյալ վաղակատարը, ընդ որում վաղակատար ժամանակաձևերի իմաստն արտահայտում են նաև հարակատարով: Ըղծականի անցյալի ապառնին (**ԼԻՍ** ճյուղի բարբառային միավորներում, նաև Աղվանու, Դավիթ Բեկի, Տանձավերի, Ծավի, Շիկահողի, Շիշկերտի և Ճակատենի խոսվածքներում կազմությամբ ևս սերում է գրաբարի անցյալ անկատարից (*ըշխարհի-ըշխարհիք*): Այս խոսվածքներում գործառում են նաև ենթադրական և հարկադրական եղանակների անցյալի համապատասխան ձևերը (*կըսըվէրիք, պիէտի ըսէր* (Դ. Բ., Աղ., Տ.), *բիէդի ըրվին* (Ն.Հ., Ս., Կղ., Եղ.): Սակայն **ՈՒՄ** ճյուղի բարբառային մյուս միավորներում ըղծականի և ենթադրականի անցյալ ժամանակաձևերն առանձին ձևեր չունեն. դրանք նույնանուն են սահմանական եղանակի անցյալ ապակատարին (օր.՝ *կիրէլու վյըմ լին (լ)* «գրելու էի, գրեի, կգրեի»), ուստի նշված ժամանակաձևերը միայն խոսքաշղթայում են իմաստով տարբերվում. այսպես՝ ԹԾ վըր ուրան տըսնալու վըմ լին (լ), ըսէլու վյըմ լին (լ) «Եթե նրան տեսնեի, կասեի», Տըսնաս մըզ հըսնէլու վյըն լին (լ), վըր դըղ կաղնէլու վյըք լին (լ) «Արդյոք մեզ հասնելու էին, եթե այնտեղ կանգնեինք»: **ՈՒՄ** ճյուղի բարբառային այս միավորներում հարկադրականի անցյալը ձևավորվում է *պի/ըտի եղանակիչ + անցյալ ապակատար* քերականական կաղապարով (*պի/ըտի ըսէլու վյըն լին (լ)*), իսկ բարբառային քննվող գոտում հարկադրանքը կամ պարտադրանքն ընդգծելու նպատակով հաճախ կիրառում են *պըտկա//պըթ ա* եղանակիչը(*պըտկ ա//պըթ ա կիրիմ*): Քննվող խոսվածքների ժխտական խոնարհման հարացույցում եղանակաժամանակային տարբեր ձևերի համար կիրառում են չ կամ ոչ ժխտական մասնիկները: Սահմանական եղանակի ժամանակ գործածվող չ մասնիկը դրվում է օժանդակ բայի վրա, բացառություն է միայն անցյալ կատարյալի պարզ ձևը, որն առկա է (**ԼԻՍ** ճյուղի բարբառային միավորներում և Աղվանու, Դավիթ Բեկի, Տանձավերի խոսվածքներում: Անցյալ կատարյալի ժխտումը կատարում են հե-

տադաս **վէշ/վըչ** բառ-մասնիկով, այսպես՝ կիրան լ չըմ//կիրեցէ վէշ/վըչ(անց. կատ.), կո՛ւրո՛ւ լո՛ւ//կիրիլւն կան չըմ (ապառնի), կո՛ւրո՛ւ լո՛ւ//կիրիլւն կան չըմ լւն (լ), նակ՝ կիրիլւն կան չի (անց. ապառնի), կիրան ծ չըմ (հար.-վաղ.), կիրան ծ չըմ լւն (լ) (անց. հար.-վաղ.), **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքներում նակ՝ կիրան ծ չի(անց. հար.), կիրան լ չի (անց. վաղ.): **Չ** մասնիկը մասնակցում է նակ ենթադրական (պայմանական) եղանակի ապառնի և անցյալ ապառնի ձևերի ժխտական խոնարհմանը, երբ գործառվում է անորոշ դերբայը, իսկ ժխտական մասնիկն ավելանում է դերբային հաջորդող օժանդակ բային, ինչպես՝ մընալ չըմ(ապ.), մընալ չըմ լւն (լ), նակ՝ մընալ չի (անց. ապ.). անցյալ ապառնիի երկրորդ ձևն առկա է մասնավորապես **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքներում: Ըղծական և հարկադրական եղանակների ժամանակաձևերի ժխտումը տեղի է ունենում բայաձևին հետոդաս **վէշ(Աղ.,Դ.Բ.,Տ.)//վըչ (Եղ.,Կղ.,Ս., Ն.Հ.) //վէ/ըչ (Արծ.,Կպ., Ծ.,Ծ., Ագ., Խղ.,Շշ.,Լ.,Ուժ.)** բառ-մասնիկով, այսպես՝ մընամ վէշ //վէ/ըչ/վըչ (ըղծ. ապ.), մընալու չըմ լւն (լ), մընի վէշ/վըչ (ըղծ. անց. ապ.), պի/ըտի մընամ վէշ/վէ/ըչ, բէ/իդի մընամ վըչ(հարկ. ապ.), պի/ըտի մընալու չըմ լւն (լ), բէ/իդի մընի վէշ/վըչ (հարկ. անց. ապ.): Նկատելի է, որ ժխտական խոնարհման հարացույցում համադրական ժամանակաձևերը ևս արտահայտվում են հարադրությամբ: Խոսվածքների համար տարբերակիչ է նակ արգելական հրամայականի **մի** մասնիկը: **Մի, միք** մասնիկները գործածական են Գորիսի խոսվածքի ազդեցությունն ունեցող խոսվածքներում (*կիրի՛ մի-կիրի՛ միք*), իսկ **մէ, մէք** տարբերակները՝ **(ԼԻ)Ս** ճյուղի լեզվական մնացորդները պահպանած բարբառային միավորներում (*ասէ՛ մէ-ասէ՛ մէք*): **Մա, մաք** մասնիկներն առհասարակ հատուկ են Կապանի **ՌԻՍ** ճյուղի խոսվածքներին (*կէնա՛ մա – կէնա՛ մաք*), բայց Ծավում և Շիկահողում կիրառվում են այդ մասնիկների հնչյունական տարբերակները՝ **մւն, մւն ք** (*օտի մւն, քինի մւն ք*):

Տարածաշրջանիս բարբառային միավորներում, ինչպես և Ղարաբաղի բարբառի խոսվածքներում, տարածում ունեցող երկրորդական բաղադրյալ ժամանակները ձևավորվում են անկատար, ապառնի ու հարկատար դերբայներով և **լինել** բայի խոնարհված ձևերով¹¹, ընդ որում **ՌԻՍ** ճյուղի խոսվածքներում իբրև այդպիսիք հանդես են գալիս **նո՛ւ մ** և **լւն (լ) (<իլւն**

¹¹ **Միքայելյան ժ.**, Բայի երկրորդական ժամանակները Ղարաբաղի բարբառում, Հայոց լեզվի պատմության հարցեր, Ստեփանակերտ, 2008, էջ 49:

(Ղրբ., Գոր.) բառ-մասնիկները, իսկ (ԼԻ)Ս ճյուղի խոսվածքներում՝ նիս-ը և լիւ (յ)-ը: Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր են ձևավորվում նաև հարակատար դերբայով և կամ պակասավոր բայով (*լրսած կամ, խըսէցած կար*): Ընդհանրապես հարակատար դերբայով կազմված հիմնական և երկրորդական ժամանակաձևերն իրենց կիրառական ակտիվությամբ առանձնանում են մյուս ձևերից: Հավելենք, որ ՈՒՄ ճյուղի այն խոսվածքներում, որոնցում չեն գործածվում օժանդակ բայի անցյալի խոնարհաձևերը, **ձևաբայ+օժանդակ բայի ներկա խոնարհաձև+լիւ (յ)** քերականական կաղապարով կազմված ժամանակաձևերը համարվում են ոչ թե երկրորդական բաղադրյալ, այլ գլխավոր: Քերականական այս փոխարինմամբ էլ «պետք է բացատրել այս երկու տիպի ժամանակաձևերի հակադրության բացակայությունը¹² խնդրո առարկա ենթախոսվածքներում: Ինչպես Ղարաբաղի խոսվածքներում, Կապանի տարածաշրջանի ՈՒՄ ճյուղի բարբառային միավորներում ևս, բացի Դավիթ Բեկից, Աղվանուց, Տանձավերից, **ձևաբայ+օժանդակ բայի ներկա խոնարհաձև+լիւ (յ)** քերականական կաղապարով ժամանակաձևերը կարող են լինել բազմիմաստ¹³, օր.՝ կաղնած ըմ լիւ «կանգնել էի, կանգնած էի», նաև՝ «կանգնած եմ եղել» (ԼԻ)Ս ճյուղի խոսվածքներում, կամ՝ տընսնալու վըս լիւ «տեսնելու էիր, տեսնեիր, կտեսնեիր»: Խոսվածքներում ընդհանրապես անցյալ ժամանակաձևերի իմաստն արտահայտվում է համադրական և վերլուծական կազմությամբ. համադրական կառույցներում՝ անցյալի դիմաթվային ցուցիչներով, իսկ հարադրական կազմություններում՝ օժանդակ բայի անցյալի պարզ և բաղադրյալ խոնարհաձևերով:

Այսպիսով, ներքին զուգադրական մեթոդով Կապանի տարածաշրջանի բարբառային միավորները քննելիս անհրաժեշտ է նշել, որ քերականական իրողությունների տարբերակիչ հատկանիշներից անվանականներն ընդհանրապես զիջում են բայականներին: Կապանի տարածաշրջանի (ԼԻ)Ս ճյուղի խոսվածքներն ունեն եղանակային բոլոր ժամանակաձևերը, իսկ ՈՒՄ ճյուղի խոսվածքներն անցյալ ժամանակաձևերի կազմության դեպքում բաժանվում են երկու խմբի: Արդի ժամանակափուլում զգալի է ՈՒՄ ճյուղի խոսվածքների ազդեցությունը: Բարբառայնությունը հիմնականում պահպանել են տարեց և

¹² Միքայելյան ժ., Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները Խոյ-Մարաղայի բարբառի խոսվածքներում, Զահուկյանական ընթերցումներ, Երևան, 2011, էջ 224:

¹³ Միքայելյան ժ., նշվ. աշխ., 2008, էջ 51:

միջին սերնդի բարբառախոսները, իսկ երիտասարդների խոսքը, պայմանավորված հասարակական և ժամանակային փոփոխություններով, հագեցած է արդիիայերենյան իրողություններով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արդի ժամանակափուլում Կապանի տարածաշրջանի խոսվածքների հետազոտման և դասակարգման համար էական են քերականական այն իրողությունները, որոնք բնորոշ են տվյալ բարբառային միավորին: Քննվող հարցի տեսանկյունից կարևորվում են խոսվածքների անվանական և բայական ենթահամակարգերում առկա յուրահատկությունները: Հողվածում իբրև այդպիսիք դիտարկել ենք հոգնակիակերտ մասնիկների գործածությունը, գոյականի և դերանունների հոլովման համակարգերի, սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևերի, ըղծական և ենթադրական անցյալ ժամանակաձևերի առանձնահատկությունները, ինչպես և երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը, **պիտի** բառ-մասնիկի և **մի** արգելականի տարբերակները:

Բանալի բառեր - բարբառային միավորներ, խոսվածքներ, քերականական իրողություններ, տարբերակներ, գործածել, ընդհանրություն, համակարգ:

ПРОЯВЛЕНИЕ РЯДА ГРАММАТИЧЕСКИХ РЕАЛИЙ В ДИАЛЕКТНЫХ ЕДИНИЦАХ КАПАНСКОГО РЕГИОНА

СВЕТЛАНА МАНУЧАРЯН

На современном этапе для исследования и классификации говоров Капанского региона существенны те грамматические реалии, которые характерны для данной диалектной единицы. С точки зрения исследуемого вопроса выделяются особенности, существующие в именных и глагольных подсистемах говоров. В статье в качестве таковых мы рассмотрели особенности применения производных частиц образования множественного числа, системы склонения существительных и местоимений, категории настоящего и прошедшего времени сослагательного наклонения, желательного и предполагаемого наклонения прошедшего времени, а также второстепенные составные временные формы, варианты частицы „պիտի” (**должен**) и выражающей запрет частицы „մի” (**не**).

Ключевые слова - диалектные единицы, говоры, грамматические реалии, варианты, употребить, общность, система.

PERFORMANCE OF SOME GRAMMATICAL ACTUALITIES IN THE DIALECTICAL UNITS OF KAPAN REGION

SVETLANA MANUCHARYAN

At present the grammatical actualities typical of the dialectal units of Kapan Region, are essential to the studies and classification of the dialects of this region. From the point of view of the question under study, it is important to take into account the existing peculiarities in noun and verb subsystems of these dialects.

In this article Manucharyan considers the utilization of affixes to form the plural of nouns, the case systems of pronouns and nouns, the present and past indefinite tenses, the features of the subjunctive and conditional Moods, as well as secondary complex tenses, the variants of the modal verb piti (must) and the negative particle mi (don't).

Key words - dialectical units, idioms, grammatical actualities, variants, use, universality, system.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԱՅՔ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ, ՄԱՐՏԱԿԵՐՏԻ, ՔԱՐՎԱՃԱՌԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ (1992-1994ԹԹ.)

ԻՍԿՈՒՀԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումով արցախահայրության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց պատմական նոր փուլ: Իրական անկախության ճանապարհին ԼՂՀ-ի ստեղծումն ամենավճռորոշ և գործնական քայլն էր, որին հաջորդեցին իրավական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական ինքնահաստատման գործողությունները:

1991թ. դեկտեմբերից Ադրբեյջանի կողմից սկսված զինված հարձակումը շատ որոշակի ու հստակ նպատակ ուներ՝ զավթել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տարածքները, բռնի տեղահանել հայ ազգաբնակչությանը: Ազգային-ազատագրական պայքարի խորացմանը զուգահեռ օրեցօր ավելի ու ավելի էին ծավալվում ռազմական գործողությունները, որի ընթացքում էլ ստեղծվեց պաշտպանական համակարգը: Այդ ուղղությամբ ձեռնարկվող կազմակերպական միջոցները նպատակասլաց, հետևողականորեն իրականացվում էին Հայաստանում և Արցախում միաժամանակ: Արդյունքում՝ մարտական գործողություններին զուգահեռ սկսեցին կազմավորվել ՀՀ զինված ուժերը և ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը (հետագայում՝ ԼՂՀ պաշտպանության բանակ):

1991թ. վերջերին և 1992թ. սկզբներին ԼՂՀ տարածքում կազմավորվեցին 10-ից ավելի վաշտեր ու դասակներ¹: Դա հնարավորություն տվեց հակամարտ ուժերի անհավասարության պայմաններում անհամեմատ կազմակերպված իրականացնելու Արցախի ինքնապաշտպանական մարտերը: Պաշտպանական մարտերին միացան հարյուրավոր կին-կամավորականներ: Նրանք, մասնակցելով մարտական գործողություններին, տղամարդկանց հետ կիսեցին պատերազմի բոլոր դժվարությունները:

Դեռևս 1988-1989թթ. հանրահավաքների ժամանակ կամավորական

¹ Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001, էջ 27:

ջոկատներին զինվորագրվելու և ճակատ մեկնելու կոչերին արձագանքող կանայք, համալրելով ինքնապաշտպանական ուժերը, ճակատագրական պահին պարտավորվեցին կատարել իրենց պարտքը հայրենիքի հանդեպ:

1989թ. ԼՂԻՄ-ում անցկացված մարդահամարի համաձայն՝ Մարտակերտի շրջանում ընդհանուր բնակչության թիվը կազմում էր 46870 մարդ, որից 24167-ը՝ կանայք²: Նրանց մի մասը կամավոր միացավ ազատամարտին, մնացածը, մնալով թիկունքում, ևս իրենց ներդրումն ունեցան ազատագրական պատերազմին՝ անտրտուն ղիմակայելով 1992-1994թթ. գրկանքներին: Հատկանշական է, որ ռազմագործողությունների մասնակից կանանց հիմնական մասն առաջին գծում զբաղվում էր բուժօգնությամբ: Սակայն շատ հաճախ օրհասական պահերին առաջին բուժօգնությունը ցուցաբերելուց բացի, նաև զենք էին վերցնում և սահման պաշտպանում: Իսկ նրանք, ովքեր մարտի դաշտ էին մեկնում զենքը ձեռքներին՝ կամավոր-ազատամարտիկ, ապա առաջին գծում մարտնչելուց բացի, մասնակցում էին բուժօգնության, սննդի մատակարարման, ճաշի պատրաստման և մի շարք այլ կազմակերպական աշխատանքների: Երևանի Սովետական շրջանի շրջկոմի երկրորդ քարտուղար Ռուդիկ Գևորգյանը հետագայում գրած «Հավաքական ուժ» հուշագրում պատմում է. «Շրջանի պատվիրակությունը, մեկնելով Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջան, շրջագայեց սահմանամերձ գրեթե բոլոր գյուղերը: Տեսանք, որ շուրջօրյա հերթապահություն էր սահմանված այդ գյուղերում, որտեղ կանայք հերթապահում էին ցերեկային ժամերին: Սակայն նկատեցինք, որ բոլոր գյուղերում գիշերվա բոլոր ժամերին տղամարդկանց հետ հավասար հերթապահում էին նաև կանայք: Բոլորը զինված էին մեծ մահակներով: Տեղեկացանք, որ կացիններն ու եղանները կազմ ու պատրաստ էին դիմադրության համար: Գյուղերից երկուսում մենք լավ «պրծանք» կանանց ձեռքից: Մութ գիշեր էր, մեքենայի ձայնը և շրջապատի մոտ կանգնած կանանց հրամայական «կանգնիր» բառը չլսեցինք: Տասնյակ կանայք, մահակներով զինված, հարձակվեցին մեր մեքենաների վրա, մեկից մեկուկես մետր հեռավորության վրա մեքենաները արգելակեցին: Իսկ ինչպիսի ուրախություն, ոգևորություն, որ մայր Հայաստանը իրենց հետ է: Բոլորն էլ պատրաստ էին կռվելու»³:

² Итоги всесоюзной переписи населения 1989 г. Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, Москва, с. 17-18.

³ Գևորգյան Ռ., Հավաքական ուժ, Երևան, 2005, էջ 427:

Հեղինակի վկայությունները փաստում են, որ նախքան լայնամասշտաբ ռազմագործողություններ սկսելը Մարտակերտի շրջանի գյուղերում առկա ինքնապաշտպանական ուժերում մեծ թիվ էին կազմում կանայք: Ստեղծված կամավորական ջոկատներին անհրաժեշտ էր միջոցներ՝ զենք, զինամթերք հայթայթելու համար: Մարտակերտի կամավորական ուժերը Վ. Բալայանի և Լ. Ազգալոյանի գլխավորությամբ դիմեցին բոլոր մարտակերտացիներին՝ դրամահավաք կազմակերպելու նպատակով: Դրամահավաքին մասնակից կանանց թվում էր Արևհատ Օհանջանյանը, ով ոչ միայն դրամական միջոցներ, այլև մեծ քանակությամբ ոսկյա զարդեր տրամադրեց Մարտակերտի ինքնապաշտպանական ջոկատին: ԼՂՀ զոհված ազատամարտիկների թանգարանում Արևհատ Օհանջանյանի նկարին կից տեղեկանքում կարդում ենք. «Տրվում է Մարտակերտ քաղաքի բնակչուհի Արևհատ Շամիրի Օհանջանյանին, որ նա իսկապես իր ոսկյա զարդերը և իրերը (շղթա, ականջօղեր, ժամացույց, մատանիներ, ոսկյա դրամներ) նվիրել է Արցախի ազատագրական բանակին (հրամանատար՝ Վլադիմիր Բալայան), և այդ միջոցներով ձեռք է բերվել մեկ «ԲՄՊ-1» զրահամեքենա: ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի Մարտակերտի շրջանի լիազոր ներկայացուցիչ՝ Ս. Աբրահամյան»:

1992թ. փետրվարի կեսերին լայնամասշտաբ նոր հարձակում սկսվեց Հյուսիսային Արցախի վրա: Հարձակվելով Մանաշիդի ուղղությամբ՝ հակառակորդը գործի դրեց զանգվածային բնաջնջման ոչ միայն «Գրադ», այլև «Ուրագան» տիպի արգելված զենքեր⁴: Ստեղծված ծանր վիճակում հայ ինքնապաշտպանական ուժերը շարունակում էին համառ դիմադրություն ցույց տալ, որին մասնակցում էին ոչ միայն ջոկատները համալրած կանայք, այլև խաղաղ բնակիչները՝ ով ինչով կարող էր: Մեծ նահանջից հետո պայքարը շարունակվեց պարտիզանական եղանակով: Շահումյանի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարն էր շրջագործկոմի նախագահ Շահեն Մեղրյանը: Ինքնապաշտպանության մեջ ներգրավված էր շրջանի ամբողջ բնակչությունը: Իսկ Մանասին Շեն գյուղում գործում էր նույնիսկ կանանց առանձին ջոկատ⁵:

Ընդգրկվելով ինքնապաշտպանական ջոկատներում՝ շահումյանցի կանայք այն համոզման էին, որ այդ ճակատագրական պահին տղամարդկանց համահավասար պարտավոր են կատարել իրենց պարտքը հայրենի երկրի,

⁴ Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., թեկնածուականատենախոսություն, Երևան, 2001, էջ 41:

⁵ «Մոռվի դողանջներ», 1992, 11 ապրիլի:

հարազատ գյուղի հանդեպ: Նրանց մեջ քիչ չէին երիտասարդ մայրերը, ովքեր մահվան վտանգի էին գնում՝ տանը թողնելով երկու, երեք երեխա: Թերևս գործում էր նաև այն հոգեբանությունը, թե լավ է իրենց ամուսինների, եղբայրների կողքին լինեն, նրանց օգնեն, քան թիկունքում մնան մշտական սպասումի ու տագնապի մեջ:

Շրջափակման պայմաններում անգնահատելի դեր կատարեցին նաև բուժաշխատողները, որոնց թվում էին Շահումյանի շրջանային հիվանդանոցի բուժքույրերը (Անիչկա Պետրոսյան, Անգին Արղուխանյան, Թամարա Շեգյան, Նելլի Առստամյան, Օֆիկ Մակարյան, Լյուդմիլա Բաղմանյան, Շուշիկ Հակոբյան, Լորա Սիմոնյան, Ասլիմ Բաշրաթյան, Էլվիրա Շախյան, Իրա (Գալինա) Զարգարյան, Կամելլա Սարգրոսյան): Նրանց պատասխանատու աշխատանքների մեջ մտնում էին հետևյալ պարտականությունները՝ օգնել բժիշկներին վիրահատությունների ժամանակ, օրերով հերթապահել, անհրաժեշտության դեպքում անգամ դոնոր լինել⁶:

Շրջանի համար դժվարին օրերին Շահումյանին օգնության էին գալիս Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կամավորական ջոկատները, որոնց շարքերը համալրել էին նաև կանայք: Նրանց օգնությունը Հյուսիսային Արցախին լինում էր այն դեպքում, երբ լարված վիճակ էր նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններում:

Կամավորական ջոկատները, մեկնելով Արցախի հյուսիսարևելյան շրջան, փայլուն կերպով կատարում էին իրենց առջև դրված խնդիրը: Ընդհանրապես ջոկատների մեծ մասը գտնվում էր գյուղերում, որոնցում ընդգրկված էին 14-60 տարեկան կամավորականներ⁷:

Հայ կամավորական ուժերի՝ «Արծիվ 24» գումարտակ (Նունե Աբրահամյան, Անահիտ Լուպոյան), «Գարեգին Նժդեհ» (Զարուհի Բաղալյան), «Մայիս» (Գալյա Գյուրջյան, Լորետա Գյուրջյան), «Կարս» (Նվարդ Դուդուկյան), Ղազանչի (Ալվարդ Շեկյան), Մանաշիղի (Զոյա Մարտիրոսյան), Խրամորթ (Լենա Շամիրյան), «Ադանա» (Ալվարդ Կոստանդյան), «Սիսակ» (Մարիետա Խաչատրյան), «Տոռոզյան» և «Նաիրի» (Սուսաննա Կոստանդյան), «Անահիտ» (Անահիտ Մարտիրոսյան), «Աղբյուր Սերոբ» (Նաիրա Սահակյան), «Եղնիկներ» (Արմինա Նալբանդյան), «Խաչակիրներ» (Անժելա Զալյան), Արմավիր (Լուիտա

⁶ **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք. Հոդը կանչում է, գիրք Բ, Երևան, 2005, էջ 575:

⁷ **Աբրահամյան Հ.**, Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3, Երևան, 2006, էջ 117:

Վարդանովա), Սևան (Անժելա Հակոբյան) և «Ջորավար Անդրանիկ» (Մարիետա Սարգսյան) ջոկատների կազմ ընդգրկվելով՝ կանայք պատերազմի ողջ ընթացքում մասնակցեցին Արցախի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան շրջանների ռազմական գործողություններին⁸, որի ժամանակ նրանցից ոմանք զոհվեցին և վիրավորվեցին՝ անձնական օրինակով ապացուցելով, որ հայ կինը կարող է լինել նաև հայրենիքի զինվոր:

1990թ. անդամագրվելով «Մեծն Տիգրան» զորախմբին՝ Շահումյան մեկնեց Մարիետա Սարգսյանը: Նրա մարտական ուղին շարունակվեց «Ջորավար Անդրանիկ» ջոկատի հետ, որը 1991թ. մարտ ամսից մասնակցում էր Շահումյանի շրջանի ինքնապաշտպանությանը, այնուհետև՝ Արծվաշենի, Շամշադինի (Տավուշ) մարտական գործողություններին: 1992թ. ստեղծվեց Մասիսի շրջանի զորամասը, որի կազմում Մարիետա Սարգսյանը, մեկնելով Լաչինի շրջան, թեժ ռազմագործողությունների ժամանակ ջոկատի հետ շրջափակման մեջ ընկավ: Այստեղ, նա, օգտագործելով իր փորձն ու մարտական կոփվածությունը, անձնագոհություն ցուցաբերելով, կարողացավ մնացած զինվորների հետ դուրս գալ թշնամական օղակից: Իսկ արդեն երկու ամիս հետո զորամասը տեղափոխվեց Մարտակերտի շրջան՝ Մուլալար, որտեղից պետք է շարժվեին դեպի Քարվաճառ: Հակառակորդ կողմը զգում էր, որ հայերի ռազմական ճնշումն օրեցօր ուժեղանում է, որի ընթացքում էլ նա նոր ուժեր ու տեխնիկա էր կենտրոնացնում: Այդ օրերին հանկարծակի սկսված ուժեղ հրետակոծությունների ժամանակ՝ մարտական ծառայությունների կատարման ընթացքում Մարիետա Սարգսյանը ծանր վիրավորվեց և տեղափոխվեց հիվանդանոց, որտեղ և մահացավ⁹:

«Մեծն Տիգրան» ջոկատի¹⁰ շարքերում Շահումյանի ինքնապաշտպանությանը միացան նաև կամավորականներ Կարինե Հովսեփյանը և Մելսիդա Հարությունյանը¹¹, որոնք մինչև հրադադար մնացին ռազմի դաշտում և մասնակցեցին նաև Շուշիի, Լաչինի, Մարտակերտի շրջանների ազատագրական

⁸ «Մարտիկ», 1995, 26 հունվարի – 1 փետրվարի, թիվ 7:

⁹ Վարդումյան Հ., Կին ազատամարտիկները, Երևան, 2003, էջ 40:

¹⁰ «Մեծն Տիգրան» ջոկատը կազմավորվել էր 1989 թ. Երևանում, որի հրամանատարն էր Կորյուն Ղումաշյանը: Լինելով առաջին կամավորական ջոկատներից մեկը՝ 1989-1994թթ. մասնակցեց ՀՀ Գորիսի (Կոռնիձոր), Արարատի (Երասխ), Վայքի (Քարծուհի), Սիսիանի (Սոֆլու) և ԼՂՀ Շահումյանի (Էրքեջ), Մարտակերտի, Լաչինի, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

¹¹ «Հայ զինվոր», 2010, 10 մայիսի:

մարտերին¹²: Հրամանատար Կ. Ղումաշյանն իր օրագրում հետևյալ կերպ է ներկայացնում Կարինե Հովսեփյանին. «Նա մեր ջոկատի տղաների համար իսկական գթության քույր էր: Տղաները նրան Սոսե մայրիկի պատվին Սոսե էին ասում: Կռվի առաջին օրվանից մինչև հրադադարի օրը մեզ հետ էր՝ գեներ ձեռքին, առաջին գծում: Նա թշնամու վրա կրակող հայուհի էր: Հիշողությունիցս չի ջնջվում նրա հետևյալ խոսքը, որ մեզ համար թևավոր խոսք էր դարձել. «Ես հայրենիքին տվեցի կնոջ համար ամենաթանկը՝ մայր կոչվելու իրավունքը»: Նա դեռևս կենդանության օրոք պարզևատրվել է «Արիության» և «Մարտական ծառայության համար» մեդալներով... «Տիգրան Մեծ» վարժարանի ռազմական ամբիոնի հայոց պատմության լսարանը անվանակոչել ենք այդ հերոս հայուհու անունով»¹³:

Օգտագործելով Գյանջա (պատմական Գանձակ) քաղաքում տեղակայված Նախկին խորհրդային 4-րդ բանակի ուժերը՝ 1992թ. հունիսի 12-ին ազերի զորամիավորումները լայնածավալ հարձակման անցան ԼՂՀ հյուսիսարևելյան, արևելյան և հարավարևելյան սահմանների ամբողջ երկարությամբ՝ Հաղրուփոց մինչև Շահումյան¹⁴: Թշնամուն հաջողվեց զավթել ամբողջ Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Հյուսիսային Արցախում հակառակորդի լայնածավալ հարձակման հետևանքով բռնագաղթի ճանապարհը բռնեցին հանրապետության ավելի քան 40 հազար բնակիչներ, ավերվեցին և հրկիզվեցին տասնյակ բնակավայրեր¹⁵: Շահումյանի անկումից հետո ինքնապաշտպանական մի ջոկատ Շահեն Մեղրյանի գլխավորությամբ այդպես էլ չհեռացավ շրջանի տարածքից՝ շարունակելով պայքարը պարտիզանական եղանակով, որն էլ աջակցություն գտավ Արցախի իշխանությունների կողմից¹⁶:

¹² Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., հանրագիտարան, Երևան, 2004, էջ 285:

¹³ <http://www.hayzinvor.am/19863.html>.

¹⁴ **Հասրաթյան Ս.**, Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2008, էջ 19:

¹⁵ Նույն տեղում, էջ 20:

¹⁶ Շահումյանի պաշտպանականը կամ վեցերորդ պաշտպանական շրջանը կազմավորվել է Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության գոտում ծավալված ակտիվ մարտական գործողությունների ավարտական փուլում: Զորամասի ստեղծման համար հիմք է ծառայել «Եղնիկներ» պարտիզանական ջոկատը, որը ձևավորվել է 1992 թ. հունիսի 25-ին Հաթերք գյուղում՝ Շահումյանի անկումից անմիջապես հետո:

Այդ դժվարին օրերին պարտիզանական ջոկատին միացավ բժշկուհի Արմինա Նալբանդյանը և մինչև հրադադար մնաց մարտական ընկերների կողքին: Դիմելով բոլոր կազմակերպություններին՝ նա պաշտպանության նախարարության, ՀՕԽ-ի աջակցությամբ «Եղնիկների» բազայում կազմակերպեց դաշտային հոսպիտալ¹⁷:

1993թ. դեկտեմբերի 23-ին ազերիները մեծ ուժերով հարձակվեցին Գոյթափա տեղանքի ուղղությամբ: Ուժերն անհավասար էին, և հայ ինքնապաշտպանական ուժերը ստիպված էին նահանջել: Վիրավորների, զենքի և զինամթերքի հետ հոսպիտալն էվակուացնել հնարավոր չէր, հարկավոր էր ոչնչացնել՝ թշնամուն չթողնելու համար: Այսպես, դաշտային հոսպիտալը գործեց մինչև 1993թ. դեկտեմբերի 27-ը, իսկ նահանջը տևեց մինչև Մաղավուզ: Արտատափ կոչվող անտառոտ տեղանքում հիմնավորվելով՝ «Եղնիկները» նորից անցան իրենց պարտականությունների կատարմանը: Իսկ բժշկուհին ստիպված էր ամեն ինչ սկսել սկզբից ու նորից դիմեց Ստեփանակերտ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՕԽ՝ դարձյալ կազմակերպելու դաշտային հոսպիտալ, որի ծառայություններից օգտվում էին ոչ միայն «Եղնիկներ» ջոկատը, այլ նաև շրջակա բնակավայրերի և զորամիավորումների կարիքավորները¹⁸: Ա. Նալբանդյանը, ենթարկվելով պատերազմի փորձությանը, գերազանց քննություն բռնեց: Նրա շնորհիվ փրկվեցին բազմաթիվ վիրավոր ազատամարտիկներ: Ծառայությունը շարունակեց մինչև հրադադար, որից հետո վերադարձավ իր նախկին աշխատանքին:

1992թ. ամռանն ադրբեջանական ուժերի լայնածավալ հարձակման արդյունքում հուլիսի 4-ին գրավվեց Մարտակերտ քաղաքը, այնուհետև՝ շրջանի մի մասը: Մարտերն ընթանում էին փոփոխական հաջողություններով: Հայկական ուժերը, Հաթերքը կորցնելուց հետո, ստիպված էին ամրանալ Կիչանում: Այդ օրերին Սիրանուշ Առուշանյանը Հաթերքի ջոկատի հիմքի վրա կազմավորված ստորաբաժանման հետ էր, որի շարքերում էլ մասնակից դարձավ Իմերեթ-Քերավենդ, Աղդաբան, Ումուլթու գյուղերի թշնամական հենակետերի վերացմանը, իսկ 1993թ. փետրվարին՝ Մարտակերտի վերին ձորակի՝ Դրմբոն, Վերին Հոռաթաղ, Հարությունագոմեր, Վաղուհաս, Չլդրան, Զարդախաչ, Հաթերք, Զագլիկ, Ումուլթու գյուղերի ազատագրմանը: Նա՝ որպես մարտիկ, ակտիվորեն մասնակցում էր բոլոր մարտերին, իր համառությամբ, նվիրվածու-

¹⁷ Վարդույան Հ., Աստվածների կանչը, Երևան, 2004, էջ 144:

¹⁸ «Մարտիկ», 1998, 10 հուլիսի:

թյամբ ոգեշնչում մարտական ընկերներին: Ռազմական գործողությունների ընթացքում երեք անգամ վիրավորվեց, սակայն երկամսյա բուժումից հետո կրկին վերադարձավ շարք և ծառայությունն արդեն շարունակեց Մաղավուզում՝ 2-րդ գումարտակում, որի շարքերում էլ մասնակցեց Մաղավուզի, Լյուլասագի, Լևոնարիսի, Մատաղիսի, 3-րդ սովխոզի և Օմարի բարձունքների ազատագրմանը: Սիրանուշ Առուշանյանը հրադարձարից հետո շարունակեց ծառայությունը և միայն 1996թ. զորացրվեց ավագ լեյտենանտի կոչումով¹⁹: Գեներալ-մայոր Ժորա Գասպարյանը հիշում է. «Հաթերքից Սիրանուշ անունով մի ճերմակահեր կին միշտ մարտի դաշտում էր՝ ավտոմատն ուսած, պատահել է՝ թե՛ մարտերին հարցրել եմ՝ Հաթերքից քանի՞ հոգի կան, միայն այդ կինն է եղել...»²⁰:

Երկրի համար ծանր օրերին Մարտակերտի գումարտակը հետզհետե համալրվում էր կանանց հաշվին, որոնք, կամավորագրվելով հայկական զինված ուժեր, պատվով էին կատարում բոլոր մարտական առաջադրանքները: Արցախի համար օրհասական պահին հայ ինքնապաշտպանական ջրկատին միացան Աիդա Սերոբյանը²¹, Գայանե Մարգարյանը²², որոնք մասնակցեցին Մարտակերտի և Քարվաճառի ազատագրական մարտերին: Վերջինս զոհվեց 1994 թ. հունվարի 9-ին Մաղավուզ գյուղի մատույցներում՝ մարտական ծառայության ընթացքում:

Հայրենիքի պաշտպանության համար իր կյանքը զոհաբերեց նաև ազատամարտիկ Կարինե Գևորգյանը, ով, 1992 թ. Արցախ մեկնելով, միացավ Մարտակերտի ինքնապաշտպանական ուժերին: Նա սկզբում՝ 1992 թ. նոյեմբերին, ծառայության անցավ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերում՝ Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) հրամանատարությամբ, ապա հետագայում համալրեց Մարտակերտի գումարտակի շարքերը և 1992-1993 թթ. մասնակցեց Մարտակերտի Գետավան, Հաթերք, Սարսանգի ջրամբար, Մեծշեն, Մաղավուզ գյուղերի, Օմարի պաշտպանական և ազատագրական գործողություններին: Օրհասական պահերին Կարինե Գևորգյանը կատարում էր հնարավորինս և հանուն նպատակի մասնակից դառնում ամենաթե՛ մար-

¹⁹ Աղաջանյան Մ., Հաթերք, Ստեփանակերտ, 2012, էջ 452:

²⁰ «Ազատ Արցախ», 2000, 20 փետրվարի, թիվ 12:

²¹ Վարդումյան Հ., Ճանապարհ անմահության, Երևան, 2002, էջ 17:

²² Նոյնի՝ Կին ազատամարտիկները, Երևան, 2003, էջ 29-30:

տերին, որի ընթացքում՝ 1993 թ. հունիսի 13-ին, Մաղավուզ գյուղի համար մղվող մարտում զոհվում է²³:

Չնայած վտանգը մեծ էր, այնուամենայնիվ կանայք շարունակում էին արձագանքել զինված ուժերի հայտարարություններին և մեկնում առաջին գիծ: 1992 թ. նվիրյալների շարքերը համալրեց և 1994 թ. ռազմի դաշտում նահատակվեց Նունե Աբրահամյանը: Նա 1992 թ.՝ Արծվաշենում առաջին մկրտությունը ստանալուց հետո, «Արծիվ-24» գումարտակի կազմում մասնակցեց մի շարք ռազմական գործողությունների: Գումարտակը կազմավորվել էր 1992 թ. օգոստոսի 16-ին Երևանում Վ. Սարգսյանի նախաձեռնությամբ, որում ընդգրկված էին ՀՀ տարբեր շրջանների ազատամարտիկներ: Նունե Աբրահամյանը հաղթական երթերի ընթացքում մշտապես եղել է առաջին զծում և ծառայել անձնվիրաբար: Մարտական ընկերները վկայում են, որ տասը ամիս տուն չի վերադարձել, չի հանել սանիտարական պայուսակը և այդ ընթացքում փրկել է տասնյակ ազատամարտիկների: 1992-1993 թթ. գումարտակի կազմում մասնակցել է Առաջածորի, Դրմբոնի, Հաթերքի, Սարսանգի ջրամբարի, Կուսապատի, Օմարի լեռնանցքի, ինչպես նաև Աղղամի, Հորադիզի, Կուբաթլուի, Զանգելանի ազատագրմանը:

1993 թ. թեժ մարտեր էին ընթանում Օմարի լեռնանցքում, որտեղ էր նաև «Արծիվ» գումարտակը: Այն ժամանակ, երբ հայկական կողմը Յանշակ գյուղի մոտ շրջափակման մեջ հայտնվեց, սկսվեցին թեժ մարտեր, որի ընթացքում՝ հունվարի 31-ին, Նունե Աբրահամյանը ծանր վիրավորվեց և մահացավ Դրմբոնի զինվորական հիվանդանոցում: Եռաբլուրում մի սուրբ մասունք ևս ավելացավ²⁴:

1992 թ. անդամագրվելով մահապարտների «Արծիվ-1» գումարտակին՝ Արցախ մեկնեց նաև Անահիտ Հովհաննիսյանը, ով, մասնակից դառնալով գումարտակի վարած մի շարք մարտական առաջադրանքներին՝ Մարտակերտի շրջանի Չլորան, Վաղուհաս, Հարությունագոմեր, Վանք գյուղերի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին, զինադադարը դիմավորեց մարտի դաշտում²⁵:

Զինվորական գործում կանայք թեև թվով քիչ էին, սակայն նրանց ներկայությունը մեծ ներգործություն էր ունենում մարտիկների հոգեբանության

²³ **Նանագույան Ս.**, Արծիվները բարձունքներ են տենչում, գիրք Գ, Երևան, 1993, էջ 25: «Հայրենյաց պաշտպան», 2013, 1 մարտի, թիվ 7:

²⁴ «Մարտիկ», 1998, 30 հունվարի:

²⁵ **Զանիկյան Գ.**, Մահապարտները, Երևան, 2002, էջ 39:

և գործի վրա: Անշուշտ, ռազմական գործողություններին մասնակից կանանց առաջ էր մղում հայրենիքին օգտակար լինելու գաղափարը: Նրանց թվում էին նաև Անժելա Զալյանը, Գայանե Մեջլումյանը, Սվետլանա Մկրտչյանը, Սվետլանա Աբրահամյանը, Սուսաննա Կոստանդյանը, Անահիտ Մարտիրոսյանը, Արևիկ Սարգսյանը, Լուիտա Վարդանովան, Լիանա Մկրտումյանը, Անժելա Հակոբյանը, Պալինա Գրիգորյանը, Շուշանիկ Թահմիզյանը, Հեղինե (Ջեմմա) Հովհաննիսյանը, Աղավնի Սահակյանը, Նաիրա Սահակյանը, Թամարա Աբրահամյանը, Նվարդ (Նոնա) Դուդուրյանը, Նունե Աթայանը և շատ ուրիշներ:

Մինչև ռազմական բժշկական ծառայության ստեղծումը Շահումյանի, Մարտակերտի շրջաններում հիվանդ և վիրավոր ազատամարտիկների բժշկական սպասարկումն իրականացվել է ինքնօգնությամբ և փոխօգնությամբ՝ բուժօգնության անհատական միջոցներով, կամավոր մեկնած բժիշկների, բուժքույրերի, տեղական հիվանդանոցների, բժշկական կետերի քաղաքացիական բուժանձնակազմի օգնությամբ: Ընդհուպ մինչև զինադադար ՀՀ-ից կամավոր և գործուղումով Արցախի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան շրջաններ մեկնած վնասվածքաբաններ, օրթոպեդներ, վիրաբույժներ, անեսթեզիոլոգներ, համաճարակաբաններ կատարել են բացառապես բարդ և լրացուցիչ խնդիրներ՝ անհրաժեշտ բուժօգնություն ցույց տալով ազատամարտիկներին՝ ապահովել նրանց վերադարձը մարտադաշտ, կանխել համաճարակները և վարակիչ հիվանդությունները: Նրանց շարքերում էին նաև Արմենուի Քաբաբյանը, Ավարդ Գասպարյանը, Թամարա Հարությունյանը, Անահիտ Հովհաննիսյանը և շատ ուրիշներ, ովքեր, կամավոր մեկնելով Շահումյանի և Մարտակերտի շրջաններ, բժշկական օգնություն ցուցաբերեցին ոչ միայն վիրավոր ազատամարտիկներին, այլ նաև խաղաղ բնակչությանը²⁶:

Անցնելով ամբողջ ռազմաճակատի երկայնքով՝ կանայք ևս ունեցան զոհեր և վիրավորներ ու իրենց արիությամբ ցույց տվեցին, որ կինն էլ կարող է իր ուսին զենք կրել և մարտադաշտում լավ զինվոր, հայրենիքի պաշտպան լինել: Առհասարակ, արցախյան ազատամարտում մեծ դեր ունեցան Հայաստանի և Արցախի կանայք: Արդարև, հերոսություն էր պարզապես այդպես անտրտունջ դիմակայել 1992-1994թթ. զրկանքների՝ ոմբակոծություններին, ճակատից եկող հաղորդագրություններին, նկուղներում ապրելուն, ցուրտ ու մութ գիշերներին, հացի սրտմաշուկ հերթերին:

²⁶ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., հանրագիտարան, Երևան, 2004, էջ 120-149:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արցախը ևս ունեցավ իր հերոսուհիները, որոնց մի մասն իրենց մարտական ուղին անցան Արցախի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան շրջանների ինքնապաշտպանության մարտերում:

Շարժման սկզբնափուլում Հայաստանում և Արցախում տարերայնորեն կազմավորված առաջին կամավորական և աշխարհագրային ինքնապաշտպանական ջոկատների շարքերը մտած կանայք հետագա ամբողջ պատերազմի ընթացքում ցույց տվեցին, որ նրանց մասնակցությամբ կամավորական ջոկատներն Արցախում և Հայաստանում փայլուն և պատվով կատարեցին իրենց ստանձնած պարտավորությունները: Հայոց արժանապատիվ կանայք իրենց գործունեությամբ ապացուցեցին, որ հանուն հայրենիքի պաշտպանության պատրաստ են իրենց ուսերին տանել ողջ ծանրության բեռի մի մասը: Նրանցից ոմանք իրենց կյանքը զոհաբերեցին, ոմանք էլ մարտերի ընթացքում թեկուզ վիրավորվեցին, սակայն ապաքինվելուց հետո վերադարձան մարտի դաշտ և շարունակեցին պայքարը մինչև զինադադար: Կանանց մի մասն էլ մնալով թիկունքում՝ ոչ պակաս կարևոր դեր ունեցավ. նրանց ուսերին էին դրված ընտանիքի հոգսը, ինքնապաշտպանական ուժերին սնունդ մատակարարելը, մարտնչողներին հույս ու հավատ ներշնչելը:

Բանալի բաներ - կանայք, համազգային, ինքնապաշտպանություն, նպաստել, պայքար, ազատագրում, անկախություն, հաղթանակ, վիրավորներ, զոհեր:

ЖЕНЩИНЫ В БОЯХ ЗА ОБОРОНУ ШАУМЯНА, МАРТАКЕРТА, КАРВАЧАРА (1992-1994 ГГ.)

ИСКУИ АВАНЕСЯН

Арцах тоже имел своих героинь, часть из которых прошла свой боевой путь в боях самообороны в северо-восточных и северо-западных районах НКР.

На начальном этапе движения женщины, вступившие в ряды первых добровольных и ополченческих самооборонительных отрядов, стихийно сформированных в Армении и Арцахе, в дальнейшем, на протяжении всей войны, показали, что с их участием добровольческие отряды в Армении и Арцахе блестяще исполнили задачи, поставленные перед ними ими же. Они своей деятельностью доказали, что во имя защиты родины готовы на своих плечах нести часть этого тяжелого бремени. Некоторые из них пожертвовали своей жизнью, некоторые в ходе боев хоть и были ранены, но после выздоровления

вернулись на поле боя и продолжали борьбу до перемирия. Другие, оставаясь в тылу, сыграли не менее важную роль: на их плечи были возложены семейные заботы, снабжение сил самообороны едой, а также миссия вселять в сердца бойцов веру и надежду.

Ключевые слова - женщины, общенациональный, самооборона, способствовать, борьба, освобождение, независимость, победа, ранения, жертвы.

ARTSAKH WOMEN IN THE BATTLES OF SHAHUMYAN, MARTAKERT, AND KARVACHAR (1992-1994)

ISKUHI AVANESYAN

Artsakh, too, has heroines. Some of them have fought in the self-defense battles in the north-eastern and north-western regions of Artsakh.

On the outbreak of the movement to unify the Nagorno-Karabakh autonomous region with Armenia, some women joined the newly forming irregular volunteer brigades and self-defense militia detachments. These women all through the Nagorno-Karabakh war have admiringly fulfilled the tasks that they had undertaken. They have proved by their undertakings that they are ready for the defense of their homeland to bear a certain portion of the war burdens. Some perished; many others got injured but returned to the front line after recovering and fought until the ceasefire. Other women staying at their homes played an important role as well. They took care of the families, provided the volunteers with food and inspired them with confidence, hope and faith.

Key words – women, nationwide, self-defense, be a hand in, struggle, liberation, independence, victory, wounded, victims.

**ՔՐԴԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՔԻ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՔՐԴԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 2003 Թ. ՀԵՏՈ**

ՄՈՒՇԵՂ ՂԱՀՐԻՅԱՆ

1912-1913 թթ. Բալկանյան և 1914-1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմներում Օսմանյան կայսրության պարտությունից հետո դրա բալկանյան ու արաբական տարածքներում մի քանի նոր պետություններ ձևավորվեցին: Կայսրության ամենամեծաթիվ ժողովուրդներից մեկը՝ քրդերը, պետություն չստեղծեցին: Քրդերով բնակեցված մի շարք տարածքներ, որոնք այժմ հայտնի են Իրաքյան Քրդստան անվանումով, Մեծ Բրիտանիան ընդգրկեց նորաստեղծ Իրաքի կազմ: 1919 թ.-ից՝ Մուստաֆա Բարզինջիի առաջին ապստամբությունից սկսած, քրդերն անընդհատ պայքար են մղել սեփական իրավունքների, ինքնավարության համար: Լայն ինքնավարության ստեղծումը հնարավոր է դարձել 1991 թ. հետո, երբ ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիան ջախջախեց Քուվեյթ ներխուժած Իրաքի զորքերին: Իրաքին, սակայն, գլխավոր հարվածը հասցվեց 12 տարի անց:

2003 թ. մարտին ԱՄՆ-ը և դաշնակից երկրները ռազմական գործողություններ սկսեցին Իրաքում, որի արդյունքում տապալվեց նախագահ Սադդամ Հուսեյնի վարչակարգը: Այս գործում Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի գլխավոր դաշնակիցը դարձավ Իրաքի հյուսիսում գտնվող քրդական ինքնավար շրջանի (Իրաքյան Քրդստան) կառավարող մարմինը՝ Քրդստանի տարածաշրջանային կառավարությունը, որը ձևավորվեց 1992 թ. ապրիլին անցկացված ընտրությունների արդյունքում: ՔՏԿ-ի ստեղծմանը նախորդել էր 1991 թ. քրդական ապստամբությունը, որն իրաքյան բանակը ճնշեց: Նույն թվականի ապրիլի 5-ին ՄԱԿ-ն ընդունեց 688-րդ բանաձևը, որով 36-րդ զուգահեռականից հյուսիս ընկած տարածքներն անվտանգության գոտի հայտարարվեցին: Իրաքյան քրդերի երկու գլխավոր քաղաքական ուժերի՝ Քրդստանի դեմոկրատական կուսակցության և Քրդստանի հայրենասիրական միության զինված ուժերը, որոնք հայտնի են *փեշմերգա* անվանումով, ակտիվ մասնակցություն ունեցան իրաքյան բանակի դեմ ռազմական գործողություններին:

Իրաքի ամերիկյան օկուպացիան, երկրի զինված ուժերի կազմալուծումը, անկայուն քաղաքական վիճակը, քրդական գործոնի ուժեղացումն առաջին անգամ իրական դարձրին անկախ քրդական պետության ստեղծման հնարավորությունները: Դա, ինչպես նշվեց, տեղի ունեցավ քրդերի երկարատև պայքարի ու տարածաշրջանում նրանց համար բարենպաստ զարգացումների շնորհիվ¹:

Տասնամյակների ընթացքում քրդական շարժումն էվոյուցիա է ապրել, պետականության կառուցման զգալի փորձ ձեռք բերել, ինստիտուցիոնալ բնույթ ստացել, ստեղծվել է երկկուսակցական համակարգ, որն իրականացնում է ՔՏԿ-ի կառավարումը:

Իրաքում Հուսեյնի իշխանության վերացումից հետո առաջնային խնդիրներից մեկն էր երկրի կառուցվածքի և իշխանության բաժանման հարցը: 1958 թ. Իրաքում հանրապետության հռչակումից հետո բարձրագույն իշխանությունը պատկանել է սուննիներին, գերազանցապես զինվորական շրջանակներից: Բնակչության մեծամասնությունը կազմող շիաների նկատմամբ մշտապես ճնշումներ են գործադրվել: Նույն վիճակում են եղել Իրաքի բնակչության ավելի քան 15%-ը կազմող քրդերը, ովքեր բնակվում են երկրի հյուսիսային շրջաններում:

2003 թ.¹ ամերիկյան ներխուժումից հետո, սուննիների գերիշխանությունը վերացվեց: Ստեղծվեց ուժերի նոր դասավորություն, որը պետք է հաշվի առնվեր երկրում իշխանության ձևավորման գործում: Իրաքի ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ էր քրդերին ու շիաներին ներգրավել կառավարման համակարգ: Երկրի երկու գլխավոր պաշտոնները՝ նախագահի ու վարչապետի, վստահվեցին համապատասխանաբար քրդի և շիայի: Երկրի նախագահ դարձավ ՔՀՄ-ի ղեկավար Ջալալ Թալաբանին, վարչապետ՝ սկզբում Իբրահիմ ալ-Ջաֆարին, իսկ 2006 թ.¹ Նուրի ալ-Մալիքին:

Սադրամ Հուսեյնի և Բասս կուսակցության հեռացումից հետո՝ 2004 թ., ընդունվեց Իրաքի անցումային վարչական օրենքը, որի մի շարք հոդվածներ վերաբերում էին ֆեդերալիզմին: Օրենքի 54-րդ հոդվածում նշված է, որ Քրդստանի տարածաշրջանային կառավարությունը շարունակելու է կատարել իր գործառույթներն անցումային շրջանում, դաշնային կառավարությունը

¹ Բարենպաստ զարգացումների թվում պետք է նշել 1991 թ. «Փոթորիկ անապատում» գործողությունը, 36-րդ զուգահեռականից հյուսիս անթռիչք գոտու հաստատումը, իրաքյան ռեժիմի դեմ խիստ տնտեսական պատժամիջոցները, ինչպես նաև 2003 թ. ԱՄՆ նախաձեռնած «Իրաքյան ազատություն» գործողությունը

ֆինանսավորելու է ՔՏԿ-ի գործունեությունը, վերջինս վերահսկելու է տեղի ոստիկանական ու անվտանգության ուժերը և Քրդստանի շրջանում հարկեր ու մաքսեր հավաքելու իրավունք է ստանալու²:

Անցումային օրենքով քրդերենը ճանաչվում է Իրաքի երկու պաշտոնական լեզուներից մեկը, Դոհուկում, Էրբիլում և Սուլեյմանիեում պաշտոնապես ճանաչվում է Քրդստանի տարածաշրջանային կառավարությունը, վերականգնվում է վերահսկողությունը ոստիկանական ուժերի ու ներքին անվտանգության վրա, ՔԴԿ-ի ու ՔԸՄ-ի փեշմերգաները պաշտոնապես ճանաչվում են Իրաքի անվտանգության ուժերի մաս³:

Անցումային վարչական օրենքի հիման վրա 2005 թ. հոկտեմբերին հանրաքվեով ընդունվեց Իրաքի նոր սահմանադրությունը: Սահմանադրությունն իրական լայն ինքնավարություն երաշխավորեց ՔՏԿ-ի համար:

Իրաքի սահմանադրության 115-րդ հոդվածում նշված է, որ դաշնային կառավարության բացառիկ լիազորություններից բացի, մյուս լիազորությունները պատկանում են շրջանների իշխանություններին: Հիշատակման արժանի մյուս հոդվածներն են՝ 4-րդ հոդված. արաբերենն ու քրդերենն Իրաքի պաշտոնական լեզուներն են, 112-րդ հոդված. դաշնային կառավարությունը նահանգների և տարածաշրջանային կառավարությունների հետ միասին պետք է կառավարի արդյունահանված նավթն ու գազը, եկամուտները պետք է բաշխվեն երկրի բոլոր հատվածներում բնակչության թվաքանակին համապատասխան, 117-րդ հոդված. Քրդստանի շրջանն իր գործող իշխանություններով ճանաչվում է որպես դաշնային շրջան, 120-րդ հոդված. շրջաններին թույլ է տրվում սեփական սահմանադրությունն ընդունել, որով սահմանվում է տեղական իշխանության կառուցվածքը:

2005 թ. հունվարին անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: Քրդական ուժերը՝ ՔԴԿ-ը և ՔԸՄ-ը, կալիցիա կազմեցին: Քրդական դաշինքը սուննիների բոյկոտի շնորհիվ ստացավ Իրաքի խորհրդարանի տեղերի

² Iraq's Transnational Administrative Law, Translated into English by University of Bern collection of International Constitutional Law, http://www.servat.unibe.ch/icl/iz00000_.html#A058_ (accessed 05.09.2015).

³ Iraq's Transnational Administrative Law, http://www.servat.unibe.ch/icl/iz00000_.html#A058_ (accessed 05.09.2015).

26%-ը, որը կազմում է 75 տեղ⁴: Քրդական դաշինքը կոալիցիա կազմեց ընտրություններում հաղթած շիական «Իրաքի միավորված դաշինքի» հետ: Կոալիցիոն համաձայնագրի շրջանակում ՔՀՄ-ի նախագահ Ջալալ Թալաբանին դարձավ Իրաքի նախագահ, ՔԴԿ-ի անդամ Հոշայր Ջեբարին նշանակվեց Իրաքի արտգործնախարար, ՔՀՄ-ի անդամ Բարհան Սալիհը՝ Իրաքի փոխվարչապետ:

Հունվարի 30-ին Իրաքյան Քրդստանում ընտրություններին զուգահեռ անցկացվեց նաև ոչ պաշտոնական հանրաքվե Քրդստանի անկախացման վերաբերյալ: Մասնակիցների 98.8%-ը կողմ էր քվեարկել անկախացմանը, իսկ 1.2%-ը՝ Իրաքի կազմում մնալուն⁵: Չնայած քրդերի ճնշող մեծամասնությունը կողմ էր անկախացմանը, այդուհանդերձ քաղաքական առաջնորդները հասկանում էին, որ անկախանալու հարցը դեռ չի հասունացել թե՛ ներիրաքյան, թե՛ միջազգային քաղաքականության համատեքստում: ՔԴԿ-ի և ՔՀՄ-ի ղեկավարները նշում էին, որ անկախության հռչակումը գործնական չէ⁶:

Քրդական անկախ պետության գաղափարը նախևառաջ աջակցություն չուներ ԱՄՆ-ի, ինչպես նաև տարածաշրջանային պետությունների կողմից, ինչպիսիք են Թուրքիան, Իրանը և Սիրիան: Այս երկրներն ունեին մեծաթիվ քրդական համայնքներ, և Իրաքում Քրդստանի անկախության հռչակումը կարող էր վարակիչ ազդեցություն ունենալ «սեփական» քրդերի համար:

Ներիրաքյան գլխավոր հարցերից էր, թե ինչ տարածքներ պետք է ներառվեին ՔՏԿ կազմ, և ինչպես պետք է լուծվեր նավթով հարուստ շրջանների հարցը: Միևնույն ժամանակ ՔՏԿ-ը ցանկանում էր դեպի հարավ ընդլայնել ինքնավարության՝ պաշտոնապես ճանաչված տարածքը: Կառավարությունն իր հերթին փորձում էր զսպել քրդական առաջխաղացումը և սեփական պայմանները թելադրել: Հակասություններն աստիճանաբար վերաճեցին ժամանակ առ ժամանակ կրկնվող զինված բախումների:

⁴ Kenneth Katzman, Iraq: Elections, Government, and Constitution, CRS Report for Congress, Nov 20, 2006 <http://fpc.state.gov/documents/organization/76838.pdf> (accessed 07.09.2015).

⁵ Kurdish Media, 98 percent of the people of South Kurdistan vote for independence, Feb 09, 2005 <http://www.kurdmedia.com/article.aspx?id=6235> (accessed 05.09.2015).

⁶ Edward Fong, Iraqi Kurds Detail Demands for a Degree of Autonomy Feb 18, 2005, The New York Times, <http://www.nytimes.com/2005/02/18/international/middleeast/18kurds.html?pagewanted=print&position=> (accessed 08.05.2015).

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա. 2003 թ. հետո փոխվել էր Բաղդադի ու քրդերի միջև ուժային հարաբերակցությունը: Եթե նախորդ տասնամյակներին գործ ունեինք ուժեղ կենտրոնական իշխանության զորքերի ու փոքրամասնության ապստամբ ուժերի հետ, ապա այժմ խոսքը երկու հավասար ուժերի մասին է, որոնք երկու տարբեր խնդիրներ են լուծում: Եթե Բաղդադին անհրաժեշտ է ապահովել երկրի ամբողջականությունը, թեկուզև դաշնային պետության մոդելով, վերահսկել ածխաջրածինների արտահանումը և եկամուտները, ապա ՔՏԿ-ի խնդիրն է ամրապնդել ինքնավարությունը, հասնել ավելի լայն միջազգային ճանաչման, սեփական հայեցողությամբ տնօրինել իր տարածքում գտնվող նավթային պաշարները:

Ելնելով այս ամենից՝ Նուրի ալ-Մալիքիի կառավարության գլխավոր խնդիրն էր լուծել տարածքային ու նավթային վեճերը՝ երկիրը վերամիավորելու համար: Հենց այս խնդիրների համատեքստում պետք է դիտարկել քրդերի նկատմամբ Իրաքի կառավարության վարած քաղաքականությունը: Վարչապետ դառնալուց հետո Նուրի ալ-Մալիքին սկսեց իշխանությունը, անվտանգության ուժերը, հատուկ ծառայությունները համախմբել իր ձեռքում: Նա փորձում էր թույլ չտալ քրդական վերահսկողության հաստատումը Քիրքուցում և Դիյալայում:

2008 թ. զինված բախումներ տեղի ունեցան քրդական փեշմերգաների ու իրաքյան զորքերի միջև: Օգոստոսին Իրաքի զինված ուժերը, հետապնդելով իսլամիստ գրոհայիններին, անսպասելիորեն շեղվեցին ուղուց և շրջափակեցին Խանակին քաղաքը, որը գտնվում է Դիյալա նահանգում: Իրաքյան ուժերի հրամանատար գեներալ Մունիմ Հաշիմ Ֆահդը պահանջեց քրդական կուսակցություններից հանել իրենց գրասենյակները քաղաքից, իսկ փեշմերգաներին հետ քաշել հարևան Սուլեյմանիե շրջան⁷: Բաղդադի համար Խանակինը կարևոր նշանակություն ուներ, քանի որ այստեղ բազմաթիվ նավթահորեր կան: Կար նաև տեղի արաբ բնակչության խնդիրը, որը մտահոգված էր քրդական բնակչության ավելացմամբ: Խնդիրը լուծելու նպատակով ՔՏԿ-ի նախագահ Մասուդ Բարզանին մեկնեց Բաղդադ, որտեղ համաձայնություն ձեռք բերվեց առ այն, որ քրդական և իրաքյան ուժերը պետք է քաղաքից հետ քաշվեն 25 կմ հեռավորության վրա⁸:

⁷ Y. Voller, *From Rebellion to De Facto Statehood*, (London 2012), p. 198.

⁸ G. Stansfield and L. Anderson, *Kurds in Iraq: the Struggle between Baghdad and Erbil*,

Ալ-Մալիքիի և Բարզանիի միջև լարվածությունն ավելի խորացավ ամերիկյան զորքերի դուրս գալուց հետո: Վիճելի համարվող տարածքներում բախումներն ավելացան 2011 թ. վերջից: Օրինակ, 2012 թ. նոյեմբերին Թուզ Խուրմաթոյում քրդական ու իրաքյան ուժերի բախման հետևանքով զոհվեց 2, վիրավորվեց 10 մարդ⁹:

Նավթի գործոն

Նավթն Իրաքից արտահանվող հիմնական ապրանքն ու եկամտի գլխավոր աղբյուրն է: Համաշխարհային նավթի ապացուցված պաշարների 12%-ը գտնվում է Իրաքում¹⁰: Թե՛ Բաղդադի, թե՛ Էրբիլի համար նավթի արդյունահանման ու արտահանման վրա վերահսկողությունը ռազմավարական նշանակություն ունի:

Քրդերը 2007 թ. նավթի ու գազի վերաբերյալ սեփական օրենք ընդունեցին¹¹: Շրջանցելով Իրաքի կառավարությանը՝ քրդական իշխանությունները պայմանագրեր ստորագրեցին միջազգային նավթային ընկերությունների հետ: Այդ քայլից հետո Բաղդադի ու Էրբիլի հարաբերությունները շարունակեցին վատթարանալ:

Իրաքի՝ 2008 թ. բյուջեի քննարկման ժամանակ սուննի և շիա արաբ պատգամավորները փորձեցին Քրդստանի կառավարությանը փոխանցվող նավթային եկամուտները 17%-ից կրճատել մինչև 13%: Քրդերը նախագահ Ջալալ Թալաբանիի միջոցով սպառնացին վետո դնել բյուջետային օրենքի վրա, ինչի շնորհիվ կարողացան պահպանել 17%¹²-ը:

Չնայած նշված 17%-ին՝ նավթի եկամուտների վերաբաշխումն իրականացնում է Բաղդադը, ինչը լծակ է՝ Էրբիլի վրա ճնշում գործադրելու համար: Բարզանին բազմիցս առաջ է քաշել քրդական տարածքներից արտահանվող

Middle East Policy 15, 1 (Spring 2009), 134-145.

⁹ Mohammed Tawfeeq, Two dead, 10 wounded after Iraqi, Kurdish forces clash in northern Iraq, *cnn.com*, Nov 19, 2012, <http://edition.cnn.com/2012/11/16/world/meast/iraq-violence/> (accessed 05.09.2015).

¹⁰ OPEC official website, OPEC share of world crude oil reserves, 2013, http://www.opec.org/opec_web/en/data_graphs/330.htm (accessed 04.05.2015).

¹¹ Kurdistan Regional Government official website, Oil and Gas Law of the Kurdistan Region – Iraq, Decision No. (28) – 2007, Sep 07, 2007, http://cabinet.gov.krd/uploads/documents/Kurdistan%20Oil%20and%20Gas%20Law%20English_2007_09_06_h14m0s42.pdf (accessed 08.09.2015).

¹² S. Kane, Iraq's Oil Politics, Where Agreement Might Be Found, *Peaceworks No. 64.* (2010) p. 16.

նավթի եկամուտներն անմիջապես, այլ ոչ թե Բաղդադից ստանալու պահանջը: Բաղդադը նավթային եկամուտների տնօրինման լծակն էրբիլի դեմ հաջողությամբ կիրառեց 2014 թ., երբ, որպես պատիժ, Թուրքիա ինքնուրույն նավթ արտահանելու համար Իրաքի կառավարությունը կրճատեց Քրդստանի շրջանի ֆինանսավորումը, ինչը ֆինանսական լուրջ բարդությունների առաջ կանգնեցրեց էրբիլին:

Բաղդադի ու էրբիլի միջև երկարատև դիմակայությունից հետո նավթային հարցով համաձայնություն ձեռք բերվեց 2014 թ. դեկտեմբերին: Ըստ համաձայնության՝ քրդական շրջաններից օրական արդյունահանվելու է 550 000 բարել նավթ, իսկ էրբիլը Բաղդադից ստանալու է եկամտի 17%-ը, ինչը 2013 թ. դրությամբ կազմել է 12 միլիարդ դոլար¹³:

Քիրքուքի գործոն

Քիրքուքն իր հսկայական նավթային պաշարների շնորհիվ ռազմավարական նշանակություն ունի թե՛ Բաղդադի, թե՛ էրբիլի համար: Քաղաքը գտնվում է Իրաքի արաբ և քուրդ բնակչության «հատման» մասում: Քրդերը Քիրքուքը համարում են իրենց Երուսաղեմը, իսկ ՔԴԿ-ի նախկին ու ներկա առաջնորդներ Մուստաֆա և Մասուդ Բարզանիները հնչեցրել են այն Քրդստանի մայրաքաղաք դարձնելու ցանկությունը:

Քիրքուք քաղաքի և նահանգի բնակչությունը գերազանցապես կազմված է արաբներից, քրդերից ու թուրքմեններից: 1957 թ. անցկացված մարդահամարի արդյունքներով քաղաքում մեծամասնություն էին կազմում թուրքմենները, իսկ նահանգում՝ քրդերը՝ 48%¹⁴:

Հետագա տարիներին բաասական իշխանությունները Քիրքուքում արաբականացման քաղաքականություն էին վարում՝ վերածնելով նաև Քիրքուք նահանգի սահմանները: Արդյունքում աստիճանաբար մեծացավ արաբ բնակչության տեսակարար կշիռը, իսկ քրդերի թիվը նվազեց: Արդեն 1977 թ. մարդահամարի տվյալներով Քիրքուք նահանգում մեծամասնություն էին կազմում արաբները՝ 44.41%, իսկ քրդերի թիվը հասնում էր 37.53%-ի¹⁵: Քիրքուքը գլխավոր խնդիրներից մեկն էր, որի պատճառով 1970-1974 թթ. Բաղդադն ու

¹³ BBC, Iraq government reaches deal with Kurds on oil exports, Dec 02, 2015 <http://www.bbc.com/news/world-middle-east-30289955> (accessed 04.05.2015).

¹⁴ L. Anderson, G. Stansfield, Crisis in Kirkuk: The Ethnopolitics of Conflict and Compromise, (Philadelphia) 2009, p. 43.

¹⁵ Ibid, p. 43.

քրդերը չկարողացան համաձայնության գալ ինքնավարության մասին օրենքի շուրջ:

Ամերիկյան ներխուժումից առաջ քրդերը նոր հնարավորություն տեսան Քիրքուքի հարցում: 2002 թ. ՔԴԿ-ը և ՔՀՄ-ը սահմանադրության նախագիծ ներկայացրին, ըստ որի՝ ՔՏԿ-ի գոտուց հարավ ընկած քրդաբնակ նավթաբեր շրջանները պետք է ընդգրկվեն ապագա քրդական ինքնակառավարվող տարածք, Քիրքուքը պետք է դառնա Քրդստանի մայրաքաղաքը, քրդերը պետք է ամբողջովին վերահսկեն իրենց զինված ուժերը, և քրդական ինքնավարությունն անջատվելու սահմանադրական իրավունք պետք է ունենա¹⁶: 2003 թ. դեկտեմբերին քրդական ղեկավարությունն այս կետերի վերաբերյալ առաջարկ ուղարկեց Իրաքի կառավարող խորհրդին, որը մերժվեց¹⁷:

2004 թ. ընդունված անցումային վարչական օրենքի 58-րդ հոդվածում նշված է, որ պետք է քայլեր ձեռնարկվեն մի շարք շրջաններում, մասնավորապես Քիրքուքում, նախորդ ռեժիմի իրականացրած ժողովրդագրական քաղաքականության անարդարությունները շտկելու համար¹⁸: Այդուհանդերձ, այս քայլի իրականացման հստակ ժամկետ չէր նշվում:

Քիրքուքի հարցն անորոշ մնաց նաև 2005 թ. ընդունված Իրաքի սահմանադրությամբ: Սահմանադրության 140-րդ հոդվածի համաձայն՝ Քիրքուքում և այլ վիճելի տարածքներում քաղաքացիների կամքն իրագործելու համար պետք է մինչև 2007 թ. դեկտեմբերի 31-ը հանրաքվե անցկացվեր¹⁹: Այն մինչև այսօր տեղի չի ունեցել: Քիրքուքը, այնուամենայնիվ, ավելի ուշ հայտնվեց քրդերի վերահսկողության տակ: Դա հնարավոր դարձավ 2014 թ. տարածաշրջանում նոր զարգացումների շնորհիվ:

Հունիսից Իրաքում և Սիրիայում ռազմական գործողություններ սկսեց «Իրաքի և Լևանտի իսլամական պետություն» խմբավորումը: ԻԼԻՊ-ը գրավեց Իրաքի հյուսիսային ու արևելյան շրջանների մեծ մասը (բացառությամբ Իրաքյան Քրդստանի) և հռչակեց «Իսլամական պետություն» խալիֆայությունը:

¹⁶ Chris Kutschera, “Iraqi Kurds Agree to Agree—for Now,” *The Middle East*, No. 329 (December 2002), pp. 25-27.

¹⁷ Bill Park, *Iraq’s Kurds and Turkey: Challenges for US Policy, Parameters*, (2004) Autumn p. 20.

¹⁸ http://www.cesnur.org/2004/iraq_tal.htm.

¹⁹ Iraqi Government official website, *Iraqi Constitution*, http://www.iraqinationality.gov.iq/attach/iraqi_constitution.pdf (accessed 05.09.2015).

ԻԼԻՊ-ի հաջողությունները ցույց տվեցին իրաքյան բանակի բարոյալքվածության ու մարտունակության ցածր մակարդակը: Օգտվելով իրավիճակից՝ քրդական ուժերը գրավեցին Քիրքուքը: Վարչապետ Նուրի ալ-Մալիքին էլ՝ քրդական հավակնությունների գլխավոր զսպողը, ընդդիմության և սեփական կուսակիցների ճնշման տակ հրաժարական տվեց:

Թե՛ Բաղդադի, թե՛ Էրբիլի համար ԻԼԻՊ-ն ընդհանուր թշնամի է: «Իսլամական պետությունը», սպառնալիք լինելով քրդերի համար, մյուս կողմից անուղղակիորեն կարող է նպաստել Քրդստանի շրջանի անկախացմանը: Որքան երկար տևի պատերազմն Իրաքում, և Բաղդադն ի վիճակի չլինի վերականգնելու իշխանությունը կորցրած տարածքներում, այնքան ավելի հիմնավոր են հնչելու անկախություն հռչակելու վերաբերյալ քրդական փաստարկները: Մարտահրավերներին դիմագրավելու Բաղդադի անկարողության պայմաններում Էրբիլի հաջողությունները թույլ կտան քրդական ինքնավարությանն արտաքին դերակատարների համար կայուն և արդյունավետ սուբյեկտ երևալ: Մասնատված Իրաքն ու ֆեդերալիզմի ձախողումը հիմնավոր փաստարկներ են՝ անկախություն հռչակելու համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

2003 թվականին Իրաքում Սադդամ Հուսեյնի ռեժիմի տապալումից հետո քրդերի համար նոր հնարավորություններ բացվեցին: Այս հոդվածը նվիրված է 2003 թվականից հետո քուրդ-իրաքյան հարաբերությունների ու քրդերի հարցում Բաղդադի վարած նոր քաղաքականությանը: 2005 թվականին ընդունված սահմանադրությամբ քրդերը լայն ինքնավարություն ստացան, ինչի համար պայքարում էին տասնամյակներ շարունակ: Սակայն կողմերի հարաբերություններում մի շարք առանցքային խնդիրներ կան, օրինակ նավթի արտահանումն ու դրանից ստացված եկամուտների բաշխումը, ինչպես նաև Քիրքուք քաղաքի և վիճելի այլ տարածքների հարցը: Քրդերը ցանկանում են ընդլայնել իրենց ինքնավարության տարածքն ու նավթն ինքնուրույն արտահանել, իսկ ավելի հեռահար նպատակն է անկախության հաստատումը: Բաղդադն էլ ձգտում է պահպանել երկրի ամբողջականությունը և նավթային եկամուտների լծակը: Այս պատճառով կողմերի միջև հակասությունները երբեմն վերաճում են զինված բախումների:

Բանալի բաներ - Իրաք, Քրդստանի տարածաշրջանային կառավարություն, նավթ, Քիրքուք, Բարզանի, Սադդամ Հուսեյն:

УКРЕПЛЕНИЕ КУРДСКОЙ АВТОНОМИИ И ПОЛИТИКА ИРАКА В ОТНОШЕНИИ КУРДОВ ПОСЛЕ 2003 ГОДА

МУШЕГ ГАГРИЯН

Эта статья обсуждает новые отношения правительства Ирака и Иракского Курдистана, политику Багдада в отношении курдов после 2003 года. Новая конституция Ирака, принятая в 2005 году, гарантировала для курдов более широкие права, что помогло им укрепить автономию. В статье рассматриваются две основные проблемы в отношениях Багдада и Эрбиля – нефтяные доходы и вопрос Киркука. Иракские курды желают увеличить территорию автономной области и получить больше контроля над нефтяными ресурсами, экспортируемыми из Курдистана. А правительство Ирака пытается сохранить целостность страны и контроль над нефтяной промышленностью страны.

Ключевые слова – Ирак, Региональное правительство Курдистана, нефть, Киркук, Барзани, Саддам Хусейн.

THE REINFORCEMENT OF THE KURDISH AUTONOMY AND THE IRAQI POLICY TOWARDS THE KURDS AFTER 2003

MUSHEGH GHAHRIYAN

This article is concerned with the Kurd-Iraqi relationship and the policy adopted by the Iraqi government towards the Kurdistan Regional Government after 2003.

After the downfall of the regime of Saddam Hussein, new opportunities were presented for the Kurds. In 2005 with the ratification of a Constitution, Iraqi Kurdistan was granted the status of a federal entity constitutionally, for which the Kurds were striving for many decades. Nevertheless, there are some central discord between Iraqi Kurdistan and the central Iraqi government on the issues of export of oil, distribution of the obtained revenues from oil as well as on the status of the city of Kirkuk and some other territories. The Kurds want to enlarge the territories of their autonomy, to export oil on their own and finally to acquire independence.

Key words – Iraq, Kurdistan Regional Government, oil, Kirkuk, Barzani, Saddam Hussein.

**«ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ»-Ի ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Հաճախապատում ճառք» ժողովածուն հայ եկեղեցական մատենագրության մեծարժեք և ամենակարևոր կրոնական երկերից մեկն է, որը մեզ է հասել բազմաթիվ ձեռագրերով և ունեցել երեք հայտնի հրատարակություն, իսկ մեկ անգամ էլ թարգմանվել է գերմաներեն (Ռեգենսբուրգ, 1872) Յոհան Միխայել Շմիդի կողմից¹:

«Հաճախապատում ճառք»-ի միջնադարյան ձեռագիր ընդօրինակությունները կրում են Գրիգոր Լուսավորչի անունը, որը վկայում է նաև յուրաքանչյուր ճառի վերնագիրը (Երանելոյն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի և նմանները)²:

Գրիգոր Նարեկացին իր «Երգ երգոցի մեկնության» և Գրիգոր Մագիստրոսն իր «Մեծ են գործք» աշխատության մեջ «Հաճախապատումը» վկայակոչում են Գրիգոր Լուսավորչի հեղինակությամբ³:

Ձեռագիր հիշատակարաններում ևս վկայություններ կան «Հաճախապատում ճառք»-ի մասին:

Գ. Զարբհանայանն իր «Հայկական հին դպրութեան պատմութիւն» աշխատության մեջ վկայում է, որ ՌՃԻԲ =1112 թվականին Սիս քաղաքում գրված «Հաճախապատում» գրքի ձեռագրերից մեկն ունի հետևյալ հիշատակությունը. «Կատարեցաւ գիրքս՝ որ կոչի Յաճախապատում... էր օրինակ սորին ՅՀԸ = ԳՃՀԸ (378) տարի էր առաջի թուականն հայոց ի Լուսաւորչէն . . . զայս յաճախապատում օրինակն Սսայ Գրքատանն առաք ի մեր թուականս ԳՃԸ թին էր, այժմուս մեք գտաք մեր օրինակաց ժամանակին թին էր ՌՃԻԲ»⁴:

Բազմավաստակ բանասեր և ձեռագրագետ Գարեգին Ա կաթողիկոս

¹ «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 3, Երևան, 1999, էջ 62-63:

² Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, աշխատապիրութամբ Ա. Տեր-Միքելեանի, Էջմիածին, 1894, էջ 6:

³ Տեր-Պետրոսյան Լ., Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից (ե դար), Սոչի, 1993, էջ 35:

⁴ Զարբհանայան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, էջ 90-91:

Հովսեփյանցն իր «Յիշատակարանք ձեռագրաց» (Ե-դարից մինչև ԺԸ դար) բազմաշխատ գործի մեջ N 347 ձեռագրի տակ խոսում է «Յաճախապատում»-ի մի հնագույն օրինակի մասին.

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ, Ձեռագիր Երուսաղեմի, N 94, ՆԻԻԹ՝ թուղթ, ԳԻՐ՝ առաջին մասը միջին երկաթագրով, հետո հին բուլղարագրով շարունակում է, ԳՐԻՉ՝ Պետր կամ Պետրոս (նաև Կիրակո՞ս), ՍՍԱՅՈՂ՝ հայր Թորոս, ՏԵՂ՝ Ակներոյ վանք, ԺԱՄԱՆԱԿ՝ ՈԿԴ=1215թ.⁵:

Հայտնի բանասեր Նորայր եպս. Պողարյանը «Հաճախապատում»-ի 1215 թվականի հնագույն ձեռագրի մասին գրում է հետևյալը.

«Յաճախապատում»-ի հնագույն ձեռագիրներեն մին է այս, եթե ոչ ամենահինը, և ուշագրավ ու հետաքրքրական է շատ մը տեսակետներե՞: Արտավազդ արք. Սյուրմեյան ցուցակագրած է զայն ժամանակին և ծանոթացուցած բանասերներու՞: ... Շատ հավանական է, եթե ոչ բուլղարովին հաստատ, որ մեր թիվ 94 ձեռագիրն ալ իբր գաղափար ունեցած ըլլայ 929 թվականը կրող երկաթագիր օրինակը:

. . . Երուսաղեմի թ. 94 Հաճախապատումին մեջ ունինք նոյն ճառերուն մեզի հասած հնագույն և ընտրելագույն օրինակը, 1215 թվականով, որ հարազատներեն կը ներկայացնէ 929 թվականը կրող իր նախագաղափարը՞»:

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում կան «Հաճախապատում»-ի 7 գրչագիր օրինակներ՝ հետևյալ համարների տակ՝ N 8775, Երու-

⁵ **Գարեգին Ա Հովսեփյանց**, Յիշատակարանք ձեռագրաց Անթիլիաս, 1951, էջ 775: Ստորև մեջբերում եմ ընդարձակ տարբերակը. «Շնորհիւ բարեբարին Աստուծոյ կատարեցաւ լուսաւոր վարդապետութիւնս սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի՝ գիրքս, որ կոչի Յաճախապատում, ի թուականութեանս Հայոց ՈԿԴ, ի հայրապետութեան տեսուն Յոհաննիսի Հայոց կաթողիկոսի և ի թագաւորութեան աստուածասէր և բարեպաշտի Լեւոնի: Գրեցաւ հրամանաւ հար Թորոսի և յաւժարութեամբ ամենայն եղբայրութեանս՝ ի մեծ և հոշակաւոր անապատիս, որ կոչի Ակներոյ վանք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Առաքելոցս և աստուածընկալ նշանացս: Արդ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք և լուսաւորիք ի սուրբ վարդապետութեանցս, յիշելոյ արժանի արարեք զմեղապարտ և անարժան գրողս՝ Պետր և զճնողսն իմ և զեղբարս՝ զվենդանիս և զհանգուցեալսն, և Աստուած, որ առաւորն՝ ողորմութեամբ իւրով, հատուցէ ձեզ և մեզ՝ ընդ ձեզ, ամեն»:

⁶ «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց», հ. Բ, կազմեց՝ **Ն. եպս. Պողարեան**, Երուսաղեմ, 1953, էջ 179, ձեռագիր N 194, Յառաջաբան «բացատրութիւն Յաճախապատում գրոյ», -1, Երեմիա վրդ. Չօրլուցի, 1820:

⁷ «Ցուցակ Ձեռագրաց Երուսաղեմի», հ. Ա, Վենետիկ, 1948, էջ 225-228:

⁸ «Սիոն», 1961, թիվ 3, էջ 74-75:

սաղեմ, 1415, գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի (Ծերենց): «Հաճախապատում»-ի հնագույն գրչագիր այս օրինակի հիշատակարանը ոչինչ չի ասում: Մյուս օրինակներն են՝ N 3140 (1621թ.), N 1453 (1692թ.), N 4063 (1694թ.), N 1852 (1695թ.), N 1337 (1706թ.), N 6921 (1719թ.):

«Հաճախապատում ճառք»-ում քննարկվում են դավանական, վարդապետական, հոգևոր ու բարոյական աստվածաբանության կարևոր հարցեր, որի շնորհիվ էլ այն անգին գանձ է հայ եկեղեցական մատենագրության մեջ: Սակայն «Հաճախապատում»-ի հեղինակի, լեզվի և գրության ժամանակի, սկզբնագրի լեզվի և այլ մատենագրական հարցերի կողքին կարևոր է նաև ճառերի տպագրության հարցը:

Դավանական և բարոյախոսական 23 «հոգեշահ» ճառերից բաղկացած «Հաճախապատում ճառք» ժողովածուն մինչև այսօր ունեցել է մի շարք հրատարակություններ:

Մինչև ԺԸ դարի 30-ական թթ. «Հաճախապատում ճառեր»-ը մնում են ձեռագիր և առաջին անգամ տպագրվում են Կ. Պոլսում 1737 թվականին՝ Հովհաննես Կոլոտի պատրիարքության ժամանակ: Տպագրվող «Հաճախապատում»-ի ձեռագիրը բերել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրակ Պետրոս աստվածաբան վարդապետը⁹:

Առաջին տպագրությունն ունի հետևյալ տիտղոսաթերթը.

Գիրք որ կոչի

Յաճախապատում

Ասացեալ սուրբ Հորն մերոյ

Երանելոյն Գրիգորի Լուսաւորչին

Յորում պարունակին

Ճառք Յոգնապատումք

քսաներեք

վասն անհաս էութեանն Աստուծոյ

և խնամոց և սիրոյն որ

առ ստեղծուածս

և վարուց ուղղութեան և

Հասուցման գործոց

«Հաճախապատում»-ի առաջին տպագրությունը բաղկացած է ՄԿ էջից

⁹ Գիրք որ կոչի հաճախապատում, ասացեալ սուրբ Հորն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչին, Կ. Պոլիս, տպ. Աստվածատուր Կոստանդնուպոլսեցվոյ, 1737 (ՌԾՁԶ):

(260) և ճառերի ցանկից (260-264), այնուհետև տպագրվել է «Յոհաննիսի վարդապետի Երզնկացոյ, ասացուած ներբողական գովեստ ի սուրբ Լուսաւորիչն հայոց ի մեծն Գրիգորիոս» ներբողը (էջ 265-310): Սա Լուսավորչին նվիրված մի հոյակապ ներբողական է՝ հայ հռետորական արվեստի և եկեղեցական մատենագրության անկրկնելի գոհարներից մեկը:

312-րդ էջից Լուսավորչի թոռնիկներին նվիրված ճառն է նույն հեղինակից (էջ 312-332), որին և կցվել է «շարական որդւոց և թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ» շարականը:

336-347-րդ էջերում տպագրվել է Պաղտասար Դպիրի ներբողականը՝ «ի սրբազան հայրն մեր երանելի Գրիգորիոս, ի թուին 1158» (1709թ.):

Հրատարակիչը բարի մտադրություն է ունեցել. նա քաղել և այբբենական կարգով կազմել է «Հաճախապատում»-ի՝ այդ «հոգելից սուրբ մատյանից» գեղեցիկ առանձին մտքեր, որոնք տպագրվել են 348-357-րդ էջերում:

Գրքի 358-360-րդ էջերում «Հաճախապատում»-ի առաջին տպագրության հիշատակարանն է՝ «Յայտարարութիւն ինչ յաղագս հոգելից սրբոյ մատենիս»: Իսկ վերջում՝ «Հաճախապատում»-ի կրոնական նշանակությանը նվիրված տողերից հետո, խոսվում է տպագրության հանգամանքների մասին:

«Հաճախապատում»-ը ևս մեկ անգամ տպագրվել է դարձյալ Կ.Պոլսում 1824 թվականին: Այս տպագրությունն ամենայն մանրամասնությամբ «Հաճախապատում»-ի առաջին տպագրության երկրորդ հրատարակությունն է:

Այս տպագրությունն առաջինից տարբերվում է միայն իր փոփոխված տիտղոսաթերթով: Գիրքը բաղկացած է 400 էջից: 3-290-րդ էջերը բնագիրն է, 291-293-ը 23 ճառերի ցանկն է: Հովհաննես Երզնկացու՝ Լուսավորչին նվիրված ներբողականը գրվում է 294-345-րդ էջերը, Լուսավորչի թոռներին նվիրված ներբողը՝ 346-370-րդ էջերը, նրանց նվիրված շարականը՝ 371-րդ էջը, իսկ Պաղտասար Դպիրի ներբողականը՝ 372-386-րդ, ապա ճառերից քաղված գեղեցիկ մտքերը՝ 387-400-րդ էջերում: Վերջին էջում կա նաև հիշատակարան:

«Հաճախապատում»-ի երկրորդ տպագրությունը կատարվել է Վենետիկում 1838 թվականին: Այս հրատարակության մասին շատ տվյալներ չունենք: Երկը Վենետիկի Մխիթարյանները բանասիրական աշխատասիրությամբ հրատարակել են իրենց տպարանում (վերահրատարակությունը՝ 1954թ.)¹⁰: Ամենայն հավանականությամբ սրանք ձեռքի տակ եղած ձեռագրերի հիման

¹⁰ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում Ճառք և Աղօթք, Վենետիկ, 1838:

վրա կազմված (ոչ քննական) հրապարակումներ են (ընդգծումն իմն է): Հիշյալ հրատարակությունն ունի հետևյալ տիտղոսաթերթը.

«Մատենագրութիւնք նախնեաց Գրիգոր Լուսաւորիչ»

Սրբոյ Հօրն մերոյ

Գրիգորի Լուսաւորչի

Յաճախապատում Ճառք

և Աղօթք

Գրքի 234 էջերն ընդգրկում են «Յառաջաբանը» (7-9), «Ցանկը» (10-11), «Եւ լուսաւոր վարդապետութիւնս Յաղագս օգտի լսողաց» (11-15) վերնագրով հատվածը, որն ուղղված է ընթերցողին, «23 ճառերը» (15-231), և վերջին էջերում գտնում ենք Գրիգոր Լուսավորչի Աղօթքը (231-234)¹¹:

«Հաճախապատում»-ի երրորդ տպագրությունը կատարվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 1894 թվականին:

Այս հրատարակությունն ունի հետևյալ տիտղոսաթերթը.

Սրբոյ Հօրն մերոյ

երանելոյն

Գրիգորի Լուսաւորչի

Յաճախապատում ճառք

լուսաւորք

Յառաջաբան, համեմատութեամբ

և ծանօթութիւններով

Ա. Տէր-Միքելեանի

տպարան

Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝

1894 = ՌՅԽԴ

Աստվածաբանության հմուտ գիտակ, մատենագետ և բանասեր Արշակ Տէր-Միքելեանի այս աշխատությունը եզակի է իր տեսակով, որպես բարեխիղճ ուսումնասիրություն, գիտական լուրջ ու արժեքավոր ներդրում մեր եկեղեցական մատենագրության մեջ:

Հեղինակն իր «Յառաջաբան»-ում անվերապահորեն «Յաճախապատում»-ը համարել է Լուսավորչի գործ և արդարացիորեն շատ բարձր է գնահատել գրքի կրոնական նշանակությունը մեր եկեղեցու և մեր մատենագրության համար:

¹¹ Նույն տեղում, էջ 5:

Ա. Տեր-Միքելյանը Ա. Էջմիածնի ձեռագրերի պահուցում գտնվող հինգ գրչագիր օրինակների, որոնցից երկուսը՝ հնագույն (Կարինյան ցուցակ N 1655 և N 1658), համեմատությամբ ճշտել, վերականգնել է «Հաճախապատում»-ի բնագիրը և հրատարակել գրչագիրների տարբեր ընթերցումներով և հիշատակություններով: Հեղինակը գրքի վերջում դրել է գրչագիրների համեմատության տարբերությունները:

Ա. Տեր-Միքելյանի աշխատությունը բաղկացած է 354 էջից, այդ թվում՝ «Յառաջաբան» (Ե-ԺԷ), բնագիր՝ 1-279 էջերը, «Լուսաբանութիւնք»՝ 280-313 էջերը, «Ընթերցումածք»՝ 314-348 (ձեռագրի համեմատությունների տարբերություն), «Ցանկ նիւթոց»՝ 349-352, «Ցանկ գլխակարգութեանց»՝ 353-354)¹²:

Այս կարևոր հրատարակություններից հետո՝ բավական երկար ժամանակ անց միայն, սպասված աշխատանք կատարեց հայագիտության մեջ բանասեր, պրոֆեսոր Վ. Համբարձումյանը: Նա արևելահայերեն թարգմանեց և հայ ընթերցողին նորովի ներկայացրեց «Հաճախապատում ճառեր»-ը: Գիրքը տպագրվել է Թեհրանում 2003 թվականին և բաղկացած է «Առաջաբանից», «23 ճառերից», «Ծանոթագրություններից»: «Հաճախապատում»-ը հրատարակվել է Գրիգոր Լուսավորչի անունով¹³: Այն բավական հաջողված թարգմանություն է և մեծ հնարավորություններ է ընձեռում ուսումնասիրողներին և ընթերցողներին այս երկին ավելի լավ ծանոթանալու համար:

«Հաճախապատում»-ի հաջորդ տպագրությունը տեղի է ունեցել Հալեպում 2005 թվականին Մովսէս Նաճարեանի կողմից: Այն կրկին գրաբար բնագրից աշխարհաբար թարգմանություն է: Թարգմանիչ հեղինակը «Հաճախապատում»-ը ներկայացրել է որպես Մեսրոպ Մաշտոցի երկ, թեպետ նշում է, որ 23 ճառերի մագաղաթյա օրինակներն ավանդված են «Սրբոյ Հօրն Մերոյ Երանելոյն Գրիգոր Լուսաւորչի՝ Յաճախապատում ճառք» խորագրի ներքո:

Գրքի 239 էջերը բովանդակում են «Նախաբանը» (9-13), «Ճառերը» (13-228), «Աղոթքը» (230), որ ասվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից, երբ մեկն ընկնում է որոգայթի մեջ, և «բառարանը» (231-237)¹⁴:

Այսպիսով, լուսաբանելով մեզ հասած «Հաճախապատում ճառք»-ի ձե-

¹² Սրբոյ Հօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, աշխատասիրությամբ **Ա. Տեր-Միքելյանի**, Էջմիածին, 1894:

¹³ **Ս.Գրիգոր Լուսաւորիչ**, Հաճախապատում ճառեր, աշխատասիրությամբ **Վ.Համբարձումյանի**, Թեհրան, 2003:

¹⁴ Յաճախապատում, գրաբար բնագրից թարգմանեց **Մովսէս Նաճարեանը**, Հալեպ, 2005:

նագրերն ու հրատարակված գրքերը, անկարելի է չնկատել այն կարևոր ազդեցությունը, որ թողել է կրոնական և բարոյախրատական քարոզների այս ժողովածուն բոլոր ժամանակներում՝ դառնալով մեծարժեք երկ հայ մշակույթի գանձարանում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձել ենք հայ եկեղեցական մատենագրության կարևորագույն երկերից մեկի՝ «Հաճախապատում ճառք»-ի ձեռագրերի և հրատարակությունների հարցին, հատկապես քննության է առնվել 1215 թվականի (Երուսաղեմ, ձեռ. N 94) հնագույն ձեռագիրը: Այնուհետև մանրամասն ներկայացվել են հայագիտությանը հայտնի և մինչև այսօր լույս տեսած «Հաճախապատում ճառք»-ի բոլոր հրատարակությունները (Կ.Պոլիս 1737, Վենետիկ 1838, Էջմիածին 1894):

Բանալի բաներ – «Հաճախապատում ճառք», ձեռագիր, Գրիգոր Լուսավորիչ, դավանական, բարոյախրատական, Մետրոպ Մաշտոց, հրատարակություն, քարոզ:

О ВОПРОСАХ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ "МНОГОВЕЩАТЕЛЬНЫХ РЕЧЕЙ" И ИХ ПУБЛИКАЦИЯХ

НЕЛЛИ ПЕТРОСЯН

В данной статье мы обратились к вопросу о рукописях одного из важнейших произведений армянской церковной литературы, называемого «Многовещательные речи», и их публикациях. Особое внимание уделялось древнейшей рукописи 1215-го года (Иерусалим, рук. N 94). Далее подробно представлены все издания «Многовещательных речей», которые дошли до нашего времени (Константинополь, 1737, Венеция, 1838, Эчмиадзин, 1894).

Ключевые слова – "Многовещательные речи", рукопись, Григорий Просветитель, конфессиональный, нравоучительный, Месроп Маштоц, издания, проповедь.

THE "FAITFUL SPEECH" MANUSCRIPTS AND PUBLICATIONS ON THAT ISSUE

NELLI PETROSYAN

This article is a study of the different manuscripts and publications of "Faitful Speech", one of the Armenian Apostolic Church's most important works of literature. Of special inquiry

into to the oldest manuscript of the year 1215 (Jerusalem, hands. N 94) is realized. Also presented are all the known editions of "Faitful Speech" to Armenology, which are published until today (Constantinople, 1737, Venice 1838, Echmiadzin 1894).

Key words - "Faitful Speech", manuscript, Grigorius the Illuminator, confessional, preachy, Mesrop Mashtots, religious, publication, preachment.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

1915 թ. ապրիլից վերսկսված Հայոց ցեղասպանության հետևանքով արևմտահայ քաղաքական միտքը նոր դրսևորում ստացավ: Եվ սա այն հասկանալի պատճառով, որ ցեղասպանությունը սկսվեց արևմտահայ մտավորականների ձերբակալությամբ, աքսորով և սպանողով: Մտավորականների ձերբակալությամբ բնականաբար փակվում են լրատվական և հրատարակչական բոլոր այն միջոցները, որոնցով իր դրսևորումներն էր ստանում արևմտահայ քաղաքական միտքը: Ապրիլի 24–ից մինչև 29–ը ձերբակալվում և ապա խումբ–խումբ Անատոլիայի խորքերն են աքսորվում հայ անվանի երեսփոխաններ, ուսուցիչներ, բժիշկներ, արվեստագետներ, հոգևորականներ և բազում այլ մտավորականներ՝ թվով ավելի քան 800 հոգի¹:

Դրանց թվում էին կուսակցական և ոչ կուսակցական այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք են Ակնունին, որը թեպետ արևելահայ էր, բայց արևմտահայ հասարակական–քաղաքական կյանքի ակնառու դեմքերից էր, Վարդգեսը, Գր. Ջոհրապը, Հ. Շահրիկյանը, Ռուբեն Ջարդարյանը, Նազարեթ Տաղավարյանը, Տիրան Քելեկյանը և բազում ուրիշներ: Ձերբակալություններ տեղի ունեցան բնականաբար նաև տեղերում: Վանում դավադրության զոհ դարձան Իշխանը² և Ա. Վոամյանը³, Բիթլիսում՝ Արմենակ Օխիկյանը⁴: Բարեբախտաբար Արամ Մանուկյանը և Մուշ–Սասունի Դաշնակցություն կուսակցության ղեկավար Ռուբենը կարողանում են խույս տալ ձերբակալությունից:

Մինչև Կ. Պոլսի մտավորականների ձերբակալությունը, նրանցից շատերը, այդ թվում և Ջավեն պատրիարքը, փորձում են թուրքական կառա-

¹ Տե՛ս **Թյուրապեան Յ.**, Դրվագներ հայկական եղեռնէն, Փարիզ, 1946, էջ 156:

² Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1916, ապրիլի 7, թիւ 78, **Աստուածատրեան Ա.**, Իշխանը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1955, դեկտեմբեր, թիւ 12(358), էջ 86-87, Բոստոն, 1956, յունուար, թիւ 1(359), էջ 41-45, **Ներսիսեան Ա.**, Իշխան (Նիկոլ Պողոսեան), «Դրօշակ», Երևան, 2000, յունիս, թիւ 6(1568), էջ 24:

³ Տե՛ս **Աւօ**, Արշակ Վոամեան (Օնիկի Դերձակեան–Վահայ, Վարագ), «Յեղափոխական պայօժ», Պէյրուօ, 1965, հ. Ե, թիւ 10(58), էջ 269-278:

⁴ Տե՛ս **Ներսիսեան Ա.**, Իշխան (Նիկոլ Պողոսեան), «Դրօշակ», Երևան, 2000, յունիս, թիւ 6(1568), էջ 24:

վարությանն այն հավատը ներշնչել, թե իրենք չեզոք դիրք են գրավել և չունեն որևէ անջատողական ձգտում: Բայց առիթներ փնտրող թուրք կառավարությանն այլևս անհնար էր համոզել:

Երբ 1914 թ. նոյեմբերի 11-ին Թուրքիան պատերազմի մեջ մտավ Ռուսաստանի հետ, նա արդեն մտահոգված էր ոչ թե բարեփոխումների խնդրով, այլ Արևմտյան Հայաստանի գրավմամբ, որը ձգձգվեց մեր մատնանշած պատճառներով, իսկ երբ գրավեց այն, հայկական տարրն արդեն մեծամասամբ ոչնչացված էր:

Կարծում ենք, որ 1915 թ. ապրիլից սկսած՝ այլևս անհնար էր որոնել և գտնել արևմտահայ մեկ ընդհանուր ուղղվածությամբ քաղաքական միտք, քանզի ոչնչացվում էին և՛ հայ ժողովուրդը, և՛ հայ առաջնորդները:

Բանն այն էր, որ ռուսներն ամբողջ 1915 թ.՝ Սարիղամիշի ճակատամարտից հետո, անմիջապես առաջ չշարժվեցին: Երբ արևմտահայությունը մեծամասամբ նահատակվեց, իսկ նրա բեկորները ցիրուցան եղան, նոր միայն 1916 թ. հունվարին ռուսական զորքերը Կովկասյան ռազմաճակատում անցան ընդհանուր հարձակման և մեկ ու կես ամսվա ընթացքում արեցին այն, ինչը հայերը երազում էին տեսնել 1914 թ. վերջերին: Իրար հետևից գրավվեցին Էրզրումը, Տրապիզոնը և Երզնկան: Ռուսական բանակի մի թևը գրավեց Խնուսը, Մուշը և Սասնո առաջին լեռնաշղթան, իսկ մյուսը մտավ Բիթլիս քաղաքը: Այս հարձակումներով «Ռուսական բանակը կերթար ամրանալու Սեյծովու եզերքը, Պոնտոսն իր թեարկութեան տակ առնելով եւ ուղիղ գծով վար կիջնէր Երզնկա, մինչեւ Դերսիմի լեռնաշղթան, ավելի հարաւ կը հանգչեր Եփրատի հովիտը ու անոր հունով կառաջանար մինչեւ Սասնո լեռնաշղթան, Բիթլիսի հարավով մինչեւ Վանի Շատախները ու կը կախվէր Մուսուլի գլխին, հայկական նահանգներն իր տիրապետութեան տակ առնելով»⁵:

Ռուս-թուրքական ընդհարումների պահով կարելի է մեջբերել Անդրանիկի հուշագրերից մեկը. «Տարը մեզ հետ է և թաթարին, անոր և անոր ճորտերու նպատակն է մեզ իրար կոտորել տալ և մեր մեջ բանալ ատելության վիհ մը... Որ՝ ցարը կուգե, որ մենք և թաթարները շարունակենք զիրար կոտորել, հայտնի է այն փաստեն, որ ամիս մըն է, որ կտևե կոփվը: Եթե ցարը չուգեր, որ մենք զիրար կոտորենք, իր ցուցամատը կշարժեր, և հայ ըլլա թե թաթար կը

⁵ **Սասունի Կ.**, Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պեյրուֆ, 1966, էջ 107-108: Ռուսական հարձակման մանրամասները տե՛ս **Масловский Е. В.**, Мировая война на Кавказском фронте 1914-1917 гг., Париж, 1933, с. 246-397.

դադարեցնելն անմիջապես իրենց կոիվը, և ասիկա կը տեվեր ոչ թե մեկ ամիս, այլ ոչ ավելի քան մեկ րոպե»⁶:

Արևմտյան Հայաստանի գրավումից հետո արդեն ռուսները հրաժարվեցին նրան ինքնավարություն տալու խոստումներից և որդեգրեցին միանգամայն հակահայ քաղաքականություն: Դրանում համոզվելու համար բավական է կարդալ Կովկասի փոխարքա Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչի «Թիֆլիս, 3/16 հուլիսի» թվակիր նամակը, որի մեջ մասնավորապես նշվում է. «Հարկավ, չշոշափելով Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանի ինքնավարության հարցը, մի հարց, որն ամենայն հավանականությամբ առայժմ կյանքի չի կոչվելու, և որը, իմ կարծիքով, կարող է միայն վտանգավոր կերպով բարդացնել այս պատերազմի ժամանակ ծնունդ առած հարցերի լուծումը, ես լիովին Ձեզ հետ համաձայն եմ, որ պետք է, և միանգամայն հնարավոր է, հայերին վերապահել դպրոցական ու եկեղեցական անկախություն, եկեղեցական հարստությունների և գույքերի կառավարման իրավունք, (մայրենի) լեզվից օգտվելու իրավունք՝ բոլոր պաշտոնական դեպքերում ռուսաց լեզվի առաջնության պայմանով: Պետք է վերապահել (հայերին) նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ բնակչության հարաբերակցության տոկոսի պահպանմամբ հանդերձ: Ոչ քրիստոնյա տարրերի նկատմամբ հարկավոր է տեղական պայմանների և նրանց կոլտուրական զարգացման աստիճանի համեմատ կիրառել նույն սկզբունքները»⁷:

Այսպիսով, ցարական Ռուսաստանը փաստորեն արևմտահայերին տալիս էր այն իրավունքները, ինչը նրանք ունեին Օսմանյան Թուրքիայում մինչև պատերազմը: Եվ դրա հակառակը ոչ մեկը չի կարող պնդել:

Վերոհիշյալ նամակի սկզբունքներով էլ 1916 թ. հունիսի 6-ին կազմվում է Թուրքիայից գրավված վայրերի վերաբերյալ կառավարության ծրագիրը, որից հետո ստեղծվում է Արևմտյան Հայաստանի գեներալ-նահանգապետությունը՝ Ա. Պեշկովի գլխավորությամբ:

⁶ **Ղարիբջանյան Գ.**, Ժողովրդական հերոս Անդրանիկ, Երևան, 1990, էջ 83-84:

⁷ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» (1828-1923), պրոֆ. Ջ. Ա. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 461, նաև՝ «Հայաստանի ավտոնոմիան և Անտանտան», Երևան, 1926, էջ 55-56, **Ղազարյան Հ.**, Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, գիրք Բ, Երևան, 2012, էջ 204-207:

1916 թ. կեսերից իր քաղաքական առաջնորդներին կորցրած, մեծամասամբ կոտորված, կամ արդեն սփյուռք դարձած արևմտահայության իղձերի արտահայտիչն է նորից դառնում հայոց Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը: Վերջինիս քաղաքական ըմբռնումները՝ կապված Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի կարգավիճակի հետ, այդպես էլ չլքեցին նրան 1912 թվականից սկսված իր ողջ գործունեության ընթացքում, այն է՝ հենվել Արևմուտքի վրա, որը կլուծի Հայկական հարցը: Իսկ 1916 թ. երկրորդ կեսից Պողոս Նուբարը, հենվելով Անգլիայի և Ֆրանսիայի խոստումների վրա, 1914 - 1918 թթ. ստիպված ճաշակեց այն խաբկանքը, որը հայ քաղաքական շրջանակները ճաշակել էին Ռուսաստանից: Քաղաքական ի՞նչ աստիճանի միամտությամբ պետք է համակված լիներ նա, երբ հույս ուներ, որ Սայքս-Պիկոյի համաձայնագրով ինքնավարություն կտրվեր Հայաստանին, այն դեպքում, երբ արդեն Թուրքիայի տիրույթները բաժանված էին Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Ս. Վրացյանը գրում է. «Ինչպես Ազգ. Բյուրօն Կովկասում, Ազգ. Պատվիրակութիւնն եւս արտասահմանում մեծ պետութիւնների պետական գործիչներից ու կառավարութիւններից ստանում էր խոստումներ ու հավաստիացումներ, որ հայկական բաղձանքները լիովին կը գոհացեն դաշնակիցների յաղթութիւնից յետոյ: Այս հաւաստիացումների հիման վրա էր, որ Ազգ. Պատվիրակութիւնը նախաձեռնեց - **կովկասեան կամաւորական շարժման հաշիւարդարից յետոյ**—հայկական լեգէոնի կազմակերպութեան դաշնակիցների արեւելեան բանակում»⁸ (ընդգծումը մերն է - Հ. Ս.):

Ի՞նչն է զավեշտալին: Այն, որ այս ամենը կատարվում էր, ինչպես ընդգծվածից պարզ է, կամավորական շարժման հաշվեհարդարից հետո: Այժմ էլ հայերին օգտագործելու հերթը Ֆրանսիայինն ու Անգլիայինն էր: Դրանում համոզվելու համար նայենք ժամանակագրությանը: Այսպես, 1916 թ. մայիսին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան գաղտնի ստորագրում են անգլիացի դիվանագետ Սայքսի և ֆրանսիացի դիվանագետ Պիկոյի կազմած համաձայնագիրը, որը նախապատրաստվում էր դեռևս փետրվար-մարտից, և որով նրանց միջև էին բաժանվում Թուրքիայի մերձավոր և միջինարևելյան տարածաշրջանները: Այդ մասին մարտին տեղյակ է պահվում Ռուսաստանին, որը հայտնում է իր դժգոհությունը: Այդ համաձայնագրի մասին Սազոնովին ուղարկված անգլիական և

⁸ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 16:

ֆրանսիական դեսպանությունների գրությունից պարզ երևում է, որ այնտեղ Հայաստան կամ Հայկական հարց եզրույթներն իսպառ բացակայում են⁹:

1916 թ. մարտի 12-ին Սայքսը Ռուսաստանում Անգլիայի դեսպան Բյուքենին գրում է, որ անհնար է հայկական պետության ստեղծումը և Հայաստանի հանձնումը Ռուսաստանին¹⁰: Ռուսաստանին էին տրվում Էրզրումը, Տրապիզոնը, Վանը և Բիթլիսը, Կ. Պոլիսը՝ նեղուցներով, ինչպես նաև Քրդստանի մի մասը («դեղին» գոտի): Ձգտելով տիրանալ այդ տարածքներին՝ Ռուսաստանը կեղծ հայտարարում էր, որ. «ինք կը պայքարի իբրև թե քրիստոնեաները ազատագրելու համար Թուրքիոյ մահմեդական լուծէն»¹¹: Իսկ արևելյան Սիրիան և Մուսուլը մտնում էին Ֆրանսիայի ազդեցության ոլորտի մեջ (A գոտի), Անդրհորդանանը և Բաղդադի վիլայեթի հյուսիսային մասը՝ Անգլիայի ազդեցության ոլորտի մեջ (B գոտի)¹²: Ահա այս պայմաններում, մանավանդ որ Ռուսաստանն արդեն ցրել էր կամավորական գումարտակները, Պողոս Նուբարը հայության նկատմամբ դավադրության հեղինակներից Մարկ Սայքսի հետ Լոնդոնում 1916 թ. հոկտեմբերի 27-ին համաձայնագիր է կնքում Արևելյան լեգեոն կազմավորելու մասին, որը հետո կոչվեց Հայկական: 1916 թ. նոյեմբերին ֆրանսիական կառավարությունը սահմանում է կամավորության սկզբունքները, որոնց համաձայն լեգեոնական կարող էին դառնալ միայն հայերն ու արաբները, իսկ հրամանատարները լինելու էին ֆրանսիացիները, որոնք էլ հոգալու էին ֆինանսական ծախսերը: Հայ լեգեոնականները ֆրանսիական զորքերի կազմում պետք է մասնակցեին թուրքերի դեմ մարտերին, որի դիմաց Ֆրանսիան խոստանում էր պատերազմից հետո ինքնավարություն տալ Կիլիկյան Հայաստանին, ինչպես նաև Խարբերդին, Դիարբեքիրին և Սեբաստիային¹³:

⁹ Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 381-384, նաև՝ **Մելիքյան Վ.Հ.**, 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997, էջ 157:

¹⁰ Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 386:

¹¹ **Տերտերյան Ի.**, Հայկական գոյամարտը, հ. 6, Թեհրան, 1957, էջ 157:

¹² Տե՛ս **Արզումանյան Մ.**, Հայաստան 1914-1917, Երևան, 1969, էջ 674:

¹³ Տե՛ս **Ներսիսեան Ա.**, Մովսէս Տէր Գալուստեան, Երեւան, 2011, էջ 103, նաև՝ **Պոյաճեան Տ.**, Հայկական Լեգեոնը, Ուօթթաուն, 1965, էջ 9-10, **Ավետիսյան Մ.**, Հայ ազատագրական ազգային յինամեա (1870-1920) յուշամատեան եւ Զօր.Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 474-494, **Սահակյան Ռ.Գ.**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 113-114:

Հայկական լեգեոնի ստեղծումը հիմնականում նպատակաուղղված էր ֆրանսիական կառավարության բարյացակամության ձեռք բերմանը, որի մասին են վկայում մեր ձեռքի տակ գտնվող փաստաթղթի հետևյալ տողերը. «Կիլիկյան կամավորական շարժումով մենք դեռևս կապված ենք ֆրանսիական կառավարության հետ, առանց որին դիմելու ներկա քաղաքական պայմաններում անհնարին է իրականացնել որևէ գործողություն»¹⁴:

Հետաքրքիր դիտարկումներ է կատարել Ս. Պողոսյանը, որը հիմնավորում է այն տեսակետը, որ Պողոս Նուբարն արդեն 1916 թ. դեմ էր կամավորական նոր զորամաս ստեղծելու գաղափարին, բայց «ֆրանսիական իշխանությունները կարողացան համոզել Պ. Նուբարին համագործակցել Կիպրոսում հայկական զորամաս կազմավորելու հարցում՝ սպառնալով, որ հակառակ պարագայում այն կստեղծեն առանց հայ գործիչների հետ համագործակցության, իսկ հայերը ինքնավարություն պահանջելու իրավունք չեն ունենալ»:

Պողոս Նուբարը պարտադրված էր համագործակցել Ֆրանսիայի հետ»¹⁵:

Համընդհանուր հուսախաբության պայմաններում վրա հասավ ռուսական Փետրվարյան հեղափոխությունը, որը ձախողեց ցարական իշխանությունների՝ մարտ ամսին ծրագրած հարձակումը, որի «նպատակն էր Երզնկայէն առաջանալ Խարբերդ-Սեբաստիա, Խնուսէն իջնել Տիգրանակերտ, իսկ Պարսկաստանի եւ Վանի գծէն մտնել Մուսուլ եւ այդ կողմէն միանալ անգլիական բանակին»¹⁶:

Բացի սրանից, Փետրվարյան հեղափոխությունն իր հետ հայության համար բերեց մտավախություն, որ կարող է քայքայվել ռուսական ռազմաճակատային գիծը, և իսպառ վերանան հայության երազանքները՝ կապված մասնավորապես Արևմտյան Հայաստանի վերաշինության հետ:

ՀՍԴԿ-ը, հանձին Ա. Դարբինյանի, գտնում էր, որ այդ հեղափոխությունը ձեռնտու չէր հայ ժողովրդին, քանզի որքան երկար մնար ցարական իշխանությունը, այնքան ռուսական բանակն էլ ավելի շատ հայկական հողեր կգրավեր և Ռուսաստանի տիրապետության ներքո կմիացներ Արևելյան Հայաստանին:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 729, թ. 6:

¹⁵ Պողոսյան Ս., Գևորգ կաթողիկոսի և Պողոս Նուբարի նամակագրությունը, «Էջմիածին», 2013, թիվ 4, էջ 54:

¹⁶ Սասունի Կ., Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 137:

Միայն հնչականներն էին, որ Փետրվարյան հեղափոխությունն ընդունեցին մեծ ոգևորությամբ՝ կարծելով, որ հեղափոխությունն իրական ճանապարհ կարող է հարթել Ռուսաստանում հակամիապետական և ժողովրդավարական քաղաքական ուժերի համար, որը կբարելավեր նաև Ռուսաստանի կազմում գտնվող մյուս ազգերի վիճակը:

Փետրվարյան հեղափոխության կողմնակից էր նաև Անդրանիկը հայտարարելով, որ «...Մենք կհավատանք, որ ազատ Ռուսաստան մը պաշտպան պիտի հանդիսանա մեր արյան և անդարմանելի կորուստներու հարկին և հատուցանել պիտի տա մեր դարավոր թշնամին՝ Օսմանյան պետության»¹⁷:

Հայտնի է, որ հեղափոխությունից հետո Անդրկովկասի համար կազմվեց հատուկ իշխանություն՝ ՕՂԱԿՕՄ (Անդրկովկասյան հատուկ կոմիտե)՝¹⁸, որի նախագահն այսուհետև կոչվելու էր «Կովկասում ժամանակավոր կառավարության Գերագույն կոմիսար», որին տրվում էին նախկին փոխարքաների իրավունքները, իսկ Օզակոմի անդամները դառնալու էին Գերագույն կոմիսարին կից վարչական խորհրդի անդամներ: Ստեղծվելու էր նաև մի լրացուցիչ պաշտոն՝ «Պետրոգրադում Կովկասի գործերի կոմիսար», որը պետք է կարգավորեր «Կովկասում ժամանակավոր կառավարության Գերագույն կոմիտեի» և ժամանակավոր կառավարության հարաբերությունները¹⁹: Արևմտյան Հայաստանի համար էլ 1917 թ. ապրիլի 26-ի կարգադրությամբ ստեղծվեց առանձին կարգավիճակ՝ Գեներալ-կոմիսարություն: Դրանով այն առանձնացվում էր կովկասյան քաղաքացիական և զինվորական իշխանությունների տնօրինությունից և անմիջապես ենթարկվում ժամանակավոր կառավարությանը: Նրա կառավարման համար ստեղծվում էր Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարի պաշտոն, որում նշանակվեց գոր. Պ. Ավերիանովը՝ օգնական ունենալով Հ.Հավրիյանին²⁰:

Թուրքահայաստանը բաժանվում էր չորս նահանգների՝ Էրզրումի, Վանի, Տրապիզոնի և Խնուսի: «Ըստ ձեւի, - գրում է Կ. Սասունին, - նշանա-

¹⁷ Մելիքյան Վ., 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997, էջ 20:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 30-31:

¹⁹ Տե՛ս Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. փետրվար), Երևան, 2010, էջ 33:

²⁰ Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 24–25, նաև՝ Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969, էջ 735:

կուած նահանգապետները ռուս էին, անոնց օգնականները հայեր էին եւ ունեին իրենց գրասենեակները: Իսկական նահանգապետները հայերը կըլլային, անմիջական գործի պատասխանատվութիւնը իրենց վրա վերցնելով»²¹:

Ինչպէս տեսնում ենք, նահանգներում գործի գլուխ կանգնած էին հայերը:

Փետրվարյան հեղափոխութունից մինչև Հոկտեմբերյան հեղափոխութունը արևմտահայ և արևելահայ գործիչներն Արևմտյան Հայաստանի նկատմամբ որդեգրած ծրագրերում միական էին: Այդ ծրագրերն ունեին հետևյալ ուղղվածությունները.

1. հաղթող դուրս գալ միջցեղային կոիվներում, հայացնել Արևմտյան Հայաստանը:
2. Ստեղծել զինված կազմավորումներ՝ ռուսական զորքերի հնարավոր նահանջի դեպքում թուրքերին դիմադրելու համար:

Այս խնդիրներն իրականացնելու համար գրավված վայրերում աշխատում էին բազմաթիվ մշակութային և բարեգործական կազմակերպություններ՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Եղբայրական օգնության կոմիտեն, Քաղաքների միությունը, Մոսկվայի հայկական կոմիտեն և այլն: Կատարված եռուն աշխատանքների շնորհիվ հայրենիք վերադարձած արևմտահայության բեկորները վերականգնում էին իրենց օջախները:

Արևմտյան Հայաստանի վերականգնման և արևմտահայ գաղթականների խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ եղեռնից փրկված արևմտահայ քաղաքական առաջնորդների նախածեռնությամբ 1916 թ. մայիսի 10-13-ը Պետրոգրադում տեղի ունեցավ հայկական համագումար: Այն թերևս հայկական առաջին համաժողովն էր, որը նվիրված էր հայկական խնդրին: Վերջինիս կարևորությունը եղավ այն, որ ռուս հասարակությունը տեղեկացավ հայ ժողովրդի տառապանքներից, ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում, որտեղ ապաստան էր գտել արևմտահայ գաղթականության մի ստվար հատված: Անվանի հայագետ Ալեքսեյ Զիվելեգովն այս համագումարի մասին արտահայտել է իր կարծիքը հետևյալ կերպ. «Համատեղ աշխատանքը կայացավ. հարկավոր է ավելի վճռական քայլ դեպի այդ ուղին: Այդ է պահանջում Հայաստանի շահը»²²:

²¹ Սասունի Կ., Պատմութիւն Տարոնի աշխարհի, Պէրոպ, 1956, էջ 1050:

²² Մելիքյան Վ., Հայկական հարցը և հայ հասարակության ինքնակազմակերպման խնդրի փուլերը, Գիտագործնական միջազգային գիտաժողով «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրը». 18-19 ապրիլի 2008: Արևմտահայության պահանջ

1917 թ. մայիսի 2-ին Երևանում գումարվում է արևմտահայերի առաջին համագումարը: Այն նախաձեռնել և հրավիրել էր Թիֆլիսում գտնվող արևմտահայերի հրապարակային մի ժողովի ընթացքում ստեղծված հանձնաժողովը, որի մեջ մտնում էին Արամը, որը թեպետ արևելահայ էր, սակայն 1905–1908 թթ. և 1915 թ. գործել էր Վանում, Վ. Փափազյանը և Անդրանիկը: Համագումարը բացահայտեց արևմտահայ և արևելահայ խորացող առճակատումը, ինչը դրսևորվեց Արևմտահայ ազգային խորհրդի ստեղծումով՝ ՀՅԴ գերակշռությամբ: Այս առումով Արտակ Դարբինյանն իր անհանգստությունն էր հայտնում Արամ Մանուկյանին՝ Անդրանիկի այն համոզման առթիվ, թե «...կովկասահայ դաշնակցականները պիտի հակառակին տաճկահայերու որևէ ձեռնարկին, եթե իրենք ղեկավարողի դերին մեջ չգտնուին»²³: Համագումարում ելույթ ունենալով՝ Արամն իր հերթին առաջարկեց. «...համագումարի և ժողովականներու կողմէ ողջոյններ ուղարկել դաշնակից և չէզոք պետութիւններուն, հայասէր ընկերութիւններու և անհատներու, ինչպէս նաև Պօղոս Նուպարին»²⁴:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին 80-ից ավելի պատգամավորներ: Արևմտյան Հայաստանից եկել էին 15 պատգամավոր (որոնցից չորսը ուսման վարձեր էին՝ Ա.Դարբինյան, Վ.Պապիկյան, Ա.Թերզիպաշյան, Ն.Հակոբյան), 27-ը՝ Կովկասի արևմտահայ գաղթականներից էին, 14-ը՝ տարբեր ընկերություններից, 3-ը՝ մամուլի ներկայացուցիչներ, 6-ը՝ ծայնի իրավունքով, 11-ը՝ խորհրդակցական ծայնով հրավիրվածներ, իսկ 8-ը՝ տարբեր կուսակցություններից²⁵:

Համագումարի օրակարգում դրված էին հետևյալ հիմնական խնդիրները:

Առաջին. արևմտահայ գաղթականության ֆիզիկական պահպանություն:

Երկրորդ. Արևմտյան Հայաստանի շենացում և հայությանը վերաբնակեցում:

ջատիրության հիմնախնդիրները, Կիպրոս-Նիկոսիա. 18-19 ապրիլի 2008, տե՛ս Գիտական զեկուցումների ժողովածու, Երևան, 2009, էջ 161:

²³ Նույն տեղում, էջ 162:

²⁴ «Հայաստան» օրաթերթ, Թիֆլիս, 1917, մայիսի 7, թիվ 18:

²⁵ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1917, մայիսի 17, թիվ 101, նաև՝ **Փափազյան Վ.**, իմ Յուշերը, հ. երկրորդ, Պեյրուֆ, 1952, էջ 439, **Վրացեան Ա.**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 28, **Ներսիսյան Ա., Սասունի Կ.**, Երևան, 2004, էջ 100, **Չորմիսեան Լ.**, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Գ, Պեյրուֆ, 1975, էջ 270:

Երրորդ. նոր սերնդի կրթական, ֆիզիկական և քաղաքացիական դաստիարակություն:

Համագումարը գաղթականության խնդրի հետ կապված որոշում է. «ա) Գաղթականության բոլոր աշխատանքները կենտրոնացնել մէկ մարմնի ձեռքը: ք) Ստեղծել Արեւմտահայ խորհուրդ մը, որ գերազանցապէս այդ գործով զբաղվի: գ) Այդ մարմինը պէտք է ճանաչվի որպէս միակ ներկայացուցիչը ամբողջ արեւմտահայերու եւ իր քոնթրոլը պիտի ունենա բոլոր այն գործերու վրա, որոնք տնտեսական, որբանոցային եւ գաղթականական անվան տակ կրնան կապ ունենալ թրքահայերուն հետ»²⁶:

Այսպիսով, բոլոր այն կազմակերպությունները, որոնք զբաղվում էին գաղթականության խնդիրներով, պէտք է ունենային իրենց վերադաս մարմինը, որը վերահսկելու էր նրանց գործունեությունը՝ տալով դրանց հստակ ուղղվածություն, և այդ մարմինն էր լինելու արևմտահայության միակ ներկայացուցիչը: **Ստացվում է, որ ստեղծվում էր արևմտահայերի նաև քաղաքական ձգտումներն արտահայտող և կյանքի կոչող մարմին, քանի որ Արևմտյան Հայաստանում գաղթականության տեղավորմամբ լուծվում էր նաև կարևորագույն քաղաքական խնդիր. հայացվում էր այն:**

Երկրի հայացման և շենացման համար նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

«Պատրաստություն տեսնել պատերազմն անմիջապես վերջ երկիր փոխադրելու Կովկաս ապաստանած թյուրքահայ փախստականությանը:

Հայրենիք վերադարձնել Ամերիկայի, Եգիպտոսի, Պալքաններու եւ արաբներու մեջ ցրված հայերը:

Հրավիրել ռուս կառավարության ուշադրությունը, որպեսզի հնարավորության չափով շուտ վերացվեն բոլոր այն ճնշիչ պայմանները, որոնք ստեղծել է նախկին ռեժիմը հողային եւ այլ վարչական–հասարակական խնդիրներու մեջ: Այս բոլոր նպատակների իրականացման համար ստեղծել հավաքական կազմակերպություն մը»²⁷:

Համագումարը նաև արձանագրում է, որ չնայած իր նպատակն է Հայկական դատի հետապնդումը, բայց քանի որ «այդ խնդիրը քաղաքական բնույթ ուներ, բաղձանք հայտնեց, որ Արեւմտահայ խորհուրդն ինքզինք չնկատէ քաղաքական մարմին մը Հայկական դատը հետապնդելու առանձնապէս,

²⁶ **Սասունի Կ.**, Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 149:

²⁷ «Հորիզոն», Թիֆլիս, 1917, մայիսի 20, թիւ 104:

այլ քաղաքական կուսակցություններու եւ համազգային քաղաքական մարմիններու միջոցով ձգտի հասնելու իր բաղձանքներուն»²⁸:

4. Սասունու այս վկայությունը հաստատում է մի կարևոր ճշմարտություն. **այդ օրերին արևմտահայ և արևելահայ քաղաքական միտքը միաձուլված էր, քանզի երկուսն էլ մեկ ուղղվածությամբ էին գործում՝ վերաշինել Արևմտյան Հայաստանը:**

Համագումարն ընտրում է Արևմտահայ խորհուրդը՝ բաղկացած 15 հոգուց՝ Անդրանիկ, Սեպուհ, Սմբատ Բորոյան, Հ. Գալիկյան, Ա. Դարբինյան, Զաբել Եսայան, Ավ. Թերզիպաշյան, Գ. Հայկունի, Հմ. Մանուկյան, Լ. Շանթ, Վ. Պապիկյան, Բոնապարտյան, Կ. Սասունի, Հ. Տեր-Զաքարյան, Վ. Փափազյան:

Խորհրդի անդամներից ընտրվում է գործադիր մարմին՝ Բյուրո, որի մեջ մտնում են Վ. Փափազյանը, Կ. Սասունին, Ա. Դարբինյանը, Հ. Տեր-Զաքարյանը և Գ. Գալիկյանը: Ահա այս Բյուրոն էր արևմտահայերի քաղաքական շահերի ներկայացուցիչը և քաղաքական խնդիրներ լուծողը 1917 թ. սեպտեմբերից հետո արդեն համախորհուրդ արևելահայերի՝ Թիֆլիսում գումարած համագումարի կողմից ստեղծված հայոց Ազգային խորհրդի հետ:

Համագումարից հետո, որն ավարտվեց մայիսի 11-ին, Արևմտահայ բյուրոն աստիճանաբար մասնաճյուղեր կազմակերպեց թե՛ գրավված տարածքներում և թե՛ Կովկասի զանազան վայրերում:

Կուզենայինք նաև ավելացնել, որ արևմտահայության համախմբման տեսանկյունից կարևոր նշանակություն է ունենում 1917 թ. մայիսի 11-ին կայացած Դաշնակցության թուրքահայ հատվածի ռայոնական ժողովը, որը Երևանի թեմական դպրոցի դահլիճում բացում է Ռոստոմը: Ժողովն ընդունում է բանաձև Թուրքահայաստանի գրավված տարածքների նախկին և ապագա վարչակազմի մասին՝ շեշտելով, որ «...պատերազմի տևողության ամբողջ ընթացքին անհրաժեշտ ըլլալով գործակցությունը զինվորական տարրերու հետ՝ կը հրահանգե երկրի դաշնակցական մարմիններուն եւ ընկերներուն ամեն կերպ օժանալ, որ ստեղծվեն տեղական ժողովրդի կողմն ընտրված վստահելի տարրերէ վարչություններ, որոնք նպատակ ունենան աջակցելու պատերազմական գործողության հաջողության եւ երկրի վերաշինության գործին»²⁹:

²⁸ **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 149:

²⁹ «Հորիզոն», Թիֆլիս, 1917, հունիսի 18, թիւ 126:

Այս որոշումը կարևոր էր նրանով, որ գրավված Արևմտյան Հայաստանում գրեթե գոյություն չունեին գործադիր մարմիններ:

Քանի որ մեր նպատակն արևմտահայ քաղաքական մտքի զարգացման տրամաբանության բացահայտումն է, ավելորդ ենք համարում մանրամասնել այն վերաշինության և կազմակերպչական աշխատանքները, որոնք իրականացվում էին դեռևս 1916 թ. Վասպուրականում, Տարոնում, Երզնկայում, Բաբերդում, Բասենում, Ալաշկերտում և այլուր, և որոնց արդյունքում իսկապես դրվում էին հայոց պետականության հիմքերը³⁰:

Թվում էր, թե անպատմելի տառապանքներից հետո արդեն վերջնականապես լուծվելու էր Արևմտյան Հայաստանի խնդիրը, թեպետ դեռևս հստակ չէր, թե նա, ի վերջո, ինչպիսի կարգավիճակ պետք է ստանար նոր, ցարական կարգերից զերծ Ռուսաստանում, երբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը, որից հետո արևմտահայերի քաղաքական մտքի նոր ուղղորդվածություններին կփորձենք անդրադառնալ հաջորդ գլխում:

Այսպիսով, 1915 թվականից մինչև 1917 թվականի համար ավելի ճիշտ կլինի խոսել առանձին արևմտահայերի քաղաքական մտքի մասին միայն: Կարծում ենք, որ արևմտահայերի և արևելահայերի քաղաքական մտքի ուղղվածությունը ռուսական բանակի կողմից արևմտահայ գրավված տարածքներում նպատակաուղղված էր հիմնականում այդ տարածքների վերաշինմանն ու հայացմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

1915 թ. Հայոց ցեղասպանության հետևանքով արևմտահայ քաղաքական միտքը նոր դրսևորում ստացավ: Եվ սա այն հասկանալի պատճառով, որ ցեղասպանությունը սկսվեց արևմտահայ մտավորականների ձերբակալությամբ, աքսորով և սպանով: Երբ 1914 թ. նոյեմբերի 11-ին Թուրքիան պա-

³⁰ Այդ աշխատանքների մասին տե՛ս **Սասունի Կ.**, Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918), **Սեպուհ**, Էջեր իմ յուշերէն, հ. Ա, Պոսթըն, 1925, **Փավագեան Վ.**, Իմ յուշերը, հ. երկրորդ, Պոսթըն, 1952, «Վասպուրական», Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնհինգամյակի առթիվ (1915-1930), Վենետիկ, 1930 և այլն, **Ներսիսյան Ա.**, **Սահակյան Ա.** (Հայր Աբրահամ), Երևան, 2006, նույնի՝ Չորավար Սեպուհ, Երևան, 2005, նույնի՝ Կարո Սասունի, Երևան, 2004, **Հարությունյան Ա.**, Անվտանգության ապահովումը և վերաշինության գործի ընթացքը Վան-Վասպուրականում 1916թ. վերջերին և 1917թ. սկզբներին, «Ակունք». գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, թիվ 2(5), էջ 19-25:

տերազմի մեջ մտավ Ռուսաստանի հետ, նա արդեն մտահոգված էր ոչ թե բարեփոխումների խնդրով, այլ Արևմտյան Հայաստանի գրավմամբ:

Կարծում ենք, որ 1915 թ. ապրիլից այլևս անհնար էր որոնել և գտնել արևմտահայ մեկ ընդհանուր ուղղվածությամբ քաղաքական միտք, քանզի ոչնչացվում էին և՛ հայ ժողովուրդը, և՛ հայ առաջնորդները:

Իսկ 1916 թ. երկրորդ կեսից Պողոս Նուբարը, հենվելով Անգլիայի և Ֆրանսիայի խոստումների վրա, 1914-1918 թթ. ստիպված ճաշակեց այն խաբկանքը, որը հայ քաղաքական շրջանակները ճաշակել էին Ռուսաստանից: Վերջինս Լոնդոնում Մարկ Սայքսի հետ 1916 թ. հոկտեմբերի 27-ին համաձայնագիր է կնքում Արևելյան լեզեոն կազմավորելու մասին, որը հետո կոչվեց Հայկական: Ֆրանսիական իշխանությունները կարողացան համոզել Պ. Նուբարին համագործակցել Կիպրոսում հայկական զորամաս կազմավորելու հարցում՝ սպառնալով վերջինիս:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի համար կազմվեց հատուկ իշխանություն՝ ՕԶԱԿՕՄ (Անդրկովկասյան հատուկ կոմիտե), իսկ Արևմտյան Հայաստանի համար 1917 թ. ապրիլի 26-ի կարգադրությամբ ստեղծվեց առանձին կարգավիճակ՝ Գեներալ-կոմիսարություն:

Այսպիսով, կարծում ենք, որ 1915 թվականից մինչև 1917 թվականի համար ավելի ճիշտ կլինի խոսել միայն առանձին արևմտահայերի քաղաքական մտքի մասին:

Քանալի բաներ – քաղաքական միտք, հայկական լեզեոն, հեղափոխություն, արևմտահայ, Արևելյան լեզեոն, Արևմտյան Հայաստան, ձերբակալություն, մտավորականներ:

ЗАПАДНОАРМЯНСКАЯ ПОЛИТИЧЕСКАЯ МЫСЛЬ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

СИМОНЯН АСМИК

В результате армянского геноцида 1915 года западноармянская политическая мысль получила новое содержание. И это по той ясной причине, что геноцид начался с ареста, изгнания и убийства западноармянских интеллигентов. Когда 11 ноября 1914 года Турция начала войну с Россией, она уже была озабочена не проблемой реформ, а захватом Западной Армении.

Мы думаем, что начиная с апреля 1915 года было уже невозможно для западноармянской политической мысли искать и найти одну общую ориента-

цию, ибо уничтожались и люди, и лидеры. Вот это и есть историческая правда.

А со второй половины 1916 года Погос Нубар, полагаясь на обещания Англии и Франции, в 1914-1918 годах вынужден был вкусить тот обман, который армянские политические круги вкусили от России. Последняя 27 октября 1916 года в Лондоне вместе с Марком Сайксом подписала соглашение о формировании Восточного легиона, который позже назывался Армянский. Французскому правительству удалось убедить Погоса Нубара сотрудничать в создании на Кипре армянской войсковой части, угрожая ему.

После Февральской революции для Кавказа было сформировано специальное правительство ОЗАКОМ (Закавказский специальный Комитет), а для Западной Армении по приказу от 26 апреля 1917 года был создан Генеральный комиссариат.

С Февральской революции до Октябрьской революции западноармянские и восточноармянские деятели действовали единогласно в принятых программах, которые относились к Западной Армении.

Таким образом, мы считаем, что для 1915 – 1917 годов будет правильно говорить только отдельно про западноармянскую политическую мысль.

Ключевые слова – политическая мысль, Армянский легион, революция, западный армянин, Восточной Легион, Западная Армения, арестован, интеллигенция.

WEST-ARMENIAN POLITICAL SAVVY DURING THE FIRST WORLD WAR

HASMIK SIMONYAN

As a result of the Armenian genocide in April 1915 the West-Armenian political thought received a new reaction as the genocide started with the arrest, exile and slaughter of West-Armenian intelligentsia. When Turkey started the war with Russia in November 11, 1914 its main concern was not the reforms but the occupation of Western Armenia.

We are of the opinion that starting with April 1915 it was no longer possible to find Western Armenian politicians having a common orientation because the Armenian people with its leaders were being eliminated.

However, from the second half of 1916 Poghos Noubar betrayed by Britain and French promises was experiencing deception of the same kind as other Armenian political circles betrayed by Russia in the 1914-1918 had been

experiencing. In October 27, 1916 Noubar in London signed an agreement with Mark Sykes about the formation of the Eastern legion, later called Armenian. The French government managed by threats (not allowing the formation of Armenian autonomy) to convince Poghos Noubar to collaborate with them to establish Armenian military unit in Cyprus.

After the February Revolution a special authority organization for the Caucasus, OZAKOM (Transcaucasian Special Committee) was established - and General-Commissariat, a separate status for Western Armenia was as well established by the order of April 26, 1917.

Thus, we think that for the years from 1915 to 1917 years it will be appropriate to talk only about individual West-Armenians' political thoughts.

Key words – political thought, Armenian Legion, revolution, Western Armenian, Eastern Legion, Western Armenia, arrest, intelligentsia.

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՍԻՍԻԱՆՈՒՄ. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դեռ հին ժամանակներից Հայաստանը հետաքրքրել է օտարերկրյա ճանապարհորդներին, պատմիչներին, մշակույթի տարբեր ոլորտների ներկայացուցիչներին, որոնք իրենց նոթերում և տարբեր հրապարակումներում բազում հիացական կարծիքներ և նկարագրություններ են թողել մեր երկրի ու նրա բնակիչների մասին: Բայց որքան էլ պատկերավոր լինեն դրանք, Հայաստանի տարբեր մարզերի առանձնահատկությունները կարելի է զգալ միայն անմիջական այցելության ընթացքում՝ հաղորդակցվելով յուրօրինակ բնությանը, մշակույթին ու մարդկանց: Ցավոք, մինչ օրս մեր երկրի առանձին մարզերի հնարավորությունները զբոսաշրջության մշակույթի զարգացման դիտանկյունից համակողմանի քննության չեն առնվել: Այդ պատճառով ներքին և արտաքին զբոսաշրջիկների համար նախատեսված առաջարկների փաթեթները հիմնականում միօրինակ են և չեն բացահայտում տեղական մշակույթի առանձնահատկությունները:

Այս հոդվածում քննարկելու ենք Հայաստանում զբոսաշրջության զարգացման խնդիրների վերաբերյալ մեր նկատառումները Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում կատարած ուսումնասիրությունների հիման վրա: Հոդվածի նպատակն է ներկայացնել քաղաքի զբոսաշրջային բնութագիրը, զարգացման հնարավորությունները, ներքին և արտաքին զբոսաշրջության համար մշակութային արժեք ներկայացնող վայրերը զբոսաշրջության ընդհանուր գործընթացների համատեքստում:

Մարզի բնակիչների, զբոսաշրջիկների, ինչպես նաև ոլորտի պատասխանատուների և սպասարկման ոլորտ ներգրավված (հյուրանոց, ռեստորան, սրճարան, թանգարան) մասնագետների հետ ունեցած խորացված հարցազրույցների և 2 տարվա բնակության ընթացքում, անձնական դիտարկումների արդյունքները համադրելով համապատասխան գրականության տվյալների հետ՝ կփորձենք հասկանալ, թե ինչով կարող է գրավիչ լինել Հայաստանի հարավային թևը, հատկապես Սյունիքի մարզը:

Նախ՝ հակիրճ ներկայացնենք մարզի ընդհանուր բնութագիրը: Այն

գտնվում է ՀՀ տարածքի հարավում¹ Որոտան գետի ափերին՝ ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա՝ Երևանից 217 կմ հեռավորությամբ՝ Երևան-ԼՂՀ, Երևան-Իրան ավտոմայրուղուց 6-7 կմ հարավ: Մարզի սահմանի մոտ տեղադրված է եռալեզու պաստառ՝ «Սիսիանը ողջունում է ձեզ»:

Սիսիանի շրջանը ճանաչված է գեղատեսիլ բնությամբ և հինավուրց մշակութային ժառանգությամբ: Դրանց շարքում են անկրկնելի Շաքիի ջրվեժը, Որոտանի կիրճը, լեռնային ջրամբարները, նախաքրիստոնեական սրբավայր-աստղադիտարան Ջորաց քարերը²: Տարածաշրջանը հարուստ է նաև լեռնային գետերով, որոնք բոլորն էլ Որոտանի ավազանին են պատկանում: Առավել հայտնի են Որոտան, Այրի, Բռնակոթ, Սիսիան, Արագլիջուր, Շաքի, Լորագետ, Շաղատ գետերը:

Եկվորներին գրավում է Սիսիանի ճանապարհի ձախ կողմում նուրբ ծաղիկներով և եղևնիներով ձևավորված բացօթյա սրճարանը՝ «Կանթեղը», որից ոչ հեռու տեղակայված է կենդանաբանական այգին: Այս գողտրիկ սրճարանում ամռան ամիսներին զբոսաշրջիկների պակաս չի զգացվում:

Մարզկենտրոնը Սիսիան քաղաքն է: Այստեղ գործում է հինգ միջնակարգ և մեկ երաժշտական դպրոց: Քաղաքի մշակութային առանցքը կենտրոնում կառուցված պատմության թանգարանն է՝ պատմահնագիտական և ազգագրական ցուցանմուշների բազմաբնույթ հավաքածուով և Քարադարանով (քարե կոթողների հարուստ հավաքածու): Թանգարանը կրում է հայ անվանի պատմաբան, բյուզանդագետ (ծագումով Սիսիանի Բռնակոթ գյուղից) Նիկողայոս Ադոնցի անունը: Թանգարանը գործում է ՀՀ մշակույթի նախարարության համակարգում և ՀՀ մարզերում գործող լավագույն թանգարաններից է: Այստեղ պահվում և ցուցադրվում են միայն Սիսիանի տարածաշրջանը ներկայացնող մշակութային արժեքները: Տեղացիների և հյուրերի տարբեր տարիքային խմբերի նախասիրությունները հաշվի առնելով՝ թանգարանի փորձառու աշխատակիցները կարողանում են հարուստ հավաքածուի, հիմնական և ժամանակավոր ցուցադրությունների, ինչպես նաև բազմաբնույթ միջոցառումների ու կրթամշակութային ծրագրերի շնորհիվ այն վերածել իրական մշակութային կենտրոնի: Տարածքի ավանդական և ժամանակակից մշակույթը ներկայացնող բազմաբնույթ և ինքնատիպ նախագծերը նպաստում են ոչ միայն աշխարհի տարբեր երկրներից ժամանող զբոսաշրջիկների շրջա-

¹ Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Երևան, 2003, էջ 875:

² <http://www.encyclopedia.am/>.

նում մարզի նկատմամբ հետաքրքրությունն ակտիվացնելուն, այլև ՀՀ-ում ներքին զբոսաշրջության զարգացմանը: Հակիրճ անդրադառնանք իրականացված ծրագրերից մի քանիսին:

Սյունիքի մարզը հարուստ է ժողովրդական տոներով ու ծեսերով, ավանդական արհեստներով, ազգային կերակուրների տեղական տարբերակներով: Ինչպես հիշատակում է Ստեփան Լալայանն իր «Ջանգեզուրի հայերը» գրքում. «Ջանգեզուրի հայի սեղանը առատ պիտի լինի»: Ջանգեզուրցին խոսքի ճշմարտության վկա է կանչում հացը՝ նրա վրա դնելով ձեռքը. «Էս հացը վկա»³: Սիսիանցիները զբոսաշրջիկներին մեծ սիրով են հրավիրում մասնակցելու իրենց տոներին, որոնցից հատկապես ուշագրավ է Հացի տոնը: Եվրոպական ժառանգության օրերի շրջանակներում այն մեծ շուքով է կազմակերպում Սիսիանի Նիկողայոս Ադոնցի անվան թանգարանը: Տոնը մեկնարկում է «Քասեն» հյուրանոցից⁴: Ներկայացվում է լավաշ թխելու ողջ գործընթացը, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում եվրոպացի շրջանում: Հացն օրհնում է Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետը: Ուսումնասիրության ընթացքում ներկա եղանք այդ տոնին: Հաճելի էր տեսնել, թե ինչպես են զբոսաշրջիկները հետաքրքրվում տոնի խորհրդով, ոգևորվում ու ներգրավվում տոնական արարողությունների ու ժամանցի մեջ. փորձում են պարել հայկական շուրջպարեր, սիրով հյուրասիրվում են, ապա, որպես հիշատակ՝ իրենց հետ տանում Քարադարանի վաճառակետում ներկայացվող հուշանվերները:

Պարբերաբար նշվում են նաև բնության զարթոնքին ու պտղաբերությանը նվիրված բնապաշտական արմատներ ունեցող քրիստոնեական տոները: Այս տարի Ծաղկազարդի տոնը զբոսաշրջիկներին ներկայացնելու դերը ստանձնել էին դպրոցականները, որոնք հաճույքով պատմում էին տոնի առանձնահատկությունների և ծիսական ավանդույթների մասին: Վարդավառի, Խաղողօրհնեքի տոնակատարություններին ևս բազմաթիվ զբոսաշրջիկներ են մասնակցում և վայելում տոնին բնորոշ ջերմ մթնոլորտը, երգը, պարն ու հյուրասիրությունը: Մի քանի օր հյուրընկալվելով շրջանում՝ նրանք հնարավորություն են ստանում առավել համակողմանի ընկալելու մեր պատ-

³ Լիսիցյան Ստ., Ջանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 220:

⁴ Սիսիանում զբոսաշրջիկների նախընտրելի հյուրանոցներից է, որտեղ շեշտը դրված է ազգային արժեքները ներկայացնելու վրա: Ամբողջ սպասքը հայկական նախշազարդերով է, որի հեղինակը ծնունդով սիսիանցի նկարիչ - դիզայներ Զարա Գալստյանն է:

մույթունը, ավանդական ու ժամանակակից մշակույթը և այն ստեղծող մարդկանց:

Թանգարանցիների կազմակերպած հաջորդ տոնական միջոցառումը կրում էր «Մշակույթը՝ պատվար» խորագիրը: Ավանդական արհեստները երիտասարդ մասնակիցներին առավել ճանաչելի դարձնելու նպատակով կազմակերպիչները կարծես հեքիաթային աշխարհ էին ստեղծել, որտեղ տարբեր բնակավայրերից եկած մանուկներն առաջին անգամ փորձում էին «լեզու գտնել» կավի հետ, սովորում էին պատրաստել ավանդական կենցաղում տարածված աղամաններն ու ծանոթանում դրանց խորհրդին: Վերջում լավագույն աշխատանքները ներկայացվեցին թանգարանում: Մասնակիցների ոգևորվածությունից կարելի է վստահ ասել, որ այդ օրը ստացած նոր գիտելիքները, հմտություններն ու տպավորությունը կհիշվեն ամբողջ կյանքում:

Տարածքի մշակութային բազմազանությունը տեղացիներին և հյուրերին ներկայացնելու հաջորդ ոլորտը գրականությունն է: Այս անգամ նախապատվությունը տրվել էր ծնունդով սիսիանցի, անվանի բանաստեղծ և մտավորական Համո Սահյանի ստեղծագործությանը, որի ծննդյան 100-ամյա տարելիցն էր: Մեծ ժողովրդականություն վայելող բանաստեղծի ստեղծագործությունները հնչում էին դպրոցականների, համազյուղացիների ու արտիստների կատարումներով՝ իբրև հայրենիքն ու բնությունը փառաբանող ձոն, սիրո ու բարության պատգամ:

Սիսիանում ամեն տարի մեծ շուքով և բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներով են նշում նաև «թանգարանային գիշերը»: Այս նախագիծը տարեց-տարի լայն արձագանք է գտնում թե՛ տեղացիների, թե՛ զբոսաշրջիկների շրջանում: Կարելի է ասել, որ թանգարանի աշխատակիցների ջանքերի և նախաձեռնությունների շնորհիվ տարիքային բոլոր խմբերն էլ սիրով են մասնակցում վերևում նկարագրված տոնակատարություններին ու տարաբնույթ միջոցառումներին:

2014 թ. Սիսիանը հռչակվեց երիտասարդական մայրաքաղաք: Այս շրջանակներում երիտասարդների համար կազմակերպվեցին բազմաթիվ արշավներ, ֆլեշմոբներ, ավանդական շուրջպարերի ուսուցման հրապարակային դասեր: Քաղաքը կարծեք նոր շունչ էր ստանում տոնական մթնոլորտում: Նման միջոցառումները նպաստում են թե՛ տեղացիների, թե՛ եկվորների շրջանում ավանդական մշակույթի վերարժևորմանը, նոր մտահղացումների ու երևակայության խթանմանը: Դրանց շնորհիվ քաղաքում առավել հետաքրքիր ու բազմազան է դառնում ժամանցի մշակույթը, և ավելի անմիջական բնույթ

ստանում տեղացիների հետ եկվորների հաղորդակցությունը՝ վերածվելով մշակութային յուրօրինակ կամուրջների:

Քաղաքում իրականացվող միջոցառումների հակիրճ անդրադարձից հետո փորձեցինք ճշտել նաև տեղացիների վերաբերմունքն ու կարծիքները զբոսաշրջության զարգացմանը միտված նման գործընթացների վերաբերյալ: Զրույցների ընթացքում սիսիանցիների մեծ մասը գտնում էր, որ զբոսաշրջության զարգացումն ու զբոսաշրջիկների թվի աճն իրենց կենցաղի վրա չնչին ազդեցություն են ունենում: Թե՛ կյանքի որակի բարելավման, թե՛ տեղական արտադրանքի զարգացման վրա գրեթե չեն անդրադառնում: Փորձեցինք այդ հարցերը քննարկել Ն. Ադոնցի անվան թանգարանի տնօրենի հետ: Տիկին Ծովինար Պետրոսյանը նշեց, որ հիմնականում զբոսաշրջիկների խմբերն այցելում են ամռան ամիսներին: Գալիս են Իտալիայից, Հունաստանից, Ռուսաստանից, բայց այցելուների թիվը մեծ չէ, և այցելությունները պարբերական բնույթ չեն կրում: Նա դժգոհություն էր հայտնում զբոսաշրջիկներին ուղեկցող զբոսավարների մասնագիտական որակից, քանի որ չեն կարողանում անհրաժեշտ գիտելիքներով ու բովանդակալից ներկայացնել տարածաշրջանի պատմությունն ու մշակութային առանձնահատկությունները, այլ հիմնական շեշտը դնում են զգայականության վրա: Նաև ափսոսում էր, որ զբոսաշրջային գործակալությունները թանգարանը չեն ներառում մշտական երթուղի և տուրփաթեթներ, և այցերը հիմնականում տարերային բնույթ են կրում:

Զբոսաշրջության խնդիրներով զբաղվող մասնագետների հավաստմամբ ցանկացած երկրում ոլորտի զարգացման կարևոր գործոններից է տեղի բնակչության հետ զբոսաշրջիկների փոխհարաբերությունների ներդաշնակությունը: Դրանից բխող խնդիրը տեղացիների կողմից զբոսաշրջությունը տարածքի զարգացման կարևորագույն միջոց ընկալելն է: Այդ հարցում առանցքային նշանակություն ունի բնակիչների բարյացակամ ու պատրաստակամ վերաբերմունքը զբոսաշրջիկների նկատմամբ: Զբոսաշրջիկների հանդեպ սիսիանցիների վերաբերմունքը և զբոսաշրջության զարգացման մասին պատկերացումները գրանցելու, ինչպես նաև մեր անձնական դիտարկումներից ստացած պատկերն ամբողջացնելու նպատակով զրույցներ ենք ունեցել նաև 40 տեղաբնակի (15 արական և 25 իգական սեռի ներկայացուցիչներ) հետ: Հարցազրույցներին մասնակցել են տարբեր տարիքի և մասնագիտության անձինք (դպրոցական, ուսանող, մանկավարժ, բժիշկ, երաժիշտ, տնային տնտեսուհի): Մեր կատարած հարցումներից և անհատական զրույցներից պարզեցինք, որ սիսիանցի դեռահասներն ու երիտասարդները հաճույքով են

հաղորդակցվում զբոսաշրջիկների հետ, հատկապես, երբ հյուրերն իրենց դիմում են լուսանկարելու խնդրանքով: Իսկ միջին և ավագ սերնդի ներկայացուցիչները, ավանդույթի համաձայն, պահպանում են հյուրընկալության կարգը՝ ըստ արժանվույն ընդունելով և ճանապարհելով բոլոր զբոսաշրջիկներին: Սակայն, ցավում են, որ լեզվական խոչընդոտների պատճառով՝ չեն կարողանում լիարժեք հաղորդակցվել օտարերկրացիների հետ: Ի տարբերություն նրանց՝ երիտասարդների մեծ մասը հիմնականում կարողանում է ռուսերենով, անգլերենով, իսկ ավելի սակավ՝ ֆրանսերենով, գոնե կենցաղային մակարդակով, հաղորդակցվել այլազգիների հետ:

Դաշտային հետազոտությունների ընթացքում փորձեցինք իրավիճակը համեմատել Գորիսի շրջանի հետ: Կարելի է փաստել, որ այստեղ բոլորովին այլ պատկեր է: Ե՛վ երիտասարդները, և՛ տարեցները շփվում են զբոսաշրջիկների հետ, ինչպես իրենք են նշում. «ամեն ինչով փորձում ենք օգնել»: Առաջին հերթին դա բացատրվում է նրանով, որ Գորիսի բնակչության մեծ մասը կարողանում է բնակարան կամ սենյակ տրամադրել զբոսաշրջիկներին: Նման ծառայությունը պահանջված է, քանի որ գները հյուրանոցից ավելի մատչելի են: Օտարներին գրավում են նաև տանտերերի ջերմ վերաբերմունքը, ընտանեկան միջավայրը և հյուրասիրությունը: Առաջարկվում են տարածաշրջանին բնորոշ ավանդական ուտելիքներ՝ *ճըխթըթթո՝ բազուկի թթու, թթի օղի, պահածոներ, թանավ՝ սպաս...*): Այդպիսի փոխհարաբերությունները երկուստեք շահավետ և հետաքրքիր են դառնում, նպաստում են միմյանց հետ ավելի սերտ հաղորդակցվելուն, տեղեկություններ փոխանակելուն ու բարեկամանալուն:

Զբոսաշրջիկների կերպարի և վարվելակարգի մասին զրուցելիս սիսիանցիները նշում էին, որ քաղաքը փոքր է, և բոլորը հիմնականում ճանաչում են միմյանց, բնականաբար, եկվորը միանգամից տարբերվում է: Տարբերվում են հագուստի ոճով, պահվածքով, քանի որ ավելի ազատ են, բայց միևնույն ժամանակ՝ քաղաքավարի և բարյացակամ, շատ են սիրում լուսանկարվել, ոտքով զբոսնել: Սակայն, աչքի չեն ընկնում առատաձեռնությամբ: Սիսիանում հայտնի խեցեգործ Վահագնը, որը միշտ ներկայանում է փառատոներին և բավականին հաճախ է շփվում զբոսաշրջիկների հետ, պատմում էր, որ նրանք ժամերով կարող են նայել, շոշափել փոքրիկ նռան տեսքով հուշանվերները, հետաքրքրվել պատմությամբ, իսկ վերջում այն հարցին, թե արդյոք հավանեցի՞ն, գնելու ցանկություն ունե՞ն՝ պատասխանում են, որ կարևորը զգալն է, շոշափելը, և հազվադեպ են գնում այդ բավականին մատչելի հուշանվերները:

Տեղացիների տպավորությամբ զբոսաշրջիկները հիմնականում հիանում են տեղի բնությամբ, մշակույթով: Զրուցակիցներն հպարտությամբ նշում էին. «շատ են սիրում մեր սարերը», և ավստոսանքով հավելում, որ անբարեկարգ ճանապարհների պատճառով միայն չնչին հնարավորություններն են օգտագործվում. օրինակ՝ կարելի է ձիերով արշավ կազմակերպել Ուղտասար, բայց ճանապարհ չկա:

Մեր դիտարկումներից կարող ենք եզրակացնել, որ զբոսաշրջության զարգացմանն ուղղված անելիքներ քաղաքում դեռ շատ կան, և համալիր ծրագրի մշակման կարիք կա: Օրինակ, քաղաքում ժամանցի վայրեր չկան: Ո՛չ ավանդական, ո՛չ ժամանակակից երաժշտություն վայելելու սրահներ չկան: Երեկոյան ժամերին Սիսիանում հազվադեպ կարելի է հանդիպել զբոսնող մարդկանց, քանի որ այգիներ ու զբոսավայրեր չկան: Քաղաքում մշակութային հարուստ կոլորիտ ստեղծելու խնդիր կա: Հենց տեղացիներն էլ հաստատում էին, որ Սիսիանում զբոսաշրջիկները շատ են հետաքրքրվում ազգային ավանդույթներով և ավստոսում են, որ իրենց ունեցածն ըստ արժանվույն չի ներկայացվում: Այսուհանդերձ, երբ փորձում էինք ծանոթանալ զբոսաշրջիկների տպավորություններին՝ Ֆրանսիայից ժամանած մի տիկին նշեց, որ իրեն ամենից շատ Սիսիանում գրավում են խաղաղությունն ու հանգստությունը:

Զրույցների ընթացքում փորձում էինք ծանոթանալ տարածաշրջան այցելած զբոսաշրջիկների տպավորություններին: Հիմնական տեսարժան վայրերը, որոնք գրեթե անխտիր նշում էին բոլոր հարցվողները, հետևյալն են՝ Շաքիի ջրվեժ, Թանահատի վանք, Որոտնավանք, Սյունիվանք⁵, Մարգարիտկա, Ուղտասար, Զորաց քարեր, Շաղաթի ժայռեր, Պորտաքար, Տոլորսի լիճ, Իշխանասար: Ծանոթացանք նաև տուրիստական գործակալությունների առաջարկած փաթեթներին: Արտազնա տուրիզմի փաթեթներում հիմնականում նախատեսված են այցելություններ դեպի Զորաց քարեր և Շաքիի ջրվեժ, իսկ ներզնա տուրիզմի համար՝ Որոտնավանք, Սյունիվանք, Զորաց քարեր և Շաքիի ջրվեժ:

Անհատական զրույցներ ունենալով սպասարկման ոլորտ ներգրավված մարդկանց հետ՝ եկանք այն եզրակացության, որ զբոսաշրջիկներն ամեն ինչ նախօրոք են ծրագրում: Տուրիստական գործակալությունը պատվիրում է և՛

⁵ Գտնվում է Սիսիան քաղաքի հյուսիսարևմտյան դարավանդի վրա: Միջնադարյան վանական համալիր է: Կառուցվել է VI դարի վերջին հեթանոսական տաճարի տեղում: Եկեղեցին հիմնովին վերականգնվել է 1959-1961թթ.: Տեղացիների շրջանում հայտնի է Սուրբ Հովհաննես և Սիսական անուններով:

ճաշացանկը, և՛ հյուրանոցային համարները, և՛ էքսկուրսիաները: Տեղում բոլոր վճարումներն իրականացնում է գործակալությունը՝ նախապես զբոսաշրջիկների գնած փաթեթների համապատասխան գումարներից: Ճամփորդությունները հիմնականում ամռան ամիսներին են կազմակերպվում, որը տարվա կտրվածքով շատ չնչին մաս է կազմում:

Մեր դաշտային հետազոտություններից կարելի է եզրակացնել, որ Սիսիանում զբոսաշրջության զարգացումը խոչընդոտում են հետևյալ պատճառները.

- Սիսիանի հեռավորությունը քաղաքից և ճանապարհների անբարեկարգ, կարելի է ասել վատթար վիճակը (գրեթե ոչ մի տուրիստական կազմակերպություն չի ցանկանում իր ավտոբուսները տրամադրել նմանատիպ էքսկուրսիաների համար, քանի որ վնասը գերազանցում է շահույթը): Հետևաբար տուրիստական փաթեթներ կազմելիս հաշվի է առնվում այս հանգամանքը, և շատ տեսարժան վայրեր դուրս են մնում ծրագրերից:
- Սիսիանը գտնվում է Արցախ, Գորիս, Տաթև տանող ճանապարհին: Զբոսաշրջային երթուղիները կազմվում են՝ ներառելով միայն Սիսիանից 3 կմ հյուսիս գտնվող Զորաց քարերը, շատ հաճախ՝ Շաքիի ջրվեժը, և շարունակում ճանապարհը: Այսինքն՝ հազվադեպ են գիշերակացով այցեր լինում Սիսիանում: Որպես ասվածի ապացույց՝ ներկայացնենք տուրիստական գործակալությունների կողմից առաջարկվող փաթեթի մի օրինակ՝ Elitar tour. Երևան-Խոր Վիրապ-Արենի-Նորավանք-Քարահունջ (Զորաց քարեր)⁶- Գորիս (գիշերակաց Խաչիկ B&B-ում):
- Sun Tour. Ջերմուկ-Շաքիի ջրվեժ-Քարահունջ-Արենի:
- Ինչպես վերևում արդեն նշեցինք, քաղաքում մշակութային կոլորիտ ստեղծելու խնդիր կա, ժամանցի վայրեր, սպորտային հրապարակներ, հանգստի գոտիներ և զբոսայգիներ չկան:
- Եղանակային անբարենպաստ պայմանները ևս չեն նպաստում զբոսաշրջային այցերի ակտիվացմանը: Սիսիանում ձմեռը երկարատև է,

⁶ Զորաց քարեր հուշարձանը գտնվում է մայրուղուց 300-400 մ հեռավորության վրա՝ Սիսիանից ընդամենը 3 կմ հյուսիս: Հուշարձանը ժողովրդին հայտնի է Ցից-ցից քարեր, Քարահունջ անուններով: Զորաց քարերն աշխարհում պահպանված հազվագյուտ բնակավայրերից է, որ թվագրվում է մ.թ.ա. VI-III հազարամյակներով և ծառայել է որպես հնագույն աստղադիտարան:

կայուն, ձյան շերտը պահպանվում է 3-4 ամիս: Գարունը զով է, երկարատև, սառը: Գարունն սկսվում է ապրիլի երկրորդ կեսին և վերջանում հունիսի վերջին տասնօրյակում, մայիսն ամենաանձրևայինն է: Եվ պատահական չէ, որ զբոսաշրջիկների այցելության ժամանակահատվածը հուլիս-օգոստոս ամիսներն են, որը տարվա կտրվածքով բավականին կարճ է:

- Տուրիստներին առաջարկվող փառատները, ըստ մեր դիտարկումների, հիմնականում կազմակերպում է Սիսիանի թանգարանը, որը լայնորեն չի գովազդվում, ինչպես օրինակ Տաթևում կազմակերպվող «Ոչխարների խուզման փառատոնը», Գորիսի «Թթի փառատոնը»:
- Խնդրի իրականացման համար կարևոր նշանակություն ունի նաև մասնագիտական կադրերի պատրաստումը:
- Մարզում գործող մի քանի հյուրանոցները չեն կարող բավարարել զբոսաշրջիկների պահանջները: Ցանկալի է ներգրավել բնակչությանը և զարգացնել նաև ընտանեկան հյուրատների մշակույթը:
- Զբոսավարների համար անհրաժեշտ է պատրաստել մասնագիտորեն առավել հիմնավորված և հետաքրքիր տեքստեր:
- Անհրաժեշտ է կազմակերպել գովազդային արշավ:

Հարցումներ կատարելը Սիսիանում նույնպես դյուրին չէր, քանզի Սյունիքի այլ մարզերի համեմատությամբ զբոսաշրջիկները հիմնականում ամռան ամիսներին են այցելում և ոչ մեծ քանակությամբ:

Վստահ ենք, որ Սիսիանում հսկայական զբոսաշրջային ներուժ կա, որը մասնագիտորեն կազմակերպելու, ներկայացնելու և գովազդելու խնդիր ունի: Միայն Զորաց քարերը, որն այսօր հայկական բրենդի կարող է վերածվել, ցավոք, ըստ ամենայնի չի կիրառվում: Անհրաժեշտ է պրոմո արշավներ իրականացնել այդտեղ: Առաջարկում են զբոսաշրջիկների ուշադրությունը սևեռել թե՛ Սիսիանի բնության, թե՛ պատմության ու ավանդույթների և թե՛ ժամանակակից կենցաղի և արհեստների ինքնատիպ օրինակների վրա: Կարելի է զբոսաշրջային փաթեթներ ընդգրկել խեցեգործ վարպետ Վահագն Համբարձումյանի բրուտանոցը, որտեղ նրանք ներկա կգտնվեն թե՛ կավի թրծման աշխատանքներին, թե՛ գաթա թխելու ընթացքին, մասնակցել այդ գործընթացներին, ինչպես նաև ճիշտ կազմակերպել տարաբնույթ հուշանվերների վաճառքը, որը կնպաստի նաև տեղական արտադրանքի զարգացմանը: Այսօր Սիսիանում զբոսաշրջային բիզնեսն ապակենտրոնացնելու խնդիր կա՝ ապա-

հովելու համար համաչափ զարգացում (Անգեղակոթ, Լծեն, Շաքի Աղիտու, Բոնակոթ, Համո Սահյանի ծննդավայր Լոր գյուղերը...)

Վարելի է զարգացնել նաև անհիմնացիոն տուրիզմը: Քաղաքում գործում են բազմաթիվ երաժշտական, պարի խմբեր, կարելի է գոնե ամռան ամիսներին այգում, հրապարակում կազմակերպել երեկոներ ու բացօթյա համերգներ: Վերջում նշենք, որ Սիսիանում, չնայած առկա խնդիրներին, զբոսաշրջային գործընթացներն, այնուամենայնիվ, քարացած չեն, իսկ մեր դիտարկումները միտված են ոլորտի զարգացմանն ու տարածքի մշակույթը զբոսաշրջիկների համար առավել գրավիչ ու ներկայանալի դարձնելուն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են Հայաստանում զբոսաշրջության զարգացման խնդիրների վերաբերյալ մեր նկատառումները Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում կատարած ուսումնասիրությունների հիման վրա: Մարզի բնակիչների, զբոսաշրջիկների, ինչպես նաև ոլորտի պատասխանատուների և սպասարկման ոլորտ ներգրավված մասնագետների հետ խորացված հարցազրույցների և 2 տարվա բնակության անձնական դիտարկումների արդյունքները համադրելով մասնագիտական գրականության տվյալների հետ՝ փորձ է արվել ճշտելու, թե ինչով կարող է գրավիչ լինել Հայաստանի հարավային թևը, հատկապես Սյունիքի մարզի Սիսիան քաղաքը:

Հոդվածում ներկայացվում են Սիսիան քաղաքի զբոսաշրջային ոլորտի ընդհանուր բնութագիրը, զարգացման հնարավորությունները, ներքին և արտաքին զբոսաշրջության համար առավել գրավիչ պատմամշակութային արժեքները զբոսաշրջության համընդհանուր գործընթացների համատեքստում:

Բանալի բաներ - Սյունիքի մարզ, տուրիզմի բնութագիր, մշակութային օջախներ, տոներ, տեղացիներ, զբոսաշրջիկներ:

ТУРИСТИЧЕСКИЕ ПОЕЗДКИ В СИСИАН: ПЕРВОНАЧАЛЬНЫЕ НАБЛЮДЕНИЯ

ЛИЛИТ ВАРДАНЯН

В данной статье рассматриваются вопросы, связанные с развитием туризма в наших рассуждениях, на основе исследований, проведенных в городе Сисиан, Сюникской области. Проводя длительные беседы с местными жителями, туристами, представителями сферы услуг, а также учитывая наши личные

наблюдения за 2 года и сопоставляя их с данными профессиональной литературы, была предпринята попытка выяснить – чем привлекает г. Сисиан на юге Армении. В статье представлены общие характеристики Сисианской индустрии туризма, возможности развития, более привлекательные для отечественного и зарубежного туризма, в глобальном контексте культурного наследия и туризма.

Ключевые слова - Сюникский регион, характеристика туризма, культурные центры, обряды, местные жители, туристы.

TOURISTIC UNDERTAKINGS IN SISIAN; PRELIMINARY MONITORINGS

LILIT VARDANYAN

In this article Vardanyan deliberates over issues related to the development of tourism based on the monitorings carried out in the Syunik region, singularly in Sisian. An attempt to substantiate the issues that might turn the southern Syunik Province of Armenia especially Sisian region into an attractive tourist centre is being made. This is realized by interviewing local people, tourists, as well as few office holders and employees of the sector in depth and by considering my own observations after living there for a period of 2 years and comparing them with the data of relevant literature.

Included in this article are a general touristic specification of Sisian, its development prospects and the most attractive historical and cultural visiting cites for domestic and foreign tourism in the context of global tourism.

Key words - Syunik Province, touristic specification, cultural centers, holidays, locals, tourists.

ԱՆՅԻՆԼՈՒԿ

АНАЛИЗ ГЕНДЕРНОГО ПОРЯДКА СФЕРЫ ТРУДА И ЗАНЯТОСТИ И ВОЗМОЖНОСТИ ИМПЛЕМЕНТАЦИИ ГЕНДЕРНОЙ СОЦИАЛЬНОЙ ПОЛИТИКИ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ

АСМИК ГЕВОРКЯН, МАНУШАК МКРТЧЯН

Благосостояние общества зависит от уровня удовлетворения физических, духовных, социальных потребностей личности, качества институциональных и семейных интеракций, степени включенности в первичные социальные группы и т.д.. Достижение благосостояния возможно при наличии экономического роста, при относительной стабильности ценообразования, при обеспечении занятости населения, что в свою очередь влияет на социальное, ролевое и статусное распределение в социуме. В данном исследовании выделим, как особую категорию, роль трудовой деятельности и проблемы трудоустройства для обеспечения благосостояния отдельной личности и общества в целом, поскольку благосостояние тесно связано с обеспечением самореализации граждан через трудовую деятельность.

Надо отметить важность соответствия занятости¹ уровню образования, профессиональной ориентации, культурным особенностям распределения труда и т.д.. Стержневыми элементами, воздействующими на восприятие труда как достойного, являются гендерные особенности распределения труда - социально выстроенные роли женщин и мужчин, а также факт того, каким образом эти аспекты сопрягаются в сфере труда². Показатели, характеризующие рынок труда, представляются не только важной составляющей, дающей возможность оценить экономическое развитие, но также позволяют осмыслить глубинные социальные процессы, имеющие место в обществе. Состояние

¹ В данной работе термин "уровень занятости" исчисляется как соотношение численности занятых к населению соответственного возраста или к численности трудовых ресурсов.

² МБТ: ABC of women workers' rights and gender equality, второе издание (Женева, 2007 г.), п. 89 ff.

рынка труда позволяет говорить как об уровне благосостояния, способах воспроизводства трудовых ресурсов, так и о наличии в социуме дискриминаторных процессов, о степени защищенности граждан, их социальной активности, уровне отчужденности и т. д. В этом смысле социологическая составляющая при исследовании в сфере труда и занятости требует к себе специального внимания, поскольку исследование проблем в этой сфере отличается высокой чувствительностью и отражает все процессы, имеющие место как на макро, так и на микро социальных уровнях.

В данной статье, для более целостного описания состояния рынка труда, применен как экономический подход, так и социологический. «Экономический подход ограничивает общее видение проблемы, в противовес этому, социологический подход основные элементы рынка труда рассматривает во взаимосвязи с социальными связями и отношениями, обуславливающими наряду с экономическими, политическими, демографическими и социальными условиями и факторами, изменения и развитие рынка труда»³.

Территориальные, демографические особенности, социально-экономический кризис, недостаточно продуктивное функционирование институциональных инфраструктур – все это привело к дисфункциональному состоянию на рынке труда. Остро встала проблема конкурентоспособности. Такое положение дел создало благодатную почву для маргинализации и низкой конкурентоспособности женского труда. Гендерная дискриминация на рынке труда, гендерный дисбаланс в сфере занятости и распределения явились преобладающей неэффективной формой использования человеческого капитала и, как следствие, обострения миграционных процессов.

Новое постсоветское пространство - развал бывших коллективных и государственных хозяйств, отсутствие возможности и/или навыков ведения хозяйств в новом экономическом формате – все это создало условия для роста безработицы и понижения доступа к качественному образованию, здравоохранению и государственным услугам в республике. Описывая проблемы в сфере трудоустройства и трудоустройства, надо отметить, что будучи территориально не масштабной республикой – НКР, тем не менее, отличается неравномерностью территориально-экономического развития. В сельских районах осо-

³ **Комлев А.Л.** Региональный рынок труда (проблемы и перспективы) // Волгоград, Издательство Волгоградского института экономики, социологии и права, 2006, 132 с.

бенно вычерчивается ряд серьезных проблем социального, экономического и политического характера, и, поскольку именно сельские районы располагаются в пограничной зоне и постоянно находятся в состоянии военной угрозы, то здесь повышаются миграционные риски, а также другие риски социально-экономического характера. Как показывают данные о распределении заработной платы⁴, средняя заработная плата в районах ниже среднего уровня заработной платы по республике почти во всех сферах экономики.

Современное состояние рынка труда в Нагорном Карабахе сложилось в результате перераспределения сфер занятости населения, что в свою очередь явилось толчком к возникновению социальной незащищенности, трудностей адаптации и множества других проблем, связанных с новым порядком социального пространства. Любой кризис вызывает дисбаланс на уровне общественной солидарности, и важно здесь учесть двоякость явления – с одной стороны, отсутствие социальной солидарности трансформирует существующее распределение труда, с другой – присутствующий или вновь возникший формат распределения труда может породить определенный уровень общественной солидарности. Обозначим имеющееся положение дел как вынужденную социальную солидарность, и отметим, что существующий комплекс проблем в сфере занятости и распределения труда в значительной степени затронул существующий гендерный порядок⁵.

Для того, чтобы оценить гендерную картину последствий социально-экономических перемен, произошедших в период перехода к рыночной экономике в Нагорном Карабахе, рассмотрим основные индикаторы изучения рынка труда, такие как – гендерные различия в уровне безработицы и показателях занятости; гендерные особенности, присутствующие в показателях, отвечающих за уровень экономической активности; различия в моделях занятости; разницу в оплате труда.

Как уже было отмечено выше, происходящие в Нагорном Карабахе социально-экономические преобразования затронули прежде всего сферу формирования трудовых ресурсов, которая, в силу особенностей функционирования, оказалась менее адаптивной и адаптированной к изменениям. Новая

⁴ www://stat-nkr.am/files/publications/2015/doklad_2014_hunvar_dektember_pdf.

⁵ Дюркгейм Э. О разделении общественного труда // Западно-европейская социология XIX-начала XX веков. М., 1996, с. 256-309.

форма экономического функционирования заострила задачу изыскания новых видов ресурсов и капитала, возникла необходимость распределения социального капитала в новом социальном и экономическом пространстве⁶.

Анализируя трудовые ресурсы⁷ в Нагорном Карабахе, можно заметить, что численность экономически активного населения⁸ за последние годы имеет тенденцию роста. Судя по данным последней переписи населения в НКР в 2005 году⁹, трудовые ресурсы имеют следующую картину гендерного распределения: женщины составляют 52,6% от общего числа имеющих трудовых ресурсов; среди экономически активного населения женщины составляют 48,0%, тогда как среди экономически неактивного населения¹⁰ женщины составляют 52%. Картина резко меняется, когда рассматривается процент женщин среди занятого населения – здесь женщины составляют 36,1%, а в числе безработных, студентов, пенсионеров, ведущих домашнее хозяйство, женщины составляют более половины¹¹.

Сферы занятости населения имеют следующую картину. Согласно дан-

⁶ Бурдые П. Социология политики. М., Социо-Логос, 1993; Бурдые П. Социология социального пространства, М., Институт экспериментальной социологии; СПб., Алетейя, 2005, 288 с.

⁷ В данной работе термин "трудовые ресурсы" обозначает совокупность экономически активного и неактивного населения, то есть включает ту часть населения республики, которая фактически занята в экономике или не занята, но по возрасту и состоянию здоровья способна к работе. Трудовые ресурсы формируются из трудоспособного населения в трудоспособном возрасте (то есть трудоспособное население без неработающих инвалидов первой и второй группы и неработающих граждан, получающих пенсии на льготных условиях), занятых подростков до 16 лет, занятых пенсионеров.

⁸ В данной работе термин "уровень экономической активности" населения исчисляется как соотношение численности экономически активного населения к населению соответственного возраста или к численности трудовых ресурсов. Численность экономически активного населения – это совокупность занятого и официально зарегистрированного безработного населения.

⁹ Результаты переписи населения НКР, 2005 г., <http://census.stat-nkr.am/rus/index.ph>.

¹⁰ В экономически неактивное население входит население трудоспособного возраста: учащиеся и студенты очного обучения с отрывом от производства, занятые домашним хозяйством, ухаживающие за детьми, больными родственниками, лица, которые по разным причинам не работают и не ищут работу, получающие прибыль от использования собственности и т.д.

¹¹ Վիճակագրական գրքույկ. Արցախի կանայք և տղամարդիկ, 2014 թ., Ստեփանակերտ, 2014 թ., էջ 104:

ным 2013 года общее число занятых в республике составило 62420 человек, из них 79,7%, или 49774 человека – наемные работники (включая частных предпринимателей), а 20,3% или 12646 человек – самозанятые, в частности, в сельском хозяйстве, а в 2014 году число занятых составило 61071 человек, из них 75,3% или 45960 наемные работники, а 24,7% являются самозанятыми, в частности, в сельском хозяйстве¹². Гендерное распределение труда наглядно видно в нижеприведенной таблице.

Таблица 1

Распределение населения НКР от 15 и более лет по степени экономической активности, 2005 г¹³.

	население от 15 и более лет			население от 15 и более лет		
	Всего человек	В % к общему		Всего человек	В% к общему	
		Ж	М		Ж	М
Всего	104761	52.6	47.4	100.0	100.0	100.0
<i>Экономически активное население</i>	<i>59242</i>	<i>44.6</i>	<i>55.4</i>	<i>56.5</i>	<i>48.0</i>	<i>66.1</i>
<i>Занятые</i>	<i>47433</i>	<i>41.9</i>	<i>58.1</i>	<i>45.3</i>	<i>36.1</i>	<i>55.5</i>
<i>Безработные</i>	<i>11809</i>	<i>55.7</i>	<i>44.3</i>	<i>11.2</i>	<i>11.9</i>	<i>10.6</i>
<i>Экономически неактивное население</i>	<i>45519</i>	<i>63.0</i>	<i>37.0</i>	<i>43.5</i>	<i>52.0</i>	<i>33.9</i>
<i>Учащиеся</i>	<i>9254</i>	<i>59.6</i>	<i>40.4</i>	<i>8.8</i>	<i>10.0</i>	<i>7.5</i>
<i>Пенсионеры</i>	<i>22224</i>	<i>60.0</i>	<i>40.0</i>	<i>21.2</i>	<i>24.2</i>	<i>17.9</i>
<i>Ведущие домашнее хозяйство</i>	<i>6003</i>	<i>92.3</i>	<i>7.7</i>	<i>5.8</i>	<i>10.1</i>	<i>0.9</i>
<i>Другие</i>	<i>8038</i>	<i>53.4</i>	<i>46.6</i>	<i>7.7</i>	<i>7.7</i>	<i>7.6</i>

Наблюдается динамика в количестве вовлеченных в трудовую деятельность. Так, общая численность занятых за последние годы возросла, однако в силу низких темпов развития производства в республике перестали быть востребованными такие отрасли, как промышленность, сельское хозяйство, транспорт и связь. Соответственно, численность вовлеченных в эти отрасли уменьшилась, однако, вместе с тем, наблюдается рост числа занятых в таких

¹² www://stat-nkr.am/files/publications/2015/doklad_2014_hunvar_dektember_pdf.

¹³ Результаты переписи населения НКР, 2005 г., <http://census.stat-nkr.am/rus/index.ph>.

отраслях как строительство, торговля, жилищно-коммунальное хозяйство, финансы и кредит, оборона. Заметна активизация деятельности общественных организаций, а также рост рабочих мест в сфере услуг. По сути в Нагорном Карабахе наблюдается рост непроизводственной сферы¹⁴.

Анализируя гендерную сегрегацию, отраслевую структуру занятости в Нагорном Карабахе, можно заметить, что женщины заняты в основном в государственном и муниципальном секторе экономики, а репрезентация мужчин больше в частном секторе¹⁵. Наиболее феминизированными отраслями занятости являются сельское хозяйство, торговля, здравоохранение, социальное страхование, образование, культура, искусство, финансы и кредит. Чисто мужскими сферами занятости считаются промышленность, строительство, транспорт, управление и оборона¹⁶.

Невзирая на высокий образовательный уровень женщин в Нагорном Карабахе, наблюдается тенденция изоляции и вытеснения их из высокооплачиваемых должностей и отраслей. Отраслевая структура занятости характеризуется тем, что женщины все меньше представлены в отраслях материального производства и все больше – во внепроизводственной сфере. Существующая горизонтальная сегрегация, характеризующаяся различиями мужских и женских рабочих мест, приводит к отраслевой сегрегации, которая сформировала своеобразную структуру распределения женских и мужских сфер занятости. О профессиональной сегрегации по признаку пола свидетельствует также высокий уровень концентрации женщин в отраслях с низкой заработной платой в Нагорном Карабахе¹⁷, вследствие чего возникает отраслевая сегрегация,

¹⁴ Статистический сборник, Достижения Нагорного Карабаха в девятой пятилетке, Степанакерт, 1976, с. 96-97; www.stat.nkr.am/files/publications/2015/doklad_2014_hunvar_dektember_pdf., с. 55-56.

¹⁵ Վիճակագրական գրքույկ, Արցախի կանայք և տղամարդիկ, 2012թ., Ստեփանակերտ, 2012թ., Վիճակագրական գրքույկ, Արցախի կանայք և տղամարդիկ, 2013 թ., Ստեփանակերտ, 2013թ., Վիճակագրական գրքույկ, Արցախի կանայք և տղամարդիկ, 2014 թ., Ստեփանակերտ, 2014 թ., 143 էջ:

¹⁶ Վիճակագրական գրքույկ, Արցախի կանայք և տղամարդիկ, 2012 թ., Ստեփանակերտ, 2012թ., Վիճակագրական գրքույկ, Արցախի կանայք և տղամարդիկ, 2013 թ., Ստեփանակերտ, 2013թ., Վիճակագրական գրքույկ, Արցախի կանայք և տղամարդիկ, 2014 թ., Ստեփանակերտ, 2014թ., 143 էջ:

¹⁶ **Игнатъев В.** Интеграционная социология исторического процесса (Версия фундаментальной историко-социологической теории) // Социально-гуманитарные исследования. Новосибирск, 2006, Вып. 3, с. 222.

ՔԱՈՍԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ. ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐԴԳԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Հոդվածում քննարկվում է քաոսի տեսության կիրառելիությունը որպես սոցիալական փոփոխությունների վերլուծության մեթոդաբանական գործիք: Տեսությունը բավարար է համակարգի անցումային անկայուն վիճակների բացատրության համար, սակայն հոմեոստազի երկարատև ժամանակահատվածների և երկատման կետերում այլընտրանքային տարբերակների սահմանափակման ձևավորման վերաբերյալ հեղինակն առաջարկում է ներգրավել քաղաքակրթական մատրիցների հայեցակարգը:

Բանալի բաներ - ինքնակազմակերպում, սոցիալական փոփոխություն, երկատում, կայուն կառուցվածք, ամբողջականություն, հոմեոստազ, մշտակա:

DISCOURSE OF CHAOS THEORY: HEURISTIC AND DESCRIPTIVE FEATURES

VARDGES POGOSYAN

This article considers the applicability of chaos theory as a methodological operational tool to the analysis of social changes. The adequacy of the theory describing bifurcation parameters is proven. but the concept of civilization matrix is needed for periods of homeostasis and besides for the range of attractors.

Key words - self-organization, social changes, bifurcations, stable structures, integrity, homeostatics, immanent.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԷԴԳԱՐ ՆԱՎՈՅԱՆ

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո՝ 1919 թ. հունվարի 18-ին, Փարիզում բացվեց հաշտության վեհաժողովը, որն անդրադարձավ նաև Հայաստանի Հանրապետության (ՀՀ, 1918-1920 թթ.) մանդատի հարցին և այն առաջարկեց ԱՄՆ-ին¹: Խորհրդաժողովի մարտի 20-ի որոշմամբ ամերիկյան կառավարությունը Թուրքիա և Անդրկովկաս գործուղեց գեներալ Ջ. Հարբորդի զինվորական առաքելությունը, որի գլխավոր նպատակն էր պարզել Հայաստանի մանդատի շահավետությունն ամերիկյան կապիտալի համար¹: Ջ. Հարբորդի գլխավորած պատվիրակությունը եղավ Թուրքիայում, ՀՀ-ում, Վրաստանում, Ադրբեջանում: Առաքելության գործունեության արդյունքները 1919 թ. հոկտեմբերին ներկայացվեցին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին և 1920 թ. ապրիլին հանձնվեցին Կոնգրեսի քննարկմանը: Ձեկուցագրում առաջ էր քաշվում Հայաստանի, Անդրկովկասի, Անատոլիայի, Կիլիկիայի, Կ. Պոլսի, սևծովյան նեղուցների և Փոքր Ասիայի սահմանակից տարածքների «միասնական մանդատի» ստանձնման գաղափարը, առանց որի ՀՀ-ի մանդատի ստանձնումը անհնարին կլիներ և կհակասեր ԱՄՆ-ի շահերին²:

¹ 1917 թ. ապրիլին Ազգային խորհրդի նիստում Թիֆլիսի հոգևոր առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը հայտարարեց. «Ամերիկյան վաղուց հետաքրքրվում է Հայաստանով՝ հանձնիս իր միսիոներների: Նա իր առևտրի համար պետք է նոր շուկաներ գրավի: Ամերիկյան կուզենա այդ երկիրն այն պայմանների մեջ դնել, որ իր դրամներն ու ապրանքը կարողանա տեղադրել մեր երկրում» (**Կիրակոսյան Ջ.**, Առաջին համաշխարհային պատերազմը և Հայաստանը, Երևան, «Հայաստան», 1967, էջ 507):

¹ **Կարապետյան Մ. Ս.**, Հայաստանը 1912-1920 թթ., Երևան, «Զանգակ-97», 2003, էջ 305:

² **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, «Գիտություն», 1999, էջ 208-214:

Թուրքիայում, Անդրկովկասում և ընդհանրապես Մերձավոր Արևելքում բախվում էին մեծ տերությունների շահերը: Միջազգային բարդություններից խուսափելու համար Զ. Հարբորդի առաքելությունը մանդատն իրականացնելու նախապայման էր համարում «Անգլիայի և Ֆրանսիայի հետ պաշտոնական համաձայնության գալը» և «Գերմանիայի ու Ռուսաստանի կողմից որոշակի հավանությունը»՝ քաղաքական, տնտեսական և աշխարհագրական մեկուսացումից խուսափելու համար: Անհրաժեշտություն էր համարվում Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա անսահմանափակ վերահսկողության հաստատումը և այլն³:

1920 թ. մայիսի 29-ին ամերիկյան սենատի արտաքին գործերի հանձնաժողովը մերժեց ստանձնել Հայաստանի մանդատը⁴: Հումքի ձեռքբերման և սպառման առումով հետաքրքրություն չներկայացնող Հայաստանն առանց Անատոլիայի, սևծովյան նեղուցների և Անդրկովկասի իրական հետաքրքրություն չէր ներկայացնում ԱՄՆ-ի համար, որի մանդատը կարելի էր ստանձնել և քաղաքական, տնտեսական, ռազմական վերահսկողություն հաստատել, ինչպես տեղի ունեցավ ռազմավարական առումով կարևորություն ունեցող Եվրոպայի հարցում, երբ «Դոզի ծրագրի», իսկ հետո նաև «Մարշալի պլանի», «Տրումենի (նաև Էյզենհաուերի) հայեցակարգի» միջոցով ԱՄՆ-ը ազդեցիկ դիրք ձեռք բերեց Արևմտյան Եվրոպայում, Հունաստանում, Թուրքիայում և Մերձավոր Արևելքի երկրներում:

Խորհրդային Ռուսաստանի առաջխաղացումն Անդրկովկասում և նրա մերձեցումը քեմալական Թուրքիայի հետ փոխել էր տարածաշրջանի միջազգային դրությունը, որին ավելացավ նաև Մերձավոր Արևելքում Անտանտի տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունների սրումը: Պատմագիտության մեջ տարածում ունի այն կարծիքը, որ այս հանգամանքներն էլ դրդեցին ԱՄՆ-ի սենատին մերժել Հայաստանի մանդատն ընդունելու Վ. Վիլսոնի առաջարկը, որը սակայն այնքան էլ համոզիչ չէ: Մեծ տերությունների միջև հակասություններ գոյություն ունեին ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև Եվրոպայում, Աֆրիկայում, Զինաստանում և այլուր, որտեղ սակայն հնարավոր է եղել փոխզիջումների միջոցով ապահովել մեծ տերությունների համագոյակցությունը: Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև անմիջական ռազմական բախման ամերիկյան մտահոգությունները նույնպես

³ Նույն տեղում, էջ 218:

⁴ **Կարապետյան Մ. Ս.**, նշվ. աշխ., էջ 313:

հիմնազուրկ են, քանի որ պատերազմական գործողություններն արդեն առկա են եղել այն ժամանակ, երբ 1918-1922 թթ. Անտանտի պետությունները, որոնց թվում նաև ԱՄՆ-ը, ներխուժել էին Ռուսաստանի տարածք: Դա ցույց է տալիս, որ այս դեպքում ԱՄՆ-ը չխուսափեց Խորհրդային Ռուսաստանի հետ ռազմական բախումից:

Հետաքրքիր հետևությունների տեղիք կարող է տալ նաև այն օգնությունը, որ ԱՄՆ-ը կազմակերպել է Հայաստանի Առաջին հանրապետությանը: Երկիրը սովից, ավերումից և համաճարակից դուրս բերելու համար ՀՀ կառավարությունը դիմել է Եվրոպայի և ԱՄՆ-ի օգնությանը: 1919 թ. Հայաստանը ԱՄՆ-ից ստացավ մոտ 1,3 մլն փուտ այլուր, 157 հազ. փուֆ ցորեն և այլ պարենամթերք: 1920 թ. սկզբին գալու էր 2170 հազ. փուֆ այլուր⁵: Ս. Վրացյանը գրում է. «Ինչպես էլ լինի մեր վերաբերմունքը դեպի Ամերիկայի քաղաքական դերը հայկական խնդրում, ամերիկյան մարդասիրական նպաստն ու պարենը երբեք չենք մոռանա, չպետք է մոռանանք»⁶: Սակայն այդ օգնությունն այնքան էլ անհատույց չի եղել:

1920 թ. փետրվարի 6-ին ՀՀ վարչապետ Ա. Խատիսյանն ԱՄՆ-ում ՀՀ պատվիրակության ղեկավար Հ. Քաջազունուն գրել է, որ օգնելով մեզ՝ ամերիկացիները սկսել են վերջին ժամանակներս միջամտել մեր ներքին գործերին այնպիսի չափերով, որ ուղղակի խանգարում են մեր վարչակարգի անկախ գործունեությանը. նրանք կազմում են իրենց ոստիկանությունը, ձգտում են իրենց ձեռքն առնել պարենավորման բոլոր գործերը և այլն, հակառակ կառավարության և ժողովրդի ցանկության⁷:

Հատուկ հետաքրքրության են արժանի բարեգործական և քրիստոնեական քարոզչական (միսիոներական) կազմակերպությունները, որոնք այժմ էլ օտարերկրյա հետախուզության համար քողարկման միջոց են⁸ և կարողանում են թափանցել երկրի քաղաքական, տնտեսական և վարչակառավարման համակարգ: Լրտեսական գործունեության մեջ մեղադրվել կամ կասկածվել են այնպիսի բարեգործական կազմակերպություններ, ինչպիսիք են Ամերիկյան նպաստամատույց վարչությունը (ԱՆՎ), սրա շրջանակներում գործող Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեն (Ամերկոմ), Հայաստանի

⁵ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, էջ 256:

⁶ Նույն տեղում, էջ 254:

⁷ Փալոյան Գ., նշվ. աշխ., էջ 223:

⁸ Оганян Д. А., Стереотипы армянской историографии, Ереван: Норк гратун, 2010, с. 43.

անկախության ամերիկյան կոմիտեն և Անգլիական օգնության կոմիտեն (Անգլկոմ)⁹:

1919-1930-ական թթ. ԱՄՆ-ում գործում էր Ամերիկյան նպաստամատուց վարչությունը (ԱՆՎ), որը 1919-1923 թթ. գլխավորում էր ԱՄՆ-ի ապագա նախագահ Հ. Հուվերը (1929-1933 թթ.)^{*} և օգնություն կազմակերպում Առաջին աշխարհամարտի հետևանքով Եվրոպայի և Մերձավոր Արևելքի տուժած բնակչությանը: 1919 թ. ԱՆՎ-ն գործունեություն է ծավալել նաև Հայաստանում և Անդրկովկասում[†]: Հայաստան է ուղարկվել 50,6 հազ. տ սննդամթերք՝ 10,6 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Հայաստանի կառավարությունը ստացած ապրանքի դիմաց ստորագրել է պարտամորհակ: 1919 թ. օգոստոսին ԱՆՎ-ն Անդրկովկասում իր գույքն ու կարողությունը հանձնել է «Օգնություն Մերձավոր Արևելքին» կազմակերպությանը: Մինչև ԱՆՎ-ի ստեղծումը Հայաստանին օգնություն էր կազմակերպել 1918 թ. ստեղծված Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի (Ամերկոմ) միջոցով¹⁰, որով հնարավոր է եղել հաղթահարել ցեղասպանության և թուրքական ավերամների հետևանքով Արևելյան Հայաստանի զգալի մասում առաջացած սովը¹¹:

Այս օգնությունն այնքան էլ անշահախնդիր չի եղել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ի և ԱՆՎ-ի միջև գոյություն ունեցող պայմանագիրն իր բնույթով եղել է սովորական առևտրային պայմանագիր, ընդ որում ԱՆՎ-ն ինքն է որոշել Հայաստանին մատակարարվելիք ապրանքների տեսակը և քանակը, որոնց առաքման ծախսերը, ապահովագրության արժեքը

⁹ **Պարսամյան Վ.**, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, «Լույս», 1979, էջ 433-434: Նաև՝ *Требуются сотрудники. Сфера деятельности: благотворительность, работодатель: американская разведка* / <https://sites.google.com/site/zadamajtes/goracie-tocki/amerika/trebuutsa-sotrudniki-sfera-deatlnosti-blagotvoritelnostrabotodatel-amerikanskaa-razvedka>.

^{*} Հ. Հուվերը դեմ է եղել ԱՄՆ-ի կողմից ՀՀ-ի մանդատը ստանձնելուն:

[†] ԱՆՎ-ի գործունեության մասին տե՛ս նաև **Դարբինյան Ա.**, Մերձավոր Արևելքի նպաստամատուց կոմիտեի քարոզչական քաղաքականության առանձնահատկությունները (1915-1930 թթ.) / «Պատմա-բանասիրական հանդես», 2011, № 2, էջ 47-59:

¹⁰ Ամերկոմի և Անգլկոմի գործունեության մասին տե՛ս **Ավետիսյան Ս.**, Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-2009 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ, 2009: Նույնի՝ Փաստաթղթեր Հայաստանում Ամերկոմի և Անգլկոմի գործունեության մասին / «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, թիվ 2, էջ 173-181, նաև՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հայանպաստ գործունեությունը Առաջին աշխարհամարտից հետո / «Բանբեր Երևանի համալսարանի», 2012, թիվ 137.6, էջ 3-12:

¹¹ **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 254-256:

և առաջադրված այլ պայմանները հոգալու էր ՀՀ կառավարությունը¹²: 1919 թ. հունիսի 30-ի հրամանագրով ՀՀ-ն պարտավորվում էր ԱՆՎ-ին կամ ԱՄՆ-ի գանձարանին վճարել 5 մլն ոսկի դոլար՝ տարեկան 5% տոկոսադրույքով, որ պետք է վճարվեր ամեն տարի մինչև պարտքի մարումը¹³: Եվ ուրեմն «օգնություն» ձևակերպումը որոշ իմաստով վերանայման կարիք ունի:

Այսպիսով, օգտվելով Հայաստանի սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական ծանր դրությունից՝ ԱՄՆ-ը տնտեսական օգնության և բարեգործության անվան տակ պետական և մասնավոր կազմակերպությունների միջոցով ՀՀ կառավարությանը ստիպել է ընդունել մի շարք պայմաններ և պարտավորություններ ու միջամտել է երկրի ներքին գործերին: Սրանք միջոցներ էին, որոնք լավագույնս կիրառվել ու ճանապարհ են հարթել «բաց դռների», «դոլարային դիվանագիտության» և գաղութային քաղաքականության համար, որոնք տարբեր ձևերով «սառը պատերազմի» ժամանակաշրջանում դրսևորվել են ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության տարբեր հայեցակարգերում և ծրագրերում:

Հայաստանի Առաջին հանրապետության խորհրդայնացումից հետո Խորհրդային Հայաստանը (ՀԽՍՀ) գործնականում զրկվեց ինքնիշխանությունից և ռազմաքաղաքական ու դիվանագիտական, այնպես էլ երկրի ներքին՝ սոցիալ-տնտեսական ու մշակութային բնագավառներում ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Սփյուռքի և խորհրդահայ մտավորականության շրջանում բարձրացավ Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը: Հայկական գաղթօջախներում ստեղծվեցին ազգային խորհուրդներ, որոնց աշխատանքները համակարգում էր 1944 թ. մարտին Նյու Յորքում ստեղծված Ամերիկահայ ազգային խորհուրդը*:

Հայրենական պատերազմը սկսվելուց չորս օր առաջ ստորագրվեց գերմանա-թուրքական բարեկամության պայմանագիր՝ 10 տարի ժամկետով: 1942 թ. Թուրքիան 26 դիվիզիա էր կենտրոնացրել Անդրկովկասի սահմանա-

¹² **Оганян Д. А.**, նշվ. աշխ., էջ 58-60:

¹³ Նույն տեղում, էջ 61:

* Ատենապետը Ռամկավար կուսակցության ղեկավար Պ. Թերզյանն էր, Ֆրանսահայ ազգային խորհրդի նախագահը՝ Ա. Չոպանյանը: Ազգային խորհուրդներ կազմվեցին Սիրիայում, Լիբանանում, Հունաստանում, Պաղեստինում, Ուրուգվայում: ԱՄՆ-ում գործում էր ՀՅԴ ազգային կոմիտեն:

գլխին և հատկապես ՀԽՍՀ-ի սահմանի երկայնքով: Սակայն Ստալինգրադի մոտ և Կովկասի նախալեռներում գերմանական զորքերի գլխովին ջախջախումը ձախողեց թուրքերի ռազմական ծրագրերը: 1945 թ. ԽՍՀՄ-ի կառավարությունը ժամկետը լրանալու կապակցությամբ չեղյալ հայտարարեց (դե-նոնսացիա) 1925 թ. դեկտեմբերի 17-ի խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիրը¹⁴:

1945 թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը կայացավ Բեռլինի (Պոտսդամի) վեհաժողովը, որին մասնակցում էր ԽՍՀՄ-ի ժողովմխորհի նախագահ Ի. Ստալինը, ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը (հուլիսի 28-ից՝ Կ. Էտլին)¹⁵: Այստեղ ԽՍՀՄ-ը տարածքային պահանջներ ներկայացրեց Թուրքիային: Այն է՝ չեղյալ հայտարարել 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը ու ՀԽՍՀ-ին վերադարձնել անօրինականությամբ խլված Կարսի մարզը և Արևմտյան Հայաստանի այլ տարածքներ: ԽՍՀՄ-ը պահանջում էր նաև փոխել սևծովյան նեղուցների կարգավիճակը և թույլ տալ իրեն ռազմածովային հենակետ ունենալ Բոսֆորում և Դարդանեղում¹⁶: Ելնելով իրենց աշխարհաքաղաքական շահերից՝ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան իրենց պաշտպանության տակ առան Թուրքիային: 1945 թ. Սեպտեմբերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովի ջանքերը Կարսը և Արդահանը ՀԽՍՀ-ին վերադարձնելու հարցում հաջողության չհասան: ԽՍՀՄ-ի համար հայկական տարածքների հարցը պատրվակ էր՝ դաշնակիցներից որոշ զիջումներ ստանալու համար¹⁷:

1946 թ. հունվարին Լոնդոնում կայացած ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանի օրերին բազմաթիվ հայկական կազմակերպություններ իրենց հեռագրերով, ուղերձներով կրկին պահանջեցին անդրադառնալ հայկական հարցին¹⁸: ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչը հանձնաժողովի նախագահին հանձնեց դիմում, որտեղ ասվում էր, որ Սևրի պայմանագրով նախա-

¹⁴ **Վիրաբյան Ա.**, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Երևան, «Գիտություն», 2001, էջ 35-36:

¹⁵ Советский Союз на международных конференциях (сборник документов), т. VI, М., 1984, с. 37-38; **Киракосян А. Дж.** Армения и советско-турецкие отношения в дипломатических документах: 1945-1946 гг., Е.: НАА, 2010.

¹⁶ Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав – СССР, США, Великобритании, 17 июля – 2 августа 1945 г., сборник документов, М.: Политиздат, 1984, с. 136-151.

¹⁷ **Վիրաբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 44:

¹⁸ Նույն տեղում, էջ 54:

տեսված հայկական տարածքները պետք է վերադարձնել Խորհրդային Հաստատանին: 1946 թ. մայիսին ԱՄՆ-ի 16 հայկական կազմակերպություններ ուղերձով դիմեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Լի Թրյուգվեին, որով խընդրում էին Հայկական հարցը մտցնել Անվտանգության խորհրդի օրակարգ և աջակցել հայ ժողովրդի պահանջների կարգավորմանը, Խորհրդային Հայաստանին հանձնել Կարսը, Արդահանը, Էրզրումը, Տրապիզոնը, Բիթլիսը, Վանը, որոնք Վ. Վիլսոնի որոշմամբ պետք է տրվեին Հայաստանին¹⁹: ԱՄՆ-ի հայկական կազմակերպություններից Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը, Հայերի շահերի պաշտպանության ամերիկյան կոմիտեն, Հյուսիսային Ամերիկայի հայ եկեղեցու բարձրագույն հոգևորականությունը և Ամերիկայի հայկական միսիոներների ասոցիացիան հուշագրով դիմեցին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ժամանակավոր կոմիտեի Ժնևի նստաշրջանին, որպեսզի վերջինս օգնի հայերին իրենց պահանջատիրության մեջ: Հայկական սփյուռքի ձեռնարկած քայլերի մեջ հատկապես կարևոր քայլ էր 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Հայկական համաշխարհային կոնգրեսի (ՀՀԿ) գումարումը, որը նախաձեռնել էր Ամերիկահայ ազգային խորհուրդը: Նրան մասնակցում էին 715 պատվիրակներ 22 երկրներից: Կոնգրեսը քննարկեց ներգաղթի և վերաշինության, Խորհրդային Հայաստան-Սփյուռք մշակութային հարաբերությունների ընդլայնման հարցերը, առաջարկեց ՄԱԿ-ի քննարկմանը ներկայացնել հայկական հողային պահանջները և ընդունել համապատասխան որոշումներ²⁰: 1947 թ. մայիսի 12-ին ՀՀԿ-ի հատուկ պատվիրակությունը ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դ. Ալետոնին ներկայացրեց հուշագիր, որով ամերիկյան կառավարությանը խնդրեց ՄԱԿ-ի օրակարգ մտցնել հայկական հողային տարածքների հարցը: Դ. Ալետոնն ակնարկեց այն «մեծ դժվարությունները», որոնք ծագում էին այդ հարցի լուծման ճանապարհին՝ պայմանավորված ԱՄՆ-ի նոր արտաքին քաղաքականությամբ²¹: Դեռևս մարտի 12-ին ամերիկյան կառավարությունն ընդունել էր «Տրումենի հայեցակարգը», այսինքն՝ Հայկական կոնգրեսի գումարումից երեք շաբաթ առաջ: ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենը պաշտոնապես հայտարարել էր, որ խորհրդային ազդեցության տարածումը կասեցնելու համար ԱՄՆ-ը երաշխավորում է Հունաստանի և Թուրքիայի տարածքային ամբողջականությունը (1947 թ. մարտի 12-ին Հ. Տրումենը

¹⁹ Նույն տեղում, էջ 56:

²⁰ Նույն տեղում, էջ 56-57:

²¹ Նույն տեղում, էջ 57:

կոնգրեսին ուղղված իր ուղերձում պահանջեց տասնհինգ ամսվա ընթացքում Հունաստանին տրամադրել 300 մլն, իսկ Թուրքիային 100 մլն դոլար²² «խորհրդային ագրեսիայի զսպման» քաղաքականությունն իրականացնելու համար²³): Ըստ նրա՝ Արևելյան Անատոլիայի սահմանները Միացյալ Նահանգների սահմաններն են: Հ. Տրումենը սպառնում էր. «Մենք զենքի ուժով արգելք կհանդիսանանք Արևելյան Անատոլիայի սահմանների փոփոխման ամեն մի փորձի»²⁴:

Այսպիսով, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վերանայման և հայկական տարածքների վերադարձման հարցը, որտեղ խորհրդային կառավարությունը և հայկական Սփյուռքը դրսևորում էին մեկ միասնական նպատակ, դարձավ «Տրումենի հայեցակարգի» հրապարակման և իրականացման պատճառներից մեկը:

1947 թ. հուլիսի 12-ին ստորագրվեց ամերիկա-թուրքական պայմանագիր «Տրումենի դոկտրինային» համապատասխան Թուրքիային ռազմական օգնություն ցույց տալու մասին: Դրանով ռազմական միջոցառումների համար վերջինս ստանալու էր 100 մլն դոլար և ամերիկյան սպառազինություն²⁵ («Մարշալի պլանով» 1948-1951 թթ. Թուրքիային տրամադրվեց մոտ 137 մլն դոլարի տնտեսական և ռազմական օգնություն²⁶): Նախատեսվում էր ամերիկյան ռազմական հենակետեր ստեղծել Միջերկրական ծովի արևելյան մասում, որն ուղղված էր ԽՍՀՄ-ի և Մերձավոր Արևելքի ազգային-ազատագրական շարժումների դեմ:

Թուրքիային պաշտպանելու համար ԱՄՆ-ի կառավարությունը կտրուկ քայլեր ձեռնարկեց հայկական կազմակերպությունների դեմ: 1947 թ. վերջերին ԱՄՆ-ի արդարադատության նախարարությունն Ամերիկայի հայկական առաջադիմական միությունը (լիգա) մտցրեց հակաամերիկյան կազմակերպությունների ցուցակի մեջ, իսկ Ազգային խորհուրդը ստիպված էր դադարեցնել

²² Ст'ю Речь Трумэна на заседании Конгресса 12 марта 1947 г. - "Доктрина Трумэна" // <http://www.coldwar.ru/truman/doctrine.php>

²³ Системная история международных отношений 1918-2003 (ред. А. Богатуров), т. 3, М., 2003, с. 75.

²⁴ **Սիմոնյան Հ. Ռ.**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 538:

²⁵ **Հասրաթյան Մ. Ա., Օրեշկովա Ս. Ֆ., Պետրոսյան Յու. Ա.**, նշվ. աշխ., էջ 302:

²⁶ **Martin A.**, Chained., The Marshall plan: fifty years after, New York: Palgrave, 2001, p. 120.

հայկական պահանջների քարոզը, քանի որ այդ պահանջները համարվում էին հակաամերիկյան²⁷:

«Սառը պատերազմի» պաշտոնական մեկնարկը, միջազգային լարվածության ուժեղացումն անիրական էին դարձնում հայկական տարածքների վերադարձման հարցը²⁸: Այս պայմաններում 1953 թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը հայտարարեց, որ բարիդրացիական հարաբերություններ, խաղաղություն և անվտանգություն պահպանելու համար Հայաստանի և Վրաստանի (վերջիններս նույնպես հավակնում էին հայկական տարածքներին) կառավարությունները հնարավոր համարեցին հրաժարվել Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից (նեղուցների հարցում խորհրդային կառավարությունը վերանայել էր իր նախկին կարծիքը և հնարավոր էր համարում նեղուցների կողմից ԽՍՀՄ-ի անվտանգությունն ապահովել իր և Թուրքիայի համար հավասար ընդունելի պայմաններով): Այսպիսով, խորհրդային կառավարությունը հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի: Խորհրդային Հայաստանը, չունենալով միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ, անկարող էր որևէ կերպ ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Խորհրդային կառավարությունը, Հայկական տարածքների հետ միասին առաջ քաշելով սևծովյան նեղուցների կարգավիճակի խնդիրը, դրանով հայկական տարածքների հարցը մտցրեց փակուղի: Հայ ժողովրդի արդարացի պահանջները կրկին զոհաբերվեցին մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերին²⁹:

Այսպիսով, «Սառը պատերազմի» ձևավորման, խորհրդա-ամերիկյան հարաբերությունների սրման «Տրումենի հայեցակարգի» և «զսպման» դրույթի ընդունման գործում իր ուրույն տեղն է ունեցել հետպատերազմյան ժամանակաշրջանում վերաբացված հայկական տարածքների հարցը: Այն հայկական հարցի արդարացի լուծում տալու մեջ ունեցել է իր բացասական դերակատարումը և իր սուր ծայրով ուղղված է եղել նաև նրա դեմ:

1951 թ. հոկտեմբերի 10-ին հրապարակված «Փոխադարձ անվտանգության ապահովության» մասին օրենքի շրջանակներում Թուրքիան ԱՄՆ-ից

²⁷ Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 61:

²⁸ Не нужен нам берег турецкий? / <http://www.samoz.ru/article.php?id=48>; Несостоявшиеся войны Сталина / <http://www.vremya.ru/2008/130/13/208743.html>

²⁹ Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 62-63:

ստացավ 2,9 մլրդ դոլարի ամերիկյան օգնություն³⁰ (2/3-րդը կազմում էր ռազմական օգնությունը³¹):

1951 թ. հոկտեմբերին ստորագրվեց արձանագրություն Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ դառնալու մասին, որը վավերացվեց 1952 թ. փետրվարին (1955 թ. ձևավորվեց Բաղդադի պակտը, որը, ըստ էության, ՆԱՏՕ-ի մերձավորարևելյան մասնաճյուղն էր և անմիջականորեն ուղղված էր ԽՍՀՄ-ի, ազգային-ազատագրական շարժումների և դրանով իսկ նաև Հայկական հարցի դեմ): Թուրքիայի ամբողջ տարածքում, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանում, ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն ստեղծեցին ռազմաօդային, ռազմածովային և հրթիռների արձակման հենակետեր, ռադիոլուկացիոն սարքեր և այլն³¹: Թուրքական զինվորական մասնագետները բացահայտորեն սկսեցին հայտարարել, որ պատերազմի դեպքում առաջին հարվածը կհասցվի ՀԽՍՀ-ի մայրաքաղաք Երևանին³²:

ԽՍՀՄ ժողկոմխորհը 1945 թ. նոյեմբերի 21-ին, ընդառաջելով սփյուռքահայության՝ հայրենիք վերադառնալու ցանկությանը և ՀԽՍՀ ղեկավարության միջնորդությանը, որոշում ընդունեց սփյուռքահայերի զանգվածային ներգաղթ կազմակերպելու մասին³³: 1946-1948 թթ. մոտ 90 հազ. հայ եկավ Խորհրդային Հայաստան³⁴, որոնք միաժամանակ հայկական տարածքները վերադարձնելու խնդրի լուծմամբ համակվել էին լավատեսությամբ³⁵: Սակայն «սառը պատերազմի» պայմաններում ընդունված «Տրումենի հայեցակարգը», որը փաստորեն խնդիր ուներ պաշտպանելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և ուղղված էր ԽՍՀՄ-ի դեմ, չարդարացրեց հայրենադարձ սփյուռքահայության այն սպասելիքները, ովքեր ցանկանում էին բնակություն հաստատել Թուրքիայից ՀԽՍՀ-ին վերադարձվելիք տարածքներում:

Այսպիսով, «Տրումենի հայեցակարգը», պաշտպանելով Թուրքիայի տա-

³⁰ **Հասրաթյան Մ. Ա., Օրեշկովա Ա. Ֆ., Պետրոսյան Յու.Ա.**, նշվ. աշխ., էջ 317:

^{*} 1950-ական թթ. Թուրքիան ԱՄՆ-ից միջին հաշվով ստանում էր 178 մլն դոլար արտաքին վարկեր և օգնություն, 1960-ական թթ.՝ 300 մլն, 1970-ական թթ. առաջին կեսին՝ մոտ 600 մլն, 1976-1985 թթ.՝ 2,5 մլրդ դոլար (նույն տեղում):

³¹ Военные объекты США и НАТО на территории Турции // <http://commi.narod.ru/txt/1987/0320.htm>.

³² **Սիմոնյան Հ. Ռ.**, նշվ. աշխ., էջ 539:

³³ **Կարապետյան Մ. Ս., Գևորգյան Է. Գ.**, նշվ. աշխ., էջ 329:

³⁴ **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980 թթ., Երևան, Համալսարանի հրատարակչություն, 1985, էջ 240:

³⁵ **Սիմոնյան Հ. Ռ.**, նշվ. աշխ., էջ 536:

րաճքային ամբողջականությունը և լինելով «գապման» դրույթի մարտավարական դրսևորումներից մեկը, բացասաբար է ազդել ԽՍՀՄ-ի մաս հանդիսացող ՀԽՍՀ-ի վրա:

Ինչ վերաբերում է «սառը պատերազմի» ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մյուս հայեցակարգերին, ապա դրանց ազդեցությունը Խորհրդային Հայաստանը զգացել է այնքանով, որքանով որ եղել է ԽՍՀՄ-ի բաղկացուցիչ, նրա կազմի մեջ մտնող միութենական հանրապետություններից մեկը:

1991 թ. դեկտեմբերին՝ ԽՍՀՄ-ի փլուզումից և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հռչակումից հետո, երկրում առաջացավ տնտեսական և էներգետիկ ճգնաժամ, որից դուրս գալու համար նորանկախ պետությունը սկսեց վարկեր վերցնել առանձին պետություններից և միջազգային կառույցներից: ՀՀ-ի առաջին վարկատուները եղել են Եվրամիությունը, Համաշխարհային բանկը՝ ՀԲ-ն, և Արժույթի միջազգային հիմնադրամը, ԱՄՀ-ն, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ), Ռուսաստանի Դաշնությունը: ՀՀ-ն 1992 թ. անդամակցեց ՀԲ-ին, իսկ 1993 թ.՝ Միջազգային զարգացման գործակալությանը (ՄՋԳ)³⁶: Նպատակն է օգնել Հայաստանին հաղթահարել աղքատությունը, աջակցել տնտեսության, մարդկային և մասնավոր կապիտալի զարգացմանը և այլն³⁷: ԱՄՆ-ի գործուն միջնորդությամբ Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը Հայաստանում իրականացրել են շուրջ 1 մլրդ դոլարի երկարաժամկետ վարկային և դրամաշնորհային ծրագրեր³⁸:

Այսպիսով, վերազգային կազմակերպություններից, օրինակ՝ ՀԲ-ն և ԱՄՀ-ն, հանդիսանալով ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի ընդհանուր տնտեսաֆինանսական ռազմավարության մաս, կարողացան իրենց գործառույթները տարածել նաև ՀՀ-ի և հետխորհրդային մյուս հանրապետությունների վրա:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերն իրենց արդիականությունը պահպանում են նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո և էական

³⁶ Տե՛ս Հայաստան. ԱՄՀ-ի առաքելության ավարտական հուշագիր, 16-ը հունիսի 2008 թ. / <https://www.imf.org/external/np/ms/2008/arm/061608a.pdf>.

³⁷ Armenia: World Bank Helps Armenia Protect Its Poor and Become More Competitive. <http://www.worldbank.org/hy/news/press-release/2012/02/14/armenia-world-bank-helps-armeniaprotect-its-poor-and-become-more-competitive>.

³⁸ ԱՄՆ-ում ՀՀ դեսպանություն / <http://usa.mfa.am/hy/bilateral-us/>.

փոփոխության չենթարկվելով՝ իրենց ազդեցությունն են թողնում ԱՄՆ-ի ժամանակակից արտաքին քաղաքականության վրա: Այս ամենը բնականաբար ազդեց նաև նորանկախ ՀՀ-ի վրա:

Հարավային Կովկասն աշխարհագրական դիրքով ունի ռազմավարական նշանակություն և կարող է ծառայել որպես «բուֆերային գոտի»³⁹: Եվրասիոհրդարանի փաստաթղթերում այն համարվում է որպես «կամուրջ Եվրոպայի և Ասիայի համար»⁴⁰: ՀՀ-ն համագործակցում է նաև ՆԱՏՕ-ի հետ (լինելով Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ), որն ավելի ընդլայնվեց, երբ 1994 թ. միացավ նաև Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրին: 2005 թ. ՆԱՏՕ-ն և Հայաստանը համաձայնության եկան երկրի անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) վերաբերյալ⁴¹:

Դա ցույց է տալիս, որ «սառըպատերազմյան» ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի ռազմական բնույթը և ավանդապես ձևավորված սկզբունքները շարունակվում են կյանքի կոչվել միջազգային հարաբերությունների նոր իրողությունների՝ «հետսառըպատերազմյան» շրջանի պայմաններում, որտեղ ՀՀ-ն կարող է ունենալ ուրույն դերակատարում:

2007թ. փետրվարի 7-ին ՀՀ կառավարությունն ընդունեց որոշում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մասին: Դրանով ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը ենթակա է ճշգրտումների՝ ըստ ներպետական և միջազգային իրադրության, սպառնալիքների ու մարտահրավերների փոփոխման, ինչպես նաև փաստաթղթում նշված նպատակների իրականացման⁴²:

Կարծում ենք, որ ՀՀ կառավարությունը կկարողանա երկիրը հեռու պահել արտաքին սպառնալիքներից և պետության միջազգային մեկուսացումից:

³⁹ **Քոթանջյան Հ.**, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության ճանապարհին, Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2008, էջ 43-92:

⁴⁰ **Շիրինյան Լ.**, Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Երևան, 2006, էջ 157:

⁴¹ Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների մասին տե՛ս Հայաստան-ՆԱՏՕ առաջընթացի 10 տարիներ, 1999-2008 թթ., Երևան, «Մեդիա-Մաքս», 2008, էջ 5-54:

⁴² ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն / www.mfe.am/up/govact/tnt-38-29-01:

Այսպիսով, ԱՄՆ-ի «սառը պատերազմի» արտաքին քաղաքականության հայեցակարգերն իրենց սուր ծայրով ուղղված էին ԽՍՀՄ-ի դեմ և իրենց անուղղակի ազդեցությունն էին թողնում ՀԽՍՀ-ի վրա: Հիշատակման արժանի է հատկապես «Տրումենի հայեցակարգը», որն իր բացասական ազդեցությունն է ունեցել Հայկական հարցի դրական լուծման և ինչու չէ նաև 1946-1948 թթ. հայրենադարձության վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՄՆ-ի «սառը պատերազմի» արտաքին քաղաքականության հայեցակարգերն իրենց սուր ծայրով ուղղված էին ԽՍՀՄ-ի դեմ և իրենց անուղղակի ազդեցությունն էին թողնում ՀԽՍՀ-ի վրա: Հիշատակման արժանի է հատկապես «Տրումենի հայեցակարգը», որն իր բացասական ազդեցությունն է ունեցել Հայկական հարցի դրական լուծման և ինչու չէ նաև 1946-1948 թթ. հայրենադարձության վրա:

Բանալի բաներ - Հայաստան, Հայկական հարց, ԱՄՆ, «Տրումենի հայեցակարգ», ԽՍՀՄ:

АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИХ ДОКТРИН США

ЭДГАР НАВОЯН

Внешнеполитические сценарные доктрины США в эпоху холодной войны в основном были направлены против СССР и стран социалистического лагеря, чтобы по возможности не только ослабить, но и в конце концов уничтожить их, что и случилось в 1991 году. Это борьба имела не только военно-политический, экономический, идеологический, но и более глубокий, геополитический характер (которую в СССР так и не поняли) и продолжается до сих пор, но уже против России. Это негативно отразилось на Армении и в целом на Армянском вопросе.

Ключевые слова - Армения, Армянский вопрос, США, Доктрина Трумэна, СССР.

**ARMENIA IN THE CONTEXT OF
THE IMPACT OF THE FOREIGN POLICY DOCTRINES OF THE UNITED STATES
ON THE FIRST REPUBLIC OF ARMENIA AND ASSR**

EDGAR NAVOYAN

The doctrines of USA foreign policy during the Cold War was mainly addressed against the USSR and they actually had an indirect influence on ArmSSR. The effect of the Truman doctrine was also considerably harmful. It had a negative impact on the resolution of the “Armenian Question” and on the repatriation of Armenians in the years from 1946-48 as well.

Key words - Armenia, the Armenian Question, the USA, Truman Doctrine, the Soviet Union.

ԲԼՈԳՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԷՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ-ում բլոգները չունեն այնքան մեծ թվով ընթերցողներ, որքան տպագիր կամ համացանցային մամուլը, սակայն եթե Հայաստանում գործում են լուրեր ներկայացնող մի քանի տասնյակ հեռուստառադիոհաղորդումներ, թերթեր և համացանցային պարբերականներ, ապա վերջիններիս համեմատ Հայաստանում գործում են հարյուրավոր բլոգներ: Այս հոդվածի շրջանակներում ուսումնասիրել ենք քաղաքական գիտությունների դոկտոր Արթուր Աթանեսյանի աշխատությունները: Առավել համապարփակ ուսումնասիրվել է «Конфликтные коммуникации и проблемы информационной безопасности» աշխատությունը¹: Աշխատանքում հիմնականում ներկայացված են համացանցային գործիքների կիրառումը ՀՀ անվտանգության տեսանկյունից: Ըստ արդյունավետության՝ համեմատության մեջ են դրվել Հայաստանում և Ադրբեջանում կիրառվող համացանցային գործիքները: Համացանցային գործիքների կիրառման արդյունավետության բացահայտման համար ուսումնասիրվել են նաև քաղաքական գիտությունների թեկնածուներ Հայկ Սուքիասյանի², Վահան Դիլանյանի³ և այլ հեղինակների աշխատությունները: Համացանցի և բլոգների ընդհանուր կիրառման և համացանցի զարգացման, տեղեկատվական անվտանգության ուսումնասիրության տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանի լրագրողական վերլուծությունները⁴ և այլ հեղինակների աշխատանքներ: Նշված հեղինակների աշխատությունները մեծ արժեք ունեն քաղաքագիտության համար, քանի որ հիմնված են վիճակագրական տվյալների,

¹ Տե՛ս **Արթուր Ատանեսյան**, Конфликтные коммуникации и проблемы информационной Безопасности, 2009 г. ЕГУ. Ереван, 2009. 333 страници.

² Տե՛ս **Հայկ Սուքիասյան**, Տեղեկատվական հասարակություն. Սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ. «Սարվարդ» հրատ. ՍՊԸ, Երևան 2009, 267 էջ:

³ Տե՛ս **Վահան Դիլանյան**, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի կատարելագործումը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, Երևան, 2012, 134 էջ:

⁴ Տե՛ս Սամվել Մարտիրոսյանի հոդվածները «Նորավանք» հանդեսում: Այցելություն՝ 09/02/2015

http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12818&sphrase_id=39340:

համեմատական վերլուծությունների վրա և կարող են օգտակար լինել համացանցային գործիքները փիառ նպատակներով կիրառել պատրաստվող քաղաքական գործիչներին, ՀՀ արտաքին քաղաքականություն իրականացնող դիվանագետներին, սակայն վերջիններիս աշխատանքում բացակայում են ուսումնասիրություններ, որոնք կբացահայտեն բլոգների կայացումը՝ որպես քաղաքականության վրա ազդեցության միջոց: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերջին շրջանում հետաքրքրությունը բլոգների և վեբ գործիքների նկատմամբ մեծանում է նաև ՋԼՄ-ների և քաղաքական գործիչների շրջանում: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը⁵, ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը⁶, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը⁷, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախկին նախագահ Գագիկ Ծառուկյանը⁸, «Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանը⁹, «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը¹⁰, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը¹¹, Երևանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանը¹² և այլ քաղաքական գործիչներ ստեղծում և կառավարում են

⁵ Տե՛ս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 15/09/2015 <http://www.facebook.com/pages/Serzh-Sargsyan/112145495468070?ref=ts&sk=info>:

⁶ Տե՛ս ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանի fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 15/09/2015 <http://www.facebook.com/pages/Tigran-Sargsyan/43211285887>:

⁷ Տե՛ս ՀՀ Հովիկ Աբրահամյանի fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 15/09/2015 <http://www.facebook.com/pages/Hovik-Abrahamyan/203473279674265>:

⁸ Տե՛ս ԲՀԿ նախկին նախագահ Գագիկ Ծառուկյանի fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 15/09/2015 <http://www.facebook.com/GagikTsarukyan>:

⁹ Տե՛ս «Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանի fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 19/09/2015 <http://www.facebook.com/RKHOV?ref=ts>

¹⁰ Տե՛ս «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանի fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 18/09/2015 <http://www.facebook.com/pages/Artur-Baghdasaryan/256565661023634?sk=wall>

¹¹ Տե՛ս ՀԱԿ առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 16/09/2015 <http://www.facebook.com/levonterpetrosyan?ref=ts&sk=wall>:

¹² Տե՛ս Երևանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանի fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 15/09/2011:

իրենց անձնական պլատֆորմները տարբեր սոցիալական ցանցերում: Տարբեր կայքեր, բլոգներ, հաշիվներ սոցցանցերում ունեն նաև մի շարք քաղաքական կուսակցություններ, ինչպես օրինակ՝ Հայաստանի «Հանրապետական» կուսակցությունը¹³, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը¹⁴, «Օրինաց երկիր» կուսակցությունը¹⁵, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը¹⁶, Հայ ազգային կոնգրեսը¹⁷ և այլն:

Աշխատանքի այս հատվածում նախ ուսումնասիրենք և վերլուծենք Հայաստանում բլոգների ներթափանցումը, զարգացումը, քաղաքականության մեջ դրանց կիրառումը և հետագա զարգացումը: Հայաստանում առաջին բլոգների

<http://www.facebook.com/Karen.Karapetyan>

¹³ Տե՛ս «Հանրապետական» կուսակցության fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 16/09/2015

<http://www.facebook.com/pages/Republican-Party-of-Armenia-hhkam-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D4%BF%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/100770493323679?ref=ts&sk=wall>:

¹⁴ Տե՛ս «Բարգավաճ Հայաստան» կուսակցության fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 19/09/2015

<http://www.facebook.com/pages/Prosperous-Armenia%D4%B2%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B3-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6wwwbhkam/109453322426363>:

¹⁵ Տե՛ս «Օրինաց երկիր» կուսակցության fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 15/09/2015

<http://www.facebook.com/pages/Rule-of-Law/141037475922344?ref=ts&sk=info>:

¹⁶ Տե՛ս «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 15/09/2015

<http://www.facebook.com/pages/Armenian-Revolutionary-Federation-%D5%80%D5%85%D4%B4-%D5%80%D5%A1%D5%B5-%D5%85%D5%A5%D5%B2%D5%A1%D6%83%D5%B8%D5%AD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D4%B4%D5%A1%D5%B7%D5%B6%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%AB%D6%82%D5%B6/151679834847391?ref=ts&sk=wall>:

¹⁷ Տե՛ս Հայ ազգային կոնգրեսի fan page-ը facebook սոցցանցում: Այցելություն՝ 15/09/2015

<http://www.facebook.com/pages/%D5%80%D5%A1%D5%B5-%D4%B1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D4%BF%D5%B8%D5%B6%D5%A3%D6%80%D5%A5%D5%BDArmenian-National-Congress/188759431167219?ref=ts&sk=info>:

նախատիպերը հայտնվել են «Cilicia» կայքում: Կայքի չատը (Chat) զանգվածայնություն էր վայելում սփյուռքահայերի շրջանում¹⁸: Այնուհետև այնտեղ տեղադրվեց նաև բլոգների համար նախատեսված անկյուն՝ Armenian Blogs վերտառությամբ¹⁹: «Կիլիկիա» կայքի Armenian blogs բաժնի ամենատարածված և զանգվածայնություն վայելող ենթաբաժինը Repatriate-ն է: Առաջին նյութն այս բաժնում տեղադրվել է 2001 թվականի ապրիլի 21-ին²⁰, սակայն այս ենթաբաժնում քաղաքական թեմաներն այդքան էլ հաճախ չեն հանդիպում: Առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում Diaspora բաժինը²¹: Այստեղ առավել հաճախ են գրառումները քաղաքական թեմաների շուրջ: Բաժնում առաջին քաղաքական թեմայի շուրջ նյութ է տեղադրել Հովհաննեսը (**Hovhannes**): Նյութում բլոգերը խոսում է Արգենտինայում 2001 թ. դեկտեմբերին նախագահ Դե Լա Ռուայի հրաժարականի մասին²²: Միաժամանակ Hovhannes-ը անդրադառնում է Արգենտինայի տնտեսական խնդիրներին՝ տեղեկացնելով, որ պետն իր փոխարժեքը փոխում է դոլարի նկատմամբ: Բլոգեր Արսինեն (**Arsineh**) նշում է, որ «Նյու Յորք Թայմս» թերթը իր դիրքորոշումը փոխում է «Հայոց ցեղասպանություն» եզրի նկատմամբ²³, նշելով, որ «Նյու Յորք Թայմսը» վերջերս վերանվանել է իր ընթերցողների համար նախատեսված ծանուցումներից մեկը, որը Հայոց ցեղասպանության մասին է: Համաձայն թերթի նոր քաղաքականության՝ ««ցեղասպանություն» բառի գիտական սահմանման մանրամասն հետազոտությունից հետո մենք որոշել ենք այդ

¹⁸ Տե՛ս «Cilicia» սոցիալական կայքը: Այցելություն՝ 13/04/2011

www.cilicia.com:

¹⁹ Տե՛ս Armenian Blogs բաժինը «Cilicia» սոցիալական կայքի գլխավոր էջում: Այցելություն՝ 13/04/2011

www.cilicia.com:

²⁰ Տե՛ս **Raffi K** «Welcome to the new LIFE IN ARMENIA log... », ապրիլի 21, 2001: Այցելություն՝ 13/04/2011

http://www.cilicia.com/2001_04_01_armo_life-backlog.html:

²¹ Տե՛ս **Raffi N**, «hello», «Cilicia» սոցիալական կայք, դեկտեմբերի 5, 2001: Այցելություն՝ 14/04/2015

http://www.cilicia.com/2001_12_01_armo_spiurk-backlog.html:

²² Տե՛ս **Hovhannes** «Argentinazo», «Cilicia» սոցիալական ցանց, դեկտեմբերի 22, 2001: Այցելություն՝ 14/04/2015

http://www.cilicia.com/2001_12_01_armo_spiurk-backlog.html:

²³ Տե՛ս **Arsineh**, «New York Times changes its policy on Armenian Genocide», «Cilicia» սոցիալական ցանց, ապրիլի 19, 2004: Այցելություն՝ 14/04/2015

http://www.cilicia.com/2004_04_01_armo_spiurk-backlog.html:

եզրի փոխարեն օգտագործել «Թուրքերի կողմից հայերի զանգվածային ոչնչացումը 1915 թվականին»²⁴: Նշենք, որ այս բաժնում քննարկումներ չեն եղել քաղաքական թեմաների շուրջ, և չկա քաղաքականության մասին որևէ գրառում, որ ստանար գոնե մեկ մեկնաբանություն: «Cilicia» կայքը մի քանի տարի շարունակ հայ բլոգերների շրջանում զանգվածայնություն վայելող կայքն էր, սակայն այն այլևս հետաքրքրություն չէր ներկայացնում քաղաքականության մասին գրող բլոգերների համար: Պատճառների թվում էին կայքի տեխնիկական խնդիրները:

«Cilicia» սոցցանցում անհաղը չի կարող ունենալ իր անձնական էջը, որտեղ կտեղադրվեին միայն տվյալ անձի բլոգները: Քաղաքականացված կամ քաղաքականության մասին գրող բլոգերներին անհրաժեշտ է անձնական էջ, քանի որ վերջիններս պետք է գործեն առավել անկախ և պետք է լինեն առավել հեշտ հասանելի հանրության լայն զանգվածների համար, սակայն «Cilicia» կայքում անհնար էր ունենալ սեփական էջ, որը կունենար իր առանձնահատկությունները և վարկանիշը: «Cilicia» սոցիալական ցանցը տեխնիկապես չէր ապահովում վարկանիշային որևէ աղյուսակ:

Կայքը չունի գործիքների հարուստ ցանց, որոնք բլոգերներին հնարավորություն կտային առավել յուրահատուկ ոճով գրելու, օպերատիվ գործելու կամ տեղադրելու ավելի հետաքրքիր և բազմազան մեդիա: Քաղաքական բլոգի հեղինակությունը մեծապես կախված է այս կամ այն երևույթի մասին արագ և օպերատիվ արձագանքումից և տարածումից, իսկ այս կայքում նման հնարավորություն բլոգերներին չէր տրվում, ցանկացած նյութ հրապարակվում էր ադմինիստրատորի վերահսկմամբ, ինչը ժամանակատար էր: Միաժամանակ կայքում միջին տեխնիկական ունակություններ ունեցող բլոգերի համար դժվար էր հոլովակներ, հղումներ կամ պատկերներ տեղադրելը, ինչը նույնպես դանդաղեցնում էր բլոգերների գործողությունները:

Բլոգերների վրա բավական մեծ ազդեցություն ունեն կայքի ադմինիստրատորները: Որևէ բազային փոփոխություն կատարելիս պետք էր դա համաձայնեցնել կայքի ադմինիստրատորների հետ:

Քաղաքականության մասին բլոգներում տեղադրված նյութերը հաճախ լինում են հակասական և առաջացնում են բուռն արձագանք, նման պայ-

²⁴ Տե՛ս **Arsineh**, «New York Times changes its policy on Armenian Genocide», «Cilicia» սոցիալական ցանց, ապրիլի 19, 2004: Այցելություն՝ 14/04/2015 http://www.cilicia.com/2004_04_01_armo_spiurk-backlog.html:

մաններում ցանկացած բլոգեր փորձում է լինել հնարավորինս անկախ ադմինիստրատորներից և բոլոր անհատներից, ովքեր կարող են ներազդել իր գրառման խմբագրման կամ հեռացման վրա, իսկ այս կայքում ադմինիստրատորներն ունենի գրեթե անսահմանափակ իրավունքներ և կարող էին հեռացնել ցանկացած գրառում ըստ իրենց որոշման: Հենց այս գործոններից յուրաքանչյուրը յուրովի ազդեց, որ քաղաքականության մասին գրող կամ քաղաքականությամբ հետաքրքրված բլոգերները հեռանան Cilicia կայքից և բլոգներ ստեղծեն այլ միջավայրերում: Մեր ուսումնասիրության համաձայն՝ Հայաստանում գործող ամենահին քաղաքական բլոգները կամ քաղաքականության մասին գրող բլոգները հիմնականում տեղադրված են «livejournal (լայֆջորնըլ)» կայքում²⁵: Կայքում գործող Ըհաուսքիփըր (**ahousekeeper**) բլոգերն իր նյութերից մեկում ներկայացրել է բոլոր հայ բլոգերներին, ովքեր նյութեր են գրել ավելի վաղ, քան ինքն անդամակցել է կայքին²⁶: Ցուցակում ընդգրկված են 11 բլոգերներ՝ Իրուկանը (**irukan**)²⁷, Ափմեհը (**apmeh**)²⁸, Կորնելին (**kornelij**)²⁹, Փիղը (**pigh**)³⁰, Օգոստոսը (**ogostos**)³¹, Դիլանյանը (**dilanyan**)³², Ուզոդը (**uzogh**)³³, Հայկը (**hayk**)³⁴, Բիգսաուրունը (**bigsau-**

²⁵ «livejournal» կայքի հղումն է՝ www.livejournal.com:

²⁶ Տե՛ս Ahousekeeper, «Papas and Mamas», «Livejournal» բլոգային համայնք, հոկտեմբեր 16, 2009: Այցելություն՝ ապրիլի 14/04/2015 թ.

<http://ahousekeeper.livejournal.com/559230.html>:

²⁷ Իսկական անունը՝ Կարեն Նալբանդյան: Այցելություն՝ 14/04/2015:

<http://irukan.livejournal.com/2003/06/06/>:

²⁸ Իսկական անունը՝ Արմեն Խանոյան: Այցելություն՝ 14/04/2015:

<http://apmeh.livejournal.com/2003/04/18/>:

²⁹ Իսկական անունը՝ Սամվել Մարտիրոսյան: Այցելություն՝ 14/04/2015 թ.:

<http://kornelij.livejournal.com/2005/06/09/>:

³⁰ Իսկական անունը՝ Տիգրան Քոչարյան, առաջին նյութը տեղադրել է 2004 թ. մայիսի 29-ին <http://pigh.livejournal.com/2004/05/29/>, սակայն նրա հաշիվը փակվել է կայքի ադմինիստրատորների կողմից: Այժմ Տիգրան Քոչարյանի բլոգը գործում է www.pigh.tv դոմենում:

³¹ Իսկական անունը՝ Աննա Սիմոնյան: Այցելություն՝ 14/04/2015

<http://ogostos.livejournal.com/2004/11/19/>:

³² Իսկական անունը՝ Հովհաննես Դիլանյան: Այցելություն՝ 14/04/2015

<http://dilanyan.livejournal.com/2004/01/05/>:

³³ Իսկական անունը՝ Ռուբեն Մուրադյան: Այցելություն՝ 14/04/2015

<http://uzogh.livejournal.com/2005/12/13/>:

³⁴ Իսկական անունը թաքցնում է, առաջին նյութը տեղադրել է 2003 թ. հոկտեմբերի 4-ին: Այցելություն 14/04/2011

ron)³⁵, 517 Դիզայնը (**517design**)³⁶ և Դաբավոգը (**dabavog**)³⁷: Բլոգեր Փիղը (Pigh)՝ Տիգրան Քոչարյանը, առաջինն է, ում բլոգը կարելի է համարել քաղաքական: Տիգրան Քոչարյանի հղումների մեծամասնությունը քաղաքական ուղղվածություն ունեն: Դրանք են՝ «Ереван в фотографии», «Новости Армении на английском», «Justice for Khojaly», «Openarmenia», «The criminal case on mass disorders in Yerevan/March1-2, 2008», «The official map of the Republic of Armenia and Nagorno-Karabakh Republic (NKR)» և «7orblog» հղումները³⁸: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցանկացած երկրում բլոգների նկատմամբ հետաքրքրությունն աճում է որևէ իրադարձության հետևանքով, որը խթան է թե՛ բլոգների տարածման և թե՛ հասարակության շրջանում վերջիններիս նկատմամբ հետաքրքրության մեծացման համար: Եթե ԱՄՆ-ում այդ իրադարձությունն էր 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը, Չինաստանում՝ 2005 թ. հակաճապոնական ցույցերն ընդդեմ Ճապոնիայում լույս տեսած գրքերի, որտեղ չինացիների նկատմամբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ճապոնացիների կողմից իրականացված վայրագություններն արդարացվում էին³⁹, ապա Հայաստանում բլոգոսֆերայի նկատմամբ լրագրողների և հասարակության ուշադրությունն ավելացավ 2007 թ. դեկտեմբերի 18-ին, երբ 4 բլոգերներ քաղաքական ակցիա էին կազմակերպել և «Մխիթար Սեբաստացու» կրթահամալիրում մեկնարկած «Ադրբեջանի օրերի» ակցիայի կազմակերպիչ Գեորգի Վանյանին օճառներ նվիրել⁴⁰: Սրանից հետո լրագրողները սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել բլոգերներին և

<http://hayk.livejournal.com/2003/10/04/>

³⁵ Իսկական անունը՝ Վարդան Բագիրյան: Այցելություն՝ 14/04/2015

<http://bigsaaron.livejournal.com/2005/02/18/>:

³⁶ Իսկական անունը՝ Սեդրակ Մկրտչյան: Այցելություն՝ 14/04/2015

<http://517design.livejournal.com/2004/07/30/>:

³⁷ Իսկական անունը՝ Արսեն Կարապետյան: Այցելություն՝ 14/04/2015

<http://dabavog.livejournal.com/2006/07/23/>:

³⁸ Ադրբեջանական տեղեկատվական հոսքերի պատճառով Տիգրան Քոչարյանի բլոգը livejournal.com-ում արգելափակվել է, ինչի մասին համառոտ կներկայացվի աշխատանքում

³⁹ Տե՛ս **Rebecca MacKinnon**. “Flatter world and thicker walls? Blogs, censorship and civic discourse in China” pages 31-46 (15 pages), “Public Choice”, Volume 134, issue 1, 2008 Online publication. Springer Science+Business Media, BV 2007. p- 36.

⁴⁰ Տե՛ս **Տաթև Հարությունյան**, «Ադրբեջանցիները «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում», «Առավոտ» օրաթերթ, դեկտեմբերի 18, 2011: Այցելություն՝ 22/04/2015 <http://aravot.am/am/articles/guidepark/33737/view>

վերջիններիս գործունեությանը: Որպես օրինակ կարելի է նշել «Հայաստանում բլոգերները ակտիվացել են» նյութը «Առավոտ» օրաթերթում⁴¹: Այս նյութը կարելի է համարել «բլոգների տեսության»⁴² նախատիպերից մեկը: Նյութում ներկայացվում է տվյալ ժամանակահատվածում ակտիվ գործունեություն ծավալող բլոգերներ Irukan-ի, Petruccio-ի և ahousekeeper-ի գործունեությունը: Համաձայն այս նյութի՝ 2008 թ. Հայաստանում գործում էին 200-ից ավելի բլոգերներ, իսկ նրանց նյութերը կարդում էին 1000-ից ավելի ընթերցողներ⁴³: Այս շրջանում էլ սկսեցին ստեղծվել տարբեր բլոգներ, որոնց հիմնական գործունեությունն էր տեղեկատվություն տարածել, թե ինչ թեմաներ են քննարկվում հայկական բլոգներում: Հայաստանյան բլոգներն առավել քաղաքականացվեցին և կոնսոլիդացան 2007 թ. սկզբին, ինչը կապված էր սպասվող կարևոր քաղաքական իրադարձության՝ 2007 թ. խորհրդարանական ընտրությունների հետ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել քաղաքական բլոգերների գործունեության երկու երևույթներ. **1. Սեփական նախաձեռնություն. 2. Արձագանք իրադարձություններին**: Որպես առաջինի օրինակ կարելի է նշել բլոգեր Uzogh-ի գործունեությունը, ով ՀՀ նախագահական ընտրությունների շեմին տեղադրել էր հարցախույզ, որով պարզում էր, թե բլոգերներն ում կընտրեն առաջիկա նախագահական ընտրություններում: Մասնակցել էր 100 ընթերցող, իսկ առավել մեծ թվով ձայներ ստացել էր ՀՀ 2008 թ. նախագահական ընտրություններում թեկնածու առաջադրված Վազգեն Մանուկյանը՝ 32 ձայն, ում հաջորդում էին ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և ՀՀ գործող վարչապետ Սերժ Սարգսյանը⁴⁴: Սեփական նախաձեռնության մեկ այլ օրինակ է նաև «Ադրբեջանցի գրող և հրապա-

⁴¹ Տե՛ս **Տաթև Հարությունյան**, Հայաստանում բլոգերները ակտիվացել են, «Առավոտ» օրաթերթ, հունվարի 26, 2008: Այցելություն՝ 22/04/2015
<http://www.aravot.am/am/articles/culture/35529/view/u09.htm>:

⁴² «Բլոգների տեսությունը» շարք է, որտեղ համառոտ ներկայացվում է որոշ թվով բլոգերների շաբաթական կամ պարբերական գործունեությունը:

⁴³ Տե՛ս **Տաթև Հարությունյան**, Հայաստանում բլոգերները ակտիվացել են, «Առավոտ» օրաթերթ, հունվարի 26, 2008: Այցելություն՝ 22/04/2015
<http://www.aravot.am/am/articles/culture/35529/view/u09.htm>:

⁴⁴ Տե՛ս Uzogh, «Итоги голосования за президента», Uzogh-ի բլոգը Livejournal բլոգային համայնքում, հունվարի 8, 2008: Այցելություն՝ 23/04/2015.
<http://uzogh.livejournal.com/131423.html>:

րակախոս» բլոգեր Լորգիկ Ազիկովի⁴⁵ «ստեղծագործությունների» պարբերաբար ընթերցումները Երևանում⁴⁶: Նշենք, որ հայաստանյան քաղաքական բլոգոսֆերայի գրեթե բոլոր ներկայացուցիչները հիմնականում իրենց գործունեությունը կառուցում են ` արձագանքելով ՀՀ-ում տեղի ունեցող կարևոր և հետաքրքիր իրադարձություններին: Նույն ռազմավարությունն է իրականացվում նաև քաղաքական կուսակցությունների կողմից կառավարվող և վերահսկվող web 2:0 գործիքներում և բլոգներում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս աշխատանքում հեղինակը ներկայացնում է Հայաստանում բլոգների ձևավորման, դրանց՝ քաղաքականության վրա ազդեցության մեծացման առանձնահատկությունները: Աշխատանքում ներկայացված են առաջին սոցիալական բլոգների ստեղծման պատճառները, դրանց զարգացման յուրահատկությունները, ինչպես նաև մի շարք բլոգերների՝ սոցիալական դաշտից քաղաքական դաշտ տեղափոխվելու դրդապատճառները: Աշխատանքում ներկայացված են նաև ՀՀ-ում կարևոր իրադարձություններում բլոգների դերակատարումը և ազդեցությունը: Նկարագրված են քաղաքական միջոցառումները, որոնք կազմակերպվել են բլոգերների կողմից, ինչպես նաև այն իրադարձությունները, որոնք հանրային արձագանք են գտել բլոգների գործունեության շնորհիվ:

Բանալի բաներ - բլոգ, ՀՀ, քաղաքականություն, ազդեցություն, համացանցային գործիքներ, web 2.0 գործիքներ, սոցիալական ցանցեր, համացանց:

ОСОБЕННОСТИ УВЕЛИЧЕНИЯ ПОЛИТИЧЕСКОГО ВЛИЯНИЯ БЛОГОВ В РА

ЭРИК КАЗАРЯН

В данной работе автор представляет особенности формирования блогов в Армении и увеличения их влияния на политику. В работе представлены

⁴⁵ Մտացածին կերպար հայ բլոգերների կողմից, բլոգի ստեղծողն ու կառավարողն անանուն է գործում: Տե՛ս «Лобзиказиков»բլոգը. «Livejournal» բլոգային համայնքում: Այցելություն՝ 12/09/2015

<http://lobzik-azikov.livejournal.com/>:

⁴⁶ Տե՛ս հեղ. Лобзик Азиков «Лобзик Azikov Anar Mamedkhanov» վիդեոն. LobzikAzikov վիդեոբլոգ, մարտի 27, 2010: Այցելություն՝ 12/09/2015
<http://www.youtube.com/watch?v=-vR-1oIN26I>:

причины формирования первых социальных блогов, особенности их развития, а также причины их перехода из социального в политическое поле. В работе также представлены роль и влияние блогов в важных событиях РА. Представлены политические мероприятия, которые были организованы блогерами, а также мероприятия, которые получили общественное звучание благодаря деятельности блогов.

Ключевые слова - блог, РА, политика, влияние, интернет-инструменты, веб-инструменты, социальные сети, интернет.

THE ASPECTS OF THE INTENSIFYING IMPACT OF THE BLOGS ON THE POLICY OF RA

ERIK GHAZARYAN

Ghazaryan in this article presents the emergence of social blogs in RA together with the aspects of their intensifying impact on the policy of the country. The grounds for creating the first blocks, the specificities of their further development, the incentives for some groups' switch from the social to the political field are presented as well. In the article mention is also made of the role and influence of the blogs on the important events taking place in RA. Various political proceedings and different events that have either been organized by bloggers or have become of public interest via their activities are as well described.

Key words - blog, RA, policy, influence, internet-tools, web 2.0 tools, social networks, internet.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԻՄՐԵ ԼԱԿԱՏՈՍՆ ԸՆԴԴԵՄ ՖԱԼՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ

ՔՐԻՍՏԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

XX դարի սկզբին գիտության փիլիսոփայության, մասնավորապես Կարլ Պոպերի մեթոդաբանության մեջ *ֆալսիֆիկացիան* (հերքում) և *ֆալսիֆիկացնեիությունը* (հերքելիություն) կենտրոնական տեղ են զբաղեցնում:

Իմրե Լակատոսը, չնայած այն բանին, որ որոշ շրջան կրել է Պոպերի ֆալսիֆիստական իմացաբանության ազդեցությունը, իր աշխատության մեջ վերլուծում և քննադատում է թե՛ դոգմատիկ, թե՛ պոպերյան ֆալսիֆիկացիոնիզմը¹:

Դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմի հայեցակարգի համաձայն՝ բոլոր գիտական տեսություններն առանց բացառության հնարավոր է վերջնականապես ֆալսիֆիկացնել, այսինքն՝ եթե տեսությունը հանդիպում է իրեն հակասող փաստի, ապա այդ տեսությունն անխտիր հերքվում է: Դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմի հայեցակարգի անքակտելի մաս է կազմում դրույթն այն մասին, որ գոյություն ունի անհերքելի էմպիրիկ հիմք (բազիս): Էմպիրիկ բազիսը կազմված է փորձում տրված դատողություններից, որոնք միանշանակ ֆալսիֆիկացնում են տեսությունն այն դեպքում, եթե հակասում են վերջինիս կանխատեսումներին: Դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմի ներկայացուցիչները երբեք կասկածի տակ չեն դնում եզակի դատողությունների ճշմարտացիությունը: Եզակի փաստի և տեսության հակասության արդյունքում միշտ հերքվում է առաջ քաշված տեսությունը: Օրինակ՝ ենթադրենք ունենք տեսություն, ըստ որի բոլոր մոլորակները պտտվում են Արեգակի շուրջ շրջանաձև: Եթե գտնվի որևէ մոլորակ, որը շարժվի ուղղագիծ կամ յուրաքանչյուր այլ ոչ շրջանաձև հետագծով, ապա, ըստ դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմի, վերոհիշյալ տեսությունը պետք է մերժել: Այսպիսով, ըստ դոգմատիկ ֆալսիֆիկացիո-

¹ St' u **Лакатос И.** Фальсификация и методология научно-исследовательских программ // Структура научных революций. М., АСТ, 2003, էջ 276-321:

նիստի, տեսությունը միշտ ֆալսիֆիկացվում է, երբ հանդիպում է իրեն հակասող եզակի փաստի:

Դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստները պնդում են, որ գիտական են այն տեսությունները, որոնք ունեն պոտենցիալ ֆալսիֆիկատորներ: Չֆալսիֆիկացնելի դատողությունները դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստները դեն են նետում՝ համարելով ոչ գիտական և զրկելով գիտության մեջ որևէ դերակատարումից: Օրինակ՝ «Մարդկային ճանաչողության հիմնական աղբյուրը բանականությունն է» դատողությունը չունի պոտենցիալ ֆալսիֆիկատորներ, այսինքն՝ զուրկ է էմպիրիկ բովանդակությունից, քանի որ հնարավոր չէ փորձի միջոցով ստուգել և հերքել այդ դատողությունը: Նմանատիպ տեսությունները կամ դատողությունները, ըստ դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստների, անհերքելի են, հետևաբար՝ ոչ գիտական²:

Լակատոսը քննադատում է դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմը՝ ցույց տալով, որ այն հիմնված է ոչ ճշմարիտ նախադրյալների վրա: Դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմի առաջին նախադրյալի համաձայն՝ գոյություն ունի բնական՝ մարդկային հոգեբանությունից բխող սահման տեսական և փորձնական դատողությունների միջև: Ըստ երկրորդ նախադրյալի՝ փորձնական (բազիսային) դատողությունները բացարձակ ճշմարիտ են: Այս երկու նախադրյալներից ոչ անմիջականորեն բխում է դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմի գիտականության չափանիշը. գիտական են միայն այն տեսությունները, որոնք կարող են հերքվել բազիսային դատողությունների միջոցով: Այլ կերպ ասած՝ տեսությունը գիտական է, եթե ունի էմպիրիկ բազիս, այսինքն՝ պոտենցիալ ֆալսիֆիկատորներ, որոնք կարող են հերքել այդ տեսությունը:

Պարզաբանենք առաջին նախադրյալը, ըստ որի գոյություն ունի մարդկային հոգեբանությունից բխող խիստ տարաբաժանում տեսական և փորձնական դատողությունների միջև: Ընդ որում դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստները փորձնական էին համարում միայն այն դատողությունները, որոնք անմիջական զգայությունների արդյունք են: Հետևաբար, այն փորձնական դատողությունները, օրինակ՝ դիտարկումների ու գիտափորձերի արդյունքում ամրակայված դատողությունները, որոնք անմիջական զգայությունների միջոցով չեն ստացվել, չեն համարվի փորձնական դատողություններ: Օրինակ՝ Գալիլեյը պնդում էր, որ նա կարող է Լուսնի վրա լեռներ և Արեգակի վրա հետքեր «դիտարկել», և այդ դիտարկումը կհերքի ընդունված արիստոտելյան-միջնադար-

² Տե՛ս նույն տեղում, էջ 279-280:

յան տեսությունը, ըստ որի երկնային մարմինները մաքուր սֆերաներ են, այսինքն՝ ունեն իդեալական ձև: Գալիլեյի կողմից կատարված դիտարկումները կախված էին դիտարկումներն իրականացնող աստղադիտակից և այն տեսությունից, որի հիման վրա պատրաստվել էր աստղադիտակը, տվյալ դեպքում՝ օպտիկայից, որի հավաստիությունը կասկածի տակ էր դրվում Գալիլեյի ժամանակակիցների կողմից: Տվյալ ժամանակի շատ մտածողներ պնդում էին, որ Գալիլեյի «դիտարկումներն» իսկական դիտարկումներ չէին, քանի որ չէին համապատասխանում այն պահանջին, ըստ որի դիտարկումը պետք է իրականացվի անզեն աչքով: Նրանք տարանջատում էին անմիջական զգայական (իսկական, ճշգրիտ) ընկալումներն այն դիտարկումներից, որոնք ստացվել են մարդկային մտածողության միջամտության արդյունքում:

Լակատոսը նշում է, որ բոլոր այն հայեցակարգերը, որոնց համաձայն գիտելիքի հիմնական աղբյուրը զգայություններն են, խիստ կապի մեջ են հոգեբանության հետ: Հոգեբանությունն է սահմանում՝ որն է ճիշտ, առողջ, իսկական զգայական կամ հոգեկան վիճակը, որի դեպքում հնարավոր է ճշմարիտ դիտարկում: Այսպես՝ Արիստոտելը «ճիշտ գիտակցություն» ասելով նկատի ուներ բժշկական տեսանկյունից առողջ գիտակցությունը: Դեկարտի մոտ «ճիշտ» է գիտակցական այն վիճակը, երբ գիտակցության կողմից կասկածի տակ է դրվում ամեն ինչ, բացի մտածողության կարողությունից, որից Դեկարտը բխեցնում է Ես-ի գոյությունը, որն էլ Աստծու միջոցով կարող է բացահայտել ճշմարիտ գիտելիքը³: Ի տարբերություն Դեկարտի՝ դասական էմպիրիստների համար «ճիշտ» գիտակցությունը *tabula rasa*-ն է, որը զերծ է տեսական մտածողության որևէ տարրից: Չնայած նշված տարբերություններին՝ թե՛ Արիստոտելին, թե՛ Դեկարտին, թե՛ էմպիրիստներին միավորում է այն գաղափարը, որ անմիջական փորձնական և տեսական դատողությունների միջև գոյություն ունի *բնական* բաժանում:

Լակատոսը պնդում է, որ այս նախադրյալը սխալ է, քանի որ գոյություն չունի այնպիսի զգայություն, որը տեսական նախադրյալներ չունենա: Հետևաբար, գոյություն չունի բնական՝ մարդկային հոգեբանությունից բխող սահման տեսական և փորձնական դատողությունների միջև:

Ըստ Լակատոսի՝ եթե նույնիսկ առաջին նախադրյալը ճշմարիտ լիներ, այսինքն՝ բնական բաժանում լիներ տեսական և էմպիրիկ դատողությունների միջև, ապա, այնուամենայնիվ, դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստների երկրորդ

³ Տե՛ս Դեкарտ **Р.** Соч. в 2-х томах. Том 1, М., Мысль, 1989, էջ 314 - 316:

նախադրյալը, ըստ որի՝ փորձնական (բազիսային) դատողությունները բացարձակ ճշմարիտ են, սխալ է: Լակատոսի պնդմամբ ոչ մի փորձնական դատողություն չի կարող հիմնավորվել դիտարկման արդյունքում: Կարելի է մի դատողության ճշմարտացիությունը բխեցնել մեկ այլ դատողության ճշմարտացիությունից, սակայն դատողության ճշմարտացիությունը չի բխում զգայական փորձից: Այլ կերպ ասած, զգայությունները չեն կարող դատողության ճշմարտացիության երաշխիք լինել: Էմպիրիկ փաստի ճշմարտացիությունը միշտ կասկածելի է, քանի որ յուրաքանչյուր դիտարկում կախված է այդ դիտարկումն իրականացնող գործիքներից, իսկ յուրաքանչյուր գործիք հիմնված է որևէ տեսության վրա⁴:

Այսպիսով, Լակատոսը ցույց է տալիս, որ տեսությունից անկախ էմպիրիկ փաստ հնարավոր չէ: Յուրաքանչյուր էմպիրիկ փաստ կախված է որևէ տեսությունից: Հետևաբար, եթե էմպիրիկ դատողությունների ճշմարտացիությունն ապացուցելի չէ, դրանք կարող են նաև սխալ լինել: Այստեղից հետևում է նաև, որ տեսության և էմպիրիկ փաստի կոնֆլիկտի արդյունքում պարտադիր չէ, որ տեսությունը ֆալսիֆիկացիայի ենթարկվի: Այս դեպքում ընդամենը կարելի է պնդել, որ կա անհամաձայնություն էմպիրիկ փաստի և տեսության միջև. սխալ կարող են լինել թե՛ մեկը, թե՛ մյուսը⁵: Այսպիսով, Լակատոսը քննադատում է դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստների գիտական գիտելիքի չափանիշի հիմքում ընկած երկու ոչ ճշմարիտ նախադրյալները, հետևաբար՝ չի ընդունում նրանց չափանիշը:

Ֆալսիֆիկացիոնիզմի երկրորդ տարատեսակի՝ *Նաիվ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիզմի* համաձայն՝ բոլոր փաստերն այս կամ այն մեթոդաբանական որոշման արդյունք են, այդ թվում նաև այն փաստերը, որոնց միջոցով հերքվում են տեսությունները: Նաիվ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիզմի հեղինակն է Պոպերը: Նշենք, որ Պոպերը չի ընդունում գիտականության դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստական չափանիշի հիմքում ընկած առաջին և երկրորդ նախապայմանները: Ըստ Պոպերի՝ տեսական և էմպիրիկ դատողությունների բնական բաժանում գոյություն չունի, քանի որ յուրաքանչյուր էմպիրիկ փաստ կախված է մի շարք տեսություններից: Ըստ նրա՝ արդարացված չէ նաև էմպիրիկ փաստի ճշմարտացիության նախապայմանը: Ակնհայտ է, որ գիտելիքի յուրաքանչյուր ֆրագմենտ՝ թե՛ էմպիրիկ, թե՛ տեսական, սխա-

⁴ Տե՛ս **Бунге М.** Философия физики. М., Прогресс, 1975, էջ 67-69:

⁵ Տե՛ս **Лакатос И.** նշվ. աշխ., էջ 284:

լական է⁶: Այդ դեպքում հարց է առաջանում. եթե Պոպերը չի ընդունում էմպիրիկ փաստի բացարձակ ճշմարտացիությունը, ապա ինչպե՞ս է տեղի ունենում տեսությունների ֆալսիֆիկացիան: Պոպերի մոտ էմպիրիկ փաստը ևս կատարում է որոշիչ դեր, սակայն այդ փաստի ընտրությունը կատարվում է մեթոդաբանական որոշման արդյունքում⁷:

Որպեսզի պարզ դառնա մեթոդաբանական որոշման բովանդակությունը, քննարկենք հետևյալ օրինակը: Հայտնի է, որ ուշ անտիկ ժամանակաշրջանից ընդհուպ մինչև 17-րդ դարի սկիզբը աստղագիտության մեջ գերիշխել է Պտղոմեոսի տեսությունը: Այս տեսության համաձայն՝ տիեզերքի կենտրոնում գտնվում է Երկիրը, իսկ մյուս մոլորակները պտտվում են նրա շուրջը: XVI դարի կեսին Կոպեռնիկոսն առաջարկեց աստղագիտական իր տեսությունը, որի համաձայն տիեզերքի կենտրոնում գտնվում է Արեգակը, իսկ մյուս մոլորակները պտտվում են Արեգակի շուրջը: 1611 թվականին Գալիլեյը դիտարկեց Վեներայի փուլերը, մի երևույթ, որը հակասում էր պտղոմեոսյան տեսության կանխագուշակություններին: Հարց է առաջանում, թե արդյոք տվյալ փաստի միջոցով իրավունք ունե՞նք հերքելու Պտղոմեոսի աստղագիտությունը: Ըստ Պոպերի՝ մեր վերջնական պատասխանը կախված է որոշ մեթոդաբանական որոշումներից: Այսպես, օրինակ, անհրաժեշտ է որոշել, թե արդյոք բավարար հիմք ունե՞նք պնդելու, որ *ceteris paribus* պայմանը բավարարված է: Պետք է նաև պարզել, թե այդ դիտարկման ընթացքում օգտագործվող գործիքն ինչպիսի տեսությունների հիման վրա է պատրաստվել: Պետք է հասկանալ՝ արդյոք այդ տեսությունները վստահելի՞ են: Նշված օրինակում Գալիլեյի դիտարկումը հիմնվում էր իր ժամանակի օպտիկայի վրա, իսկ Պտղոմեոսի տեսությունը հիմնավորող դիտարկումները կատարված էին անզեն աչքով և, հետևաբար, հիմնվում էին իր ժամանակի կասկածելի հոգեբանական տեսության վրա: Այս իրավիճակում գիտնականները պետք է մեթոդաբանական որոշում կայացնեին, թե որ դիտարկումներին նախընտրություն տան:

Փաստորեն, ի տարբերություն *դոգմատիկ* ֆալսիֆիկացիոնիստների, որոնք յուրաքանչյուր էմպիրիկ դատողություն համարում էին բացարձակ ճշմարիտ, *նախվ մեթոդաբանական* ֆալսիֆիկացիոնիստի համար որոշիչ էմպիրիկ դատողությունը ճշմարիտ է միայն *պայմանականորեն*: Այլ կերպ ասած, գիտնականների խումբը մեթոդաբանական որոշման արդյունքում այդ էմ-

⁶ Տե՛ս **Бунге М.** Интуиция и наука. М., Прогресс, 1967, էջ 8:

⁷ Տե՛ս **Поппер К.** Логика научного исследования. М., Республика, 2005, էջ 79:

պիրիկ փաստը համարում է որոշիչ⁸: Այսինքն՝ գիտնականների խումբը նախօրոք պայմանավորվում է՝ որ ֆալսիֆիկատորներն են ընդունելի, որոնք՝ ոչ: Եթե դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստի համար յուրաքանչյուր էմպիրիկ փաստ կազմում է էմպիրիկ բազիսի մաս, ապա նախվ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիստի համար էմպիրիկ բազիսի մաս են կազմում միայն մեթոդաբանական որոշման արդյունքում ընդունված էմպիրիկ դատողությունները:

Հարկ է նշել, որ որոշիչ գիտափորձը Պոպերի մոտ անհրաժեշտ է ոչ թե տեսության գիտականությունը որոշելու համար, այլ արդեն գիտական համարված մրցակցող տեսությունների միջև ընտրություն կատարելու համար⁹: Ըստ Պոպերի՝ տեսության գիտականությունը որոշելու համար անհրաժեշտ է միայն, որ այդ տեսությունը լինի սկզբունքորեն ֆալսիֆիկացնելի, այսինքն՝ ունենա էմպիրիկ բովանդակություն, կամ, որը նույնն է՝ պոստենցիալ ֆալսիֆիկատորներ: Պոպերի մոտ նախ պետք է ֆալսիֆիկացնելիության չափանիշի միջոցով որոշել, թե որ տեսություններն են գիտական, այնուհետև մրցակցող տեսությունների միջից ֆալսիֆիկացիայի միջոցով ընտրել լավ տեսությունը:

Լակատոսը չի ընդունում գիտականության պոպերյան չափանիշը: Նա նույն կերպ է քննադատում թե՛ գիտականության դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստական չափանիշը, թե՛ գիտականության պարզունակ ֆալսիֆիկացիոնիստական չափանիշը: Ըստ Լակատոսի՝ տեսությունը միշտ կարելի է փրկել ֆալսիֆիկացիայից՝ առաջարկելով նորանոր վարկածներ: Բացի այդ, մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիզմի դեպքում նույնպես հնարավոր չէ ապահովել *ceteris paribus* պայմանը: Հետևաբար՝ բոլոր տեսությունները, ի վերջո, դառնում են անհերքելի:

Հարկ է ընդգծել, որ Լակատոսի մոտ, ի տարբերություն Պոպերի, էմպիրիկ բովանդակությունը չի դիտվում ֆալսիֆիկացնելիության համարժեք: Ըստ Լակատոսի՝ տեսությունները, ունենալով էմպիրիկ բովանդակություն, ֆալսիֆիկացնելի չեն: Եթե դոգմատիկ և նախվ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիստների մոտ ֆալսիֆիկացնելիությունը համարժեք է էմպիրիկ բովանդակության առկայությանը, ապա Լակատոսի մոտ տեսությունները, թեպետ ունեն էմպիրիկ բովանդակություն, կարող են լինել չֆալսիֆիկացնելի:

⁸ Տե՛ս **Hyraes P.M.** Смена развитых научных теорий: ценностные измерения. // Вопросы философии, №11, էջ 129:

⁹ Տե՛ս **Поппер К.** նշվ. աշխ., էջ 256:

Ինչպես տեսանք, Լակատոսը քննադատում է թե՛ *դոգմատիկ* ֆալսիֆիկացիոնիզմի, թե՛ *նախվ մեթոդաբանական* ֆալսիֆիկացիոնիզմի ընդունած դեմարկացիայի չափանիշները: Այս հայեցակարգերի քննադատության ժամանակ Լակատոսը գրում է, որ գոյություն ունի տարբերություն դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստների և նախվ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիստների ընդունած գիտականության չափանիշների միջև: Ասվածը հիմնավորելու համար կարելի է հիշատակել հետևյալ հատվածը. «Մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիզմն առաջարկում է դեմարկացիայի նոր չափանիշ, ըստ որի միայն այն տեսությունները, այսինքն՝ դատողություններն են գիտական, որոնք, չլինելով «դիտարկելի դատողություններ», արգելում են օբյեկտների որոշ «դիտարկելի» վիճակներ, այդ իսկ պատճառով կարող են լինել ֆալսիֆիկացնելի և մերժելի: Այլ կերպ ասած՝ տեսությունը գիտական է (կամ «ընդունելի»), եթե այն ունի էմպիրիկ բազիս»¹⁰: Այս հատվածում կարևոր է ուշադրություն դարձնել չակերտներին. չակերտների միջոցով Լակատոսը հուշում է, որ դատողությունը դառնում է «դիտարկելի» միայն գիտականների մեթոդաբանական որոշման արդյունքում: Ըստ Լակատոսի՝ սա է դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմի և նախվ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիզմի հիմնական տարբերությունը:

Հարկ է նշել՝ լակատոսյան նշված մոտեցումն արդարացված չէ, քանի որ նրա վերլուծությունից էլ երևում է, որ թե՛ դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստները, թե՛ նախվ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիստներն ընդունում են գիտականության *նույն* չափանիշը: Դեմարկացիայի հիմնախնդրում ֆալսիֆիկացիոնիզմի նշված տարատեսակների միջև որևէ տարբերություն գոյություն չունի: Թե՛ դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստի, թե՛ նախվ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիստի համար գիտականության չափանիշ է ֆալսիֆիկացնելիությունը կամ էմպիրիկ բովանդակության առկայությունը: Սա *տրամաբանական* չափանիշ է, և առանց փորձին դիմելու նախօրոք կարելի է որոշել՝ դատողությունը գիտական է, թե ոչ գիտական: Դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմի և նախվ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիզմի տարբերությունն այն հարցում է, թե արդյոք էմպիրիկ բազիսը բացարձակ հավաստի բնույթ ունի: Դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիստի համար էմպիրիկ բազիսը բացարձակ ճշմարիտ է, և տեսությունը մեկընդմիջտ հերքվում է, երբ հանդիպում է իրեն հակասող

¹⁰ Лакатос И. նշվ. աշխ., էջ 295.

էմպիրիկ փաստի, մինչդեռ մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիստը չի պնդում, որ էմպիրիկ բազիսը բացարձակ ճշմարիտ է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում են Իմրե Լակատոսի մեթոդաբանական հայացքները: Լակատոսը, վերլուծելով դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմն ու Պոպերի մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիզմը, քննադատում է թե՛ մեկը, թե՛ մյուսը: Ըստ Լակատոսի՝ դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմը խոցելի է, քանի որ հիմնվում է երկու սխալ նախադրյալների վրա: Քննադատելով պոպերյան ֆալսիֆիկացիոնիզմը՝ Լակատոսը պնդում է, որ տեսությունը միշտ կարելի է փրկել ֆալսիֆիկացիայից:

Բանալի բաներ - Իմրե Լակատոս, Կարլ Պոպեր, ֆալսիֆիկացիա, ֆալսիֆիկացնելիություն, դոգմատիկ ֆալսիֆիկացիոնիզմ, մեթոդաբանական ֆալսիֆիկացիոնիզմ, էմպիրիկ բովանդակություն, գիտական գիտելիքի չափանիշ:

ИМРЕ ЛАКАТОС ПРОТИВ ФАЛЬСИФИКАЦИИ

КРИСТИНЕ ГРИГОРЯН

В статье анализируются методологические взгляды Имре Лакатоса. Лакатос, анализируя догматический фальсификационизм и методологический фальсификационизм Поппера, критикует и то, и другое. Согласно Лакатосу, догматический фальсификационизм уязвим, потому что он основывается на двух ложных посылах. Критикуя попперовский методологический фальсификационизм, Лакатос показывает, что теорию всегда можно оградить от фальсификации.

Ключевые слова - Имре Лакатос, Карл Поппер, фальсификация, фальсифицируемость, догматический фальсификационизм, методологический фальсификационизм, эмпирическое содержание, критерии научного знания.

IMRE LAKATOS AGAINST FALSIFICATION

KRISTINE GRIGORYAN

This article analyses the methodological views of Imre Lakatos. Lakatos, reviewing both dogmatic falsificationism and Popper's methodological falsifica-

tionism, criticizes both. According to Lakatos, dogmatic falsificationism founded on two false premises is vulnerable. Criticizing Popper's methodological falsificationism Lakatos insists that a theory can always be saved from falsification.

Key words - Imre Lakatos, Karl Popper, falsification, falsifiability, dogmatic falsificationism, methodological falsificationism, empirical content, criteria of scientific knowledge.

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱԿԱՀԱՅ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԸ

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԲՈՒԽԱՆՅԱՆ

Հայաստանի նոր վարկանիշի մշակման խնդիրը շատ այժմեական է, քանի որ ԽՍՀՄ-ի փլուզումից առաջացած անցումային ժամանակաշրջանում Հայաստանի, ինչպես նաև մյուս նորաստեղծ հետխորհրդային երկրների վարկանիշները մեծ վնաս կրեցին: Դա պայմանավորված էր երկրի ներսում տիրող քաոսով, տնտեսության փլուզումով, պետական գույքի սեփականաշնորհման կոռումպացված գործընթացներով: Սակայն այսօր Հայաստանը նպատակ ունի աշխարհին ներկայանալու որպես ժամանակակից և ժողովրդավարական պետություն՝ ջանքեր գործադրելով կոտրել երրորդ աշխարհի պետության կարծրատիպն ու որակավորումը, միաժամանակ ներկայացնելով իր առավելությունները և առանձնահատկությունները՝ հարուստ պատմամշակութային ժառանգությունը, պատմական գիտական մտքի թռիչքը, քրիստոնեական բարձր արժեքների կրիչ լինելը և այլն:

Սակայն դրան զուգահեռ ժամանակակից մեդիատիրույթում ակնհայտ են Հայաստանի վարկանիշի համար վնասակար հակաքարոզչական գործընթացներ. կերտելով Հայաստանի «զավթիչի» կերպարը, խլելով և վերագրելով այլ ազգերի հայկական ողջ պատմամշակութային ժառանգությունը՝ նրանց նպատակն է խեղաթյուրել և կեղծել պատմական իրադարձությունները, աղավաղել ներկան՝ նպաստելով համաշխարհային հանրության երեսօթեմանը Հայաստանից:

Այսպես՝ ապատեղեկատվություն տարածելու նպատակով Հայաստանի թշնամի երկրները՝ Թուրքիան և Ադրբեջանը, ակտիվ օգտագործում են ԶԼՄ-

ները, հրատարակում են գրքեր, ֆինանսավորում են կեղծ գիտական աշխատությունների ստեղծումը¹:

Թշնամական երկրների ՋԼՄ-ների անդրադարձը Հայաստանին այդ երկրների ներքին և արտաքին տեղեկատվական քաղաքականության իրագործման կարևոր մասն է կազմում՝ նպատակ ունենալով ստեղծել Հայաստանի բացասական վարկանիշ ներքին և միջազգային հարթակում՝ սեփական քաղաքականության հիմնավորման նպատակով:

Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևն իր ելույթներից մեկում մասնավորապես բնորոշել է Հայաստանը որպես երկիր, որը. «...արհամարհում է միջազգային իրավունքի նորմերը, չի հետևում Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարների հայտարարություններին,(...) տարբերվում է կեղծ վարքով և սուտ հայտարարություններով բանակցություններին՝ փորձելով մոլորեցնել միջազգային հանրությանը, չի կատարում միջնորդ կառույցների պահանջները՝ կապված տվյալ հարցի հետ (ղարաբաղյան հակամարտության հեղ.)»²: Ադրբեջանի ղեկավարի կողմից ստեղծված Հայաստանի վարկանիշն ակտիվորեն զարգացնում են ադրբեջանցի պաշտոնյաները, մտավորականները և տեղական ՋԼՄ-ները:

Հատկանշական է, որ ադրբեջանական և թուրքական ՋԼՄ-ներն ուշիուշով հետևում են հայկական ներքին և արտաքին քաղաքականությանը, ներկայանում հայատյաց հայտարարություններով ու ծաղրական բնույթի վերլուծություններով:

Ադրբեջանական “Day.az” կայքում, բացի հայատյաց տեղեկատվությունից ու հայտարարություններից, առկա է հայկական ԱԳՆ-ի մասին «հումորային» բաժին, որտեղ ծաղրի են ենթարկվում Հայաստանի արտաքին քաղաքականությունն ու պաշտոնյաները:

Ադրբեջանական ՋԼՄ-ներում Հայաստանը բնորոշվում է որպես ագրեսոր, ահաբեկչական երկիր, իշխանությունները ներկայացվում են ոչ լեգիտիմ, խաբեբա, հիմար և անճար, ժողովուրդը՝ սոված և թշվառ, զինվորները՝ վախկոտ:

¹ **Բաբուխանյան Ջ.**, Հայ-թուրքական հարաբերությունները և ժամանակակից թուրքական ՋԼՄ-ները//«Լրաբեր» N2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015:

² **Ильхам Алиев:** Политика изоляции Армении приносит свои плоды - миграция, кризис, депопуляция// www.regnum.ru, 28.05.2013.

Բնականաբար դարաբաղյան հակամարտությունը և դրա շուրջ ստեղծված իրավիճակն ադրբեջանական լրատվամիջոցներում ակտիվ քննարկման առարկա են:

Այսպես՝ 2014 թվականի նոյեմբերի 12-ին ադրբեջանական զինուժի կողմից ԼՂՀ բանակի խոցված ուղղաթիռի միջադեպի շուրջ բազմաթիվ հրապարակումներ եղան ադրբեջանական ԶԼՄ-ներում: Դրանք, հավատարիմ մնալով իրենց որդեգրած քաղաքականությանը, հերթական անգամ մեղքը և պատասխանատվությունը վերագրեցին հայկական կողմին՝ ներկայացնելով միջադեպը որպես հայերի սադրանք: «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կրկին հայտնեցին իրենց մտահոգությունը՝ երեկ տեղեկանալով Ադրբեջանի ռազմական ուժերի կողմից ոչնչացված հայկական ուղղաթիռի մասին, որը սադրիչ զորաշարժ էր կատարում և որոշել էր գրոհել ադրբեջանական բանակի դիրքերը,- գրում է “1news.az” կայքը և շարունակում,- ...սակայն, կարծում եմ, որ հարգանքը գոնե իրենց հանդեպ հարկավոր է պահպանել (խոսքն ուղղված է ԵԱՀԿ խմբին- հեղ.), և այդ իսկ պատճառով երբեմն ավելի լավ է պարզապես լռել առանց մեկնաբանության կամ էլ ի վերջո սկսել խոսել ճիշտը և ասել՝ ով է ճիշտ, իսկ ով՝ մեղավոր տվյալ կոնֆլիկտում»³:

Մեկ այլ ադրբեջանական “Day.az” կայք, անդրադառնալով միջադեպին, այսպիսի մեկնաբանությամբ է հանդես եկել. «Հայաստանի զինված ուժերի ներկայացուցիչներին (հայկական բանախյուսության մեջ՝ դարաբաղյան բանակին) դեպքից մեկ շաբաթ անց չի թույլատրվում մոտենալ ուղղաթիռի վայրը՝ նկնելու տեղանքին: Ինչը միանգամայն ճիշտ է՝ հաշվի առնելով, որ հայկական զորամիավորումների կողմից իրականացվել է սադրանք, որը պետք է բազմակողմանի ուսումնասիրվի: Իսկ հետաքննությանը մոտ թողնել հայերին՝ կնշանակի փաստերի համընդհանուր կեղծիք: Նրանք այդ գործում վարպետ են»⁴:

Հարկ է նշել, որ հայ-թուրքական, հայ-ադրբեջանական ու հատկապես արցախյան հակամարտության թեմաներին ակտիվ հետևում և անդրադառնում են միջազգային ԶԼՄ-ները:

Վերոնշյալ միջադեպին արձագանքել է ամերիկյան «The New York Times» պարբերականը: Աղբյուրի գնահատմամբ միջադեպը «լարվածության

³ Еще раз о сбитом армянском вертолете // www.inosmi.ru, 14.11.2014.

⁴ Ереван ищет способ спасти лицо в истории с вертолетом // www.day.az, 20.11.2014.

կտրուկ աճի ազդանշան է հակամարտության 25 տարվա մեջ»⁵: Աղբյուրը մեջբերում է հայկական և ադրբեջանական մամուլի հրապարակումները, պաշտոնական հայտարարությունները, մատնանշում, որ դրանք հակասական են:

Ակնհայտ է, որ Հայաստանի լրատվական դաշտը գտնվում է անդադար մոնիթորինգի տակ արտերկրյա լրատվամիջոցների և քաղաքական ուժերի կողմից: ՀՀ ԶԼՄ-ներից ստացված բացասական բնույթի տեղեկատվությունը Հայաստանի թշնամի երկրների կողմից օգտագործվում է հակահայ քարոզչության և Հայաստանի՝ համապատասխան վարկանիշ կերտելու նպատակով ներքին և միջազգային լսարանների շրջաններում: Ուշագրավ է, որ նրանց համար որպես տեղեկատվական աղբյուր ծառայում են հայկական ԶԼՄ-ների ռուսալեզու կամ անգլալեզու էջերը:

Ադրբեջանական “News.day.az” և “Minval.az” կայքերը, հղում կատարելով հայկական “News.am” կայքի ռուսալեզու էջի վրա, արտասույել են «Эмиграция в Армении стучится в каждую дверь» հոդվածը, որտեղ մեջբերված են ԱԺ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ռուբեն Հակոբյանի խոսքերը Հայաստանից արտագաղթի և ազգաբնակչության թվաքանակի կրճատման մասին. «Կա խնդիրների մի ողջ սպեկտր (...), իսկ ցավալի արդյունքներն ակնհայտ են: Այնտեղ, որտեղ մի քանի տարի առաջ դպրոց էին գնում 30 առաջին դասարանցիներ, հիմա մեկն է գնում»⁶:

Հայկական խնդիրների մասին տեղեկատվությունն ուռճացնելով և ճոխացնելով՝ ակտիվ շահարկվում է թշնամու կողմից սեփական գաղափարախոսությունը և քաղաքականությունը հիմնավորելու համար՝ խորացնելով թշնամու կերպարը սեփական լսարանի շրջանում:

Այսպես՝ Ի. Ալինն իր ելույթում՝ նվիրված Ադրբեջանի Անկախության տոնին, մասնավորապես նշել է, որ Հայաստանին բոլոր միջազգային նախագծերից մեկուսացված պահելը տալիս է իր արդյունքը. «Այս մարտավարությունը և քաղաքականությունը բերում է իր պտուղները: Ըստ Հայաստանի պաշտոնական վիճակագրության՝ այդ երկիրը տարեկան լքում է 80-100 հազար մարդ: Այդ երկրում աճում են դեպոպուլյացիայի միտումները, դիտարկ-

⁵ Further Strains in Unresolved War Between Armenia and Azerbaijan Over Disputed Territory // www.nytimes.com, 25.11.2014.

⁶ Ժառանգություն. Հայաստանում արտագաղթը թակել է բոլորի դուռը // www.news.am, 08.09.2014, տե՛ս նաև Эмиграция в Армении стучится в каждую дверь // www.news.day.az, 09.09.2014, տե՛ս նաև Эмиграция в Армении стучится в каждую дверь // www.minval.az, 08.09.2014:

վում է դեմոգրաֆիկ ճգնաժամ: Եվ այս ճգնաժամն աստիճանաբար խորանալու է, քանի որ ինչքան շատ աշխատունակ մարդ է հեռանում, այնքան ավելի են նվազում տնտեսությունը վերականգնելու հնարավորությունները: Ինչ վերաբերում է տնտեսության վերականգնմանը, այդպիսի հեռանկարներ ընդհանրապես չկան: Այնտեղ դիտարկվում է տնտեսության ամբողջական լծացում»⁷:

Լայն հակաքարոզչական լրատվական արշավ ձեռնարկեց Ադրբեջանը 2014 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում հայկական լավաշի թխելու ավանդույթների ներառման կապակցությամբ⁸: ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշումից դժգոհ Ադրբեջանը պաշտոնական մակարդակով և ԶԼՄ-ների միջոցով տարածում էր պատեղեկատվություն այն իբր ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հետ կանչելու մասին:

Այսպես՝ ադրբեջանական “Regionplus.az” կայքը գրել է. «Կանխված է հայերի հերթական ինտրիգը, որոնք շարունակում են սեփականացնել ադրբեջանական երգերը, մշակույթի օրինակներն ու որոշ երաժշտական գործիքներ»: Այդ տեղեկատվությանը ձայնակցել է “Trand.az” կայքը, ըստ որի՝ Ադրբեջանին իբր հաջողվել է կասեցնել «հայերի հերթական սադրանքը»⁹:

Հղում կատարելով ադրբեջանական մշակույթի և սպորտի նախարարության հայտարարությանն այն մասին, որ Ադրբեջանն իբր թույլ չի տվել ներառել լավաշը որպես հայկական մշակույթի դրսևորում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակում՝ ապատեղեկատվությունը տարածվել է նաև որոշ ռուսական լրատվամիջոցներով՝ “Rosbalt.ru”, “Rbc.ru” և “Gazeta.ru” կայքերով¹⁰:

⁷ Ильхам Алиев: Политика изоляции Армении приносит свои плоды - миграция, кризис, депопуляция // www.regnum.ru, 05.05.2013.

⁸ Հատկանշական է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչական ցուցակը համալրվեց հայկական մշակութային ժառանգության չորրորդ նմուշով: Ցանկ են ներառված «Դուդուկը և դրա երաժշտությունը», «Խաչքարի խորհուրդը և խաչքարագործությունը», «Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսի կատարողական դրսևորումները» հայտերը, ինչը, անկասկած, կերտում է հայերի և Հայաստանի մշակութային վարկանիշը միջազգային հարթակում՝ որպես ստեղծող և արարող ազգ ունեցող պետության:

⁹ ЮНЕСКО выступила с разъяснением по вопросу включения лаваша в Репрезентативный список нематериального наследия // www.trend.az, 27.11. 2014.

¹⁰ Азербайджан не позволил "арменизировать" лаваш в списке культурного наследия ЮНЕСКО // www.rosbalt.ru, 26.11. 2014, տե՛ս նաև Азербайджан не позволил закрепить лаваш в списке ЮНЕСКО как «армянский» // www.rbc.ru, 26.11.2014, տե՛ս նաև Азербайджан не дал называться лавашу армянским в списке наследия ЮНЕСКО // www.gazeta.ru, 26.11.2014:

Այդ հայտարարությունները հանգեցրին լայն քննարկումների միջազգային լրատվական դաշտում: Ամերիկյան “Eurasia.net” կայքը, որը լուսաբանում է եվրասիական տարածաշրջանի իրադարձությունները, այսպես է անդրադարձել ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմանը և դրան հետևած Ադրբեջանի արձագանքին. «Դյուրագրգիռ հարևանները՝ Հայաստանն ու Ադրբեջանը, պատերազմում են ամեն ինչի համար՝ սկսած տարածքներից մինչև այս վերջերս հացի լոշի համար... Կովկասն իր հին ավանդույթով հավակնում է աշխարհում ամեն ինչի ամենահինն և լավագույնին: Այս ավանդույթը ինքնին կարող է լինել մի բան, որը կներառվի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակում»¹¹:

Իսկ ռուսական “Kommersant.ru”-ն գրել է. «Սեփականացնելով լավաշը՝ Հայաստանը վիրավորել է հարևան երկրներին: Կովկասի, Ասիայի և Մերձավոր Արևելքի շատ ժողովուրդների համար ավանդական լոշը պաշտոնապես ներառվել է Հայաստանի ոչ նյութական մշակութային ժառանգություն: (...) Լավաշի հայրենիքի կարգավիճակի համար հավակնում են Ադրբեջանը, Իրանը, Ուզբեկստանը, Վրաստանը և Թուրքիան»¹²:

Ռուսական «Дождь» հեռուստաալիքն էլ այդ առիթով մեկնաբանությունների համար դիմել է ուզբեկ խոհարար բլոգեր Ստալիկ Խանկիշևին, որն ասել է. «Վեճի համար առիթ չկա: Լավաշը պատրաստում են այդ տարածաշրջանում՝ Լիբանանից մինչև Հնդկաստան ու Յեմենից մինչև Հյուսիսային Կովկաս»¹³:

Այսպես՝ Ադրբեջանի հերթական սադրանքի և ապատեղեկատվության արդյունքում որոշ միջազգային լրատվամիջոցներում Հայաստանը ներկայացավ որպես այլ ազգերի մշակութային արժեքների զավթիչ և կոնֆլիկտների սադրիչ:

Նույն հայկական հակաքարոզական և ապատեղեկատվական ավանդույթով են գործել ադրբեջանական ԶԼՄ-ները՝ անդրադառնալով «Ռոբերտ Սահակյանց Փրոդաքշն»-ի նկարահանած առաջին հայկական «Անահիտ» լիամետրաժ մուլտֆիլմին՝ հիմնված Ղազարոս Աղայանի համանուն հեքիաթի վրա, որը միջազգային ԶԼՄ-ների կողմից հատուկ ուշադրության և գովա-

¹¹ Armenia, Azerbaijan at Loggerheads Over Lavash// www.eurasia.net, 03.12.2014.

¹² Теперь только армяне могут торговать лавашем как национальным брендом // www.kommersant.ru, 27.11.2014.

¹³ Лаваш. Сталик Ханкишиев о ЮНЕСКО. Как Армения и Азербайджан спорят о лаваше, телеканал “Дождь”, 28.11.2014.

սանքի էր արժանացել: Սակայն, ըստ “Vesti.az”-ի. «Ինչպես հայտնի է, Անահիտը հայերի մոտ համարվում է մարմնավաճառության աստվածուհի և հատուկ պաշտամունքի առարկա: Ակնհայտ է՝ հայերը հիմա որոշել են իրենց երեխաներին ներշնչել սեր իրենց նախամոր, այսինքն՝ մարմնավաճառության աստվածուհու նկատմամբ»¹⁴:

Հայաստյաց քաղաքականությամբ աչքի են ընկնում նաև թուրքական իշխանությունները, որոնց հայտարարությունները լայն տարածում են գտնում ԶԼՄ-ների միջոցով: Այսպես՝ Թուրքիայի վարչապետ և նախագահի թեկնածու Ռեջեփ Թայիփ Էրդողանը վիրավորական հայտարարություն է արել հայերի հասցեին թուրքական «Star TV» և «NTV» հեռուստաընկերությունների համատեղ եթերում, ինչը լայն արձագանք է ստացել լրատվամիջոցներում: Թուրքիայի վարչապետը, ուղիղ եթերում պատասխանելով հաղորդավարի հարցերին, անդրադարձել է նաև ժողովրդի կողմից քննարկվող իր արմատների հարցին. «Իմ արմատները Ռիզեից են: Ինձ ասում էին, թե վրացի եմ, ավելին, մեկը կանգնեց, ավելի կեղտոտ բան ասաց՝ պնդելով, թե ես հայ եմ»¹⁵: Էրդողանի այդ վիրավորական արտահայտությանն անդրադարձել է նաև միջազգային մամուլը: Աշխարհում զարմանում են, որ Թուրքիայում հայ լինելն ամոթ է: Ամերիկյան «Washington Post»-ն իր հոդվածը վերնագրել է՝ «Հայ լինելը վիրավորական է. Թուրքիայի վարչապետն այդպես է մտածում»¹⁶:

Ուշագրավ է, որ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախօրեին Թուրքիան վարում էր ցեղասպանությունը ժխտող ակտիվ քաղաքականություն, որի մեջ իրենց կարևոր դերակատարումն ունեցան տեղական ԶԼՄ-ները՝ օգտագործելով ապատեղեկատվությունը որպես գլխավոր մեթոդ:

Այսպես՝ թուրքական «Posta» թերթը «հարցազրույց» է հրապարակել հայտնի ֆրանսահայ երգիչ, Շվեյցարիայում ՀՀ դեսպան Շառլ Ազնավուրի հետ: Այսպես կոչված «հարցազրույցում» Շառլ Ազնավուրն իբր հանդես է եկել հակահայ և ցեղասպանությունը հերքող հայտարարություններով, որոնք մեծ աղմուկ բարձրացրին հայկական հասարակության մեջ¹⁷: Հոդվածին հետևել է

¹⁴ Надемся, что у армян хватит совести не показывать этот мультфильм детям // www.vesti.az, 22.10.2014.

¹⁵ Էրդողանը հայ լինելը կեղտոտ բան է համարել // www.YerevanNews.am, 06.07.2014:

¹⁶ Թուրքիայի հայ համայնքն արձագանքել է Էրդողանի՝ հայերին վիրավորող արտահայտությանը // www.armnewstv.am, 07.07.2014:

¹⁷ Չեմ շարժվում Հայաստանի հրահանգներով. Ազնավուրը՝ թուրքական թերթին // www.civilnet.am, 04.11.2014:

Շ. Ազնավուրի և Հայաստանի ԱԳՆ-ի հերքումն առ այն, որ որևէ հարցազրույց թերթին տրված չի եղել¹⁸:

Սակայն նկատենք՝ եթե Ադրբեջանի դեպքում մենք գործ ունենք ՋԼՄ-ների կողմից պետական հայատյաց քաղաքականության իրագործման և զարգացման հետ, ապա Թուրքիայում, ինչպես նշել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն իր հեղինակային հոդվածում «International New York Times» պարբերականում. «Շատ թուրք մտավորականներ, գրողներ, գիտնականներ սկսել են բացահայտ կերպով խիզախորեն և շիտակ քայլել ինքնավերլուծության և ուսումնասիրության դժվարին ուղիով»¹⁹, ինչն իր հերթին արձագանք է ստանում ՋԼՄ-ների մեջ:

Դա ցայտուն արտահայտվեց, երբ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի թեմայի քննարկման շրջանակներում թուրքական ժխտողական քաղաքականության քննադատությամբ հանդես եկան որոշ թուրքական ՋԼՄ-ներ:

Թուրքական «Milliyet» պարբերականի սյունակագիր Մուսթաֆա Յըլդըրըմն իր հոդվածում քննադատել է Դարդանելի գործողության 100-ամյակն ապրիլի 24-ին նշելու թուրքական իշխանությունների որոշումը. «Այժմ մի հարց պետք է տանք. արդյո՞ք այդ նույն օրը նշելով Չանաքքալեի հաղթանակը՝ մենք չե՞նք վիրավորում հայ ժողովրդին: Յուրաքանչյուր տարի մարտի 18-ին նշվող այս տոնն անցկացնել ապրիլի 24-ին, դեռ ավելին՝ Հայաստան հրավեր ուղարկել, դա պարզապես անամոթություն է»²⁰:

Թուրք գրող, բանաստեղծ Աթիլա Դիրիմը “Marksist.org” կայքում հրապարակած իր հոդվածում անդրադարձել է Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու այդ ճանաչումից վախեցողներին՝ նրանց թվում նշելով Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի անունը: Հայոց ցեղասպանության ճանաչումից վախեցողներին հեղինակն անվանում է «հանրապետության սնած տգեր», որոնք յուրացրել են հայերի ունեցվածքը, հողերը, առանձնատները,

¹⁸ Ազնավուրը թուրքական կայքի հարցազրույց չի տվել. Հայաստանի ԱԳՆ // www.news.am, 2014, 5-ը նոյեմբերի, տե՛ս նաև Շառլ Ազնավուրը վիրավորված է թուրքական լրատվամիջոցի նողկալի մեքենայությունից // www.tert.am, 06.11.2014:

¹⁹ Սերժ Սարգսյանի հեղինակային հոդվածը «International New York Times» պարբերականին // www.iravunk.com, 24.09.2014:

²⁰ Թուրք սյունակագիր. Դարդանելի գործողության 100-ամյակը Հայոց ցեղասպանության օրը նշելու որոշումն անամոթություն է // www.armeniangenocide100.org, 14.02.2015:

բայց աչքները դեռ չէր կշտանում: «Նախագահն էլ շատ լավ գիտի, որ այն պետությունը, որը ղեկավարում է ինքը, Հայոց ցեղասպանության արյան վրա է կառուցվել: Ցեղասպանության ողջ իրողությունն իր ողջ մերկությամբ ի հայտ գալն այդ պետության հիմքի փլուզման պատճառ է դառնալու: Նախագահը դա գիտի և այդ ահից է, որ ապրիլի 24-ն անամոռաբար ցանկանում է վարագորել»²¹:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ Թուրքիան և Ադրբեջանը պետական մակարդակով վարում են հակահայ տեղեկատվական քարոզարշավ: Հայկական լրատվական դաշտը թշնամու կողմից գտնվում է անդադար մոնիթորինգի տակ և բացասական տեղեկատվությունը շահարկվում է՝ սեփական հայատյաց քաղաքականությունը և գաղափարախոսությունը հիմնավորելու նպատակով: Ապատեղեկատվություն և սադրիչ տեղեկատվություն տարածելու միջոցով այդ երկրները Հայաստանի բացասական և թշնամական վարկանիշն են տարածում ինչպես իրենց ներքին լսարանների շրջանում, այնպես էլ միջազգային հարթակում: Որոշ ցայտուն դեպքերում նկատելի է նաև միջազգային հանրության անհանգստությունն այդ կապակցությամբ:

Այդուամենայնիվ, եթե Ադրբեջանի դեպքում ՋԼՄ-ները պետական հայտյաց քաղաքականության համապարփակ աջակիցը և զարգացնողն են, ապա Թուրքիայում նմանատիպ գործընթացների հետ մեկտեղ նկատվում են նաև ընդդիմախոս ձայներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից մեդիատիրոյթում ակնհայտ է Հայաստանի վարկանիշի համար վնասակար տեղեկատվական հոսքերի շրջանառությունը: Որպես նմանատիպ գործընթացների նախաձեռնողներ աչքի են ընկնում Ադրբեջանն ու Թուրքիան, որոնք նպատակ ունեն ձևավորելու Հայաստանի բացասական վարկանիշը ներքին և միջազգային հարթակում սեփական հայատյաց քաղաքականության հիմնավորման համար:

Բանալի բառեր - ՀՀ վարկանիշ, լրատվական հոսքեր, ՋԼՄ-ներ, քարոզական արշավներ, Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա:

²¹ Հայոց ցեղասպանության ճանաչումից ութեր Են վախենում // www.tert.am, 05.03.2015:

СОВРЕМЕННАЯ АНТИАРМЯНСКАЯ ПРОПАГАНДА И ИМИДЖ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЗРУИ БАБУХАНЯН

В современном медиапространстве очевиден оборот информационных потоков, вредящих имиджу Армении. В качестве инициаторов подобных процессов выделяются Азербайджан и Турция, цель которых сформировать отрицательный имидж Армении на внутренней и международной площадках для обоснования собственной армяноненавистнической политики.

Ключевые слова - имидж РА, информационные потоки, СМИ, пропагандистские кампании, Армения, Азербайджан, Турция.

THE CURRENT ANTI-ARMENIAN PROPAGANDA AND THE IMAGE OF THE REPUBLIC OF ARMENIA

ZARUHI BABUKHANYAN

The circulation of anti-Armenian information damaging the image of Armenia is evident in today's mass media. Azerbaijan and Turkey are the initiators of this propaganda. They are aiming at shaping a negative image of Armenia on both domestic and international platforms in order to substantiate their own Armenian-hatred policy.

Key words - the image of RA, flow of information, mass media, promotional campaigns, Armenia, Azerbaijan, Turkey.

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«TRIADA» ՍՏՈՒԴԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՈՒ ՎԱՌ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻՑ ՄԵԿԸ

ԱՐՏԱԿ ԱՂԱՄԱՋՅԱՆ

Անհերքելի է այն փաստը, որ գրաֆիկական դիզայն հասկացությունը յուրահատուկ գեղարվեստական ստեղծագործական բնագավառ լինելով, ունի որոշակի ավանդույթներ, որոնք հատկապես XX-XXI դարերի տեխնիկական հնարավորությունների շնորհիվ հարստանում են նոր արտահայտչականությամբ, իսկ գրաֆիկական դիզայնի ստեղծագործությունները՝ արտահայտվում հասարակության կյանքի համարյա բոլոր բնագավառներում: Համակարգչային դիզայնը, ընդամենը մի քանի տասնամյակում աննախադեպ զարգացում ապրելով, դիտարկվում է որպես ստեղծագործման ինքնուրույն բնագավառ: Ստեղծագործական մտահղացումներն ուղղվում են ոչ միայն ֆունկցիոնալ, ուտիլիտար կողմին, այլև գեղարվեստական մտահղացումների իրականացման հնարավորություններին¹:

Համակարգչային գրաֆիկական դիզայնն այն մասնագիտությունն է, որի պրոֆեսիոնալ գեղարվեստական միջոցներն ու հնարները, պահպանելով նախորդ մշակույթների ձեռքբերումներն ու ավանդույթները, անընդհատ հարստանում են նոր հնարավորություններով, հեղինակների գեղարվեստական մտահղացումներին նոր պլաստիկ արտահայտչականություն հաղորդելով, հաճախ հասնելով տեսողական այնպիսի էֆեկտների, որոնք գրավում են

¹ Նման բնագավառներից գրաֆիկական դիզայնում կարելի է նշել Արթ-դիզայնը: Այս ուղղության ստեղծագործությունները լիովին զուրկ չեն ֆունկցիոնալությունից, սակայն նրանց հիմնական առանձնահատկությունը դեկորատիվությունն է, որի պատճառով աշխատանքները հաճախ դառնում են զուտ «ցուցահանդեսային»: Արթ-դիզայնի նման հատկանիշները մեկնաբանվում են նաև հետևյալ կերպ. «փաստորեն նախագծվում են էմոցիաներ»: **Демидова А.** Блок 1. Теория и методология проектирования в дизайне. 2015-01-24. <http://studopedia.org/8-50306.htm>:

դիտողի ուշադրությունն անսովոր լուծումներով ու կատարողական բարձր վարպետությամբ: Ժամանակակից գրաֆիկական դիզայնի արտահայտչականության հիմքում ընկած է գեղարվեստական սինթեզի գաղափարը, քանի որ կիրառվող հնարներն ու մեթոդները ներգրավում են ստեղծագործական գործունեության ամենատարբեր բնույթի տարրեր, որոնց պրոֆեսիոնալ նրբությունները հաճախ նկատելի ու հասկանալի են նեղ մասնագիտական ուղղվածություն ունեցող արվեստագետներին: Համակարգչային գրաֆիկական դիզայնում հաճախ համադրվում են տեխնիկական և գեղարվեստական ոճեր ու հնարներ, որոնք ոչ վաղ անցյալում հնարավոր է՝ անհամատեղելի համարվելին: Այսօր համակարգչային գրաֆիկայի բազմաբնույթ լինելը հարստացրել է բնագավառի ստեղծագործական ոչ միայն գեղարվեստական տեսակները, այլև ընդլայնել դրանց ուսումնասիրության հնարավորություններն արվեստաբանության համար:

Հայաստանում համակարգչային գրաֆիկական դիզայնը նոր զարգացող մասնագիտություններից է: Բնագավառի ճանաչողության և զարգացման համար այսօր խիստ կարևոր է ուսումնասիրել գոյություն ունեցող ստեղծագործությունները, որոնց կարևորագույն նմուշներից են «Triada» ստուդիայի մի քանի գործերը՝ «Շողակաթ» և վեմստուդիայի համար ստեղծված անիմացիոն տեսահոլովակները և հատկապես վերջերս “Apple” ընկերության բարձրագույն մրցանակին արժանացած “Shadowmatic” ժամանցային մոբայլ գեյմը (ձեռքի բջջային հեռախոսների համար նախատեսված խաղ): Հողվածի նպատակն է վերլուծել ստեղծագործական խմբի գործերի գեղարվեստական առանձնահատկությունները: Այդ կապակցությամբ գիտական խնդիրներ են միջավայրի և օբյեկտի ներդաշնակեցման վերլուծությունը, հորինվածքային լուծումների բացահայտումը, այդ թվում՝ բովանդակ ձևերի ուրվագծի և մակերևույթների պլաստիկական առանձնահատկությունները, նյութականացման ասպեկտները, լուսաստվերի և կետայնության հարցերը, մասշտաբը և մասշտաբայնությունը, գույնը, անիմացիայի դինամիկայի և ստատիկայի փոխհարաբերությունները և ստեղծագործական խնդիրները:

«Triada» ստուդիան հիմնադրման օրից ի վեր (1993 թ.) իրականացրել է համակարգչային գրաֆիկական դիզայնի մի շարք նախագծեր, որոնք բազմաբնույթ են թեմաներով, կերպարային, հորինվածքային, գունային գամմայի և գեղարվեստական լուծմամբ:

«Triada» ստուդիայի 2015 թ. ստեղծագործական հաջողություններից է IOS խաղերի համաշխարհային ինդուստրիայի «APP STORE» բնագավառում

2015 թ. լավագույն համակարգչային խաղ ճանաչված «Shadowmatic»-ը²: Մասնակիցների խոստովանությամբ խաղը մտահղացել էին դեռևս 2013 թ.: Մոտ քսան տարի է՝ «Triada» ստուդիայի ստեղծագործական գործունեության մեջ է մտնում նաև ֆիլմերի համար հատուկ էֆեկտներ, հեռուստահաղորդումների ծրագրեր և գովազդային հոլովակներ ստեղծելը: Այդ պատճառով զարմանալի չէ, որ «Shadowmatic»-ում օգտագործված տեսողական ոճն ու լուսավորության ֆոտոռեալիստական համակարգը մեծ դեր ունեն խաղում՝ ստանալով կերպարային ուրվապատկերային և իմաստային ծանրաբեռնվածություն: «Այսօր գոյություն ունեցող IOS հիմքի վրա ստեղծված գլուխկոտրուկների որջ բազմազանության մեջ իրապես ուշադրության են արժանի միայն որոշ նախագծեր, մեծ մասը զուրկ է նոր իդեաներից: Մեկը այդպիսի խաղերից կդառնա Shadowmatic-ը՝ մեդիտացիոն եռաչափ գլուխկոտրուկը, որը սովերների թատրոնի յուրօրինակ վարիացիա է»³: Սովերների թատրոնի հետ պատկերավոր համեմատությունը և՛ հատկանշական է, և՛ ցույց է տալիս հեղինակների գեղարվեստական մտահղացման ստեղծագործական բնույթը. որոշակի է հայ ազգային հնագույն թատրոնի խամաճիկային պատկերային, կերպարային արտահայտչականության ավանդույթների խիստ վերաիմաստավորված ժամանակակից դրսևորումը, որն ինքնին եզակի երևույթ է այդ բնագավառում:

Նման գնահատականի համակարգչային խաղն ըստ արժանվույն գնահատվեց ինչպես համակարգչային գրաֆիկայի հիանալի կատարողական մակարդակի, այնպես էլ անսովոր մտահղացման համար. լույսի շողի մեջ արքստրակտ եռաչափ օբյեկտները պտտելով՝ պատի վրա առաջացող նրանց փոփոխվող սովերներից գոյանում են ճանաչելի առարկայական կամ կերպարային ուրվապատկերներ: Ըստ էության այս համակարգչային գրաֆիկայի 3D խաղը գլուխկոտրուկ է:

Հեղինակներն այսպես են մեկնաբանում «Shadowmatic»-ի առանձնահատկությունները. «Խորասուզվելով «Shadowmatic» խաղի պրոցեսի մեջ, որոշ ժամանակ անց զգում ես, որ փազզլի գլուխկոտրուկը լուծելուց հետո այն (խաղը) մեղմորեն վերածվել է պատին սովերի միջոցով բազմազան ու անսպասելի ուրվապատկերներ նկարելու ստեղծագործական պրոցեսի: Այն, որ այդ պրոցեսը պակաս հետաքրքրական չէ, քան փազզլի գլուխկոտրուկի լուծելը,

²/<https://itunes.apple.com/ru/app/shadowmatic/id775888026?mt=8/>

³ **Позднякова Ю.** Театр теней в новаторской головоломке Shadowmatic для ИОС. 25.12.2013. <http://www.3dnews.ru/tags/triada%20studio%20games>

մեզ համար հայտնություն էր: Իսադի տեսողական (վիզուալ) և աուդիո-մթնոլորտը նպաստում է թուլացմանը և որոշ իմաստով իրականությունից անջատվելուն: Այդ է պատճառը, որ մենք օգտագործում ենք meditative բառը «Shadowmatic»-ի նկարագրության համար»⁴:

«Shadowmatic» խաղը նպաստում է երևակայության զարգացմանը, ունի 70 «մակարդակներ» (level), որոնք ներկայացված են 9 եզակի սենյակներում, տարբեր ոճական և իմաստային ձևավորմամբ, խաղի ընթացքն ուղղորդվում է երաժշտությամբ: Խաղը ստեղծված է Metal-ի միջոցով և ակտիվորեն օգտագործում է iPhone կամ iPad-ների գիրոսկոպն ու ակսելերոմետրը, սարքի տեսախցիկի թեքությունից ելնելով՝ փոխում դիտակետի անկյունը:

«Triada» ստուդիան 2015 թ. հունվարին ստեղծված «Shadowmatic» համակարգչային խաղի համար «Apple» ընկերության կողմից արժանացավ Apple Design Awards մրցանակի: Մրցույթին մասնակցում էին 9 ընկերություններ, որոնց թվում՝ «Robinhood Markets» և «Flexibits»: Apple Design Awards ամենամյա մրցանակը WWDC կոնֆերանսի ժամանակ տրվում է լավագույն մասնակիցներին: Որպես հիմնական չափանիշ հաշվի է առնվում դիզայնը, ինչպես այսպես կոչված «ինտերֆեյսի արտաքին տեսքը»⁵, այնպես էլ տեխնիկական կատարումը:

«Shadowmatic»-ը Մոսկվայում արժանացավ նաև DevGAMMAwards 2015-ի միջազգային երկու մրցանակների՝ «Լավագույն գրաֆիկայի» և «Մեդիա ընտրության» համար: Մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ միջազգային կոնֆերանսի շրջանակներում⁶:

«Շողակաթ» հեռուստաընկերության համար ստեղծված «Field» (Դաշտ) (2013 թ.) անիմացիոն ստեղծագործությունը կատարված է 3D ձևաչափով, որին համադրված է տեսաֆիլմերի նկարահանումը. մարդկային կերպարը «տեղադրվում» կամ ներդաշնակորեն «կապվում» է 3D-ով ստեղծված բնանկարի հետ: Հորինվածքում տարածական միջավայրը ընդարձակ կանաչ ծաղկազարդ դաշտն է, որ ձգվում է մինչև հորիզոնի գիծը՝ ավարտվելով ցածրադիր բլուրների գոգավորություններով: Երկնքում ամպերի շարժումն ու լույսի փոփոխությունները ստեղծում են դինամիկ, բնական տպավորություն: Թեման

⁴ <https://itunes.apple.com/ru/app/shadowmatic/id775888026?mt=8>.

⁵ <http://siliconrus.com/2015/06/shadowmatic-ada/>.

⁶ <http://golosarmenii.am/article/28660/armyanskaya-igra-Shadowmatic-stala-obladatelem-dvux-nagrad-mezhdunarodnoj-premii-DevGAMMAwards-2015>.

արտահայտված է որոշակի սյուժետայնությամբ, որտեղ մեծ տեղ են գրավում այլաբանական իմաստ ունեցող տարրերը: Բնանկարի կենտրոնում ոլորուն չորացած տպավորություն թողնող ծառի բունը «կենդանանալով» վերածում է հսկայական կանաչ սաղարթախիտ ծառի՝ արտահայտելով զարթոնքի և վերածննդի գաղափարը:

«VEM MEDIA ARTS»-ը (2014 թ.) «Triada» ստուդիայի ստեղծագործական յուրահատուկ մտահղացումներից է: Այն, եռաչափ գրաֆիկայի անիմացիա լինելով, առանձնանում է գեղարվեստական մտահղացման լակոնիզմով, նրբաճաշակությամբ: Տեսահոլովակային հորինվածքն ունի դինամիկ, արագ զարգացող ընթացք: Հորինվածքի հարթության ներքին տարածականության մեջ առաջին պլանից դեպի խորքային հատված պարուրաձև գծերով ընթացող լույսի փոքրաչափ կետերը «հավաքվելով» ստեղծում են գրաֆիկական հարթային գծանկար, որը, շեփորը ձեռքին, թևավոր հրեշտակ է: Նրա կերպարն ուրվագծվում է քառակուսու ֆոնին՝ ստեղծելով միասնական հորինվածք, որն ամբողջանում է ստորին մասում՝ VEM MEDIA ARTS գրառումով: «VEM MEDIA ARTS»-ը գունային լուծմամբ կոնտրաստային է. սկզբում գունային լուծումը կառուցված է մուգ մանուշակագույնի և լույսի սպիտակ կետային և տարածական դրսևորումների վրա, իսկ վերջում՝ սևի և սպիտակի: «Triada» ստուդիայի «VEM MEDIA ARTS»-ը ստեղծվել է VEM ֆիլմերի արտադրության ընկերության համար:

Մեր կողմից այս հոդվածի սահմաններում դիտարկված համակարգչային գրաֆիկայի բազմաբնույթ դրսևորումները «Triada» ստուդիայի այսօր արդեն ճանաչում ստացած տեսողական, հոլովակային, գովազդային և այլ ստեղծագործությունների մի մասն են միայն, որոնք, սակայն, լուրջ հայտ են հայկական ժամանակակից համակարգչային գրաֆիկական դիզայնի մասին մասնագիտորեն խոսելու և որ ամենակարևորն է՝ որպես երևույթ այն խորապես ուսումնասիրելու համար:

Ըստ կատարված ուսումնասիրության՝ «Տրիադա» ընկերության՝ վերևում քննարկված գրաֆիկական գործերը պատկանում են եռաչափ գրաֆիկայի ուղղությանը: Հորինվածքային տեսակետից նրանց առանձնահատկություններից է տարածական հարթությունների, լուսային էֆեկտների, գունային լուծումների, կերպարային ու պատկերային բազմազանությունը: Տեխնոլոգիական առումով «Տրիադա» ընկերությունը նախապատվությունը տալիս է եռաչափ գրաֆիկական ծրագրերին:

ԱՄՓՈՓՈՒՄ

«Տրիադա» ընկերության՝ վերևում քննարկված գրաֆիկական գործերը պատկանում են եռաչափ գրաֆիկայի ուղղությանը: Հորինվածքային տեսակետից նրանց առանձնահատկություններից է տարածական հարթությունների, լուսային էֆեկտների, գունային լուծումների, կերպարային ու պատկերային բազմազանությունը: Տեխնոլոգիական առումով «Տրիադա» ընկերությունը նախապատվությունը տալիս է եռաչափ գրաֆիկական ծրագրերին:

Բանալի բաներ - գրաֆիկական դիզայն, համակարգչային տեխնոլոգիաներ, գեղարվեստական սինթեզ, անիմացիա, գեղարվեստական առանձնահատկություններ, եռաչափ գրաֆիկա, գեղարվեստական մտահղացում, էֆեկտներ, «Triada» ստուդիա, օբյեկտներ:

СТУДИЯ «TRIADA» КАК ОДНО ИЗ МНОГОСТОРОННИХ И ЯРКИХ ПРОЯВЛЕНИЙ АРМЯНСКОГО СОВРЕМЕННОГО ГРАФИЧЕСКОГО ДИЗАЙНА

АРТАК АГЛАМАЗЯН

В Армении компьютерный графический дизайн – одна из новых развивающихся профессий. Рассмотренные в статье графические работы студии «Triada» принадлежат к направлению трехмерной компьютерной графики. В композиционном смысле их особенностью является многообразие пространственных плоскостей, световых эффектов, цветовых, образных и изобразительных решений. В технологическом смысле студия «Triada» отдает предпочтение программе трехмерной графики.

Ключевые слова - графический дизайн, компьютерные технологии, художественный синтез, анимация, художественные особенности, трехмерная графика, художественный замысел, эффекты, студия “Triada”, объекты.

“TRIADA” STUDIO - ONE OF THE MULTILATERAL AND BRIGHT MANIFESTATIONS OF THE ARMENIAN MODERN GRAPHIC DESIGN

ARTAK AGHLAMAZYAN


This article considers the graphic works of the “Triada” company, a three-dimensional computer graphics art flow. The singularity of “Triada” lies in the range of multiplicity of image and feature-based spatial planes, light effects, colour

decisions. In the sense of composition, feature-based flow visualization. As far as technology is concerned the “Triada” company’s selection is three-dimensional graphics.

Key words - graphic design, computer technologies, artistic synthesis, animation, artistic singularities, three-dimensional graphics, artistic thoughts, effects, “Triada” studio, objects.

Նկարների ցանկ


1. Դրվագներ «Shadowmatic» խաղից:
2. Դրվագներ «Շողակաթ» հեռուստաընկերության անիմացիոն տեսապատկերից:
3. Դրվագներ «VEM MEDIA ARTS» ընկերության անիմացիայից:



1



2



3

ТИГРАН МАНСУРЯН - СОНАТА ДЛЯ АЛЬТА И ФОРТЕПИАНО

АННА ТАМИРОГЛЯН

Увидевшая свет в 1967 году публикация альтовой сонаты, сочиненной в 1963 году Тиграном Мансуряном¹, стала одним из свидетельств прорыва армянского музыкального искусства в новый этап своего развития. Даже если в наше время графика этой сонаты кажется достаточно традиционной, то при внимательном рассмотрении особенностей музыкального материала обнаруживается целый ряд композиционных новшеств, придающих этому полотну значение произведения авангардного и не утратившего своего художественного значения. В первую очередь, это относится к ладоинтонационной сфере полотна, и, что очень важно, к формообразованию, которое представляет весьма необычную модель сонатности в рамках трехчастного цикла. Заметим, что стилистика Тиграна Мансуряна существенно менялась на разных этапах его творческого становления. В его композиторской практике есть произведения, сочиненные в разных авангардных техниках и формах: будучи яркой индивидуальностью, он всегда был предельно свободен в выборе средств выразительности, считая своей первостепенной творческой задачей наиболее точное воплощение задуманного в произведении образного ряда. И в этой сонате, сочиненной в ранний период творческого пути, эта свобода творческой воли проявилась с предельной рельефностью: несмотря на традиционность средств выразительности, язык сонаты свеж, а образный ряд ярок и выразителен. По сей день в жанрах, связанных с ансамблевым сочетанием альты и фортепиано, к которым, к сожалению, композиторы обращаются достаточно редко, соната Тиграна Мансуряна занимает одно из лидирующих мест и звучит со многих сцен в Армении и за рубежом.

Первая часть сонаты, в отличие от традиционных норм сонатного Allegro, предполагающих конфликтное сочетание двух тем, идентифицируемых как два полярных образа, монотематична. Это несомненное проявление авангардного искусства: художественным объектом становится внут-

¹ Мансурян Т., Соната для альты и фортепиано, изд-во Музыка, Москва, 1967, стр. 25. Первое исполнение: автор (ф-но), Акоп Сандалчян (альт), зал ЕГК им. Комитаса, 1963 г.

ренный мир человека², его сложное устройство, переживания и наиболее важные реакции на все происходящее в среде обитания одной единственной личности, выхваченной из многоликого социума. Именно на этой интровертной модели драматургии построена логика формы первой части - Adagio - очень выразительная мелодическая тема в первом своем проведении интонационно разомкнута и представляет собой целый ряд музыкальных фраз, начинающихся с мотива - либо точного, либо подобия первому, но всегда имеющего другое продолжение.

Пример 1. Пример 2.

СОНАТА ДЛЯ АЛЬТА И ФОРТЕПИАНО

Adagio


аккордами в увеличении

В увеличении

Эта игра в постоянную интонационную тематическую инвариантность представляется символическим обозначением разных эмоциональных состояний образа. Более того, постоянные смещения заглавного интонационного зерна в разные тесситуры обоих инструментов и разные продолжения, следующие за ним, придают образу разные степени эмоциональной напряженности.

² Особенно действенной моделью драматургии с античных времен и до первых ростков авангардизма являлась модель трагедии, несущей в себе эффект катарсического очищения духовной сферы человека.

Заглавная интонация в масштабах всей фразы размещена в двух ладовых системах (схема 1).



Исходя из особенностей заглавного интонационного зерна, первая часть фразы сочинена в лидийском ладу *in Ges* с расщепленной ступенью, а кадансирует вся фраза на тоническом трезвучии *a-moll* с половинным кадансом на зависшем тоне двойной доминанты. Мелодическая модуляция осуществлена благодаря общности расщепленной ступени *des-d*, которая в тональности *a-moll* является вершиной обыгрываемого в кадансе тонического трезвучия с последующим разрешением его в *IV* повышенную ступень. Значит, мы имеем дело с модуляцией через общность расщепленного тона *V* ступени первой тональности с *V* натуральной ступенью второй. При столь сложной технике модуляции половинный каданс на тоне двойной доминанты выглядит более чем естественно. Партия фортепиано предельно полифонична, хотя в структурах фактуры часто встречаются оstinатные повторы единичных тонов, приемы имитационных переключек или аккордовых вертикалей. Аккордовые структуры всегда следуют особенностям той ладовой среды, в которой размещена контрапунктическая игра в имитационные переключки между альтом и полифоническими контрапунктами в партии фортепиано. Приведем наглядный пример ладоинтонационных смещений мотивного зерна в ансамблевых имитациях между альтом и фортепиано (пример 2). Имитационные переключки, как это видно в приведенном примере, осуществлены в разных интервальных соотношениях и с применением контрапунктического увеличения мотива. Есть даже случай аккордового ведения мотива в приеме увеличения. В определенном смысле соната очень напоминает своеобразную и достаточно сложную по тональными контрапунктическим характеристикам инвенцию, в которой постоянно деформируемый тематический материал подпитывается приемами гармонии. Гармонические же приемы являются

производным материалом от ладовых особенностей каждого фрагмента, где они размещены. Но самое важное качество первой части сонаты для альты и фортепиано Тиграна Мансуряна заключается в принципе инвариантности тематизма, начинающегося с неизменного мотивного зерна, всегда имеющего иное продолжение. Этот принцип, использованный Мансуряном в композиционном процессе, восходит к культуре армянской монодической традиции, многие века совершенствовавшейся в храмах и ставшей устойчивой платформой национальной самобытности в современном национальном музыкальном искусстве.

В контексте сонатного цикла эта пьеса прелюдийная, предвещающая основные события, что со всей очевидностью следует из уровня сложности пьесы, хотя и не простой, но все же недостаточно продолжительной, а по сравнению со следующей частью проще устроенной, не имеющей продолжительного и глубокого развития.

Вторая часть (*Moderato*) является смысловым средоточием сонаты, где присутствуют две темы – два музыкальных образа, взаимодействие которых драматургично и по сути отвечает идее сонатного *Allegro*, сущностное, концептаульное начало которого заключено в столкновении двух контрастных образов. Но у Мансуряна противопоставление образов более глубокое, осуществленное на двух уровнях композиционного плана. Первая тема по характеру представляет собой декларативное утверждение, имеющее по фразеологическому признаку симметричное строение: две крайние фразы интонационно абсолютно идентичны и различаются лишь звуковысотной позицией – заключительная версия расположена квинтой выше, а средняя, имеющая структуру, близкую общим формам движения и интонационно менее выразительная, служит подобием идеи развития, краткой, но исполняющей роль волны восхождения к более яркой версии ключевой фразы. Эта микромодель драматургии, где предложенная изначально декларативная фраза через фазу развития восходит к своей апофеозной версии. Характерно, что две очень похожие фактурные фигуры в партии фортепиано, в отличие от восходящей линии альты, направлены в противоположную сторону, и это нисходящее движение служит своеобразным контрапунктическим противовесом альтовой мелодии. Три аккордовых вертикали, на которые опирается вся тема, отмечают наиболее важные гармоничные опоры в ладовой структуре темы: Т, D и минорную VII ступень своеобразного лада in F:

(схема 2).



Отметим две существенные детали формы данной темы для того, чтобы раскрыть смысловую и структурную симметричность темы: во-первых, в партии альты две одинаковые структуры расположены по восходящей линии движения на квинту вверх, в то время как одинаковые фактурные структуры в партии фортепиано движутся противоположно на кварту вниз; во-вторых, такая направленность важных элементов общей структуры темы является своеобразным приемом компенсации, и восходящее движение уравнивается движением нисходящим. Есть еще один важный фактор композиционно - инструментального аспекта организации музыкального материала: две идентичные фразы темы сочинены таким образом, что с позиций аппликатурного удобства игры они совершенно одинаковы: первая фраза играется на струнах C, G и D с опорой на *pizzicato* левой руки на баске - *sul C*, а вторая - точно так же позиционно на струнах G, D и A с опорой на *pizzicato* левой руки на струну *sul G*. Иными словами, аппликатурно обе фразы исполняются совершенно одинаково, а левая рука исполнителя смещается только с ориентацией на другую группу струн. Это блистательный пример конструктивного видения композиции не только художественно ценной, но и инструментально удобной, а значит - легко исполняемой. Сразу же после экспонирования первой темы проводится вторая тема, краткая и тревожная, состоящая из двух мотивов, исполняемых без фортепиано. Ладовая основа этой темы следующая: ладовый пентакорд, если не учитывать расщепления II и V ступеней, подобен лидийскому, однако именно расщепление ступеней лада придает теме выразительность, а главное, ее интонационная импульсивность составляет контраст эпическому характеру первой темы, сама же заглавная интонация явно звучит в краске фригийского лада «Н», который далее подвергается альтернативной деформации.

Таким образом, экспозиционная демонстрация тем представлена композитором предельно лаконично и, что интересно, без особой активности фортепиано. Но уже вслед за проведением темы в партии фортепиано начинается активная разработка подвижных фактур, сопровождающих вычлененные из первой темы мотива. Уже во второй цифре линейное сопряжение тем, а точнее – второй темы с элементами первой, начинают фазу развития, которые в дальнейшем постоянно сплетены в едином контрапункте, протекающем в эффекте усиления драматического напряжения. Вторая фаза развития, после очередного проведения второй темы в ладу $in\ h$ фригийском появляется новый очень краткий, но очень выразительный мотив, ставший источником нового витка нагнетания напряженности. В определенном смысле этот мотив – порождение интонационного зерна первой части, отдаленно напоминающий его по ритмическому качеству. Однако его энергетичность усилена эффектом интервального внутрискруктурного микрорасширения, придающего всему процессу качество энергетической стимуляции музыкального потока. В партии фортепиано эта мотивная микроструктура не встречается в своей исходной версии: лишь однажды в зоне кульминации она проводится в увеличении. Вторая тема в этой части часто меняет свою тональную позицию: в первой фазе развития она проводится в тональностях $in\ h$ (повторно после экспозиции), $in\ G$, снова $in\ h$, $in\ G$ – в зоне кульминации, и вновь в позиции $in\ h$ – в репризном разделе. А вот первая тема всегда проводится в одной и той же тональной позиции – $in\ F$, и это еще один уровень взаимодействия, который можно определить как взаимодействие незыблемого и подвижного. Правда, первая тема почти везде усечена: при общем стремлении композитора к лаконичности отсечение всего второстепенного более чем уместно. В разделе репризы мы снова столкнулись с сопоставлением подвижного и незыблемого: первая тема сохранила свою тональную позицию, а вторая – вновь проведена в тональности $in\ G$ с признаком присутствия фригийской секунды, характерной почти для всей части. Таким образом, отметим три уровня взаимодействия тем: первый связан с контрастом тем, второй – с весьма обстоятельной формой, как основном принципе развития в контрапунктическом противостоянии и, наконец, третий – это символическое сопряжение незыблемого и подвижно – изменчивого.

Третья часть сонаты *Vivo* как бы возвращает слушателя к классическим традициям – финал виртуозно подвижен, а подвижность прерывается дважды

краткими эпизодами неожиданных замедлений темпа, которые подобны контрастным интермедиям и делят форму на три эпизода. Подвижность финала сонаты представляется традиционной и лишь по темповому фактору напоминает финалы классических сонат.

В части практически нет темы, по крайней мере, в том понимании, которое вкладывали в это понятие композиторы классической и романтической эпох. Лишь идентичность типа движения на протяжении всей части создает эффект музыкально-стилистической однородности. Движение, точнее конкретный тип движения, является носителем образности, что вполне согласуется с символической образностью второй части, где персонажи не материальны, а являются качественной сущностью разных субстанций – статичной и движущейся. В типологии движения совмещаются два вида звуковой активности: линейно-однородной и прерывистой.

Пример 3. Схема 3.

Линейная подвижность выражена в серии мелодически связанных между собой триолей, которые восходят к аккордовой микрокульминации. В примере 3 отмечены разными рамками эти типы подвижности - линейной и прерывистой. Линейные основаны на микроструктурах из 3/8 – $CEBB^3$, а прерывистые представляют собой либо единичную аккордовую вертикаль, либо группу аккордов на основе ритмоформулы следующей структурной организации ($\downarrow \downarrow$), ($\downarrow \downarrow$), при этом второй тип подвижности всегда следует за первым и является точкой динамической напряженности, к которой устремлено линейное движение. Отличительной особенностью части является также использование приемов додекафонии, а также активная разработка структур:

³ Композитор обозначил метр двумя способами: 4/4 или 12/8. В первом случае микроструктура представляет собой триоли, а во втором – группу из трех равнозначных микрочастиц метра.

подвижных и аккордовых. Так, уже во вступлении присутствуют параллельные восходящие горизонтальные пассажи, где использован серийный ряд из 10 тонов: *gis-ais-h-cis-c-e-g-fis-e/x-b-es-es/x* (1-2-3-4-5-6-7-8-x-9-10-x) с повтором-x и вертикальные четырехзвучные кластеры *as-b-des-es*, *a-h-c-e* (см. Пример 3).

Важно отметить, что третья часть вступает в процесс после окончания первого эпизода с фортепианного *solo* без участия альты, который исполняет краткую реплику *rubato*. Здесь композитор впервые вводит альт в музыкальный поток в первой краткой интермедии, резко контрастирующей с подвижным разделом формы, исполненным на фортепиано. Краткая реплика альты в данном контексте, если представить себе инструмент в облике персонажа, выражает удивление и вопросительность. Драматургически – это сопоставление двух контрастных музыкальных объектов, но это не просто сопоставление, а сюжетное взаимодействие. Альт, являясь персонажем, как бы «высказывает свое удивление» неожиданному появлению бурного движения в партии фортепиано. Уже с первого столкновения образов становится очевидным, что композитор персонифицирует инструментальное начало, наделяя каждый из инструментов своим характером и свободной волей, где во взаимоотношениях фортепиано и альты они сами же и являются персонажами в музыкальном действе. Фортепиано сразу после реплики альты вновь включается в свое движение, как бы проигнорировав вопросительность альтовой фразы, а альт, в свою очередь, демонстрируя находчивость, тут же входит в «музыкальную полемику». Эффект смыслового несогласия фортепиано и альты считается легко – при едином фактурном и энергетическом тоне движения оба инструмента явно противопоставлены. Это явный музыкальный гротеск, напоминающий одновременное звучание спорящих друг с другом голосов, стремящихся высказать свое мнение, не слушая своего оппонента.

Одним из действенных приемов воплощения этой образности стало ритмическое противопоставление микроструктур: у фортепиано ритморганизации основаны на формуле $\uparrow \downarrow$, а у альты – восьмая пауза и \downarrow , и расхождение микроформул ритморганизации создает эффект образного противостояния (см. Схему 3). Во второй раз в интермедийных остановках ситуация повторилась, но с обратным эффектом – теперь альт «замолк» под напором фортепианной экспрессии, а фортепиано доиграло два такта второго эпизода части без альты в эффекте замедления движения до темпа *Moderato*. Случилось это сразу после общей динамической кульминации: на этот раз после замедления темпа

альт стремительно вернул исходный темп, а вместе с ним и своеобразное лидерство, с которым фортепиано в своей партии, наконец, оказалось в драматургическом согласии. Весь интермедийный эпизод стал не только драматургически важным, но и смысловой кульминацией части.

Далее следует заключительный эпизод - реприза, единственным формальным признаком которой является совершенно неожиданное (не востребованное в разделе развития) точное повторение первого в части двутакта. И хотя музыкальный материал репризы (так мы условно назовем этот эпизод) схож с первым (тоже условно - экспозиционным) лишь по типологии фактур, реприза более продолжительна, чем оба предыдущих эпизода.

Иными словами, технически идентичная музыка в экспозиции и репризе воспринимается абсолютно по-разному: в первом разделе как противоречие, а в третьем - как согласие. Наконец, третье подобное, но не точное проведение исходного материала в конце сонаты исполняет роль бравурного завершения. Искусная подмена смыслового содержания в психологически точно рассчитанных местах части тоже является проявлением гротеска, а с точки зрения реализации композиторского замысла представляется образцом тонкого музыкального психологизма. Это позволило автору музыки в пределах достаточно традиционной техники письма воплотить сложную символику образов абстрактных, но прямо относящихся к конкретным явлениям. Если в первой части была реализована идея прелюдии, в которой выведен образ мыслителя, погруженного в раздумья, во второй – представлены образы явлений, которые очень естественно выражены в форме музыкального символизма – статичности и движения, то в третьей через тонкий гротеск воплощен полемический спор, но не людей, а инструментов, участников реального музыкального действия, которым и является реальное исполнение сонаты для альта и фортепиано. В определенном смысле идея произведения сюрреалистична, а факт воплощения ее в форме традиционного и даже почти тонального письма – еще более усиливает этот музыкально-образный феномен.

РЕЗЮМЕ

Статья посвящена анализу «Сонаты для альта и фортепиано» (1963 г.) Тиграна Мансуряна: идея произведения – сюрреалистична. По сей день в жанрах, связанных с ансамблевым сочетанием альта и фортепиано, соната

Тиграна Мансуряна занимает одно из лидирующих мест и в исполнительском плане звучит со многих сцен в Армении и за рубежом.

Ключевые слова - Тигран Мансурян, ансамбль, исполнительский план, анализ композиционных особенностей, сюрреализм.

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ. ՍՈՆԱՏ ԱԼՏԻ և ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ

ԱՆՆԱ ԹԱՄԻՐՕՂԼՅԱՆ

Այս հոդվածում անդրադառնում ենք Տիգրան Մանսուրյանի «Սոնատ ալտի և դաշնամուրի համար» ստեղծագործությանը (1963 թ.), որի գաղափարը սյուրռեալիստական է: Մինչ օրս այս ժանրի՝ ալտի և դաշնամուրի համույթի համակցության հետ կապված, Տիգրան Մանսուրյանի սոնատը զբաղեցնում է առաջատար տեղերից մեկը և կատարողական առումով լայն տարածում է գտել ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի բազմաթիվ բեմերում:

Բանալի բաներ - Տիգրան Մանսուրյան, համույթ, կատարողական մեկնաբանման պլան, կոմպոզիցիոն առանձնահատկությունների վերլուծություն, սյուրռեալիզմ:

TIGRAN MANSURYAN'S SONATA FOR VIOLA AND PIANO

ANNA TAMIROGHLIAN

This article analyzes Mansuryan's «Sonata for Viola and Piano» (1963). The theme is surrealistic. This «Sonata for Viola and Piano» is classified as one the best among its genre. It has been widely performed in Armenia as well as in many other countries.

Key words - Tigran Mansuryan, ensemble. a scheme for interpreting a performance, interpretation of creative features, surrealism.

ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆԸ ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ՆԻԿՈԼԱՅ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

80 տարի առաջ՝ 1935 թվականի հոկտեմբերի 22-ին, Փարիզում վախճանվեց Կոմիտասը: Հոգվածը նվիրվում է մեծ երաժշտի մահվան 80-ամյա տարելիցին:

Երջանիկ աստղի տակ էր ծնվել Կոմիտասը, քանի որ ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում նրա կողքին էին իր հավատարիմ զինակիցները՝ հայ երգի նվիրյալներն ու առաքյալները, ովքեր անխոնջ պրոպագանդում էին հայ երգը: Խոսքը մեցցո-սոպրանո Մարգարիտ Բաբայանի (1874-1968) և Կոմիտասի ճեմարանական սաների՝ տենորներ Վահան Տեր-Առաքելյանի (1883-1941)¹ ու Արմենակ Շահմուրադյանի (1878-1939) մասին է:

1904 թվականին Մարգարիտ Բաբայանն ընտանիքով տեղափոխվում է Փարիզ և մշտական բնակություն հաստատում այնտեղ: Դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտագետ, մանկավարժ Մ.Բաբայանը դառնալու էր Կոմիտասի մերձավորագույն բարեկամը, նրան քաջալերող խորհրդատուն ու քննադատը, հետագայում՝ կոմիտասյան խնամատար հանձնաժողովի եռանդուն կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը: Նա էր կորստից փրկելու ու Հայաստան ուղարկելու Կոմիտասի ձեռագրերը: Փարիզում հիմնադրելու էր վոկալի դպրոց՝ ծավալելով իր մանկավարժական գործունեությունը, իսկ Եվրոպայում ծավա-

¹ Երգիչ, ռազմական գործիչ, գրող և թարգմանիչ Վ.Տեր-Առաքելյանը՝ Կոմիտասի ամենասիրելի սանը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո՝ 1909-ին, ընդունվում է Պետերբուրգի կոնսերվատորիա: Բայց Առաջին աշխարհամարտը կտրուկ փոխում է Վ.Տեր-Առաքելյանի ճակատագիրը: Կոնսերվատորիան չավարտած՝ 1914թ. օգոստոսի 3-ին նա զորակոչվում է բանակ, մարտնչում Արևմտյան (1914-1915) և Կովկասյան (1915-1917) ռազմաճակատներում՝ հասնելով գնդապետի աստիճանի, պարգևատրվում շքանշաններով: 1917 թ. ղեկտեմբերի 2-ին գործուղվում է հայկական 2-րդ հրաձգային բրիգադի շտաբ, մասնակցում Սարդարապատի ճակատամարտին, ապա ստանձնում Կարսի ռազմաճակատի շտաբի պետի պաշտոնը: Երգչի բազմաթիվ կատարումներից պահպանվել են մի քանիսը, որոնցից 2-ը գտնվում են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ձայնադարանում: Տե՛ս **Աննա Ասատրյան**, Երգիչ գնդապետը. Վահան Տեր-Առաքելյան, Միջազգային գիտաժողով «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)», 1-2 հոկտեմբերի, 2014թ., զեկուցումների ժողովածու, Երևան, 2015, էջ 256-268:

լած համերգային գործունեությամբ ու ֆրանսիական մամուլում հրատարակած երաժշտագիտական հոդվածներով նպաստելու էր հայ երաժշտության համաշխարհային ճանաչմանը:

Դա՛ հետագայում:

Իսկ մինչ այդ՝ կրկին 1904 թվականին, Փարիզ է ժամանում Արմենակ Շահմուրադյանը՝ հայ երգը համաշխարհային համերգային էստրադա դուրս բերած պրոֆեսիոնալ առաջին երգիչը, ով իր կյանքը նվիրեց հայրենի երգարվեստի լավագույն նմուշների տարածմանն ու ժողովրդականացմանը: «Ինչպե՞ս կարելի է, որ ես ազգս մոռնամ», - ասել է «հայկական Կառուզոն», Փարիզի «Grand-opéra»-ի երգիչ, Տարոնի սոխակ Ա.Շահմուրադյանը, ով, ճակատագրի չար խաղով հայրենիքից հեռու հանգրվանած հայերի սրտաբեկ վիճակը մեղմելու նպատակով այցելելով հայաշատ վայրեր, իր հայրենաբաղձ երգով մշտադրոն էր պահում հայրենիքի ու ազգի ոգին՝ փափագելով, որ մի օր անպայմանորեն իր հարազատ ճղակոտոր ու հոշոտված ժողովուրդը տերը կդառնա իր կորսված հայրենիքի...²

Դա՛ հետագայում:

Իսկ մինչ այդ՝ Փարիզ հասնելուն պես, Ա.Շահմուրադյանը ծանոթանում է Արշակ Չոպանյանի (1872-1954) հետ, ով հետագայում կգրի. «Ես զայն ճանչցած և սիրած եմ առաջին օրեն իսկ, որ եկավ Փարիզ: Իրիկուն մը, ուր փարիզահայ խմբակցության մը գրական ու գեղարվեստական մեկ հավաքություն Մկրտիչ Պեշիկթաշյանի վրա բանախոսություն մը պիտի ընեի, էտկար Շահինը, որ քովս էր, և ես տեսանք կարմիր, լեցուն երեսներով գիրուկ երիտասարդ մը (հետո ավելի առնական, բայց ավելի նիհար, տժգույն ու ջղուտ դեմք մը առավ), որ եկավ ինքզինքն ինձի ներկայացնել. «անունս Շահ-Մուրատյան է, ըսավ:

-Մշեցի եմ, երգիչ եմ, եկեր եմ արվեստիս մեջ կատարելագործվելու. կ'ուզե՞ք որ այս իրիկուն երգ մը երգեմ»: Ձայնը նույնիսկ պարզ խոսակցության ժամանակ անուշ թեմպր մը ուներ: Սիրով հավանեցանք: Երեկոյթի ընթացքին ան երգեց «Հայաստան, երկիր դրախտավայրը»: Իր երգեցողությունը, որ լի էր կրակով, ճաշակի պակասներ կը հայտներ դեռ. բայց ինչ ձայն: Այդ հոյակապ

² Տե՛ս **Աննա Ասատրյան**, Հայ երգի առաքյալը. Արմենակ Շահմուրադյան, «Գիտության աշխարհում», 2007, N 3, էջ 2:

թենորի ծայնը զմայլանքով ծափահարվեցավ ամենքեն: Ձգացինք, որ ապագա մեծ երգիչ մը կար այդ նորեկին մեջ»³:

Երկու հայրողիների այդ ծանոթությունից սկիզբ է առնում նրանց բարեկամությունը, որը շարունակվեց մինչև երգչի մահը:

1904 թ. դեկտեմբերի 30-ին Կոմիտասը Էջմիածնից Փարիզ Չոպանյանին հասցեագրած նամակում գրում է. «Խնդրում եմ, Արմենակիս (Շահմուրադ) լաւ խնամէք»⁴:

Շուտով Ա.Չոպանյանն Արմենակին ծանոթացնում է Մարգարիտ Բաբայանի հետ, որն էլ դառնում է եվրոպական երաժշտության ուսուցման նրա առաջին ուսուցիչը:

Հետագայում Արմենակ Շահմուրադյանն ու Մարգարիտ Բաբայանը հաճախ են հանդես եկել Կոմիտասի կազմակերպած համերգներին՝ զգալիորեն ապահովելով դրանց հաջողությունը:

Ավելին՝ Մարգարիտ Բաբայանը համարվել է «Արմենակի քույր-ընկերակցուհին նրա ուսումնական և արտիստական կյանքի գրեթե բոլոր փուլերում»⁵:

Երևանի Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող՝ Մարգարիտ Բաբայանի դիվանում ուսումնասիրություններ կատարելիս մեր կողմից հայտնաբերվեց մի ձեռագիր, որը մինչ այժմ անծանոթ է հայ երաժշտագիտությանը: Մարգարիտ Բաբայանի ֆոնդի N 231-ում խնամքով պահվում են նրա հուշերը Արմենակ Շահմուրադյանի մասին՝ նրա զեկուցումը երգչի հետմահու հորելյանի կապակցությամբ⁶: Այս հուշերը դուրս են մնացել Արմենակ Շահմուրադյանի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրողների տեսադաշտից: Այդ զեկուցման մասին հիշատակություն անգամ չկա երգչին վերաբերող մեզ հայտնի գրականության մեջ⁷:

³ Արմենակ Շահմուրադյան (Տարոնի Սոխակը), Ժողովածու, Երևան, 1998, էջ 113-114:

⁴ Կոմիտաս, Նամակներ, Երևան, 2000, էջ 124:

⁵ **Ռաֆայել Համբարյան**, Սոխակ Տարոնա, վավերագրական վիպակ, Երևան, «Հայաստան», 2001, էջ 225:

⁶ Տե՛ս Հուշեր Ա.Շահմուրադյանի մասին, զեկուցում Շահմուրադյանի հետմահու հորելյանի առթիվ, ինքն. 7 թերթ (4 փաթեթ), ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 231:

⁷ Ա.Շահմուրադյանի մասին տե՛ս **Մաթևոս Մուրադյան**, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970, էջ 396-398: **Ցիցիլիա Բրուսյան**, Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, Երևան, 1982, էջ 300-301: Արմենակ Շահմուրադյան (Տարոնի սոխակը), կազմող՝ Խաչիկ Սաֆարյան, խմբագիր՝ Հենրիկ Բախչինյան, Երևան, 1998: **Խաչիկ Սաֆարյան**, Կոմիտաս սքանչելագործ, Երևան, 1999, էջ 49-58: **Ռաֆայել**

Մինչդեռ, մեր կարծիքով, այն կարևոր է և ուշադրության արժանի:

Ստորև ներկայացնում ենք այդ զեկուցումը:

«Սիրելի հայրենակիցներ և հայրենակցուհիներ

Մեր պատուական Յանձնախումբը խնդրելով ինձի բարեկամիս Արմենակ Շահմուրատեանի սկզբնաւորութիւնը «Ֆաուստի» դերում Փարիզի մեծ օպերայում Ձեզի պատմել, գիտէր, որ տարիներ շարունակ իր խորհրդատու և օգնականը եղած եմ նրա երգեցողութեան դաստիարակութեան մեջ և քաջ գիտեմ, թէ ի՞նչ դժուարութիւններ ունեցած էր և իր մշեցու սօկունութեամբ, անյաղթելի եռանդով, մինչև իսկ ասեմ յամառութեամբ ոչ միայն շատ գոհացուցիչ կերպով աւարտեց Փարիզի կոնսերվատուարը, այլ և շատ յաջող սկզբնաւորութիւն ունեցաւ օպերայում:

Ես պարզ յիշում եմ այդ երեկոն 27 յունուարի 1911թ. –Կարող էք երևակայել ներկայ եղող հայերի և իր բարեկամների յուզմունքը և ուրախութիւնը և հպարտութիւնը, երբ ամեն գործողութիւնից յետոյ համակրութիւնը կ'աճէր և այդ ներկայացումը կատարեալ յաղթանակ եղաւ մեր հայրենակցին Շահմուրատեանի համար:

Թե ի՞նչ յուզմունք, ոյժ և եռանդ թափած էր մեր երգիչը աւելորդ է իսկ ծանրանալ, այնքան հասկանալի է ամենքիդ համար: Շաբաթներ նա ապրեցաւ ինչպէս տենդին մէջ, ահագին ֆիզիքական ոյժ կորցրեց, բայց վերջը այնքան հանգիստ էր, որ կը պատմէր ինձի, թէ հեռուէն բեմէն բոլոր բարեկամներին ճանաչեց դահլիճին մէջ և երբէք գլուխը չը կորցրեց յուզմունքից:

Պարոն Չօպանեանը, որ այնքան մեր երիտասարդութեան նեցուկ եղած է և միշտ քաջալերած և Ա.Շահմուրատեանին անգին բարեկամը եղած է և կ'օգտուեմ «Անահիտի» մէջ տպուած քննադատութիւններից մի քանիսը Ձեզ հետ բաժնելով, որ աւելի ևս գնահատելի դառնայ Ձեզ համար այդ սկզբնաւորութիւնը:

Այստեղ կանգ կ'առնեմ, կարծեմ, որ այսքանը Ձեզի գաղափար պիտի տայ, թէ ի՞նչ երգեցիկ ոյժ կորցրած ենք և մաղթենք բոլորս Արմենակ Շահմուրատեանին հոգեկան հանգստութիւն և առողջութիւն, որ իրեն այնքան կարևոր է»⁸:

Համբարյան, Սոխակ Տարոնա, Երևան, 2001, **Աննա Ասատրյան**, Արմենակ Շահմուրադյան, Նշանավոր ճեմարանականները, պրակ Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009, էջ 297-307:

⁸ Հուշեր Ա.Շահմուրադյանի մասին, զեկուցում Շահմուրադյանի հետմահու հրեայանի առթիվ, ինքն. 7 թերթ (4 փաթեթ), ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 231:

Այնուհետև բանախոսը ներկայացրել է ֆրանսիական մամուլի արձագանքները, որոնք թարգմանաբար տպագրվել էին Արշակ Չոպանյանի հիմնադրած ու խմբագրած «Անահիտ» հանդեսի 1911 թվականի 1-ին և 2-րդ համարներում:

«Հայազգի երիտասարդ թենորը՝ Շահ-Մուրատեան, որ Քոնսերվատորիա շատ փայլուն աշակերտ մը եղաւ և որ այնտեղ ունեցած իր յաջողութիւններով ՊՊ. Մեսսժէի և Պրուսանի ընտրութեան արժանի հանդիսացաւ, Օփերայի բեմին վրայ իր սկզբնատրութիւնն ըրաւ Ֆաուսթի մէջ:

Երիտասարդ արուեստագէտը ի դերն չհանեց այն յոյսերը զոր հանրային մրցումներու մէջ իր ցոյց տուած յատկութիւնները ներշնչած էին: Իր ծայնը, որ շատ մասնատր հրապոյր մ'ունի և որ իր ոսկեզօծ «թէմպր»ին շնորհիւ բոլորովին արևելեան համեղութիւն մը կը ստանայ, շատ հաճելի եղաւ հասարակութեան: Պ. Շահ-Մուրատեան գիտէ արդէն զայն վարել վստահօրէն և ճաշակով: Զմայլելի «տըմիթէթ»ներ ունեցաւ, վանկերը կը յօդէ պատուական կերպով, և անվախութիւնը չի պակսիր իրեն:

Իր բարեձև արտաքինը, իր համակրելի ձեւերը իրեն համար կը կազմեն բեմական ձիրքեր, զոր փորձառութիւնը իրենց կատարելութեանը պիտի հասցէ: Իր գտած յաջողութիւնը շատ բոռն եղաւ»:

(Լը Փըթի Փարիզիեն)⁹

«Երէկ իրիկուն, Պ. Շահ-Մուրատեան կ'երեւար առաջին անգամ Օփերան՝ Ֆաուսթի դերին մէջ: Անշուշտ շատ փորձառութիւն կարելի չէ պահանջել այս երիտասարդ թենորէն, որ թէպէտ լուրջ ուսումնասիրութիւններ ըրած կը թուի, սկսնակ մըն է՝ բառին ամբողջ նշանակութեամբ: Սակայն յաջողեցաւ շատ պաղարհինութեամբ զսպել իր յուզումը և գնահատել տալ այն շատ իրական յատկութիւնները որոնց շնորհիւ Քոնսերվատորիան մէջ առաջին մրցանակ մը ստացաւ: Այդ յատկութիւնները պիտի ընդլայնին հետզհետէ՝ երբ ինքնավստահութիւնն ու արհեստի քաջավարժութիւնը ստանայ անելի մեծ չափով. վարժուելով Օփերայի սրահին, հետզհետէ հարկ եղած տարողութիւնը պիտի տայ իր երանգներուն, և անշուշտ՝ զինքը շրջապատող պատուական խորհրդատուներուն մէջ պիտի գտնուին իրեն ըսողներ որ նուազ թոյլ գնացքով մը երգէ: Բայց սա անտարակուսելի է, որ իր ծայնը շատ սիրուն թեմպր մը ունի, շատ համակրելի գոյն մը, և օտարականի թեթև հնչում մը զոր պահած է՝ չի վնասեր իրեն, ընդհակառակն, և թէ շատ մը կտորներու մէջ ամենալաւ ճա-

⁹ Շահ-Մուրատեանի սկզբնատրութիւնը, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 316:

շակի ապացույցներ տուա: Հասարակութիւնը զինքն ընդունեցաւ շատ բարեկամութեամբ և ամենէն խրախուսիչ յաջողութիւնը շնորհեց իրեն»:

(Քոմետիա)¹⁰

«Պ. Շահ-Մուրատեանի սկզբնատրութեան համար, երէկ իրիկուն Ֆաուաթ տոփն Օփերան, առաջնակարգ խումբով մը. սկսնակը, որ շատ սիրուն ձայնով մ'օժտուած է, ամբողջ սրահին կողմէ՝ որ լեփլեցուն էր և շատ փայլուն՝ գտաւ ամենաջերմ ընդունելութիւն մը»:

(Ֆիկարո)¹¹

Մ.Բաբայանն իրավացիորեն նկատում է, որ ներկա սերնդի ներկայացուցիչներից շատերի համար Շահմուրադյանի ձայնը մի առասպել լեգենդ է, որովհետև արդեն մի քանի տարի է, որ այդ ոսկի ձայնը հանգած է: «Բարեբաղդաբար իր disque-երը կան, մանաւանդ եկեղեցականները, որ կարող են գաղափար տալ այդ ձայնի ամբողջ գեղեցկութիւնը», - նկատում է բանախոսը¹²:

Մեր կարծիքով, սակայն, Մարգարիտ Բաբայանի այս զեկուցումը կարդացվել է ոչ թե Ա.Շահմուրադյանի հետմահու հրքեյանի ժամանակ, ինչպես նշված է Բաբայանի դիվանում, այլ 1939 թվականի մայիսի 7-ին տեղի ունեցած նրա հրքեյանական հանդիսության ընթացքում: Նկատենք նաև, որ Շահմուրադյանը վախճանվել է փարիզյան շքեղագույն սրահներից մեկում կազմակերպված այդ հանդեսից չորս ամիս անց՝ սեպտեմբերի 14-ին՝ առավոտյան ժամը 9-ին, Փարիզի արվարձան Արքեոյում և սեպտեմբերի 16-ին վերջին հանգրվանը գտել իր համար երկրորդ հայրենիք դարձած Ֆրանսիայի հողում՝ Արքեոյի գերեզմանատանը:

Այսպես, Ա.Շահմուրադյանի հրքեյանական կենտրոնական մարմնի կողմից հրատարակված «Ա.Շահմուրատեանի յրբելեանը» հաղորդագրության մեջ մասնավորապես նշված էր, որ մեկ ամիս առաջ փարիզահայ մամուլի, մշակութային միությունների և գրողների միջև խորհրդակցության ժամանակ որոշվեց արժանավայել տոնել տաղանդավոր երգիչ Արմենակ Շահմուրադյանի հրքեյանը: «Այս յարգանքի ցոյցը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մայիս 7ի Կիրակի օր, կէսօրէ վերջ ժամը 3ին Սալ Կավոյի մէջ: Շահմուրատեան անունը անբաժան մասնիկն է Կոմիտասեան արուեստին: Մին կերտեց, միան ալ զայն տարածեց: Տօնելով Շահմուրատեանի արուեստը, մենք, անգամ մը ես մեր

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

¹² Հուլիտ Ա.Շահմուրադյանի մասին, զեկուցում Շահմուրադյանի հետմահու հրքեյանի առթիվ, ինքն. 7 թերթ (4 փաթեթ), ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 231:

պաշտամունքը արտաբերած կ'ըլլանք հայ ազգային մեծափառ երաժշտութեան հանդէպ»¹³:

Նշվում է, որ հոբեյանական հանդեսի ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից: «Ա. Բաժինը նուիրուած է բուն յոբելեանական մասին՝ ուր յարգանքի շատ կարճ ուղերձներ պիտի կատարեն Գեր. Հ. Սահակ Տէր Մովսէսեան, Օր. Մ. Բաբայեան, Պ.Պ. Ա. Չօպանեան, Շ. Միսաքեան, Օ. Պէրպէրեան, Հրաչ Զարդարեան եւ Հր. Բալուեան: Բ. Բաժինով՝ մեր բոլոր անուանի արուեստագէտներն եւ օտար երգիչները պիտի բերեն իրենց մասնակցութիւնը: Գ. Բաժինին մէջ պիտի լսուին Ա. Շահմուրատեանի սկաւառակները, ծայնատար գործիքներու օժանդակութեամբ, ու վերջապէս Դ. Բաժնով պիտի լսուի երգչախումբը»¹⁴:

Հոբեյանական հանդեսին անդրադառնում է «Ապագան» իր «Արուեստագէտի տօնը» հոդվածում. «Այսօր Ա. Շահ Մուրատեան փակուած է արուարձանի մը անկիւնը, իր ընտանիքին եւ բարեկամներու անձնէր խնամքներուն առարկայ, բայց զուրկ նիւթական բաւարար միջոցներէ:

Տիկին Շահ Մուրատեանի դիմումին ընդառաջ երթալով փարիզահայ մամուլը եւ մշակութային միութիւններ մէկ քանի խորհրդակցութենէ վերջ որոշեցին կազմակերպել կիրակի օրուան յարգանքի ցոյցը, որ կարելի է ըսել թէ իր գտած ընդունելութեամբ պիտի կարենայ մասամբ նպատակին ծառայել:

Հանդէսին յայտագիրը կազմուած էր երկու մասերէ, ուղերձներ եւ գեղարուեստական բաժին: Զանազան բանախօսութիւններէ ետք տեղի ունեցաւ գեղարուեստական բաժինը որուն կը մասնակցէին փարիզահայ սիրուած եւ տաղանդաւոր արուեստագէտներ: Յիշենք անոնցմէ օրք. Գոհարիկ Ղազարոսեանին (դաշնակ), Իրիս Պիլպիլեան (երգ), Պ. Պ. Ֆիլիպ Աղազարեան (ջութակ), Ժուան Նազարեանին (դաշնակ) եւ Ն. Մարգարեան (արտասանութիւն), ինչպէս նաեւ տիկ. Գետնեան՝ որ իր փափաքով երգեց Տարօնի ժողովրդական երգերը:

Ունկնդրուեցան Շահ Մուրադեանի սկաւառակները եւ համերգը փակուեցաւ Սիփան-Կոմիտաս երգչախմբի մեկ քանի երգերով ղեկավարութեամբ Պ. Ա. Պարթեւեանի»¹⁵:

Մեզ մնում է եզրակացնել, որ զեկուցումը Մ.Բաբայանը կարդացել է

¹³ Ա.Շահմուրատեանի յոբելեանը, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 316:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Արուեստագէտի տօնը, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 316:

հենց այդ հանդեսի առաջին բաժնում: Դա են վկայում նաև բանախոսի հետևյալ խոսքերը. «... մաղթենք բոլորս Արմենակ Շահմուրատեանին հոգեկան հանգստութիւն և առողջութիւն, որ իրեն այնքան կարևոր է»¹⁶:

Այսպիսով, կարծում ենք, որ Արմենակ Շահմուրադյանի մասին Մարգարիտ Բաբայանի այս հուշերը, մտնելով գիտական շրջանառության մեջ, կլրացնեն օպերային առաջին հայ երգչի մասին մեր պատկերացումները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հեղինակը գիտական շրջանառության մեջ է դնում դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտագետ, մանկավարժ Մարգարիտ Բաբայանի (1874-1968) հուշերը «հայկական Կառուզո», Փարիզի «Grand-opéra»-ի երգիչ, Տարոնի սոխակ Արմենակ Շահմուրադյանի մասին, որոնք գտնվում են Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող Մարգարիտ Բաբայանի ֆոնդում:

Հեղինակը բացահայտում է ու հիմնավորում, որ այդ զեկուցումը ոչ թե կարդացվել է Շահմուրադյանի հետմահու հորեյանի առթիվ, ինչպես նշված է ֆոնդում (տե՛ս Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 231), այլ երգչի մահից չորս ամիս առաջ՝ 1939 թվականի մայիսի 7-ին, տեղի ունեցած նրա հորեյանական հանդիսության ընթացքում:

Բանալի բաներ - Մարգարիտ Բաբայան, Արմենակ Շահմուրադյան, Կոմիտաս:

МАРГАРИТ БАБАЯН ОБ АРМЕНАКЕ ШАХМУРАДЯНЕ

НИКОЛАЙ КОСТАНДЯН

Автор статьи вводит в научное обращение воспоминания пианистки, певицы, музыковеда, педагога Маргарит Бабаян (1874-1968) об «армянском Карузо» – певце Парижской Гранд оперы, соловье Тарона – Арменаке Шахмурадяне, хранящиеся в фонде Маргарит Бабаян, который размещен в Музее литературы и искусства имени Егише Чаренца.

Автор доказывает, что этот доклад был прочитан не в честь посмертного юбилея Арменака Шахмурадяна, как отмечено в фонде (смотри – фонд

¹⁶ Հուշեր Ա.Շահմուրադյանի մասին, զեկուցում Շահմուրադյանի հետմահու հորեյանի առթիվ, ինքն. 7 թերթ (4 փաթեթ), ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 231:

Маргарит Бабалян, N 231), а 7 мая 1939 года, во время юбилейного мероприятия, состоявшегося за четыре месяца до смерти певца.

Ключевые слова – Маргарит Бабалян, Арменак Шахмурадян, Комитас.

MARGARITA BABAYAN ABOUT ARMENAK SHAHMURADYAN

NIKOLAI KOSTANDYAN

Nikolai Kostandyan in this article puts into circulation the memoirs of the pianist, singer, musician and educator Margarita Babayan (1874-1968) about Armenak Shahmuradyan, the "Armenian Karuzo", the singer of «grand-opéra» of Paris who is considered to be the nightingale of Daron. These memoirs are housed in the Margarita Babayan's fund at the E. Charent's Museum of Literature and Art.

Kostandyan inquiring into Babayan's report about Shahmuradyan substantiates that it was not read at Shahmuradyan's death anniversary, as specified in the fund (see Fund Margarita Babayan, N 231), but four months before his death, on May 7, 1939, at a celebration of his anniversary.

Key words - Margarita Babayan, Armen Shahmuradyan, Komitas.

**ՈՒՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՔԻՆԵՏԸ
(1934-1940)**

ՆԱԻՐԱ ՄԱԴՈՅԱՆ

1934թ. սեպտեմբերի 25-ին ՀՍԽՀ պետկոնսերվատորիային կից հրավիրվում է գիտահետազոտական կաբինետի նիստը, որին ներկա էին Վ.Սամվելյանը, Գ.Բուդաղյանը, Ա.Քոչարյանը, Դ.Լեկգերը, Մ.Մազմանյանը, Կ.Ջաքարյանը, Ս.Բարխուդարյանը, Ռ.Թերլեմեզյանը, Ա.Տոնիկյանը, Գ.Վարժապետյանը, Թ.Ալթունյանը, Մ.Աղայանը, Ա.Մերանգույանը, Ա.Մնացականյանը, Դ.Սողոմոնյանը, Հ.Ստեփանյանը և Մ.Միրզոյանը: Օրակարգում դրված էին գիտահետազոտական կաբինետի կազմակերպչական խնդիրները՝ ա) նախագծի քննությունը, բ) կաբինետի անդամների ընտրությունը:

Բացման խոսքով հանդես է գալիս Վ.Սամվելյանը, ով ներկաներին ծանոթացնում է գիտահետազոտական կաբինետի կազմակերպման նպատակին: Նիստի նախագահ Գ.Բուդաղյանը ներկայացնում է աշխատանքների բովանդակությունը, թե ովքեր են հրավիրված աշխատելու առաջիկա մեկ տարին և՛ ուսումնական, և՛ գիտական ասպարեզում: Ս.Բարխուդարյանն առաջարկում է սերտ կապ հաստատել Մոսկվայի և Լենինգրադի կոնսերվատորիաների և համապատասխան գիտահետազոտական հիմնարկների հետ: Ողջունելով գիտահետազոտական կաբինետի կազմակերպումը՝ Ռ.Թերլեմեզյանն առաջարկում է առաջին հերթին զբաղվել հայ ժողովրդական երգերի հավաքման աշխատանքներով և կոնսերվատորիայում ստեղծել հայ երաժշտության պատմության ամբիոն¹:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 26-ին, նույնպես տեղի է ունենում ՀՍԽՀ պետկոնսերվատորիային կից գիտահետազոտական կաբինետի նիստ, որին ներկա էին Ս.Բարխուդարյանը, Գ.Բուդաղյանը, Ռ.Թերլեմեզյանը և Ա.Քոչարյանը: Օրակարգում՝

- ա) կաբինետի կազմակերպչական խնդիրները,
- բ) առաջիկա շրջանի աշխատանքների նախագիծը,

¹ ՀԱԱ, ֆոնդ 1094, ցուցակ 1, գործ 1:

գ) աշխատանքի նյութերի բաշխումը գիտական կաբինետի անդամների միջև: Նիստում որոշվում է՝

1. առաջարկել երաժշտագետ Ս.Բարխուդարյանին՝ կարդալ մեկ դասախոսություն Կոմիտասի պոլիֆոնիայի հիմունքների ուսումնասիրության թեմայով:
2. Հանձնարարել Թ.Ալթունյանին և Ա.Քոչարյանին՝ նախաձեռնել հայ ժողովրդական երգերի ոճով սոլֆեջիոյի դասագիրք կազմելու գործը:
3. Առաջարկել Ռ.Թերլեմեզյանին՝ նախաձեռնել հայ երաժշտության բիբլիոգրաֆիա կազմելու գործը:
4. Ստեղծել նպաստավոր պայմաններ՝ ազգագրական թանգարանում հայ երաժիշտների արխիվները ուսումնասիրելու նպատակով:
5. Լոյս տեսած երաժշտական գրականությունից մեկական օրինակ վերցնել կոնսերվատորիայի գրադարանի համար:
6. Հանձնարարել Ռ.Թերլեմեզյանին գիտահետազոտական կաբինետի հերթական նիստերից մեկում ընթերցել Կոմիտասի նամակներն ու հոդվածները²:

Ինչպես նշված է ՀՍԽՀ պետական կոնսերվատորիայի՝ 1934 թ. N 39 հրամանի քաղվածքում. «ՀՍԽՀ Պետկոնսերվատորիայի ստեղծագործական, մեթոդիական, հրահանգչական և հայ երաժշտական մտքի զարգացման ու ֆակուլտետով բնույթ տալու նպատակով կոնսերվատորիային կից կազմակերպել գիտահետազոտական կաբինետ ս.թ. նոյեմբերի 1-ից: Կաբինետի նպատակն է հայ երաժշտական վոճի ուսումնասիրությամբ մշակել երաժշտական դաստիարակության խնդիրները Հայաստանում: Յելնելով այս խնդիրներից կաբինետը բաժանել հետևյալ սեկցիաների՝

1. Պատմա-ետնոգրաֆիկ, վորը զբաղվում է երաժշտական ազգագրական ու պատմական նյութերի հավաքման և ուսումնասիրման խնդիրներով:
2. Տեսական-Ստեղծագործական, վորը զբաղվելու յե հայ երաժշտության ստեղծագործական սկզբունքի և վոճի խնդիրներով:
3. Մեթոդական, վորը զբաղվելու յե ծրագրային, ուսումնապլանային, դպրոցական յերգի, մանկավարժա-հրահանգչական և այլ խնդիրներով:

² ՀԱԱ, ֆոնդ 1094, ցուցակ 1, գործ 2:

Կաբինետի ժամանակավոր վարիչ և գիտական քարտուղար նշանակել յերաժիշտ-ետնոգրաֆ ընկ. Արամ Քոչարյանին»³:

Կոմպոզիտոր Ռ.Մելիքյանի մահվանից (1935) հետո գիտահետազոտական կաբինետը կրում է հայ մեծ կոմպոզիտորի անունը:

Իր գործունեության առաջին չորս տարիները գիտահետազոտական կաբինետն աշխատում էր պետկոնսերվատորիայի գրադարանի ընթերցարանի մի անկյունում: Առաջին տարում «կաբինետն ուներ երեք ֆոնոգրաֆ, որոնցից գործում էր միայն մեկը չափազանց սահմանափակ վալիկներով, մեկ ֆոտո-ապպարատ և մեկ ելեկտրոֆոն»⁴:

1934/35 ուսումնական տարում կատարվել են հետևյալ աշխատանքները.

«1.Անցյալի երաժշտական ժառանգության և երաժշտական դեմքերի հետ ծանոթացման գծով ունեցել են նիստ, որոնցից 7-ը Կոմիտասին նվիրված՝ ա) արխիվի մասին, բ) նրա կյանքն ու գործունեությունը, գ) մի քանի հոդվածների ընթերցում: Բացի այդ՝ կայացել են Ա.Սպենդիարյանի, Ք.Կարա-Մուրզայի, Գ.Ղորղանյանի կյանքին ու գործունեությանը և Ս.Մելիքյանի երաժշտական ժառանգությանը նվիրված նիստեր: Կոմիտասի և Ա.Սպենդիարյանի մասին նիստերը վարել է Ռ.Թերլեմեզյանը, Ս.Մելիքյանինը՝ Հակոբ Հարությունյանը, իսկ Ք.Կարա-Մուրզայինը և Գենարիոս Ղորղանյանինը՝ Օ.Տեր-Գրիգորյանը:

2.Պատմագիտական բնույթ կրող 4 նիստեր՝ ա) ազգային երաժշտական կոլտուրաների զարգացման հիմնական էտապները, բ) աշուղները և նրանց արվեստը, գ) ոյրոտական երաժշտական կոլտուրա և Ա.Քոչարյանի աշխատություններն ու աշխատանքներն այդ բնագավառում, դ) Ժ.Հայդնի և Վ.Ա.Մոցարտի դերը կվարտետի զարգացման ընթացքում:

3.Գիտահետազոտական բնույթի երկու նիստեր՝ ա) Հայաստանի ժողովրդական երաժշտության ցուցադրական երեկո (գործիքներ, երգիչներ, անսամբլներ): Նրանց կատարվելիք նյութը և կատարողական հնարավորությունները, բ) թադի և Հայաստանի ժողովրդական երաժշտական գործիքների ուսումնասիրության շուրջ:

4.Լաբորատոր աշխատանքներ՝ ա) ծայնագրվել են հայկական և քրդական երաժշտական ֆոլկլորին վերաբերող նյութեր (էպիկական, քնարական,

³ ՀԱԱ, ֆոնդ 1094, ցուցակ 5, գործ 1:

⁴ ԳԱԹ, երաժշտական բաժին, գիտահետազոտական կաբինետի ֆոնդ, N 39:

պարային և կենցաղային բնույթի երգեր և նյութեր), որոնց թիվը հասնում է 50-ի: Ձայնագրության հետ զուգընթաց գրի են առնվել նաև այդ նյութերի բովանդակությունը, կատարողական հնարավորությունները, կենսագրական տեղեկությունները, բ) Արամ Մերանգույանի միջոցով ձեռք է բերվել քամանչահար Օգանեզաշվիլու կոնսերվատորիայում դասավանդած դասընթացը, գ) գրի են առնվել Երևանի արևելյան գործիքների առաջին արհեստանոցի վերաբերյալ որոշ նյութեր: Լուսժողկոմատի կողմից մեկամսյա ամսուային էքսպեդիցիայի նախահաշիվը չհաստատվելու պատճառով 1934/35 ուսումնական տարում էքսպեդիցիա չի կայացել⁵:

Առաջին տարվա ընդհանուր նիստերի քանակը կազմել է 30, որոնցից 13-ը՝ պատմա-էթնոգրաֆիկ գծով, 7-ը՝ մեթոդական, 5-ը՝ տեսական և 5-ը՝ կազմակերպչական: 1934-35թթ. գիտահետազոտական կաբինետն ունեցել է 1 աշխատող, 1935-36 թթ.՝ 2 հոգի, 1936-37 թթ.՝ 4 հոգի, 1937-38 թթ.՝ 9 հոգի, 1938-39 թթ.՝ 9-ը, 1939-40 թթ.՝ 17 աշխատող, որոնցից 5-ը՝ ավագ գիտական աշխատողներ, 2-ը՝ պրակտիկանտներ, 4-ը՝ գիտատեխնիկական և 6-ը՝ վարչատնտեսական⁶ աշխատողներ:

Գիտահետազոտական կաբինետն իր ստեղծման առաջին տարում չուներ ինքնուրույն բյուջե և լինելով պետկոնսերվատորիային կից՝ ֆինանսավորվել է կոնսերվատորիայի կողմից:

Իր գոյության երրորդ տարում գիտահետազոտական կաբինետը մտնում է արվեստի վարչության մեջ՝ որպես ինքնուրույն հիմնարկ: 1936 թ. բյուջեն կազմել է 10000ռ. (էքսպեդիցիայի համար ստացել է 11000ռ.), 1937 թ.՝ 40000-45000ռ., 1938 թ.՝ 109000ռ., 1939-40թթ.՝ 136000ռ. (ավելացրել են ևս 20000ռ.), 1940-41 թթ.՝ 170000ռ.:

1936 թ. ամռանը՝ երեք ամիս, գիտահետազոտական կաբինետը կազմակերպել է հայ երաժշտության պատմության մեջ առաջին մասնագիտական երաժշտագիտական էքսպեդիցիան, որի կազմում են եղել Ա.Քոչարյանը, կոնսերվատորիայի ուսանողներ Պ.Իսահակյանը և Ա.Շիշյանը: Էքսպեդիցիան ուղղված էր Շամշադինի (այժմ՝ Տավուշ) երաժշտական մշակույթի հավաքմանն ու ուսումնասիրմանը⁸:

⁵ ԳԱԹ, երաժշտական բաժին, գիտահետազոտական կաբինետի ֆոնդ, N 38:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

1938 թ. վերջին ԺԿԽ-ին կից արվեստի գործերի վարչության միջնորդությամբ գիտահետազոտական կաբինետը ձեռք է բերում երեք սենյակից բաղկացած ինքնուրույն շենք՝ ք.Երևան, Նալբանդյան փող. 106 հասցեում: Այդ նույն տարում կաբինետն ուներ 18 աշխատող, որոնցից 11-ը հիմնական աշխատողներ էին, իսկ 7-ը՝ համատեղության կարգով⁹:

Կաբինետի նոր շենք տեղափոխվելուց հետո, հիմք ընդունելով Ջիվան Կիրակոսյանի պատրաստած էլեկտրո-ձայնագիր մեքենան, ստեղծվել է ձայնագրման բաժին: Ձայնագրման աշխատանքները սկսվել են 1939 թ. հունվարի 1-ից և կատարվում էին ոչ մասնագետների կողմից:

Երևանի թանգարանից հայ երաժշտական գործիչների ժառանգությունը գիտահետազոտական կաբինետ տեղափոխելուց հետո՝ 1939 թ. հունիս-հուլիս ամիսներին, ձևավորվել է գրավոր երաժշտական ժառանգության բաժին (արխիվ), որի գործունեությունը սկսվել է 1940 թ. փետրվարի վերջից՝ հատուկ հաստիքային աշխատող ունենալուց հետո:

Key words – variation, choreography, score, term, contrast chord, classic dance.

«ԼՈՐԿԵ»-Ն՝ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՇՈՒՐՋՊԱՐ

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ, ինչպես նաև պարարվեստում, քիչ չեն «թռչնային» վերնագրերով երգեր և պարերգեր, որոնք սերտորեն կապված են հայոց հնագույն հավատքի, ավանդությունների, հավատալիքների հետ և գալիս են դեռևս կենդանապաշտության ու բնապաշտության ժամանակներից: Այդպես, Ալաշկերտում տարածված էր սագի պարը՝ «Ղազ-ղազ», Շատախում՝ կոունկի պարը՝ «Կոնգավէն», Կարինում (Էրզրում)՝ հավի պարը՝ «Թավուխպար»¹, Վանում՝ հավքի պարը՝ «Խավկու», Ապարանում՝ կաքավի պարը՝ «Կաքավն էկավ»², նույն կաքավի պարը՝ Վասպուրականում՝ «Կաքըվներ»³, Թալինում՝ «Լաչին»-ը⁴ ևն: Պարագետները համարում են, որ հայերն անցյալում ունեցել են նաև «արծվային» պարեր, քանի որ արծիվը, հազարամյակներ շարունակ, որպես հնագույն տոտեմ-թռչուն, արտացոլվել է մանրանկարչության մեջ և զարդարվեստում, պատկերվել է զինանշանների և նշանադրոշների վրա:

Հայկական հարսանեկան երգերում տոտեմ-կենդանիների և թռչունների դերի և նշանակության մասին հողվածում⁵ մենք առիթ ունեցել ենք անդրադառնալու **հավի** խորհրդաբանությանը՝ մատնանշելով բառարմատի «բնիկ հայ լինելը» և մի քանի իմաստ ունենալը՝ «պապ, հոր հայր, մեծ հայր, մեծ մայր, նախնիք», ինչպես և «ծայր, սկիզբ, սկզբնատրուօին»⁶, որից և առաջա-

¹ **Лисициан С.**, Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 1, Ереван, изд. «Академия», 1958, с. 245.

² Նույն տեղում, էջ 331, 566:

³ **Թումանյան Մ.**, Հայրենի երգ ու բան, 4 հ., Երևան, «Զանգակ» հրատ., 2005, N 288-289, էջ 336-338:

⁴ **Лисициан С.**, Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 2, Ереван, изд. «Академия», 1972, с. 348.

⁵ **Տիգրանյան Մ.**, Թռչունների և կենդանիների տոտեմի դրսևորումները հայկական հարսանեկան ծիսական երգերում // Երիտասարդ հայ արվեստաբանների գիտ. III նստաշրջան, Երևան, 16-17/12/2008, էջ 160:

⁶ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, 3 հ., Երևան, «Համալսարան» հրատ., 1977, էջ 65-67:

ցել են «հավատք», «հավերժ», «հավիտյան» բառերը⁷:

Այս առումով ոչ պակաս հետաքրքրական է **լորիկ** թռչունի դիտարկումը, որն ունի առանձնահատուկ դեր ու նշանակություն հայոց հարսանեկան ծեսում: Այս պարերգի խիստ տիպական մեղեդային դարձվածքը ենթադրել է տալիս, որ այն ի սկզբանե եղել է ծիսական, առավել ևս, որ այդ մասին կան վկայություններ: «Լորկե» պարերգն անցյալում պարել են միայն հարսանիքին՝ «հարսին հոր տնից հանելիս» և Վարդավառին⁸: Ամենայն հավանակա- նությամբ, «Լորկե»-ն ունեցել է հատուկ տեքստ, ինչպես «Թագվորամեր, դո՛ւս արի», «Էն դիզան, պետ-պետ դիզան» կամ «Ձնկլո»՝ զուտ ծիսական հարսա- նեկան պարերգերը: Սիրային բնույթի թափառիկ խաղիկներով այն «համեմվել է» ավելի ուշ շրջանում՝ հետզհետե կորցնելով իր ծիսական պատկանելու- թյունը: Կայուն պահպանվել է միայն հիմնատող-կրկնակը.

Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե, –
Խանըմե Լորկե:

կամ

Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե, –
Ջանըմե Լորկե:

Այն, որ **Լորկե**-ն հաճախ նշվել է մեծատառով, կարծում ենք, պետք է ընկալել ոչ որպես իզական անձնանուն⁹, այլ որպես նախնիներին դիմելու հարգալից ձև¹⁰: Այս առիթով Սրբուհի Լիսիցյանը գրում է. «Դա մատնանշում է այն, որ **լորին** նվիրված հնագույն տեքստերում **նրան** դիմել են որպես նախնիների հոգու՝ տիրոջ, տիրակալի, տիրուհու: Հիմնատող-կրկնակները՝ որպես ժողովրդական երգերի խտացված միտք պարունակող մաս, անցյալում

⁷ Ավելորդ չէ հիշատակել հայ հոգևոր երգարվեստի մեծագույն կոթողները՝ Գր. Նարեկացու «Հաիկ» և «Հաուն-հաուն» խոհաքնարական տաղերը:

⁸ Վարդավառին՝ ծաղիկները փնջելիս, պարել են միայն երիտասարդ աղջիկները, ոչ տղաները: **Лисициан С.**, նշվ. աշխ., հ. 2, էջ 340:

⁹ Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարան»-ում նշում է. «Լորիկ, իզ. <ի>. լոր թռչունի անունից, ինչպես ունինք Աղանի, Արծուիկ, Սիրամարգ: Գործածված է ԺԳ դարում: Կենդանի է նաև այժմ» (**Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Բ հ., Երևան, «Պետհամալսարան» հրատ., 1944, էջ 437): Եր. Լալայանի «Վասպուրականի ազգագրություն» բաժնում գետեղված անձնանունների բառարանում **Լորիկ** անունը հիշատակված չէ (**Լալայան Եր.**, «Ազգագրական հանդես», 20 գ., Թիֆլիս, 1910):

¹⁰ Ներկա աշխատանքում «Լորկե»-ն մեծատառով գրելու սկզբունքը չենք պահպանել, քանզի օգտվել ենք հրատարակված աղբյուրներից. որտեղ «լորկե»-ն փոքրատառ է:

ունեցել են մոզական և հնայախոսական նշանակություն, իսկ ավելի ուշ՝ իմաստավորվել որպես աղոթք»¹¹:

Ինչու՞ է հայկական հարսանեկան ծեսում այդքան կարևորվել **այդ** թռչունը: Արդյո՞ք **լորը**, ինչպես և **հավը**, ունեցել է **առանձնահատուկ** նշանակություն, և եթե այո՝ ապա ո՞րն է նրա իմաստային «ծածկագիրը»:

Լորի¹² (Coturnix) մասին հիշատակումներ կան դեռևս Հին Կտակարանում, երբ իսրայելցիները, Կարմիր ծովն անցնելով, իջևանեցին Սին, այնուհետև Կիբրոթ-Հաթթավա անապատներում, տանջանքների, սովի և զրկանքների մատնված՝ բողոքեցին Աստծո դեմ (Թուոց. XI, 31-34): Ահարոնը, ժողովելով իսրայելցիներին, նայեց դեպի անապատ, և ահա Աստծո փառքը ամպի մեջ երևաց, և նա Մովսեսին ասաց. «Իսրայելի որդիների տրտունջը լսեցի. խօսիր նորանց հետ ասելով. Իրիկուայ դէմ միս պիտի ուտէք, եւ առաւօտանց հացով պիտի կշտանաք: Եւ եղաւ իրիկունը, որ լորամարգիներ ելան եւ բանակը ծածկեցին...» (Ելից. XVI, 10-14)¹³: Երբ հազարավոր լորամարգեր երկնքից թափվեցին, և ժողովուրդը կշտացավ, հաջորդ առավոտյան Աստված ուղարկեց երկնային քաղցրահամ հաց՝ մանանա¹⁴, որը, բացի շաբաթ օրերից, 40 տարի շարունակ՝ ամեն առավոտ, ցողի պես պատում էր երկիրը:

¹¹ Лисициан С., նշվ. աշխ., հ. 2, էջ 341:

¹² Լորը հավազգիների կարգի փասիանների ընտանիքի ամենափոքր թռչունն է: Մարմնի երկարությունը՝ 16-20 սմ, քաշը՝ 80-145 գ: Ապրում է դաշտերում, հարթավայրերում և լեռներում: Չվող թռչուն է, տարածված է Հայաստանում Bլիփ:

Լորերը երգեցիկ թռչունների խմբում չեն դասվում, այնուամենայնիվ, նրանք ծայնեղ են (հատկապես արուները), և բարենպաստ եղանակային պայմաններում նրանց ծայնը տարածվում է շուրջ 2-3 կմ: Եվս մի հետաքրքիր փաստ այդ թռչունի վերաբերյալ. լորը առաջին կենդանի էակն է, որը ծնվել է տիեզերքում՝ հատուկ տիեզերական թիսամեքենայում, 1990 թ., մարտի 22-ին «ԾՌՌ» ուղեծրային կայանում:

¹³ Մույն հատվածը Ղուրանում, Սուրահ 2, 57:

¹⁴ Մանանան (եբրայերեն՝ man hu - «այս ի՞նչ է», ասորերեն՝ manna, հունար.՝ manna) շաքարանման նյութ է, որն արտադրում են մի քանի տեսակ բույսեր, բնական կամ արհեստական եղանակով, ինչպես և միջատներից խայթվելու հետևանքով: Մանանայի առաջացման վերաբերյալ գիտնականների կարծիքները տարբեր են. մի մասը գտնում է, որ այն առաջանում է Հայաստանի տարածքում (Մուշ) աճող Quercus Vallonea և Quercus Persica կաղնիների տերևների կամ Lecanora esculenta քուի (քարաքոս, лишайник) արտադրված փոշուց: Գիտնականների մյուս մասը համարում է, որ մանանան առաջանում է աերոֆիտ (аэрофит «aer»՝ օդ և «phyton»՝ բույս) կոչված բույսերից (Aspicilia - «лишайниковая манна»), որոնք կենսագործունեությունն ապահովող անհրաժեշտ օգտակար նյութերը, ինչպես և խոնավությունը, ստանում են օդից: Աերոֆիտների բոլոր օրգանները գտնվում են օդային միջավայրում և, ոչնչով ամրացված չլինելով, այդ ուսելի շերտերն

Հր. Աճառյանը «**լոր**» բառարմատի ծագումը «բնիկ հայերեն» է համարում, և «լորամարգ» ձևը նույն նշանակությունն է կրում¹⁵: Հունաստանում **լորը** մայրության և մայրական սիրո խորհրդանիշ է համարվում, որովհետև սերտորեն կապված է Ջևի սիրուի¹⁶ Լետոյի անվան հետ: Հերան հալածում էր այդ տիտանուիդն (հռոմ.՝ Լատոնա, սլավոն.՝ Լադա)՝ արգելելով Երկիր-հողին ընդունել հղի Լետոյին¹⁷: Ջևը վերջինիս դարձնում է լոր, որը, ապաստան գտնելով Դելոս կղզում, ծննդաբերում է իր երկվորյակներին՝ Արտեմիսին և Ապոլլոնին¹⁸: Այլ աղբյուրների համաձայն՝ Ջևսն ինքն է դարձել լոր և տիրացել Լետոյին¹⁹: Դելոս կղզին անվանում են «Լորերի կղզի», իսկ Արտեմիս աստվածուհուն, ինչպես և նրա մայր Լետոյին՝ լորերի հովանավոր:

Չինական խորհրդաբանության մեջ լորն իմաստավորում է ռազմական քաջություն և արիություն: Միջին Ասիայում՝ Ուզբեկստանում, Թուրքմենստանում, Ղրղզստանում, տարածված էր «Լորերի թռչնակոիվ» կոչվող մարգածևը, այդ իսկ պատճառով բազմացնում էին լորեր և պահում հատուկ վանդակներում՝ լորանոցներում: Բուխարայում լորը համարվել է ազգային թռչուն և անվանվել է **բեդանա**²⁰: Ինչպես իրավացիորեն նշում է Ջեյ Թրե-սիդդերը. «լորը Արևելքի մշակութային ծածկագիրն է»²¹:

Հին աշխարհի գրավոր արձանագրություններում **լոր**-ն ունեցել է առանձնահատուկ նշանակություն: Հին եգիպտական գրերի միաբաղաձայն համակարգում **լոր** հիերոգլիֆն արտաբերում էր –v– և –w– հնչյունները: Մ.թ.ա

ազատ կարող են տեղափոխվել տասնյակ կիլոմետրեր: Գոյություն ունի ևս մի գիտական տեսակետ, որ մանանան Տամարիքս բույսից արտադրվող հյութն է, որը թանձրանում է Սինա թերակղզում բնակվող որոշակի տեսակի բուսածնվի վերամշակումից: Տեղացի բեղվիներն առ այսօր հավաքում են այդ մանանան՝ անվանելով այն «Mann-es-Sama»:

¹⁵ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, 2 հ., Երևան, «Համալսարան» հրատ., 1973, էջ 297-298:

¹⁶ Այլ աղբյուրների համաձայն՝ մինչև Հերային հանդիպելը Ջևսն արդեն ամուսնացած է եղել Լետոյի հետ:

¹⁷ Мифы народов мира, 2 т., Москва, изд. «Советская энциклопедия», 1988, с. 51-52.

¹⁸ **Сервий**, Комментарий к «Энеиде» Вергилия, III, 73 (**Лосев А.Ф.**, Мифология греков и римлян, Москва, изд. «Мысль», 1996, с. 663).

¹⁹ Схолин к Пиндару. Пифийские песни. Введение (**Лосев А.Ф.**, Мифология греков и римлян, Москва, изд. «Мысль», 1996, с. 412).

²⁰ Որոշ «Լորկե»-ների կրկնակում «խանըմե»-ի կամ «ջանըմե»-ի փոխարեն երգվում է «բեդավո» կամ «բեդավե» (bedava թուրքերենից թարգմանվում է՝ անվճար, անհատույց, նաև՝ քոչվոր, թափառիկ կյանք):

²¹ **Трессидер Дж.**, Словарь символов. Москва, изд. «Файр-Пресс», 1999.

4-3 հազ. շումերական արձանագրություններում **լոր** նշանակությամբ սեպագիրը կարդացվում էր *šen – šen – bal*՝ շեն-շեն-բալ,



որտեղ *šen*-ը իմաստավորում էր՝ ճիշտ, առաջ, շիտակ, աջ, իսկ *bal*-ը՝ թարս, հետ, ձախ: Այսպիսով, հին շումերները, «լոր»-ն անվանելով *šen – šen – bal*, նկատի են ունեցել «շիտակ-շիտակ-թարս» կամ «աջ, աջ, ձախ» շարժումը: Աքքադերենում **urballu** բառն ունեցել է երկու իմաստ՝ «լոր» և «քայլ»: Այսպիսով, շումերների և ակքադացիների մոտ «լոր»-ն իմաստավորվել է «երկու շիտակ, մեկ թարս» շարժումով, ճիշտ այնպես, ինչպես հայերը դարեր շարունակ պարել են «Լորկե»-ն՝ «երկու աջ, մեկ ձախ» կամ «երկու առաջ, մեկ հետ» քայլերով: Աճառյանը, «քայլ» արմատը ստուգաբանելով, մի շարք զուգահեռներ է անցկացնում (սանսկր. *kal* «երթալ», լատ. *celer* «վազք», պարսկ. *kām* «քայլ» ևն)²²: Արդյոք կարելի՞ է ենթադրել, որ արդի անգլերենում «quail» (լոր) բառն աղերսվում է հայերեն «քայլ»-ի հետ²³:

Այն, որ **լոր**-ը հատուկ դրսևորում է ունեցել հատկապես հարսանեկան ծեսում, վկայություն է այն իրողության, որ մեր նախնիները շատ կարևորել են այդ թռչնի դերը, և ինչպես **հավ**-ը, **լոր**-ը նույնպես հանդիսացել է տոտեմ-թռչուն: «Լորկե»-ն՝ որպես պարերգ, տարածված և սիրված է եղել հատկապես Ալաշկերտում և Վասպուրականում, մասնավորապես Վանում: Այդ են վկայում ինչպես Ս. Լիսիցյանի ազգային պարերի գիտակ ինֆորմանտներից ստացած տեղեկությունները, այնպես էլ մեր կատարած ուսումնասիրություններն ու հավաքած երաժշտական նյութը²⁴: Ցանկացած պարերգ, հատկապես ծիսա-

²² **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, 4 հ., Երևան, «Համալսարան» հրատ., 1979, էջ 549:

²³ **Ասմանգույան Հ.Ա., Հովհաննիսյան Մ.Ի.**, Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 2004, էջ 750:

²⁴ Տվյալ աշխատանքում նպատակային ենք համարում ուսումնասիրել «Լորկե»-ների տեքստերը, այդ իսկ պատճառով շրջանցել ենք այդ պարերգի զուտ գործիքային տարբերակները, քանզի մեղեդային առումով դրանք գրեթե նույն երգային «Լորկե»-ներն են: **Մեկիբյան Ս.**, Հայ ժողովրդական երգեր և պարեր, 1 հ., Երևան, 1949, N 182, էջ 145:

կան, ունեցել է վաղուց ի վեր ձևավորված հստակ կառուցվածք՝ տիպական մեղեդի և ստույգ մետրառոիթմիկ պատկեր, որոնք կազմավորվել և հղկվել են դարերի ընթացքում: Ծեսի ներսում գոյացած ցանկացած «մեղեդի» կարծրատիպ դարձվածք է: Ժողովրդական երգաստեղծության այլ ժանրերի համեմատ ծիսական երաժշտությունն առավել դժվար է ենթարկվում արտաքին ազդեցությունների: Նման «արտաքին ազդեցության» դրսևորումներից է լեզուն (քրդերենը, թուրքերենը), որը, ի տարբերություն երաժշտական մտածողության, ավելի դյուրին է փոփոխության ենթարկվել: Եթե հայը, նվաճողների ճնշման հետևանքով ստիպված է եղել երգել քրդերեն կամ թուրքերեն, ապա նա փոխառել է միայն լեզուն, բայց ո՛չ երաժշտական մտածողությունը: Ս. Լիսիցյանի ինֆորմանտներից ձայնագրված «Լորկե»-ների տեքստերը քրդերեն են: Այս հանգամանքն առիթ է տվել քուրդ երաժշտագետներին և լեզվաբաններին «Լորկե»-ն համարել իրենց ազգային պարերից մեկը: Նրանք, հաշվի չառնելով պատմական իրողությունները, անհաջող փորձեր են կատարել «Լորկե»-ին վերագրել քրդական ծագում: Տպավորությունն այնպիսին է, որ ցանկացած քրդերեն երգած երգ ինքնաբերաբար «դառնում է» **քրդական**: Անտեսելով այն հանգամանքը, որ տվյալ ինֆորմանտներն ազգությամբ հայ են, հայկական ազգային մշակույթի՝ երգ ու պարի կրողներ, քուրդ գիտնականների միակ հիմնարար և բավարար փաստարկը քրդերենով երգված տեքստն է:

Այսպես, Կոմիտասի, Մ. Թումաճանի, Ս. Մելիքյանի ձայնագրություններում քիչ չեն քրդերեն և թուրքերեն երգած երգեր և պարերգեր, և դա բնական է այդ ժողովուրդների՝ տասնյակ տարիներ կողք կողքի ապրելու պայմաններում: Հայ և քուրդ բնակչության սերտ շփումները սկսվեցին XVIII դարից, երբ Վասպուրական և Տարոն աշխարհներն անցան քուրդ դարաբեյական իշխանապետությունների հսկողության տակ: Ելնելով այն հանգամանքից, որ հարևանությամբ շատ քրդեր և թուրքեր էին ապրում, հայերը լավ տիրապետում էին և՛ քրդերենին, և՛ թուրքերենին: Այս առիթով Հայրիկ Մուրադյանը նշում է. «Հայ որոշ գուսաններ հորինում էին թե՛ հայերեն, թե՛ քրդերեն երգեր: Քրդերեն էին ստեղծագործում հատկապես Վասպուրականի, Տարոնի, հարավային շրջանների ու Տիգրանակերտի քրդախոս հայերը, բայց նաև Սղերդի, Սասնա, Խոշաբի, Աղբակի, Մոկսի, Տարոնի ոչ քրդախոս հայերը: Մոկացի

գուսան Գարեգինը (ապրել է XIX դ. սկզբներում) բազմաթիվ քրդերեն երգեր է հորինել, ...[նրա] երգերը մտել են քրդական ժողովրդական երգերի գանձարանը, քանի որ դրանք քրդերեն են եղել»²⁵:

Սակայն չմոռանանք, որ խոսքը **քրդերի՝** մահմեդականությունը ընդունած եզդիների մասին է, իսկ մուսուլմանական աշխարհի վերաբերմունքը պարի նկատմամբ խիստ հակասական էր²⁶:

Մենք բոլորովին չենք ժխտում այն իրողությունը, որ «Լորկե»-ն տարածված և սիրված է եղել որքան հայկական, այնքան էլ քրդական միջավայրում: Սակայն խոսքն այնպիսի պատմական տարածքների մասին է, ինչպիսիք են Վանն²⁷ ու Ալաշկերտը²⁸ ազգային խոր ավանդույթներ ունեցող

²⁵ «Հայրենի երգեր», Երևան, «Նոր գիրք» հրատ., 2007, էջ 25-26:

²⁶ Պարզ, որպես այդպիսին, իսլամի կրոնաբանության վիճելի հարցերից է, քանզի այն չի խրախուսվում և Ալլահի համար ոչ հաճելի զբաղմունք է համարվում (պորտապարի բացատրությամբ, որը կինն իրավունք ունի պարելու միայն իր ամուսնու համար՝ ընտանիքը և ամուսնական կապերն ամրապնդելու նպատակով): Արմատական իսլամի հետնորդներ սալաֆիտներն ու վախիսաբիթները երգն ու պարն առհասարակ արգելում են՝ համարելով այն «hārām»՝ մեղք, որը կարող է օտար կնոջ և տղամարդու միջև անցանկալի կիրք առաջացնել: Չափավոր իսլամիստների կողմից պարն ընկալվում է որպես «hāfāl»: Հետաքրքիր են այս առումով միստիկ-սուֆիստները՝ իսլամի կրոնափիլիսոփայական ուսմունքի ասկետիկ հետնորդները, որոնք մուսուլմանական աշխարհի «ամենահաստատուն» պարողներն են. որոշակի պարային պտույտներ կատարելով՝ մտնում են տրանսի մեջ՝ Ալլահին է՛լ ավելի մոտ լինելու համար: Ինչևիցե, եթե անցյալ դարի 60-ականներին գյուղական միջավայրում դեռևս կարելի էր հանդիպել տղամարդկանց խմբակային պարերի եզակի կատարումների (Աֆղանստանի փուշտունների «Աթթուն» շուրջպարը, Եմենում փայտերով ռազմական պար՝ «Շաբվանի»-ն, Էմիրաթներում՝ «Ռազֆա» շուրջպարը, երբ տղամարդիկ միմյանց ամուր բռնում են գոտկատեղից), ապա մեր օրերում այն գրեթե վերացել է (Иордан М., Кузеев Р., Червонная С., Ислам в Евразии, Москва, изд. «Прогресс-Традиция», 2001, с. 412-515; Смирнов А., Великий шейх суфизма, Москва, изд. «Наука», 1993, с. 328).

²⁷ Վասպուրականի տարածքը հնագույն ժամանակներում ամբողջությամբ մտել է հին Հայաստանի՝ Ուրարտուի մեջ: Վանը (Քիայնա, Շամիրամի քաղաք, Տոսպ, Տուշպանի ևն) հիմնադրել է Ուրարտուի Սարգուր X թագավորը (մ.թ.ա 835 թ.)՝ անվանելով Տուշպա: Գտնվելով հայկական պետության երկրաչափական կենտրոնում՝ Վանը ճանապարհներով կապված է եղել երկրի բոլոր կարևոր շրջանների հետ («Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», 4 հ., Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 1998, էջ 747-752):

²⁸ Ալաշկերտը հիշատակված է դեռևս մ.թ.ա 16-15 դդ. խեթական արձանագրություններում: Մինչև XVII դ. գործածական է եղել Վաղարշակերտ անունը՝ ի պատիվ քաղաքի հիմնադիր Հայոց Արշակունյաց թագավոր Վաղարշակի (մ.թ.ա II դ.): Ալաշկերտի

օջախների, որոնք դարեր շարունակ բնակեցված են եղել հայերով: Ավելին, վանեցիները պատմում էին, որ թուրք և քուրդ մուսուլման տղամարդիկ իրենց միջավայրում խմբակային պարեր առհասարակ չէին պարում, ինչպես նաև չէին պարում ասորիներն ու եզդիները²⁹: Սակայն, հայերի մեջ ապրելով, յուրացնելով նրանց մշակույթն ու բարքերը, քրդերն ու թուրքերը տոնախմբությունների և զվարճանքների ժամանակ միանում էին հայերին և մասնակցում խմբակային պարերին:

Հնարավոր ամբողջությամբ հավաքելով և ուսումնասիրելով «Լորկե»-ների ինչպես հրատարակված, այնպես էլ անտիպ օրինակները՝ փորձենք պարզաբանել, վերլուծել և հասկանալ, թե ինչ կարևոր դեր ու նշանակություն է ունեցել այդ պարը հայոց ավանդական հարսանեկան ծիսակարգում: Մեր ձեռքի տակ եղած ամենավաղ գրառումներից է Տիգրան Չիթունուց³⁰ ծայնագրված կոմիտասյան «Լորկե»-ն: Էջմիածնում 1908 թ. սեպտեմբերին, երբ պիտի տեղի ունենար Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցու³¹ օժման արարողությունը, Կոմիտասը հանդիպում է Չիթունուն և

տարածքում է հայտնաբերվել մ.թ.ա. VIII դ. ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակված Ալաշա քաղաքը, որից էլ ծնվել է Ալաշկերտ անվանումը: XVIII-XIX դարերից Ալաշկերտում աստիճանաբար սկսել են բնակվել քրդերն ու թուրքերը («Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», 1 հ., Երևան, «Համալսարան» հրատ., 1986, էջ 63-64):

²⁹ Êzdi ինքնանվանումը սերվում է Յազդինա առաջնորդի անունից (յAzdina՝ «Ես եմ հավատքը»): Համառորեն մերժելով իսլամը (VII դ.)՝ եզդիները շարունակել են մնալ արևապաշտ: Յազդիզմը վերջնականորեն ձևավորվել է XIV-XV դդ. (կրոնական ուսմունքի հիմնադիրն է՝ շեյխ Ադի Իբն Մուսաֆիրը [1072-1162 թթ.]), որն ընդգրկել է գրադաշտության, հուդայիզմի, քրիստոնեության և մանիքեության տարրեր: Դարեր շարունակ եզդիները, ինչպես և հարևան քրիստոնյա ազգերը, հալածվել են մուսուլմանների կողմից, և սարսափելին այն էր, որ Օսմանյան Թուրքիայի կառավարության կողմից կազմակերպված XIX դարի վերջին և XX դարի սկզբին այլազավան ազգերի ջարդերին օսմանների հետ հավասար եզդիների զանգվածային բնաջնջմանը մասնակցել են իրենց արյունակից եղբայրները՝ քրդերը:

³⁰ Տ. Չիթունի (Չիթյան, 22.4.1881, Վան), բանահավաք-ազգագրագետ, կրթություն է ստացել Երամյան բարձրագույն վարժարանում, 1910-ից հաստատվել է Կ. Պոլսում և հիմնել «Հայագիտում» հրատարակչությունը: 1919-ին հաստատվել է Փարիզում, որտեղ էլ 1960 թ. կնքել է իր մահկանացուն:

³¹ Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցին (ավագանի անունը՝ Սիմեոն Մարտիրոսի Իզմիրյան, 22.2.1845, Կ. Պոլիս – 11.12.1910, Էջմիածին) հաջորդել է Մկրտիչ Ա Վանեցուն՝ Խրիմյան Հայրիկին: 1864-ին ձեռնադրվել է սարկավագ, 1873-ին ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան, իսկ երեք տարի անց՝ ձեռնադրվել եպիսկոպոս: Պայքարելով

երկու երեկոյի ընթացքում գրի է առնում շուրջ «մեկ հիսնյակ» երգ, որոնք, ըստ Չիթունու, ընտրված են եղել «Սպարկերտի, Կարկառի, շրջակա գավառներու և Վանա կոյս միջավայրեն ու գրեթե բնավ չլսված երգեր են»³²:

Տարիներ անց Փարիզում (1922-23 թթ.) Չիթունին այդ նույն երգերը երգել է Միհրան Թումանյանին³³: Վերջինս, ջանասիրաբար հավաքելով ու դասակարգելով այդ ձայնագրությունները, միտք էր փայփայել նման արժեքավոր և ծավալուն հավաքածուն առանձին գրքով հրատարակելու³⁴: Չիթունուց գրառած «Լորկե»-ի տարբերակը³⁵ մեղեդու կառուցման և զարգացման սկզբունքով ավանդական Վանա «Լորկե»-ն է, որն այդքան սիրված և տարածված է եղել Վասպուրական աշխարհում:

Քուրդ գիտնականները, «Լորկե»-ն ներկայացնելով որպես քրդական ազգային պար և փորձելով բացատրել պարերգի իմաստն ու նշանակությունը, **լորկե** բառի մի շարք իրարամերժ «ստուգաբանումներ» են տալիս.

լորկե, **լու**լկե, լուկե – օրորոց,
լորկե, լոռկե, լոռ – կաթնաշոռ,
լորկե, **լու**կե - խմորի գունդ ևն³⁶:

Քրդագետ Հաջիե Ջընդին ծնունդով ալաշկերտցի Արշակ Սարգսյանի երգած «Լորկե»-ի հիմնատող-կրկնակը.

Արևմտյան Հայաստանում քաղաքական բարենորոգումներ անցկացնելու համար կոչվել է՝ Երկաթյա պատրիարք («Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 2002, էջ 694):

³² Ձայնագրությունները շարունակվեցին 1914-ին Կ. Պոլսում, և Չիթունու պատմելով, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների երեկոները շարունակ աշխատելով, վարդապետը նրանից գրառեց նոր երգեր, որոնք հետագայում զետեղվեցին Կոմիտասի ԵԺ-ի 14-րդ հատորում: **Կոմիտաս**, ԵԺ, 14 հ., Երևան, 2006, էջ 6-8:

³³ Այդ տարիներին Կոմիտասի ինքնազգացողությունն աստիճանաբար վատանում էր, և նրա արվեստագետ ընկերներն ու բազմաթիվ մտավորականներ խիստ մտահոգված էին վարդապետի առողջական վիճակով: Չիթունին ենթադրելով, որ Կոմիտասի կատարած ձայնագրությունները հավանաբար կկորչեն, իր իմացած երգերը երգում է նաև Թումանյանին:

³⁴ Չիթունու կատարմամբ երգերը (70 նմուշ) զետեղված են Թումանյանի «Հայրենի երգ ու բան» IV հատորի՝ Վան-Վասպուրական շրջանը ներկայացնող II մասում (**Թումանյան Մ.**, Հայրենի երգ ու բան, 4 հ., Երևան, «Ձանգակ» հրատ., 2005):

³⁵ **Թումանյան Մ.**, Հայրենի երգ ու բան, 4 հ., Երևան, «Ձանգակ-97», 2005, N 250, էջ 297-299:

³⁶ **Лисициан С.**, նշվ. աշխ., հ. 1, էջ 433:

թարգմանում է՝

Нэвир лйулкə, һэвир лйулкə,
Ханме лйулкə!

Катай тесто, катaй тесто,
Госпожа Л'Ѹл'кə!³⁷

անտեսելով «**հավիր**» բառի **հայերեն** նշանակությունը. «Հաիր, հաել, հաելցի, հալ՝ սկիզբն անել, սկսել, սկզբնաւորել»³⁸:

Երաժշտագետ Ջամիլա Ջալիլը քրդական ժողովրդական երգերի իր ժողովածուն³⁹ կազմելիս «Լորկե-լորկե»-ն (Lürke-Lürke) վերնագրել է «Баю-бай» և դասել օրորների շարքում.

Баю, баю, баю, баю, Ханум, песню спой,
Я очарован твоими мелкими косами,
Порсор, песню спой.

Принеси нож и разрежь сыр,
Я очарован твоими мелкими косами,

Я вошел в дом Алиé Калé,
Он угостил меня жареным мясом;

Я вошел в дом Хамидé Дысо,
Он угостил меня хлебом и щавелем,

Я вошел в дом дяди Бакыра,
Он дал мне семь пудов сахара.

Ինքնին պարզ է, որ ցուցադրված երգի բովանդակությունն օրորի և առհասարակ երեխային քնեցնելու հետ ոչ մի կապ չունի: Եթե նույնիսկ ենթադրենք, որ ժողովածուն կազմող հեղինակի համար «շփոթմունքի» պատճառ կարող էր լինել երգասացի ոչ թե «**լորիկ**», այլ «**լուրիկ**» (օրոր, նանի)

³⁷ Նույն տեղում, էջ 590:

³⁸ **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, 3 հ., Երևան, «Հայպետհրատ», 1944, էջ 85:

³⁹ **Cemila Celil**, Kilamed cimeta kьrda (Курдские народные песни), Москва, изд. «Музыка», 1965, N 86.

արտաբերման ձևը, ապա դա էլ հասկանալի չէ, քանզի քրդերեն «լոր» բառը փոխառված է հայերենի «լոր» ձևից և քրդերենում նույն իմաստն է կրում, ինչը և մեզանում՝ «թռչուն, լորամարգ»⁴⁰:

Ս. Լիսիցյանը նշում է, որ քրդական միջավայրում տարածված «Լորկե»-ների տեքստերի բովանդակությունը կենցաղային բնույթ է կրում, որտեղ «...մի քաղցած մարդ (երգում է առաջին դեմքից), տնետուն շրջելով, ոչ մի կերպ չի կարողանում կշտանալ»⁴¹:

Լորկե-Լորկե⁴²

/ Վան /

$\text{♩} = 126$

Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, խա - նը - մե Լոր - կե,
 Լո - րը - կե, Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, խա - թու - մե Լոր - կե,
 Լո - րը - կե, Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, չեկ աղ - ջիկ Լոր - կե:
 Ե - լանք, հա - սանք տուն Ա - մա - րանց, խա - նը - մե Լոր - կե,
 Բե - րին սպի - տակ լա - վաշ ու հաց, խա - թու - մե Լոր - կե:
 Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, խա - թու - մե Լոր - կե:

Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
 Խանըմե Լորկե,
 Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,

Էկանք, հասանք մոլլայի դուռ,
 Կնիգ դարդից դատավ մի բուռ:

⁴⁰ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, 2 հ., Երևան, «Համալսարան» հրատ., 1973, էջ 298:

⁴¹ Лисициан С., նշվ. աշխ., հ. 1, էջ 433:

⁴² Лисициан С., նշվ. աշխ., հ. 2, N 109, էջ 485-486: Ձայնագրությունը կատարել է Մուշեղ Աղայանը 1930-ական թթ. սկզբին: Ինֆորմանտն է Մովսես Տեր-Հովհաննիսյանը (ծագումով վանեցի):

Խաթունն Լորկե,
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
Շեկ աղջիկ Լորկե:

Հարցրինք. «տո՞ւնն ա աղբեր
Հերես»,
Ձոքանջն էլավ էրես-էրես:

Ելանք, հասանք տուն
Ամարանց,
Խանըմն Լորկե,
Բերին սպիտակ լավաշ ու
հաց,
Խաթունն Լորկե,
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
Շեկ աղջիկ Լորկե:

Մըտանք տունը Այվազ աղբոր,
Բերին դըրին սոխ ու սխտոր:

Էկանք հարցրինք. «ո՞ր է
Ամիր»,
Մեզ տըվեցին հաց ու պանիր:

Ելանք, գընացինք Մխկկանց,
Մեզի տըվին էձու խորված⁴³:

Մենք հակված չենք այդ տեքստերը դիտարկելու «կենցաղային»-ի շրջանակներում, քանզի քիչ հավանական է, որ նման բովանդակությամբ քրդերեն երգվող «խաղիկները» հայերը փոխառնեին և «կցելով» իրենց ավանդական ծիսական «Լորկե»-ին՝ տարածեին Ալաշկերտով, Շատախով և Վանով մեկ: Հնարավոր է, որ ոչ այնքան վաղ անցյալում հայոց «Լորկե»-ն ունեցել է հենց այդպիսի տեքստ, և կարծում ենք, որ խոսքը ոչ թե «մեկ քաղցած մարդու», այլ հարսանքավորների մասին է, որոնք եկեղեցուց վերադառնալիս, տնից տուն անցնելով, հյուրասիրվում էին (այլապես «սոված երիտասարդի» տնետուն շրջելու դրդապատճառներն անհասկանալի են): Հարսանքավորներին հյուրասիրելն ընդունված և տարածված սովորույթ էր. գյուղացիները սեփական տան շեմին մի փոքրիկ սեղան էին դնում և դռնով անցնող հյուրերին «պատիվ» տալիս (այս սովորույթը մի շարք գյուղերում առ այսօր պահպանվել է): Ենթադրում ենք, որ հենց այսպիսի հյուրասիրությունների մասին է «Լորկե»-ի ավանդական տեքստը, իսկ խնամիների «դժգոհությունը» և ճաշակած ուտեստների վերաբերյալ «գանգատը» զուտ կատակային բնույթ են կրել (հիշենք հարսանեկան կատակային «էն դիզան» պարերգը):

Ծիսական երգերին, ինչպես և պարերգերին, բնորոշ է գործողությունների, իրերի, գործող անձանց «**փոխառփոխ թվարկումը**», և երգի տեքստի կառուցման նման սկզբունքը գտնում ենք հայ ժողովրդի բանավոր խոսքի հնագույն շերտերում՝ առասպելներում, վիպական գրույցներում և իհարկե

⁴³ Թարգմանությունը մերն է: Քրդերեն բնագիրը տե՛ս նշված աղբյուրում, էջ 482-486:

հեքիաթներում: Նման ծիսական երգերի և պարերգերի օրինակներ ժողովրդական երգաստեղծության մեջ քիչ չեն. «Եկեք տեսեք, ի՞նչն է կերի զինչ», «Համբարձման էրկուշաբթի», «Զինչ ու զինչ տամ լողվորչուն», «Էն դիզան, բեղ-բեղ դիզան», «Թագվորի մեր, դուս արի» են:

Ինչպես գիտենք, յուրաքանչյուր պարերգի առանցքը կազմում է կայուն և անփոփոխ «հիմնատող կրկնակը», որին կարող է միանալ տողի համապատասխան վանկաքանակ ունեցող ցանկացած թափառիկ խաղիկ: «Հիմնատող կրկնակի» ինչպես տաղաչափական, այնպես էլ մեղեդային կառուցվածքը ձևավորված և կարծրացած **բանաձև է**: «Լորկե»-ի դեպքում կարելի է առանձնացնել մեղեդային երկու տիպ. մեկը՝ բնորոշ վանեցիներին, մյուսը՝ ալաշկերտցիներին: Սակայն հետաքրքրական է, որ չնայած այդ տարածքային տարբերակների մեղեդային տարբերությունը, դրանց ոիթմական բանաձևերը նույնն են՝ վեց «պիրիփի» ոտքից բաղկացած շղթան ավարտվում է «սպոնդել» ոտքով.





Լորկե, լորկե⁴⁴
/ Ալաշկերտ /

Եթե տաղաչափական և մետրաոիթմական միավորներով վանի և Ալաշկերտի «Լորկե»-ները նույնն են, այսինքն՝ մեկի տեքստը լիովին «հարմարվում» է մյուսի մեղեդուն, ապա պարային քայլի և պարի ընդհանուր կառուցվածքով այդ «Լորկե»-ները տարբեր են: Ալաշկերտցիները «Քոչարի», «Աղե» և «Լորկե»

⁴⁴ Այս օրինակը կատարել է 14-ամյա Միեր Նավոյանը, որը տատիկից է սովորել, նախն.՝ Ալաշկերտ (ԵՊԿ-ի ֆոլկ. ծայնադարանի արխիվ, Երևան, կաբինետ, 1982, N 2):

շուրջպարերը գրեթե միանման են պարել⁴⁵, այսինքն՝ ոտքերի, ձեռքերի և մարմնի պարային շարժումների հաջորդականությունը նույն սկզբունքով են կատարել⁴⁶: Վանեցիներն իրենց «Լորկե»-ն զգալիորեն տարբեր են պարել (տե՛ս պարերի գծապատկերը):


Ալաշկերտի «Լորկե»



⁴⁵ Սրբուհի Լիսիցյանը դեռևս 30-ականներին պարային շարժումների գրառման մի ամբողջ համակարգ էր մշակել՝ վերնագրելով «Запись движения»: Հետագայում այդ սկզբունքը (кинетография) կիրառեց իր դաշտային հավաքչական աշխատանքներում՝ գիտական ճշգրտությամբ արձանագրելով հայկական ժողովրդական պարերը և տալով նաև դրանց գծապատկերը:

⁴⁶ Лисициан С., նշվ. աշխ., հ. 1, էջ 431-436:

Վանի «Լորկե»



Պարերգի մեղեդին սերտորեն կապված է շարժման հետ. մեկը մյուսի արտացոլումն է, և քանի որ վանեցիների «Լորկե»-ի մեղեդին փոքր-ինչ այլ է, ապա պարն էլ ուրիշ է: Այս դեպքում ավելորդ չէ շեշտել նրանց սկզբնական վերընթաց կվարտային թռիչքը, որը, կարծում ենք, վերջին դերը չի խաղացել վանեցիների «Լորկե»-ի պարային քայլերի և շարժումների «բովանդակության մեջ»: Հայի «բռնած» ցանկացած շուրջպարի գծային պատկերը կազմում է մի անկրկնելի և հրաշագեղ «վարդյակ» (Rosettes): Նման վարդյակներով լեփ-լեցուն է մեր հայկական զարդարվեստը. այդ զարդանախշերն անմահացել են սրբավայրերի պատերի, շիրմաքարերի, խաչքարերի և ձեռագիր մատյանների էջերի վրա, որոնք, ի վերջո, ոճավորված հավերժության նշան են⁴⁷:

Այսպիսով, հնագույն ծիսական շուրջպար հանդիսանալով, «Լորկե»-ն պատկանել է «Հարսնիսի կատակներ» կոչվող շարքին, ինչպիսիք են «Թագվորի մեր, դուս արի» կամ «Էն դիզան...» պարերգերը: Իր ավանդականու-

⁴⁷ Առանձնահատուկ ուշադրություն դարձնելով «վարդյակներին»՝ Ս. Լիսիցյանն իր հիմնարար այդ աշխատության առաջին հատորի տիտղոսաթերթին պատկերել է հենց «Լորկե»-ի պարային գծապատկերը:

թյամբ և բանաձևային մտածողությամբ ծիսական երաժշտությունը հայկական ժողովրդական երգաստեղծության ամենակայուն տեսակն է: Ավանդականությունը հավասարապես վերաբերում է և՛ երաժշտությանը, և՛ խոսքին, և՛ պարին: Սակայն, եթե «Լորկե»-ի մեղեդային գիծն ու պարը պահպանվել են, ապա բանաստեղծական տեքստը՝ **ոչ**, իր հնավանդ բովանդակությունը կորցնելով՝ պարերգը հետզհետե «հարստացել է» սիրային թափառիկ խաղիկներով, ինչն էլ, կարծում ենք, պատճառ է հանդիսացել այն իրողության, որ «Լորկե»-ն հեռացել է ծեսից:

Կատակերգերը հարսանեկան հանդիսության ամենասիրված մասն են կազմել, և ժողովուրդն ավելորդ անգամ ուրախանալու ու իր թերությունների վրա ծիծաղելու առիթը երբեք բաց չի թողել: Եթե հարսանեկան գովքերի «հերոսները» հարսն ու փեսան էին՝ «թագվորն» ու «թագուհին», ապա հարսանեկան կատակերգերի «գործող անձինք» հարսանքավորներն էին՝ ազաբները, քավորը, սկեսուրը՝ երգիծանքի և ծաղրանքի ենթարկվողները: «Լորկե»-ի դեպքում հարսանքավորներին հյուրասիրողները (ծեսի շրջանակներում) «պաշտոնական կարգավիճակ» չունեցող մարդիկ էին՝ շարքային գյուղացիներ՝ իրենց սովորական անձնանուններով: Այս իրողությունը «Լորկե»-ն մոտեցրեց կենցաղային կատակերգի տեսակի հետ, և ավանդական շուրջպարը վերջնականապես դուրս մղվեց ծեսի շրջանակներից:

Այնուամենայնիվ, «Լորկե»-ի բանաստեղծական տեքստի պահպանման գործում մեծ եղան բարեկամ քուրդ ժողովրդի լեզվի դերն ու նշանակությունը. միայն քրդերենով երգված օրինակների շնորհիվ հնարավոր եղավ վերականգնել հայոց ծիսական շուրջպար «Լորկե»-ի հարսանեկան հյուրասիրությանը նվիրված ավանդական տեքստը:

Հարսանքավորներին հյուրասիրելը, մերձավորի հետ «հաց կիսելը»՝ հնագույն ժամանակներից եկող սովորույթ էր, որը կարող էր աղերսներ ունենալ զոհաբերություն մատուցելու, պատարագ տալու, ուխտի և խոստման ծեսերի, ծիսակարգերի հետ: Հին զոհաբերությանը փոխարինեց **մատաղը**, և հայ եկեղեցին այն ընդունեց իբրև **հոգու հաց**, որը հնում կոչվել է **ազապե՛**՝ սիրո ճաշ: Մեր ուսումնասիրության մեջ պատահական չէ, որ հիշատակեցինք իսրայելցիներին կերակրելու՝ «հաց տալու» աստվածաշնչյան տողերը, երբ երկնքից թափվող **լորիկներն** ու **մանանան** փրկեցին սովի մատնված հրեա ժողովրդին: Հնարավոր է, որ հայոց «Լորկե»-ն աղերսներ է ունեցել այդ պատմության հետ, և հարսանեկան պարերգի հնագույն տեքստը, կապված սեղանի՝ **ճաշի, հացկերույթի** հետ, դրա ապացույցներից մեկն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայկական հարսանեկան ծեսում առանձնահատուկ տեղ են գրավել թոչնային պարերը՝ «Կոնգավէն», «Ղազ-ղազ»-ը, «Հավքուն», «Կաքավ»-ը, որոնց արմատները դեռևս կենդանապաշտության ժամանակաշրջանում են և աղերսվում են նախնիների հոգու պաշտամունքի հետ: Այդպիսի շուրջպար է հանդիսացել նաև հանրահայտ «Լորկե»-ն, որն ի սկզբանե եղել է ծիսական, իսկ հետագայում, կորցնելով արմատները, դարձել է կենցաղային-քնարական պարերգ:

«Լորկե»-ի ծննդավայրը Վանն ու Ալաշկերտն է՝ այնպիսի պատմական տարածքներ, որոնք հնուց ի վեր բնակեցված են եղել հայերով, և միայն XVIII դարում պատմական իրադարձությունների բերումով այդ վայրերում հաստատվել են թուրքերն ու քրդերը: Դա է պատճառը, որ «Լորկե»-ի որոշ նմուշներ քրդալեզու են, քանի որ պատմական Հայաստանի մի շարք շրջաններ ստիպողաբար դարձել են քրդալեզու: Պատմական իրողությունների անտեսումը թյուրիմացության առիթ է տվել քուրդ մասնագետներին (երաժըշտագետներին, լեզվաբաններին) «Լորկե»-ն համարելու քրդական պարերգ: Բազմաթիվ ազգագրական աղբյուրներ տեղեկացնում են այն մասին, որ թուրքերն ու քրդերը չեն ունեցել խմբակային պարերգեր և շուրջպարեր, քանզի պարը մահմեդական կրոնի կողմից չի խրախուսվել և Ալլահին ոչ հաճո զբաղմունք է համարվել: Այնուամենայնիվ, հարևանների ավանդույթներն ու սովորությունները յուրացնելով, քուրդ և թուրք տղամարդիկ, ծիսական տոնակատարությունների և խնջույքների ժամանակ միանում էին հայերին և մասնակցում վերջիններիս խմբակային շուրջպարերին: «Լորկե»-ի ուսումնասիրությունը չափազանց կարևոր ենք համարում, քանզի այն համալրում է ծիսական պարերգերի, ինչպես և կատակերգերի շարքը և օգնում առավել ամբողջական պատկերացում կազմելու հայոց հարսանեկան ավանդական շուրջպարերի մասին:

Քանայի քաներ - թոչնային պարեր, նախնիների պաշտամունք, ծիսական շուրջպարեր, հնագույն քաղաքակրթություններ, կենդանապաշտական խորհրդանիշներ, կրոնական հավատալիքներ, դիցաբանական պատկերացումներ, համեմատական վերլուծություն:

«ЛОРКЕ» КАК АРМЯНСКАЯ ТРАДИЦИОННАЯ СВАДЕБНАЯ ОБРЯДОВАЯ ПЕСНЯ-ПЛЯСКА

МАРИАННА ТИГРАНЯН

Издrevле в армянском свадебном обряде особое место занимали птичьи танцы: «Журавлиная», «Гусиная», «Куриная», песня-пляска «Куропатка», кото-

рые изначально являлись обрядовыми и были связаны с культом духа предков. По многим свидетельствам, такой свадебной пляской в прошлом была и знаменитая армянская «Лоркэ» (“Перепелка”), впоследствии потерявшая свою обрядовость и ставшая обычной любовно-бытовой песней-пляской.

Родина «Лоркэ» это Ван и Алашкерт – исконно армянские земли, на которых с древнейших времен обитали армяне, и лишь в XVIII столетии эти края были заселены турками и курдами. В определенных областях исторической Армении насильственно внедрялся курдский язык, этим и объясняется тот факт, что некоторые из записанных образцов «Лоркэ» пелись на курдском (информанты – армяне). Не считаясь с историческими фактами, курдоведы (музыковеды, языковеды) впали в заблуждение и стали причислять «Лоркэ» к своим национальным пляскам. Многие этнографические источники свидетельствуют о том, что турки и курды не имели коллективных круговых плясок, так как танец в исламе, как негодный Всевышнему, не поощрялся. Однако, переняв у своих соседей их культурные традиции и некоторые обычаи, турецкие и курдские мужчины во время сельскохозяйственных празднеств присоединялись к армянам, участвуя в их коллективных плясках.

Изучение и анализ «Лоркэ» позволили восстановить ее функцию как исконно обрядовой песни-пляски, а также позволили более широко взглянуть на традиционные свадебные шуточно-обрядовые круговые танцы армян.

Ключевые слова – птичьи пляски, культ предков, обрядовые круговые песни-пляски, древнейшие цивилизации, тотемические символы, религиозные верования, мифологические представления, сравнительный анализ.

“LORKE” AN ARMENIAN WEDDING RITUAL CIRCLE DANCE

MARIANNA TIGRANYAN

In Armenian wedding rituals of significant prominence some dances are dedicated to different birds such as ‘Krngaven’, ‘Ghaz-ghaz’, ‘Havkun’ and ‘Kakav’. These ‘bird dances’ probably might have originated in the times of animal worship and are related to the worship of the soul. “Lorke” is a popular circle dance of the kind, which was at the beginning a ritual dance but later loosing its origin has become a participatory dance song.

“Lorke”’s place of origin is Van and Alashgerd, historically these are uniquely Armenian populated territories. Turks and Kurds settled in these regions only in the XVIII century after some historical events. As a result after some years Armenians of certain regions of the historical Armenia were forced to adopt the

Kurdish language. That is how the existence of some Kurdish variations of the song is explicated. Ignorance of history is the cause for Kurd specialist (linguists, lexicographers and musicologists) to take for granted that “Lorke” is theirs. Many sources of ethnographic research studies point to the fact that Turks and Kurds have never had either dance music or circle dances. Dancing has never been encouraged in Islam and is considered to be haram (forbidden). However, by adopting certain customs and traditions of a neighboring people Turk and Kurd men with time used to join the Armenians during celebrations and participate in circle. The study of “Lorke” is of prime importance as it complements the ritual dance music and humorous songs and helps to shape a complete insight into the Armenian wedding traditional circle dances.

Key words – bird dances, ritual circle dances, ancient civilizations, animal worship symbols, religious beliefs, mythological perceptions, comparative analysis.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆ ԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՅԱՆ Մարինե – Ջոն Զիվերի պատմվածքների հերոսների ներքին բարոյոյթն ընտանեկան և հասարակական հարաբերություններում	3
ԲԱԼԱՅԱՆ Զինաիդա – Մակար Բարխուդարյանի արցախապատումը	17
ՂԱՐԻՔՅԱՆ Բայասան – Հուշ-երագների առանձնահատուկ դերը Աբիգ Ավագյանի արձակում	28
ՄԿՐՏՉՅԱՆ Մարինե – Ջորի Բալայանի «Բժիշկ Մարությանը և նրա «Պատերազմի հետքը երկար է մնում»» գիրքը	35
ՏՈՆՈՅԱՆ Զարուհի – Արխիվային վավերագրեր	42

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԶՅԱՆ Հակոբ – Տարու և այլասացություն: Թալիշերենի անբարանի բարբառի բարբառաշարում «գայլ» և «օձ» բառերի ստուգաբանական քննություն	47
ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ Սվետլանա – Քերականական մի շարք իրողությունների դրսևորումներ Կապանի տարածաշրջանի բարբառային միավորներում	54

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԵՅԱՆ Իսկուհի – Կանայք Շահումյանի, Մարտակերտի, Քարվաճառի պաշտպանական մարտերում (1992-1994թթ.)	64
ՂԱՀՐԻՅԱՆ Մուշեղ – Քրդական ինքնավարության ամրապնդումը և Իրաքի իշխանությունների քաղաքականությունը քրդերի նկատմամբ 2003 թ. հետո	76
ՊԵՏՐՈՍՅԱՆ Նելլի – «Հաճախապատում ճառք»-ի հնագույն ձեռագրերի և հրատարակությունների հարցի շուրջ	86
ՍԻՄՈՆՅԱՆ Հասմիկ – Արևմտահայ քաղաքական միտքն Առաջին աշխարհամարտի տարիներին	94
ՎԱՐԴԱՆՅԱՆ Լիլիթ – Զբոսաշրջային գործընթացները Սիսիանում. նախնական դիտարկումներ	109

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ Հասմիկ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանուշակ – Աշխատանքի և զբաղվածության ոլորտում գենդերային կարգի վերլուծությունը և գենդերային սոցիալական քաղաքականության իրականացման հնարավորությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում	120
ՊՈՂՈՍՅԱՆ Վարդգես – Քառսի տեսության դիսկուրս. բացահայտման և նկարագրման առանձնահատկությունները	136

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱՎՈՅԱՆ ԷՂԳԱՐ – ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի ազդեցությունը Հայաստանի Առաջին Հանրապետության, Խորհրդրդային Հայաստանի և հայության վրա	150
ՂԱԶԱՐՅԱՆ Էրիկ – Բլոգների քաղաքական ազդեցության մեծացման առանձնահատկությունները ՀՀ-ում	164

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Քրիստինե – Իմրե Լակատոսն ընդդեմ ֆալսիֆիկացիայի	174
-----------------------------------------------------------------------	-----

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՔՈՒԽԱՆՅԱՆ Զարուհի – Ժամանակակից հակահայ քարոզչությունը և Հայաստանի Հանրապետության վարկանիշը	183
------------------------------------------------------------------------------------------------------------	-----

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱՄԱԶՅԱՆ Արտակ – «Triada» ստուդիան՝ որպես հայկական արդի համակարգչային գրաֆիկական դիզայնի բազմակողմանի ու վառ դրսևորումներից մեկը	193
ԹԱՄԻՐՕՂԵՅԱՆ Աննա – Տիգրան Մանսուրյան. Սոնատ ալտի և դաշնամուրի համար	200
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Նիկոլայ – Մարգարիտ Բաբայանը Արմենակ Շահմուրադյանի մասին	210
ՄԱՂՈՅԱՆ Նաիրա – Ռոմանոս Մելիքյանի անվան գիտահետազոտական կարիները (1934-1940)	219
ՄԵԼԻՔՅԱՆ Սաթենիկ – Ձևաստեղծման օրինաչափությունները	227
ՍԱՐԳՍՅԱՆ Նազենիկ – Պարային երկի վերլուծման հնարքները երաժշտական տեսության մեջ կիրառվող եզրերի միջոցով	236
ՏԻԳՐԱՆՅԱՆ Մարիաննա – «Լորկե»-ն՝ որպես հայոց ավանդական հարսանեկան ծիսական շուրջպար	249

СОДЕРЖАНИЕ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

АНДРАСЯН Марине – Внутренний конфликт персонажей Джона Чивера в семье и обществе	3
БАЛАЯН Зинаида – “Арцах” Макара Бархударяна	17
КАРИБЯН Баласан – Основная функция снов-воспоминаний в прозе Абига Авагяна	28
МКРТЧЯН Марине – Книга Зория Балаяна "Доктор Марутян и его книга "У войны долгий след""	35
ТОНОЯН Заруи – Архивные документы	42

ЯЗЫКОЗНАНИЕ

АВЧЯН Акоп – Табу и эвфемизм: Этимологический анализ слов «волк» и «змея» в лексике анбаранского диалекта талышского языка	47
МАНУЧАРЯН Светлана – Проявление ряда грамматических реалий в диалектных единицах капанского региона	54

ИСТОРИОГРАФИЯ

АВАНЕСЯН Искуи – Женщины в боях за оборону Шаумяна, Мартакерта, Карвачара (1992-1994 гг.)	64
ГАГРИЯН Мушег – Укрепление курдской автономии и политика Ирака в отношении курдов после 2003 года	76
ПЕТРОСЯН Нелли – О вопросах древних рукописей "Многовещательных речей" и их публикациях	86
СИМОНЯН Асмик – Западноармянская политическая мысль в годы Первой мировой войны	94
ВАРДАНЯН Лилит – Туристические поездки в Сисиан: первоначальные наблюдения	109

СОЦИОЛОГИЯ

ГЕВОРКЯН Асмик, МКРТЧЯН Манушак – Анализ гендерного порядка сферы труда и занятости и возможности имплементации гендерной социальной политики в Нагорно-Карабахской республике	120
ПОГОСЯН Вардгес – Дискурс теории хаоса: эвристические и дескриптивные возможности	136

ПОЛИТОЛОГИЯ

НАВОЯН Эдгар – Армения в контексте внешнеполитических доктрин США ...	150
КАЗАРЯН Эрик – Особенности увеличения политического влияния блогов в РА	164

ФИЛОСОФИЯ

ГРИГОРЯН Крестине – Имре Лакатос против фальсификации	174
--------------------------------------------------------------------	-----

ЖУРНАЛИСТИКА

БАБУХАНИЯ Заруи – Современная антиармянская пропаганда и имидж Республики Армения	183
------------------------------------------------------------------------------------------------	-----

ИСКУССТВОВЗНАНИЕ

АГЛАМАЗЯН Артак – Студия «Triada» как одно из многосторонних и ярких проявлений армянского современного графического дизайна	193
ТАМИРОГЛЯН Анна – Тигран Мансурян - Соната для альты и фортепиано	200
КОСТАНДЯН Николай – Маргарит Бабалян об Арменаке Шахмурадяне	210
МАДОЯН Наира – Научно-исследовательский кабинет имени Романоса Меликяна (1934-1940 гг.)	219
МЕЛИКЯН Сатеник – Закономерности формотворчества	227
САРГСЯН Назеник – Методы анализа хореографического опуса посредством терминов, применяемых в музыковедении	236
ТИГРАНЯН Марианна – «Лорке» как армянская традиционная свадебная обрядовая песня-пляска	249

ԿԱՆԹԵՂ
Գիտական հոդվածներ
КАНТЕХ
Научные труды
KANTEGH
Articles

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Անգլերեն տեքստերի խմբագիր՝ Սիրարփի Կույումջյան
Շապիկի ձևավորումը՝ Վարդան Գաբրիելյանի
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,
тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,
tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ instart@sci.am
Эл. почта: instart@sci.am
E-mail: instart@sci.am

Պաշտոնական կայքէջը՝ <http://Kantegh.am>
Официальный сайт: <http://Kantegh.am>
<http://Kantegh.am>



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում
Ֆորմատ՝ 60x84 1/16, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 130:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 1) 54.49.82, 53 65 88, 62.38.63 (տպարան)
Էլ. Փոստ՝ info@asoghik.am